

Գիրքը լուսապատճենահանվել է  
"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ Շերկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրք կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

library

ԴԱԼԻ ԱԼԻՎՈՒ ԿՈՂՈ, ԵՎ ՅԵՐ ՆԵՐՈՒՄ ԼԻՇԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱՎԱԼԽԵՅԱ ՏՐԱՋՈՒՅՆ ԳՈՐԾՈՒ ԵՎ, ԽԵՆԵՐԴ,  
ԸՆԴՊՈՅՑՔՎԱՆԵՐԵ, ԳՐԵՐ:

ԲՆԱԿ ԳՐԵՐԻ ԽԵՂՈՄՈՒ ՄԱԼԻՎԱՆԱԼԵՐ ԿՈՂՈ ԵՎ  
ԽՈՎՈՅ, "ՅՈՒՆԵՎԵՆԻԿԻ ԽԵՎՈՄՈՒՅՆ ԳՈՐԾՈՒ" ԿՈՎԱՆ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)


ԾԱԼԳՅԱԿՈՒ ԵՎ, ՈՐ ՕԳՏԱԼԻՇ Ե՞Զ ՄԵՐ ԿՈՎԱՆՈՒ:  
ՅԵՎԿՈՎՈՒ ԵՎ ՀՈԽԵՐԻ ԸՆԴԳՐԱՆՔՆԵՐՆ:



ԳՐԵՐ ՄԵՐ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԿ  
ԽԱՐԱՏՐԱՄ



„ՀԱՅԱՍՏԱՆ”

ՀԱՅԿ  
ԽԱԹԱՏՐՅԱԼ

# ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

---

---

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ—1984

Գրախոս՝ բանասիրական գիտությունների թեկնածու

ՎԱՐԱԴ ՆԵՐՍԻՍՅԱՆ

### Խաչատրյան Հ. Հ.

Խ 282 Հացապատռում.— Եր.: Հայաստան, 1984.— 184 էջ:

Գիրքը հանապազօրյա հացին նվիրված գրական ձռն է: Այստեղ արտացոլվում է մարդու մշտնշենական ուղեկից հացի հանդեպ հայ ժողովրդի ցուցաբերած վերաբերմունքը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Հեղինակն օգտագործել է հացի մասին եղած հին ու նորագույն աղբյուրները, ժողովրդի մեջ պահպանված բանավոր գրույցները:

Գիրքը հասցեագրվում է մասսայական ընթերցողին:

Խ 4702080200  
Խ 701 (01) 84

ԳՄԴ 84 Հ 7  
Ար 2

---

## ԱՌԱՋԱԲԱՆ-ՀԱՅԱԲԱՆ

Արմտիքից ու հում մսից մինչև ցորենին հասնելը մարդը տիեզերական սովի ճամփա է անցել և դարս-դարս գոհեր տվել: Գուցե մարդկային ցեղի կյանքը հատվեր անցյալի խորշակահար հազարամյակներում, եթե նա իր պորտը չպնդացներ հացով:

Հացի հայտնագործումը մարդկային քաղաքակըրթության յոթ արշալուսներից մեկն է: Հացը կատարելագործել է ուղեղն ու հոգին, օժտել մարդուն սիրով, հանձարով, մարդկայնությամբ: Աշխարհի հին ու նոր աստվածները խանձվեցին թռնիրներում, որովհնան հացակեր չեն: Հացը մարդու ուսերից իջեցրեց բոլոր կախարդ ուժերը և նրան դարձրեց տիեզերազգաց:

Այս գիրքը նրանց համար է, ում ձեռքը դիպել է հացի պատառին: Իսկ աշխարհում կա՝ մի մարդ, որի ձեռքը չի դիպչում հացի:

## Աշորան հացահատիկի աստվածութին է

Ասում են Աշորան գեղանի օրիորդ է եղել չորս վարսահյուսքով՝ ցորնաթույր, հաճարաթույր, գարեթույր և կորեկաթույր:

Դա այն ժամանակ էր, երբ ծուլից էլ ծույլ դարերը ամայության հազարամյակներ էին սարքում՝ շգիտես ում տարիքը որոշելու համար, երբ հողագունդ կոշված այս մոլորակը դեռ նոր էր ուշքի գալիս հավիտենական թմրությունից:

Մարդիկ ուտում էին ամեն տեսակ արմտիք, թոշունների ու գազանների միս, և ոչ ոք շգիտեր, թե ինչ բան է հացահատիկը։ Մի անգամ Մասիսի լանջերին ման գալիս Աշորան նկատեց դեղնահասկ ցողուններ։ Զարմացավ, որ մինչև հիմա ինքն այդպիսի ծաղիկներ չեր տեսել։ Փորձեց պոկել մի հասկ, քիստերը մրմուցրին նրա ձեռքի ափը։ Հետո տրորեց հասկը և հատիկը զատեց քիստերից։

Ու սկսեց ծամծմել կարմրավուն հատիկները։

Աշորան առաջին մարդն էր, որ առավ վայրի ցորենի համը։ Նա գտավ մարդու համար այն միակ սնունդը, որը հետագայում հնարավոր շեղավ փոխարինել որևէ ուրիշ բանով։

Աղջիկը ուրախությունից փոթկաց։ Ապա նա լսեց իր քրքիջի արձագանքը ու գլխի ընկավ, որ ձայնը փոխվեց։ Հացահատիկը մարդկայնացրեց Աշորայի ձայնը։

Ժշորան գաղտնի շպահեց ցորենի հայտնագործումը։ Նա իր և հարեան տոհմերի անդամներին ցույց տվեց վայրի ցորենի սեղը։ Մարդիկ սկսեցին ագահորեն ըմբոշինել վայրի ցորենը։

Ցորնակեր այս առաջին մարդիկ, սակայն, շդիմացան հացի ուժին, նրանց փորերը այնպես ցավեցին, որ թվում էր, թե ուր որ է ամենքն էլ կմեռնեն։

— Աշորան շար ոգի է, նա՛ մեզ ցույց տվեց այդ հատիկների տեղը, — ասացին մարդիկ։ — Մանավանդ նա գիտեր, որ դրանք մահաբեր ունդեր են։ Նա ուզում է ամենքիս ոչնչացնել, որպեսզի ինքը միայնակ տեր դառնա աշխարհին։

**Ասացին ու առանց ծանրութեթև անելու որոշեցին քարավեժ անել Աշորային։ Մասիսի մեծ խորխորատը կու տվեց գեղանի օրիորդին։**

**Այդ գիշեր մարդիկ մի կերպ դիմացան փորացավին և, առավոտյան, տեսնելով, որ ոչ մեկը չի մահացել, նայեցին իրար երեսի։**

**Զգացին, որ Աշորային իզուր են քարավեժ արել։ Եվ շարունակեցին անուշ անել վայրի ցորենը՝ կամաց-կամաց հասկանալով, որ պետք է շափավոր ուտել, հագեցնել միայն օրվա քաղցը։ Հասկացան, որ մարդ չի կարող ստամոքսը լցնել հացի մի քանի օրվա պաշարով։ Մարդկային կյանքում ոչ մի բան այնպես մշտապես չի կրկնվում, ինչպես ամեն օր հաց ուտելը։**

**Կարծում եք՝ երախտամոռ մարդիկ այդպես էլ մոռացա՞ն Աշորային։ Չէ, մեծարեցին նրան և դարձին հացահատիկի աստվածուհի։ Նրանք համոզեցին իրենց և ամենքին, թե Աշորայի ոգին ապրում է հասկի մեջ։ Հետո մարդիկ ասացին, թե դեղնածամ Աշորան ապրում է Մասիսի մեծ խորխորատում, զուրս է գալիս միայն ամառնամուտին և դեղնաթույր դարձնում աշխարհը։**

**Այնտեղ, ուր մարդիկ ցորեն էին ցանում՝ կոշում էին Աշորա, Ցորենացան առաջին գավառը կոշվեց Աշորնիք կամ Աշարունիք, հետո աղավաղվեց դարձավ Արշարունիք։**

**Բայց հայոց հացահատիկի աստվածուհին կանգ շառավ այդ զավառում։ Իր թագավորությունը նա հաստատեց Հայաստանի րոլոր կողմերում։ Աշորա անունից են հայկական Շիրակ և Շարուր դաշտերի անվանումները։**

**Աստվածուհու անունով հայերը աշան են ասում կալի մեջ միուած կալսելու հացահատիկը։ Աշան է կոշվում Արցախի գյուղերից մեկը։**

**Հին շումերների հացահատիկի աստվածուհին, որի անունը Աշնան էր, եղել է Աշորայի կրտսեր քույրը։**

## **Արարատյան ցորեն**

**Ամեն տեսակ ցորեն մարդու պես իր տարիքն ունի։ Վայրի հասկը բնունլսնալուց հետո բոլոր ցորենները չեն, որ դիմացան րրին, յրտահարությանը, արհավիրքներին։ Մի քանիսն ընկրոկեցին, հետո չքացան առանց աշխարհի երեսին հռչ ու հուշա-**

կոթող թողնելու Սովորաբար անմահանում են զորապետները, իսկ ցորենը միշտ էլ դիմումոր է եղել:

Հավասար ճամփա չեն անցել մեր ժամանակներին հասած յորենները: Մեկը ապուապապ է, մյուսը՝ ծոռ: Մեկը գալիս է այն ժամանակներից, երբ մարդ չէր կարող մտովի մեկին մեկ գումարել ու երկու ստանալ և ստիպված էր այդ մեկը մյուս մեկի կողքին դնել ու տեսողական ուժով համոզվել, որ գումարը հավանար է երկուսի: Մյուսը ծնունդ է առել ընդամենը հազար տարի առաջ և դեռ մանկան հայացքով է նայում աշխարհին: Դրանց մեջ ամենատարեցը, ապուապերի մեջ ապուապը Արարատյան ցորենն է:

Զրույցն ասում է, որ հայկական հնարուն այդ ցորենը Մասիսի լանջերին աճել է Աշորա աստվածուհու ծննդից տասնյակ ու տասնյակ հազարամյակներ առաջ: Ցորնահատիկները սըվսվացել են, շնկշնկացել, ձայն տվել մարդուն, բայց վերջինս չի լսել: Աշխարհում ինչքան ձայներ կան, որ մարդը չի լսում: Մինչև հաց ուտելը մարդն ավելի խուլ էր: Սոսափը ուշ է հասել մարդու ականջին:

## Որո՞մ

Դա եղել է այն ժամանակ, երբ դեռ չկար ժամանակը, երբ աշխարհում ոչ թիվ կար, ոչ թվականություն: Ցորենն ու որոմը հարեաններ էին և աճում էին վայրի լեռնալանջերի վրա: Ցորենն այնպիսի հունդեր ուներ, ինչպես հիմա: Իսկ որոմի հունդը կանաչ-կանաչ էր: Բայց ահա երեաց մարդը և վայրի ցորենը տարավ ընտելացնելու իր ցանած արտերում:

Հենց այդ ժամանակ էր, որ որոմը ցորսնին ասաց..

— Աչդ հերկած արտերում ինձ էլ տեղ տուր քո կողքին, իս շեմ ուղում մենակ մնալ:

— Բայց մարդն ինձ աճեցնում է հացի համար, իսկ քեզ ի՞նչ անի, — ընդդիմացավ ցորենը:

Այդպես էլ հսրեանները բաժանվեցին միմյանցից խռոված:

Որոմը լցվեց շարությամբ: Նա կերպափոխվեց և փորձեց իր շեն ու շնորհքով նմանվել ցորենին: Նրա հունդերի կանաչն էլ փոխվեց սև ու դառն մրուրի:

Սկզբում մարդը խարվեց, հնձեց որոմնախառն արտը, և հատիկն էլ ամբարեց առանց ցորենից դատելու: Բայց որոմ ուտե-

լը նույնն էր ոնց որ մրուր ուտելը, նրա մի հատիկը դառնացնում էր ցորենի հարյուր հատիկի քաղցրությունը:

Մարդը դարձավ որոմի թշնամի Հենց որ արտերի ցողունները սկսում են բարձրանալ՝ մարդը քաղհանում է այդ մոլախոտը:

## Ինչու խառն էին ցանում ցորենը, գարին ու կորեկը

Հայկական լեռնաշխարհում ամենամեծ երաշտը եղել է մեր թվականությունից առաջ 4280 թվականին։ Ցորենի արտերը լրիվ խանձվեցին, գարուց էլ համարյա բան շմնաց։ Բայց աճակորեկը դիմացավ և առատ բերք տվեց։ Մարդկանց թվաց, թե աստվածները ինչ-որ բան են հուզում։ Գուցե պետք է միասին ցանել և տարբերություն շղնել ցորենի ու կորեկի միջև։

Այդ ժամանակ աշխարհի իշխանավորները ցեղապետներն ու քրմերն էին։ Իհարկե, քրմերն ավելի հզոր էին։ Երանք ցեղապետներին ասացին.

— Միայնակ ճամփորդն ավելի շուտ կհոգնի։ Աստվածներն ուսուցանում են, որ ընկերովի ճամփորդությունն ավելի անվտանգ է։ Այնպես որ՝ ցորենը, գարին ու կորեկը պետք է ընկերություն անեն։

Եվ Հայկական լեռնաշխարհում երևացին առաջին խառն ցանքերը։

## Ինչու են հայ աղջիկները հատիկազարդ շրջազգեստ հազնում

Հայերը համոզված էին, թե հացահատիկի աստվածուհի Աշորան հագնում է հատիկազարդ շրջազգեստ։ Եվ որպեսզի դուր գային նրան ու առնեին նրա բարեհաճությունը, սկսեցին թրծել այնպիսի կարասներ, որոնց վրա պատկերված է աստվածուհին իր հատիկազարդ շրջազգեստով։ Այդ կարասները լցնում էին ցորենով և իշեցնում հորերը՝ համոզված լինելով, որ Աշորա աստվածուհին կպահպանի այն յոթ և ավելի տարի։

Մարդիկ դրանով շբավականացան։ Աշորա աստվածուհուն էլ ավելի մեծարելու նպատակով նրանք սկսեցին հատիկազարդ շրջազգեստներ հագցնել աղջիկներին։

## Հացունյաց

Հայոց աշխարհում առաջին քաղաքը կառուցվել է մեր թվականությունից առաջ 3669 թվականին և կոչվել Նախիջևան, որը հիմա Արաքսի ձախ՝ ափին է։ Այն ժամանակ քաղաքի և աջ կողմով էր գետ Հոսում, և ձախ կողմով։

Նախիջևանը արքաների որսատեղի էր։ Այստեղ ամեն տեսակ խրախճանքներ էին սարքում հին աշխարհի տիրակալները։

Քաղաքի կողքի ընդարձակ դաշտում ցանում էին քոիկ ցորեն, որից պատրաստում էին աշխարհի ամենասպիտակ հացը։ Այն ժամանակ քոիկ էին ուտում միայն արքաները։ Նրանք որսից հետո խնջույքի էին նստում, անուշ անում եղնիկի մսից պատրաստած սքանչելի խորովածը և ըմբոշխնում քոիկի սպիտակ լավաշը։

Քանի գնում խնջույքները շատանում էին, և քոիկը չէր հերիքում։ Արքաները ստիպված հրովարտակ արձակեցին՝ պահանջելով, որ Հայոց աշխարհի բոլոր կողմերում անող քոիկը բերեն և որպես հարկ հանձնեն արքաներին։

Նախիջևանի կողքի դաշտում կառուցվեց մի ավան, որն ուներ արքունի հացունյաց բազմաթիվ ամբարներ։ Այդ հեռավոր ժամանակներից էլ Հացունյաց կոշվեցին և դաշտը, և ավանը։

## Սանդ

Հայոց հացահատիկի աստվածուհի Աշորայի աջ ոտքի մուկկը քարե էր, ձախ ոտքինը՝ փայտե։ Մի անգամ աստվածուհին Երկնքից իջավ և սկսեց քայլել երկրի վրա։ Բայց գեռ մի քանի քայլ շարած՝ մուկերն սկսեցին նեղել ու ցավեցնել նրա ոտքերը։ Աշորան շղիմացավ անասելի ցավերին, հանեց ու դեն շպրտեց մույկերը և համբարձեց երկինք։

Մարդիկ վերցրին աստվածուհու մույկերը և դարձրին հացահատիկ կամ աղ ծեծելու սանդեր։ Հետո մույկերի նմանությամբ սկսեցին քարե ու փայտե սանդեր պատրաստել, բայց ոչ ոք չկարողացավ Աշորայի համար մի զույգ այնպիսի կոշիկ սարքել, որ աստվածուհու ոտքը լցավեցներ։

## Հացը սուրբ է

Եգիպտոսում սկսել են ցորենի հաց թխել հինգ հազար տարի առաջ, Եգիպտացիները աշխատավարձ էին ստանում հացով։ Տղամարդկանց տալիս էին մեծ, կանանց ու երեխաներին՝ փոքր շափի հացերու

Այդ ժամանակ Հայաստանի տիրակալն էր Հայկ Նահապետի պապ Թիրուսը Կարծես՝ ի հեճուկս եգիպտական օրենքների, Թիրասը հացի մասին այսպիսի հրովարտակ էր արձակել. «Մեր աշխարհում մի բան կարելի է փոխանակել մի այլ բանով։ Կարող ես թանկագին քարերով ամեն բան առնել, նաև ստրուկ և ընդոծին գնել, Կուզես ոչխարի դիմաց խոտ դնիր, խոտի դիմաց՝ ոչխար։ Ամեն տեսակ ապրանք չափանիշ է, բացի հացը։ Հացը սուրբ է, իսկ սրբությունները, ինչպես առտվածներն ու հայրենի հողը, անշափելի են»։

## Հացեկաց

Տուրութերան նահանգի Տարոն գավառի Հացեկաց կամ Հացիկ գյուղը Հռոմ քաղաքից մեծ է երեք հազար տարով։ Ասում են այստեղ հաց են թխել նաև աստվածների համար, որի պատճառով էլ կոչվել է Հացեկաց։ Հեթանոս հայերը երեսունվեց տարին մեկ հացկերութիւն են հրավիրել հայոց աստվածներին։

Այս գյուղում է ծնվել հայերեն այրութենի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը։ 405 թվականին Հացեկացի շինականները երեսունվեց, այսինքն՝ մաշտոցյան գրերի թվով, լավաշ թխեցին և ուղարկեցին քաղաքամայր Վաղարշապատ՝ Մեսրոպ Մաշտոցին։

Հացոտ ու հարուստ գյուղ էր Հացեկաց-Հացիկը։ 1915 թվականից առաջ հացիկցի Ասոն ուներ վաթսուն գոմեշ, քառասուն եղ, յոթանասուն կով, հազար հինգ հարյուր ոչխար, տասը ձի, հացահատիկի ամբարներ, կաթնամթերքի պահեստ և թան ու թացանի սրահ, հարյուր խնոցի։ Գյուղում ասում էին, որ Ասոն կարող էր միանգամից հազար մարդ հյուրընկալել և յոթ տարի շարունակ նրանց պահել խնջույքի մեջ։

## Ինչո՞ւ է Լուսնի երեսը խմորուտ

Ասում են՝ Լուսինը շարաճճի ու անհամբեր երեխա է եղել։ Մի անգամ մայրը խմոր հունցելու ժամանակ սա սկսում է լալ և

Հաց խնդրել: Մայրը փորձում է հանգստացնել կուսնին, բայց եռեխան ձայնն ավելի է բարձրացնում: Մայրը խմորու ձեռքով մի ապտակ է տալիս կուսնին և անիծում, որ նա երթեք շկշտանաւ Այդ ապտակից կուսինը երկինք է թռչում՝ երեսին խմորի ահագին կտորնեղ:

Դա եղել է շատ վաղուց: Բայց մինչև հիմա էլ կուսնի վրա երևում են մոր խմորու ձեռքի հետքերը:

## Քարի վրա ցորեն է աճում

Քարաշատ Հայաստանի մարդիկ գնացին սնուցող աստվածուհի Անահիտի մոտ և բողոքեցին.

— Տառապում ենք մի կտոր հաց ստանալու համար, չլ ուժ չմնաց: Գթա մեզ, մեր դաշտերն ու հովիտները մաքրիր ժայռ ու քարից և հողը դարձրու բարեթեր:

— Քարքարուտներից ստացված բարիքն ավելի քաղցր է, — ասաց Անահիտը:

Մարդիկ շհամաձայնեցին աստվածուհու հետ և շարունակեցին տրտնջալ իրենց բախտից: Անահիտն ստիպված էր հրաժարվել իր մի սրունքից և այն նետել Բագրեանդ: Մարդիկ գնացին Բագրեանդ և տեսան Արածանի գետի ափին ընկած քարե մի սրունք: Զարմացան: Միթե քարից է նաև աստվածուհու ոտը: Հետո ցավից տառապող Անահիտի ճակատից քրտինքի կաթիլներ ընկան քարե սրունքի վրա: Սրունքը բեկվեց և երևացին ցորենի մի քանի հուռթի հասկեր: Այ քեզ բա՛ն, այս ինչպես եղավ, որ քարի վրա ցորեն աճեց: Հայերը խնդրեցին Վրույր իմաստունին, որ նա մեկնի այդ հրաշքը:

Եվ Վրույրն ասաց.

— Քրտինքով պիտի բարեթեր դարձնենք մեր քարքարուտները: Քրտինք թափելով կարելի է ցորեն աճեցնել նաև ժայռերի վրա:

## Հաց զարդանախշող դրոշմիջը

Ծիածանը Ամպրոպ աստծու աղեղն է, իսկ կայծակը՝ նրա Նետը: Ամպրոպը շատ է հպարտանում իր ծիածան-աղեղով և կայծակ-Նետով: Մի անգամ Ամպրոպը հացահատիկի աստվածուհի Աշուրային ասաց.

- Դու ի՞նչ աստվածուհի ես, զինանշան էլ չունես:
- Իմ զինանշանը հաց թխելու համար պատրաստված զարդանախշող դրոշմիջն է, — պատասխանեց Աշորան:
- Այն, որ սարքել ես թրծած կավի՞ց:
- Այո:
- Նա մի ակնթարթ էլ չի դիմանա իմ կայծակ-նետին, — ասաց Ամպրոպը և հացահատիկի աստվածուհու դրոշմիջը փշուր-փշուր արեց մի հարվածով:

Բայց հենց այդ ժամանակ Աշորան խորհուրդ տվեց մարդկանց, որ նրանք հաց զարդանախշելու դրոշմիջ սարքեն մետաղից: Մեծամորի վարպետները կատարեցին աստվածուհու պատվերը:

Ամպրոպը փորձեց իր կայծակով ջարդել այս նոր դրոշմիջը, բայց բան չստացվեց: Կայծակը դիպավ մետաղին և սկսեց ծռմովել ընկրկելով:

Այդ ժամանակվանից էլ Ամպրոպի աշքը վախեցավ: Նրա կայծակ-նետը խենթի պես է առաջ շարժվում, որի պատճառով էլ հազարից մի անգամ է դիպչում թիրախին:

## Շատակեր Շարան և հացավետ Շիրակը

Հայկ նահապետից ծնվեց Արամանյակը, Արամանյակից՝ Արամայիսը, Արամայիսից՝ Շարան:

Այս Շարան դուրս եկավ աշխարհի ամենաորկրամոլ այրը: Ամուսնանալուց հետո սա ունեցավ քսանչորս զավակ, որոնք իր հման շատակեր էին: Քաղաքամայր Արմավիրում մտահոգության մեջ ընկան: Ի՞նչ անել: Շարային ու նրա որդիներին ոշինչ չէր դիմանում: Արքունի մառանները դատարկվում էին իրար ետևից:

Արամայիսը սուրհանդակներ ուղարկեց Հայաստանի բոլոր կողմերը և ասաց

— Իմացեք, թե որն է մեր տերության ամենահաց սուստ գույշառը:

Սուրհանդակները վերադարձան և զեկուցեցին Արամայիսին.

— Ամենից շատ ցորեն աճում է արգավանդ ու բերրի այն դաշտում, որն ընկած է Արագած լեռան թիկունքում:

Եվ Արամայիսը իր որդուն՝ բազմազավակ ու շատակեր Շարային նվիրեց այդ զավառը, որը հետագայում Շարայի անունով կոչվեց Շիրակ:

**Շիրակն իր անբավ ցորենով կշտացրեց և Շարային, և՝ նրա զավակներին։ Բայց այնուհետև շատակեր Շարան և հացավետ Շիրակը առած դարձան ու մնացին մարդկանց բերաններում։ Որևէ շատակերի մասին խոսելիս՝ ասում են. «Դու Շարայի որկորն ունես, բայց մենք Շիրակի ամբարները չունենք»։**

## Թոնիր

Շատ ու շատ հազար տարիներ առաջ Մեծամորի ձուլարաններում վահանաձև սազեր էին կոփում-պատրաստում և բաժանում Հայոց աշխարհի բոլոր բնակիչներին։ Ամեն մարդ իր հացը-սազի վրա էր թխում։

Մի անգամ Ասորեստանի Սև արքան նվաճեց Հայոց աշխարհը և բնակիչներին միանգամից վերջ տալու նպատակով այսպիսի հրովարտակ արձակեց։

— Իոլոր սազերը պիտի հանձնել ասորի զորականներին։ Ոչ իր սազը թաքցնի՝ կգլխատվի տեղնուտեղը։

Ահասարսափի մարդիկ սազերը հանձնեցին բոնակալներին, բայց չղիտեին, թե այնուհետև ինչ պիտի անեն։ Ե՛վ աղորիք ունեին, և ալյուր, կարող էին խմոր հունցել, բայց ինչի՞ վրա թխես հացը։ Հենց այդ ժամանակ օգնության հասավ հայոց կալի աստվածուհի Հացանուշը։ Նա խորհուրդ տվեց, որ ամեն մարդ իր տան ներսում կավից գետնափոր փուռ՝ թոնիր սարքի։ Հայերն անսացին Հացանուշին և սկսեցին հաց թխել թոնրի մեջ։ Ասորեստանի Սև արքային թվաց, թե թոնրի հացով հայերը երկար չեն ապրի։ Բայց թոնիրը մինչև այսօր էլ և՛ Հայոց աշխարհը պահեց, և՛ բոլոր հայերին։

## Քրմի ու գյուղացիների վեճը

Մի քուրմ գոռողացավ և գյուղացիներին ասաց.

— Ես բոլոր աստվածների պատգամախոսն եմ, եթե շբարեխոսեմ՝ ոչ արել կտաքացնի, ոչ էլ անձրել կգա, ձեր արտերը չեն հասնի և դուք սովոր կմեռնեք։ Ես եմ երկինքը կապում երկրի հետ։ Ոտքով երկրի վրա եմ, մտքով՝ երկնքում, կիսով շափ մարդ եմ, կիսով շափ՝ աստված։ Բայց դուք ինձ աստվածային հարցանքի չեք արժանացնում։ Այդ պատճառով ես որոշել եմ պատ-

ժել ձեզ և այլնս չբարեխոսել աստվածների առջև: Դե գնացեք կոտորվեք:

Դյուղացիները համբերությամբ լսեցին քրմին և ասացին.  
— Բայց եթե հաց վինի՝ սոված կմնաս նաև դու:  
— Աստվածները ինձ համար մի բան կանեն:  
— Ի՞նչ պիտի անեն:  
— Երկնքից հաց կցցեն:  
— Համաձայն ենք, եթե դու ապրես երկնային հացով՝ մեր քիշը մեր աշքին շատ կերևա:

## Հարսի ուսին լավաշ ևն գցում

Հայոց ուազմի աստված խաժակն Վահագնի և սիրո աստվածուհի կճափայլ Աստղիկի հարսանիքն էր: Աստվածների հայր Արամազդը Աստղիկի ուսին սպիտակափառ մի լավաշ էր գցել: Սակայն փեսայի տուն գնալու ճանապարհին լավաշն ընկավ հարսի ուսից: Վահագնի սիրով արքած Աստղիկը չնկատեց դա: Արամազդը ղայրացավ և Աստղիկին ասաց.

— Հացը գետնին գցողը չի կարող կին ու մայր դառնալ:  
Հարսանիքն անմիջապես խաթարվեց:

Այդպես էլ Վահագնին ու Աստղիկին շհացողվեց ամուսնանալ, և նրանք ամբողջ կյանքում մնացին սիրահարներ:

Այսուհետև Հայաստանում սովորություն դարձավ հարսի ուսին լավաշ գցելը: Հարսները զգուշ են քայլում հարսանիքի ժամանակ՝ թե չէ լավաշը կսահի նրանց ուսից, և նրանք կընկնեն Աստղիկ աստվածուհու օրը:

## Ծաթը

Մի անգամ ուազմի ու արևի աստված Վահագնը վեր կացավ և իր ոտքով եկավ հայեցի մոտ:

— Ի՞նչ եք տրտնջում, ի՞նչ եք ուղղում աշխարհից ու աստվածներից:

Հայերն ասացին.

— Մեղմիր քո շանթն ու հուրը: Քո կիզիչ ճառագայթներից խանձվում են մեր արտերը: Մենք երեք տարին մեկ ենք կարգին բերք ստանում:

Վահագնը իր աջ ունքից մի մազափունչ պոկեց և տվեց Հայերին.

— Վերցրեք, տարեք ու ցանեք, սա արևասեր է՝ կղիմանա:

— Ի՞նչ բան է սա:

— Կորեկ, ցորենի փռքը տեսակը: Ցորենի Հասկերի Համեմատ սրա ցողունները կարճահասակ կլինեն, ոնց որ ունքը գլխի մազի կողքին: Բայց սրա Հասկն ավելի հուռթի կլինի, քան ցարենինը: Տեսքով էլ ինձ նման կլինի: Եթե մի քիչ խառնեք՝ ցորենին Համ կտա, իսկ եթե միայն սրանից Հաց պատրաստեք՝ ճաթ կստանաք:

### Թթխմորը հացի այրութենն է

Թթխմորը Հացի այրութենն է: Մինչև նրա Հայտնագործումը Հացն «անգրագետ» էր: Դար ու դարեր անխաշ խմորը թոնը պատին չի կպել, ընկել է մոխրի մեջ ու դարձել կուտ:

Հետո մարդը գտել է Հացի մերանը՝ խաշը: Եվ ծնվել է թըթխմորը, նրա Հետ Հայոց աշխարհը լցվել է թոնիրներով:

### Հայոց կալի աստվածուհին

Մի ժամանակ Հայաստանն անվանում էին կալերի երկիրը Հացնանուշն էլ Հայոց կալերի աստվածուհին էր: Այս Հացանուշն այնպես էր անում, որ հնձից հետո բոլոր շինականները արբուտարվում էին կալի գործով: Ոգևորության մեջ կալվորները Հոգնություն շէին զգում:

Ամեն մեկը հնձում էր իր արտը և խրձերը սայլերով, ձիերով ու էշերով, կամ նույնիսկ ուսամբարձ, բերում-Հասցնում կալի մոտ: Հենց այդտեղ էլ խրձի դեղ էին դնում, յուրաքանչյուրը յուրովի, իր ցանկացած ձեռվէ: Բայց ասում են, թե Հայոց կալերի մոտ եղած բոլոր դեղերը ինչ-որ շափով նման են Հացանուշ աստվածուհուն: Մինչև կալսելը ամեն մարդ իր դեղը ծածկում էր փալաս-մալասով, որ անձրեղ շթրջի կամ թոշունները չկտցահարեն:

Կալսելն սկսում էին լուսադեմին: Դեղից խրձերը եղանով նետում էին կալի մեջ, հետո բացում խրձակալը ու փոռում, շաղտալիս Հավասարապես: Եթե խորդութորդ լինի՝ ապա կամը վեր ու վար կանի, եղներն էլ կհոգնեն, ստիպված կլինես Հարթել ելեչները, որ կամն ընթանա միալար:

Կալսելն ավարտվում էր իրիկնագեմին, երբ սկսվում էր մեղմ հովը, որ կալերի մոտ էր հասցնում Հացանուշ աստվածուհին: Զի եղել այնպես, որ կալսելուց հետո կալի մոտ քամի շնայտնվի:

Այդ մեղմ քամու տակ էլ հարդախառն ցորենը մղաններով շրջում էին դեպի կալի կենտրոն և շեղում: Հարդը մի կողմ էր թոշում, ցորենը մնում էր տեղում:

Հենց որ կալվորները ոսկեգույն ցորնահատիկը խախալում ու լցնում էին պարկերի մեջ՝ Հացանուշը հրաժեշտ էր տալիս կալին:

## Վարսակ

Հեռու-հեռավոր ժամանակներում, երբ ձին նոր էր ընտելացիլ, սիրտն առնելու համար մարդը նրան ցորեն էր տալիս, որով ուզում էր հավաստել, թե իր ուտելիքը կիսում է ձիու հետ:

Բայց երբ աշխարհում և՛ մարդիկ շատացան, և՛ ձիերը, մարդն սկսեց մտածել ձիու կերի մասին: Ցորենը մարդկանց հազիվ էր հերիքում, ինչպես տաս ձիուն: Մարդը ձիուն բաց թողեց հանդերը և տեսավ, որ ձին ամեն տեսակ խոտարույսերից նախընտրում է վարսակը: Վայրի վարսակը տուն բերեց, ցանեց ու ընտելացրեց՝ ինչպես ցորենը:

Այնուհետև մարդը շարունակեց իր ցորենն ուտել, ձին՝ վարսակը: Բայց ծանր ժամանակներ էին լինում, և մարդու ու ձիու սնունդը խառնվում էր: Այդ պատճառով մարդը երբեմն ստիպված է լինում ձեռքը տանել ձիու կեր վարսակին:

## Աշխարհի ամենասպիտակ հացը

Հայոց աստվածները հավաքվեցին Մասիսի կատարին և դիմեցին աստվածների հայր Արամազդին:

— Ուզում ենք ըմբոշինել տշխարհի ամենասպիտակ հացը:

Աստվածների հայրը շառարկեց: Մասիսի կատարից նա իր հայացքը դարձրեց հյուսիս ու հարավ, արևելք ու արևմուտք և աստվածներին հետնառ առած թռավ դեպի Արագածի կողմը:

Եկավ ու կանգ առավ Արայի լեռան հարավային ստորոտում: Այստեղ Եղվարդ գյուղն է, որի կալերում, ինչպես մարդարտափնչեր, շողարձակում էին սրառու ցորենի շեղերը: Աստ-

վածները քոիկից փրփուր-փրփուր հաց թխեցին, որի հոտը բըռ-նեց Արագածի լանջերը։ Հետո աստվածային ախորժակով անուշ արեցին աշխարհի ամենասպիտակ հացը։ Դա այնքան-այնքան սպիտակ էր, որ Հայոց աշխարհում մարդիկ երեք օր գիշեր չտեսան։

Աստվածների հացկերույթից հետո այդ հացից մի ճերմակ փրփուր բեկվեց և որպես հավերժական լուսի շող մնաց Եղ-վարդում։

## Ասք լավաշի մասին

Բուրավետ, ախորժագրգիռ լավաշը Հայաստան աշխարհի-սրբազն արարշագործությունն է։

Թայց ինչու է ճերմակափրփուր այս հրաշալիքն այսքան բա-րակ։ Գուցե ճակատագի՞րն է անողոք ծեծել, նետել ծանրածանր դարերի ոտքերի տակ՝ կարծելով, թե հայկական հացից ոչինչ չի մնա։ Իրավ է, հայի բախտի պես շատ է բարակել լավաշը, բայց ավելի ու ավելի է քաղցրացել։

Ասքը նրբաթերթ լավաշի մասին այսպես է ասում.— Հին Հայաստանում Արամ անունով մի արքա է եղել։ Կովի ժամանակ սա գերի է ընկնում ասորիների թագավոր Նոսորին։ Հաղ-թողն այսպիսի պայման է դնում։

— Դու տասն օր կմնաս անոթի։ Տասնմեկերորդ օրը նետաձգությամբ կմրցես ինձ հետ։ Եթե հաղթես՝ ես քեզ կարծակեմ, և դու յուրայիններիդ մոտ կգնաս արքայավայել ընծաներով։

Հաջորդ օրը Արամը պահանջեց, որ Ասորաց սահմանի մոտ կանգնած հայկական բանակից բերեն իր ամենագեղեցիկ լան-ջապանակը։

Ասորի բանբերները շտապեցին հայկական բանակատեղի։ Հայերը գլխի ընկան, որ իրենց արքան ինչ-որ բան է ակնարկում։ Ամբողջ գիշեր նրանք ասորի բանբերներին պահեցին։ Լուսաղեմին ասորիները վերադարձան իրենց հետ բերելով Արամ արքայի լանջապանակը։ Նրանք չգիտեին, որ լանջապա-նակի մեջ նրբաթերթ հաց է դրված։ Այն ժամանակ ոչ ոք չգի-տեր լավաշի մասին, իսկ ասորի բանբերների մտքով չէր էլ անցնի, թե հայերը կարող են գրահի մեջ հաց թաքցնել։

Արամն ստացավ իր գրահը, բայց ասաց, որ սա չէ իր ամե-նագեղեցիկ լանջապանակը։ Հետո մի ուրիշ լանջապանակ բերե-

ցին, Արամն ասաց, որ սա էլ չէ: Եվ ասորի բանքերները ինն օր շարունակ գնում ու գալիս էին՝ առանց փմանալու, որ իրենց բերած լանջապանակներով ամեն օր մի նրբաթերթ հայկական հաց են հասցնում Արամ արքային:

Տասնմեկերորդ օրը Արամն ու նոսորը մրցամպարեզ մտան: Նոսորին թվում էր, թե տասն օր սոված մնալով Արամը և՛ ուժապառ է եղել, և՛ կորցրել սրատեսությունը:

Սակայն Արամն իրեն կայտառ էր զգում: Հայկական հացը նրան ուժ, էր տվել: Նա հաղթեց մրցության մեջ և տուն վերադարձ պատվով:

Վերադարձավ ու հրովարտակ արձակեց, որ այսուհետև Հայատանում հաստ ու բազմածեւ հացերի փոխարեն լավաշ թիսեն:

## Վանի ջրանցքը

Քաղաքամայր Վան: Քարակոփի միջնաբերդ-պալատ: Հրաշագեղ ծովակի կողմը նայող պատշգամբ-գահասրահ: Հնչում է արքայական փոքրիկ զանգը և ներս է մտնում սենեկապետը:

— Լսում եմ, տե՛ր իմ:

- Ես սպասում եմ տերության յոթ իմաստուններին:
- Նրանք այստեղ են, տիրակա՞լ:
- Թող ներս մտնեն:

Գահասրահ են մտնում ծիրանի միատեսակ պարեգոտներ հագած յոթ իմաստուն:

— Քանի տարի է,— խոսում է տիրակալը, — ինչ արքունականները հաշվում են ու վերահաշվում, բայց չեն կարողանում ցանկալի պատասխան գտնել: Արքունի հացամբարը չի լցվում այնքան ցորենով, որ հերիքի յոթ տարի: Չնչին բան է տալիս տուրքերի կրկնակի ու եռակի ավելացումը: Ազատ շինականները նախընտրում են ստրկագրվել, քան ցորեն տալ, որովհետև շունեն: Եղածի վրա են հաշիվներ անում, չեղածի վրա բոլոր հաշիվները հավասար են ոչնչի: Դուք ի՞նչ խորհուրդ եք տալիս, ի՞նչ անենք, որ հացն ավելանա տերության մեջ և Վանի ամբարներն էլ պոկեպունկ լցված լինեն ցորենով:

Առաջին իմաստուն.

— Առաջներում յոթ տարին մեկ էր երաշտ լինում, հիմա երկու-երեք տարին մեկ մեր արտերը ամուն երես շտեսած խանձվում են գարնան վերջին, Զորանում են նաև այգիները: Պիտի

շրել ցանովի ամեն բան։ Կարելի է շրել բռերով, սակարաներով, տիկերով։ Բայց քերքն այն չի լինի։ Միայն հոսող շուրջը կարող է բարեբեր դարձնել տոշոր հողը։ Զրանցք պիտի կառուցել, տիրակալ, զրանցք։

#### Երկրորդ իմաստուն.

— Առատ աղբյուրներ են բխում Հայոց ձոր գավառում։ Այդ շրերն արագ են հասնում Վանա ծով։ Գետք է շուր տալ դրանց հունը, երկարացնել ճանապարհը մինչև մայրաքաղաք։ Թոնակալ թելին սպանելուց առաջ այդ ջրից խմել ու կորով է առել մեր դյուցազուն Հայկը։ Այդ պատճառով Հայոց ձորի շրերը որբազան են, հաճըմպելի և արբիացնող։

#### Երրորդ իմաստուն.

— Աստվածները հավաստում են, որ զրանցքը պիտի կառուցել յոթ տարում։ Եվ կառուցող արքայի փառքը չի թորշումի յոթ անգամ յոթ հազար տարի։

#### Չորրորդ իմաստուն.

— Զրանցքը այգեստան կդարձնի ծովեզրյա հողերը։ Մեր մայրաքաղաքը կշրջապատեն բաղում արտեր ու այգիներ։ Երկարակյաց ու հավերժական են լինում այն քաղաքները, որոնց շուրջբոլորը պատաժ է լինում կանաչով։

#### Հինգերորդ իմաստուն.

— Մինչև հիմա այդքան երկար զրանցք չի կառուցել աշխարհի և ոչ մի արքա։ Քեզ կփառաբանի շրերի աստված Շովինարը և կենարար հյութով լցված ըմպանակը կմատուցի քեզ։ Վեցերորդ իմաստուն։

— Քեզ կփառաբանի նաև Տափ աստվածը։ Իսկ երբ տոշոր հողերը թշթշան՝ տերության ամբարներն ու մառանները կլցվեն ամեն տեսակ բերք ու բարիքով։

#### Յոթերորդ իմաստուն.

— Այստեղ գալուց առաջ մեզնից յուրաքանչյուրը յոթ օր շարունակ շափել ու ձեռել է իր ասելիքը։ Ինչպիսի մեծ ճակատամարտ էլ շահես՝ դու այնքան օգուտ չես ունենա, որքան այդ զրանցքը կառուցելով։

Եվ տիրակալը հրովարտակ արձակեց զրանցք կառուցելու մասին։

Հազար-հազար քարգործ ու ճարտարվեստ մարդիկ եկան տերության բոլոր կողմերից և յոթ տարի տնքացին գիշեր ու տիվ։ Եվ կառուցվեց ութսուն կիլոմետր երկարությամբ զրատարը։

Զրանցքը սկիզբ է առնում Հայոց ձոր գավառի հարավային կողմում, Վերին Մծնկերտ գյուղի մոտ, ուր ժայռապարի տակից բխում են քաղում աղբյուրներ։ Այդ ջրերով դործում են քառասուն ջրաղացներ։ Այստեղից ջրանցքը երկարում է՝ Խառնուրդ գյուղով ձգվում մինչև Հայոց ձոր գետը՝ անցնելով դերանակապ ջրատար կամրջի վրայով, ճամփան թեքում դեպի Վան և ծովը թափվում քաղաքի ներքեւ մասում։

Սա, իհարկե, միագիծ առու չէ։ Նրանից ճյուղավորվում են մեծ ու մանր ջրանցքներ ու առուներ, որնք Վանա լճի արևելյան ափին ոռոգում են քսանհինդ գյուղերի ցանքեր ու այգիներ։ Մի ժամանակ այդ ջրանցքն անցնում էր հայոց փառաբանված խնձորի մրգաստան Արտամետ ավանի միջով։

Երեք հազար տարեկան այդ ջրանցքը հիմա էլ գործում է։

Ջրուցն ասում է, թե ջրանցքը կառուցել է Ասորեստանի Շամիրամ թագուհին, որի անունով էլ Վան քաղաքը մի ժամանակ կոչվել է Շամիրամակերտ։ Այդ մասին քերթողահայր Մովսես Խորենացին գրել է.

«Շատ տեղերով անցնելով՝ գալիս հասնում է աղի ծովակի մոտ արևելյան կողմից. տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր, որ երկայնությամբ ձգվում է դեպի արևմուտք, հյուսիսային կողմում մի փոքր թեքությամբ, իսկ միջօրեական՝ ուղղահայց դեպի երկինք բարձրացած, զառիվայր ապառաժ։ Սրանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի դաշտաձև երկայնաձև հովիտ, որ լեռան արևելյան կողմից իջնում էր ծովի ափը, ընդարձակ և գեղեցիկ ձորի ձևով։ Նրա միջով հոսում էին քաղցրահամ ջրեր լեռներից իջնելով, ծմակներից և հովիտներից ծորելով, որոնք լեռների ստորոտների մոտ միավորվելով՝ ծավալվում, գեղեցիկ գետեր էին կազմում։ Հովտաձև ձորակի մեջ ոչ սակագ շեներ կային, ջրերի աջ ու ձախ կողմերում զետեղված։ Այս հաճելի բլուրից դեպի արևելք կար մի փոքրագույն լեռ։

Այս տեղի վրա աչք դնելով՝ արիասիրտ և վավաշոտ Շամիրամը հրամայում է անմիջապես Ասորեստանից և իր իշխանության մյուս տեղերից փափագած տեղը բերել շորս բյուր և երկու հազար անարվեստ գործավորներ և իր ընտրյալներից վեց հազար արվեստավոր դործավորներ, որոնք կատարելապես հմուտ էին փայտի, քարի, պղնձի և երկաթի գործի արհեստներում։ Հրամանն ասածին պես կատարվում էր։ Բերվեցին անար-

վեստ բանվորների և բազմարվեստ հանճարեղ վարպետների բազմությունները։ Եվ հրամայում է՝ նախ գետի ամբարտակը շինել ապառաժ խոշոր քարերով, կրի և ավազի շաղախով, շատ լայն և բարձր, որ մինչև այժմ, ինչպես ասում են, հաստատ մնում է։ Գետի այս ամբարտակի ճեղքվածքներում այդտեղի մարդիկ, ինչպես լսում եմ, փախչում ամրանում են ասպատակությունների ու գաղթականությունների ժամանակ, որպես թե ամրանալիս լինեն ապառաժ լեռների գագաթներին։ Եվ եթե մեկը կամենա փորձել՝ նախ չի կարողանա ամբարտակի շինվածքից պոկել թեկուզ մի փոքր քար՝ պարսատիկի համար, որշափ էլ աշխատի։ Եվ երբ մարդ նայի քարերի շուրջն եղած կրի ծեփին, նրան այնպես է թվում, թե ճարպ է ածված այնտեղ։ Այսպես երկար ասպարեզներով ամբարտակն անցկացնելով՝ հասցընում է քաղաքի համար որոշված տեղը։

Այստեղ հրամայում է բազմությունը շատ դասերի բաժանել և ամեն մի դասի վրա զեկավար նշանակել վարպետներից ընտիրներին, և այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով՝ քիչ տարիներ հետո գլուխ է բերում հրաշալի շինվածքը, ամուր պարիսպներով ու պղնձից շինած դռներով։ Քաղաքի մեջ շինում է նաև բազմաթիվ ընտիր ապարանքներ, կրկնահարկ ու եռահարկ, զարդարված տեսակ տեսակ գույնզգույն քարերով, և ամեն մեկում պատուհաններ ըստ հարմարության։ Քաղաքի կողմերն էլ որոշում է գեղեցկագույն և ընդարձակ փողոցներով։ Շինում է նաև շքնաղ և զարմանալու արժանի բաղանիքներ, համապատասխան քաղաքի դիրքին և պիտույքներին։ Գետի մի մասը առուների բաժանելով՝ անցկացնում է քաղաքի միջով ամեն տեսակ պիտույքների և բուրաստանների ու ծաղկանոցների ոռոգման համար։ Իսկ մյուս մասը անցկացնում է ծովակի աջ և ձախ ափերով՝ քաղաքի ու բոլոր շրջակայքի ոռոգման համար։ Քաղաքի բոլոր արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է դաստակերտներով, վարսագեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնտեղ տնկում է բազմաթիվ առատաբեր և գիներեր այգիներ։ Պարսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու հոչակավոր է դարձնում և մեջը բնակեցնում մարդկանց անթիվ բազմություններ»։

Սեպագրերն էլ ասում են, որ Վանի ջրանցքը կառուցել է Մե-

Նուա թագավորը մեր թվականությունից առաջ իններորդ դարում կամ ութերորդ դարի սկզբին:

Այդ ջրանցքը եղել է Մենուայի հպարտությունը: Թշնամիներից ու շարագործներից այն պաշտպանելու համար Մենուան միքանի ամրոցներ է կառուցել ջրանցքի շրջակայքում և իր դրանիկ գնդերից մի քանիսը պահել այնտեղ: Ջրատարի կողքերին Մենուան տասնչորս սեպագիր արձանագրություն է թողել և հավաստել աշխարհին, որ դրա կառուցողը ինքն է:

Կառուցողները գնացին, իսկ զուրը շարունակում է հին հունվ հոսել:

## Կարմրահատ և սպիտակահատ ցորեն

Հայաստանում աճում է երկու տեսակ ցորեն՝ կարմրահատ և սպիտակահատ: Կարմրահատն ամենից շատ մշակում ևն Շիրակում, Բագրեանդում և Տարոնում, սպիտակահատը՝ Արարատյան դաշտում:

Ասում են մի անգամ Հայոց աստվածների հայր Արամազդը կանչում է արեի ու ուզմի աստված Վահագնին և սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկին և ասում:

— Վեցցրեք այս երկու տոպրակները, տարեք երկիր և նվիրաբերեցեք մարդկանց: Մեկի մեջ կարմրահատ ցորեն է, մյուսի մեջ՝ սպիտակահատ: Կարմրահատը այրերի համար է, սպիտակահատը՝ կանանց: Սպիտակահատ ցորնահաց ուտելով լուր հայուհիները սպիտակամարթ կդառնան, իսկ կարմրահատ ցորնահացը տղամարդկանց կդարձնի առնական: Զգույ? Եղեք՝ շշփոթեք: Նորից եմ ասում՝ կարմրահատը տղամարդկանց, սպիտակահատը կանանց համար է:

Սակայն սիրուց գլուխները կորցրած Վահագնն ու Աստղիկը մոռանում են Արամազդի պատվիրանը և մարդկանց մոտ հասնելուց շեն կարողանում որոշել, թե որ տոպրակն ում տան:

— Արի խառնենք տոպրակներն ու տանք մարդկանց, ցորենը ցորեն է, թող տղամարդիկ ու կանայք և՛ կարմրահատ ուտեն, և՛ սպիտակահատ,— ասում է Վահագնը:

Այդպես էլ անում են: Արամազդի պատվիրանը շկատարելու պատճառով սպիտակամաշկ ու կարմրաթուշ են լինում և՛ հայուհիները և հայ տղամարդիկ:

## Աղորիք

Հայոց աշխարհում ամենամիամիտ մարդիկ ապրում են Արցախում։ Դե, նրանք նոր չեն միամիտ դարձել, որդոց-որդի այդպես են եղել։

Մի անգամ այս Արցախի իշխանը, որի անունը Տատուր էր, թագավորի կանչով գալիս է Արմավիր։

Թագավորը Տատուրին պատիվներ է տալիս, ճանապարհելիս էլ նվիրում նրան մի աղորիք, որ պատրաստել էին Մեծամորի վարպետները։

— Այս աղորիք երկանքով դու կարող ես քառասուն տարի ցորեն աղալ և ալյուր ու ձավար ստանալ, — ասաց թագավորը։ — Սա ձեռքի ջրաղաց է։

. Սակայն դեռ Արմավիրից դուրս չեկած աղորիքի երկու քարերն էլ միջից կոտրվեցին և չորս կես եղան։ Իշխանը շատ տիրեց, ինչ էլ լինի՝ արքայական նվեր էր։ Բայց ինչ կարող ես անել, քարի կոտրածը կոտրած էր։

Տատուրը վերցնում է իր ջարդված քարերով աղորիքը և վերադառնում Արցախ։ Տուն հասնելով կնոջը պատմում է արքայական նվերի մասին։

— Հիմա այս ջարդված քարերն ինչո՞ւ ես Արմավիրից հացըրել այստեղ, — հարցնում է կինը։

— Բերել եմ, որ դեն գցեմ, — պատասխանում է Տատուրը։

— Բայց դու կարող էիր դեն գցել Արմավիրում, — ասում է կինը։

— Ճիշտ ես ասում, բայց խելքս չի կտրել։

## Տափը հայոց հողի աստվածն է

Տափը հայոց մայր աստվածուհի Անահիտի ուստրն է, հայոց հողի աստվածը։ Հազարամյակները գալիս են գնում, բայց նա մնում է քսան տարեկան։ Աշխարհում ամեն ինչ ծերանում է, բացի հողը։ Այդ պատճառով էլ ծերությունն անցնում է գեղագանգուր Տափ պատանու կողքով։

Մի անգամ աստվածները նստեցին յոթնօրյա խնջույքի, որի ժամանակ Տափ պատանին հիացրեց հին ու նոր աստվածներին ու աստվածուհիներին։ Նրա գեղագանգուր մազերը դարձել էին առատության եղջյուրներ, հազար ձև ու թույր էին ստանում՝ դառնում խաղող, կաթի երես լավաշ, տանձ ու խնձոր, նուշ ու

կեռաս, մեղք ու գաղպեն, նգածաղիկ ու ստեղին, որդան կարմիրով օշարակ ու գարեջուր:

Առաջին վեց օրը Տափը կատարում էր աստվածների բոլոր ցանկությունները և սեղանին թափում ամեն տեսակ ուտելիք ու ըմպելիք:

Դոթերորդ օրը հոգնած Տափը նիրճեց, սակայն կամակոր ու քմահաճ աստվածները նոր պատվերներ էին տալիս:

— Մի խանգարեք նրան,— ասաց Տափի մայր Անահիտը. — յոթերորդ օրը նա պետք է քուն մտնի, եթե նրան հանգիստ շխղնեք՝ նա ձեր ցանկությունները կկատարի կիսատ-պոատ:

Տափի նման է նաև հողը: Բայց հայ հողագործը աստվածների պես քմահաճ չէ: Նա վեց տարի ցանում է հողը, յոթերորդ տարում հանգիստ տալիս: Այդ մեկ տարում հողը վերագտնում է վեց տարում իր կորցրած ուժը և հավիտենապես մնում բարեբեր ու քսան տարեկան, ինչպես Տափ պատանին:

## Տափը ընկուզաշափ ցորենը երբ կհանձնի հայերին

Հարք-Խնուսը Հայոց աշխարհի պորտն է: Այստեղից հավասար հեռավորության վրա են գտնվում երկրի հյուսիսային ու հարավային, արևելյան ու արևմտյան եզրերը:

Սքանչելի են Բյուրակն բարձրավանդակի Սերկի, Հավատամք, Սրմանց, Շուշարի, Թեքման կատարները:

Ասում են համաշխարհային ջրհեղեղից առաջ այս բարձրությունների վրա ընկույզի մեծությամբ ցորեն էր աճում: Ջրերը բարձրանալու նախօրեին հայոց հողի աստված Տափը Հարքի ընկուզաշափ ցորենի սերմացուն թաղեց մի լճի հատակում: Բայց դե Հարքում հազար լիճ ու աղբյուր կա, դրա համար էլ Բյուրակն է կոչվում, ի՞նչ իմանաս, թե դրանցից որի հատակում է սերմնացուն:

Հարքեցիք համոզված են, թե Տափը այդ սերմացուի տեղը հայերին կհայտնի այն ժամանակ, երբ ջրհեղեղից հետո անցնի յոթ հազար տարի:

## Մանգաղ

Մանգաղը՝ մետաղյա կեռ կտրիշ-հնձիլը յոթ հազար տարեկան է: Մինչ այդ մարդը արտերը ոչ թե հնձում, այլ քաղում էր,

այսինքն՝ ձեռքով մեկ-մեկ կտրում կամ պոկտմ էր հասկը:

Կենտը երբեք էլ դուր չի եկել մարդուն: Եվ նա մի հասկի փոխարեն՝ փորձել է կտրել երկուսը, երեքը, չորսը, ապա՝ մի ամբողջ փունց: Սկզբում կտրել է ձեռքով, հետո սատանի եղունգ կտրիշ-քարով, վերջապես նաև մետաղով, որ կորացրել է այնքան ինչքան պետք է հասկերի ցողունների մի փունչ մի հարվածով կտրելու համար:

Մանգաղն առաջին մեքենան էր աշխարհում:

## Կողք

Նոյեմբերյանի շրջանի Կողք գյուղը հնում մտել է Գուգարք նահանգի Կողբովիոր գավառի մեջ:

Կողբը Եվրոպայի բոլոր քաղաքներից էլ հին է: Ափսոս, որ հիմնադրման անձնագիրը չի պահպանվել: Դա պատահել է այսպես:

Գյուղի հիմնադիրները կառուցել էին նաև մի անմատչելի ամրոց: Վտանգի ժամանակ շինականները դուրս էին թափվում իրենց տներից և պատսպարվում ամրոցում:

Այս առաջին կողբեցիները հացամոլ էին: Նրանք ոսկուց ցորենի մի հասկ էին ձուկել և որպես Կողբի զինանշան դրել իրենց աձորցի աշտարակին:

Թշնամին լսում է ոսկե հասկի մասին, հազար-հազար ճամփա կտրելով գալիս հասնում է Կողք և պաշարում ամրոցը: Հնձի ժամանակ էր: Պաշարված կողբեցիների առջև պայման է դրվում.

— Եթե շանձնեք ոսկե հասկը՝ կայրենք ձեր բոլոր արտերը: Կողբեցիները մտմտում են, ծանրութեթև անում և ասում.

— Ավելի լավ է ոսկուց զրկվենք, քան հացից:

Եվ ոսկե հասկը զիջում են թշնամուն:

## Ծավի սոսիների պուրակը

Սոսիների ամենագեղեցիկ պուրակը Ծավ գյուղի մոտ է: Սա Սյունաց աշխարհի սքանչելիքն է:

Մի անգամ այստեղով անցնելիս՝ Պարսից Դարեհ արքան հավանում է պուրակը: Նա հրամայում է, որ անտառից ոստեր հանեն, տանեն Պարսկաստան և իր պալատի մոտ սրա նման բանաստեղծական մի պուրակ տնկեն:

Պարսիկ անտառագետները զնում ու գալիս են, բայց բան չի ստացվում։ Հայկական սոսին պարսկական հողի վրա չի արմատակալում։

— Այն, ինչ պարսկական հողի վրա չի աճում՝ պետք է աշխարհի ոչ մի անկյունում էլ չաճի, — ասում է զայրացած Դարեհը և մարդիկ է ուղարկում, որպեսզի կտրեն Ծավի պուրակի բոլոր սոսիները։

— Արքայի հրամանը կատարում են։ Սակայն մի քանի տարի հետո պուրակը կրկին դալարում է։ Պարսիկները այս անգամ էլ են կտրում սոսիների շիվերը, բայց շատ շանցած պուրակը նորից է բարձրացնում իր գլուխը։

Դարեհն իր մոտ է կանչում մի գիտունի ու հարցնում։

— Սա ի՞նչ բան է, ի՞նչ ուժ կա այդ սոսիների մեջ, որ իմ մարդիկ չեն կարողանում արմատահան անել։

Գիտունն արքային ասում է։

— Այդ սոսիների տակ հայերը ցորեն են ցանել։ Իսկ ցորենի ուժով հողին կպած ծառը մահ չունի, ինչ էլ անես՝ մի տեղից կդալարի։

## Տող

Հին է Ղարաբաղի Հաղբութի շրջանի Տող գյուղը։ Սա հիմնվել է այն ժամանակ, երբ Կուր գետի աջափնյակի բոլոր մարդիկ միայն հայերեն էին խոսում։

Տողում թարմ հաց թխողը թոնրից հանած առաջին հացը ուղարկում է այն տունը, որը հիվանդ ունի։ Հացը տեսնելով հիվանդը ուժ է առնում ժամ առաջ ապաքինվելու համար։ Եթե հաց թխողը հիվանդին մոռանա, ապա երկու օրում նրա տան անդամներից մեկը կհիվանդանա։

Այդպես են մտածել տողեցիների նախնիք երկու հազար տարի առաջ։ Դա սովորություն է դարձել այսօրվա տողեցու համար, շնայած նա վաղուց է մաշկաթափվել սնոտիսապաշտությունից։

## Նովն հացից է կծել

Հացի հասակակից է Սիսիանի շրջանի Բոնակոթ գյուղը։ Թվի ու հաշվի ենթակա ժամանակները սողանք են տվել Բոնակոթի վրայով։ Գյուղը ճամփա է դրել նաև խելոք ու անխելք բոլոր

աստվածներին ու ինքը մնացել կանգում։ Եվ պահել է հացապաշտական խորհուրդը։ Երկու կամ մի քանի հարեանների երեխաների համար մի կլոր հաց են թխում և տալիս երեխաներին, որ նրանք կծեն տարբեր տեղերից՝ որպես հարատև ընկերության ու բարեկամության նշան։

Իզուր չէ, որ ընկերոջ հավատարմությունը բռնակոթցին յուրովի է բնորոշում։

— Նույն հացից է կծել։

## Արդարադատ թագավորը Աման Է վարպետ սերմնացանին

Մեր թվականությունից առաջ վեցերորդ դարում Հայաստանի թագավորն էր Տիգրանը։ Թագը գլխին դնելուց և գահին բազմելուց առաջ նա հորն ասաց։

— Հավատա, հայր, ես քեզ պես արդարադատ կլինեմ։

— Զէ՛, զավակս, — պատասխանեց հայրը, — ես այնքան էլ արդարադատ չեմ եղել, ավելի լավ է դու նմանվես վարպետ սերմնացանին։

— Ինչո՞ւ

— Դու տեսե՞լ ես, թե սերմնացանը ինչպես է կապում իր կտավե գոզնոցը և սերմը շաղ տալիս աջ ու ձախ։ Դա շատ նույր գործ է։ Նոսր ցանելու դեպքում արտը ցանցառ կլինի և տեղտեղ անհասկ բացատներ կմնան, խիտ ցանելու դեպքում՝ ցորենն արմատ չի տա։ Թագավորը նման է սերմնացանին։ Եթե ուզում ես արդարադատ լինել, ապա պետք է բոլոր հպատակներին հավասար աշքով նայես, իսկ եթե տասին տանջես մեկի գլուխը շոյելու համար՝ թագավորությունդ կնմանվի խայտաբղետ արտի։

## Ինչո՞ւ գարին ավելի շուտ է հասնում, քան ցորենը

Մի անգամ շինական Բազը վեր կացավ ու գնաց հայոց հողի աստված Տափի մոտ։

— Հայոց աշխարհում ցորենն ավելի շուտ է հասնում, քան գարին, — ասաց Բազը։

Տափը պատասխանեց։

- Այդ կարգը պապս է հաստատել:
- Ամենաշնորհ Տափ, դա անարդար կարգ է, — ասաց Բազր:
- Ինչո՞ւ է անարդար:

— Ցորենն ուտում են հարուստ մարդիկ, իսկ աղքատին բաժին է ընկնում գարին: Բոլոր հարուստներն էլ հաց ունեն և գարնան վերջին աշքները չեն տնկում իրենց արտերին ու սպասում, թե երբ կարմրին կտան հասկերը: Մի՞թե դու չես կարող այնպես անել, որ գարին ավելի շուտ հասնի: Խղճա շինականներին, գարնան վերջին նրանք քաղցից ուժասպառ են լինում:

— Լավ, Բազ, վերադարձիր տուն և ասա բոլոր աղքատներին, որ ես կկատարեմ նրանց ցանկությունը, ես այնպես կանեմ, որ գարին ցորենից շուտ հասնի քսանմեկ օրով, — խոստացավ Տափ աստվածը:

Այդ ժամանակվանից Հայաստան աշխարհի բոլոր կողմերում գարին ավելի շուտ է հասնում, քան ցորենը: Մայիսի վերջին սկսվում է գարու հունձը:

## Գոր

Տարոնում Գոր անունով մի պատանի էր ապրում: Դեմքը ցորնագույն էր, ճակատի մազափունջը՝ ոսկեծղի խուրձ, աշքերը՝ մի-մի թոնիր: Ասես ոչ թե ծուխ-ծխանու, այլ արտերի գարմ էր:

Ամենքը սիրում էին Գորին: Աղքատ շինականի արտը պաշտպանելու համար նա մեն-մենակ կովում էր մորեխի պարսերի դեմ, երաշտի ժամանակ բռերով ջուր էր բերում և մեկ-մեկ ջրում խանձվող ցորնահասկերը, իսկ կարկտի ժամանակ իր մեջքը դեմ էր անում երկնքին, և կարկուտն անձրւ էր դառնում ու թափվում գետնին:

Գորն ինքն էլ չգիտեր, որ հայոց արտերի պաշտպան աստվածն էր: Մի անգամ նա քաղցեց. բայց ամաշեց հաց խնլրել մարդկանցից: Այ թե ինչպիսին էր պատանի Գորը:

Մի գարնան էլ լուր տարածվեց, թե Տարոնի բարձր լեռան կատարին հրեշ է հայտնվել՝ հազար տարվա սոված փորով: Ասում էին, թե հրեշը շուտով կիշնի գաշտերը և կխժոի բոլոր արտերը: Գորն իր եղանք ուսն առավ և ճամփա ընկավ դեպի բարձր սարը:

— Ես կսպանեմ այդ հրեշին և ձեր արտերը կֆիան հավիտյանս-հավիտենից, — ասաց նաւ — Կվերադառնամ քսանմեկ օր հետո:

Մարդիկ անհամբեր սպասում էին, թե ինչ է լինելու:

Հրեշը շերեաց արտերում, բայց Գորն էլ շվերագարձավ:

Մարդիկ գնացին բարձր սարի տակ և կանչեցին.

— Գո՞ր, Գո՞ր-Գո՞ր, Գո՞ր-Գո՞ր-Գո՞ր...

Այդ ժամանակվանից էլ և սարը կոչվեց Գոր, Գորգոր կամ Գրգոր, և հայոց բոլոր ամիսների քսանմեկերորդ օրը:

Ասում են Գրգոր լեռան կատարին Գորը դեռ կովում է հայոց արտերը խժոել ցանկացող հրեշի դեմ:

Իսկ մարդիկ «Գորանի» անունով երդ են ձոնել Գորին, որով տան են կանչում պատանուն:

## Մեղրահաց

Սկզբում մեղուն նեկտար էր բերում ու տալիս մարդուն: Դրա դիմաց մարդը մեղվի հետ կիսում էր իր ցորեն հացը: Այդպես երկար ժամանակ ապրում էին միասին, հաշտ ու համերաշխ:

Բայց մի անգամ մարդը հարթեց և ասաց.

— Քո բերածը մի կաթիլ է, իսկ ես քեզ ցորեն հաց եմ տաւիս:

Մեղուն տղղաց՝ խոռվեց և հեռացավ մարդու մոտից:

— Ոչինչ, — ինքն իրեն ասաց մեղուն, — ես այնպիսի հաց կսարքեմ, որ համը մարդու բերանում մնա հուր-հավիտյան:

Գնաց, բույն դրեց ծառի փշակում և սկսեց հյուսել իր մեղրահացը: Մի անգամ մեղուն գնացել էր ծաղիկներից նեկտար հավաքելու: Հենց այդ ժամանակ մարդը հասավ ծառի փշակին և առավ մեղրահացի համը: Մեղուն վերադարձավ, տղղաց և խայթեց մարդուն:

Հետո մարդը փորձեց նորից բարեկամանալ մեղվի հետ և նրա համար փեթակներ սարքեց: Մեղուն կարծես թե հաշտվեց և սկսեց մարդու համար քաղցր հաց պատրաստել: Բայց տղղոցը մնաց, ծվ հենց որ մարդը փորձում է մոտենալ, մեղուն մտաբերում է հին գժտությունը և խայթում:

## Հացն ու լեզուն

Աշխարհի ոչ մի անկյունում հաց ուտելու համար թարգմանիչ պետք չէ։ Հացն աշխարհի բոլոր ազգերի համար է։ Մինչև հիմա ոչ մի մարդ չի դավաճանել հացին։

Միծերի մեջ մեծ իմաստուն Գրիգոր Մագիստրոսն ասել է.

— Յուրաքանչյուր մարդ մայրենի լեզվի կարիքը պետք է զգա այնպես, ինչպես հանապազորյա հացինը։ Լեզուն ազգի հոգևոր հացն է։ Լեզուն էլ հացի նման է՝ ոչ հնանում է, ոչ թառամում։

## Կրակարան

Հայոց արևի աստված Վահագնը մի ժամանակ այնքան մոտ էր երկրին, որ մարդիկ զրուցում էին նրա հետ, մոտենում նրան և տաքացնում իրենց մարմինը, կայծեր փոխ առնում և խարույկներ վառում։

Բայց մի անգամ Վահագնը մարդկանց ասաց.

— Շուտով ես վեր կբարձրանամ և դուք ինձ կտեսնեք շատ հեռվից։ Ես կտաքացնեմ ձեզ միայն ցերեկները։ Որպեսզի խարույկները շմարեն և գիշերները շատոչեք՝ վերցրեք այս հրե ճառագայթաձողը և ձեր խարույկները միշտ վառ կմնան։

Մի քանի օր անց արևը վեր բարձրացավ և մարդիկ երկյուղեցին. իսկ եթե անձրեները գան ու մարեն խարույկները՝ այն ժամանակ ինչպես պիտի տաքանան իրենք։ Ասենք թե՝ գիշերները մի կերպ լուսացրին սրթսրթալով, հետո՝ իսկ եթե խարույկ զինի՝ ինչպես խորովեն որսը, եփեն հացը։

Եվ արևապաշտ մարդիկ սկսեցին «ներս տանել» խարույկները։ Ամեն տուն իր կրակարանն ունեցավ։ Ամեն կրակարան դարձավ հայկական տան փոքրիկ արևը, փոքրիկ Վահագնը։

## Ազոխ

Աշխարհի ամենամեծ քարայրներից մեկը գտնվում է Ղարաբաղի Հաղբութի շրջանի Ազոխ գյուղի մոտ։ Հնում ազոխեցիք այս քարայրում էին պահում իրենց սերմացու հացահատիկը։

Մի անգամ այնպիսի երաշտ եղավ, որ սովը շոքեց ազոխեցիների շեմին։ Ամոան վերջ էր։ Մարդիկ ցանկացան ձեռք տալ աշնանացանի համար պահված սերմացուին։ Սակայն գյուղի

փորձառու տարեցները, հոգալով գալիքի մասին, փակեցին քարայրի մուտքը։ Շինականներն ստիպված սկսեցին սնվել դեռահաս խաղողով։ Այդ պատճառով էլ գյուղը կոչվեց Ազոխ, որ նշանակում է խակ խաղող։

## Յորենավետ կարասը

Մի ժամանակ Ուտիքի գյուղերի բոլոր տներն էլ հացահատիկի հորած կարասներ են ունեցել։ Մեկի կարասը տարին մեկ է դատարկվել, մյուսինը՝ յոթ տարին մեկ։ Պատահել է նաև, որ տարիներով ոչ մի կարաս չի լցվել։

Բախտի ձեռքին ինչ ասես, որ չի քաշել հազար ասպատակողի ճամփին ընկած Ուտիքը՝ Հայաստան աշխարհի այս արևախանձ անկյունը։ Բայց ամենածանր տարիներին էլ Ուտիքի հայը իր կարասի հատակում մի բուռ ցորեն է թողել, որպեսզի կարասը ցորնաբույր մնա և նորից դառնավետ։

## Գարեջուր

«Գարու ջուրը մարդու համար է, գարին՝ չորքոտանու»։

Հայկական այս առածը երեք հազար տարեկան է։ Հայերը գարեջուր են պատրաստել այդ առածից առաջ։

Հույն պատմիլ Քսենոփոնը, որ մեր թվականությունից առաջ 401 թվականին եղել է Հայաստանում, հայկական գարեջրի մասին գրել է. «Տներում էին այծերը, ոչխարները, եղները և թոշուները՝ իրենց ձագերով։ Այնտեղ կար նաև ցորեն, գարի, ընդեղեն և կարասների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ։ Կարասների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի։ Մարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր։ Եվ այն շատ թունդ էր՝ եթե ջուր շխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք է»։

## Հացարար

Հնում հացարարը, այսինքն՝ հացթուխը, անձեռնմխելի մարդ էր համարվում։ Ոչ մի հաղթող, արյունակից թե այլազգի, չի սպանել հաց թխող մարդուն։ Այդ պատճառով թշնամու հարձակման

ժամանակ հացարարները ոչ երկյուղում էին մահից, ոչ էլ մտածում իրենց կյանքը փրկելու համար թաքնվել կամ փախչել:

Հույն պատմիշ Քսենոփոնը, նկարագրելով տասը հազարանոց հունական բանակի նահանջը Հայստանի միջով մեր թվականությունից առաջ 401 թվականին, իր «Անաբասիս» գրքում գրել է. «Իսկ բարբարուները աղմուկը լսելով, շղիմացան ու փախան: Բայց բարբարուներից ոմանք սպանվեցին և ձեռք բերվեց մոտ քսան ձի, միաժամանակ գրավվեց Տիրիբազոսի վրանը և նրա մեջ արծաթե ոտքերով մահիճներ և ըմպանակներ, ինչպես նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացարարներ են ու մատովակներ»:

## Ժամանակ

Վանա լճի արևելյան ափին, Հայոց ձոր գավառում ժամանակ անումով մի գյուղ է եղել, որ հիմնադրել է հայ ազգի անվանադիր Հայկ գյուղազնը:

Այս գյուղում ապրում էին բազմաթիվ գիտուններ ու աստղագուշակներ: Նրանք պահում էին հայոց ժամանակի հաշիվը, շինականներին հայտնում սպասվող երաշտի և ուրիշ արհավիրքների մասին, առանց որոմի ցանքսերը աճեցնելու գաղտնիքը:

Այստեղ էին գալիս Հայքի բոլոր տասնհինգ նահանգների շորս հարյուր գավառներից ու գավառակներից: Ով որ կորցնուած էր ժամանակի հաշիվը՝ Հայոց ձոր էր հասնում և ժամանակ գյուղի իմաստունների հետ ճշտում օրերն ու ամիսները:

Այդ իմաստունների շնորհիվ բոլոր հայերն ունեին միատեսակ ժամանակ, միատեսակ տարեգում ու տարեմուտ, ոչ մի նահանգում ոչ գարունն էր ուշանում, ոչ էլ աշունն էր շուտ գալիս: Եթե Հայքի որևէ եզրում թշնամի էր հայտնվում՝ հայերը միաժամանակ և միասնաբար էին ընդառաջ դուրս գալիս թշնամուն և հաղթում նրան: Եվ միասնաբար էլ նստում էին հաղթության հացի:

Բայց ահա հեռու-հեռումներում իմացան Հայքի անպարտելիության ուժի մասին, վեր կացան և գրոհի ելան հայոց դեմ գունդ առ գունդ, հրոսակ առ հրոսակ, դար առ դար: Այնքան գրոհեցին մինչև հասան Հայոց ձոր գավառը: Այստեղ հիմնահատակ ավերեցին ժամանակ գյուղը և սրի քաշեցին նրա բոլոր իմաստուններին:

**ԵՎ ՀԱՅԵՐԸ ԿՈՐԾՐԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՉԻՎԸ:** Այնուհետև Հայքում ամեն ինչ խառնվեց իրար: Երբեմն գարնանը Հաջորդում էր ձմեռը, կամ տարի էր լինում առանց ամռան ու աշնան: Ոչ էլ արտերն էին հասնում ժամանակին: Խսկ երր թշնամին էր հարձակվում՝ հայերը շէին հասցնում իմաց տալ միմյանց:

Ամեն մեկն սկսեց հաղթության հաց թխել իր համար, այդ պատճառով էլ համայն Հայքը շհաղթեց: Մինչեւ հիմա ժամանակ շունեցող ոչ մի երկիր չի հաղթել:

## **ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱԳԻՆ և հայկական լավաշը**

Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհանվաճ արշավանքը անցավ Հայաստանի կողքով: Բայց և այնպես Եփրատն անցնելիս նա պաշարեց հայկական մի բերդ: Մակեդոնական բանակը երեք օր շարունակ գրոհ ձեռնարկեց, սակայն ամրոցը մնաց անառիկ: Զորքորդ օրը բերդի աշտարակից հայերը կախեցին ասրափայլ մի լավաշ:

— Հայերը անձնատուր են լինում,— զեկուցեցին զորավարին:  
— Ինչպես,— հարցրեց Ալեքսանդր Մակեդոնացին:  
— Նրանք լավաշ են կախել բերդի աշտարակից:  
— Լավաշն ի՞նչ բան է:  
— Հայկական նրբաթերթ հաց:  
— Անձնատուր լինողը սպիտակ գրոշ կկախի և ոչ թե լավաշ: Նրանք հաշտություն ու խաղաղություն են առաջարկում: Հայերն ուզում են ասել, թե մարդն աշխարհ է եկել հաց ուտելու ու ապրելու և ոչ թե զենք վերցնելու ու կովելու համար:

— Հիմա ի՞նչ անենք, զորապե՞տ:  
— Վերացրեք պաշարումը և շարժվեք առաջ: Թող հացապաշտ հայերը վայելեն իրենց հացն ու խաղաղությունը: Հացիդեմ չի կարելի նիզակ ճոճել: Աստվածները յոթ տարի շուտ են մահ պարզեցում նրան, ով կոփվ է գնում հացի դեմ,— ասաց Ալեքսանդր Մակեդոնացին:

## **Տուրտուր**

Մի ժամանակ Արցախի ամենամեծ գետի ջրով շորսհարյուր ջրաղաց էր աշխատում: Հացապահաս մի տարի ջրաղացները կանգ առան: Մարդիկ իրենց ունեցած մի բուռ հացահատիկը

աղում էին երկանք-աղորիքով։ Մի բուռը ոնց տանես ջրաղաց՝  
փոշի դառած ջրաղացի պատերին կկպչի։

Պառավ Սանդուխտը թափ տվեց հորած կարասների պատերին կպած ցորնահատիկները։ Եղած-չեղածը դուրս եկավ մի կոտ։ Բայց Սանդուխտը որոշեց իր ցորենը ջրաղաց տանել։ Հենց որ սկսեց ցորենն աղալ, չպիտես ինչպես գործի ընկան մեծ գետի մյուս բոլոր ջրաղացները։ Եվ ամբողջ Արցախում մարդիկ լսեցին շախշախների միալար ձայնը։

— Տո՛ւր-տո՛ւր, տո՛ւր-տո՛ւր, տո՛ւր-տո՛ւր...

Ջրաղացներն աղալ էին ուզում, բայց ցորեն չկար։ Այդ ժամանականից էլ Արցախի մեծ գետի անունը ջրաղացների շախշախների միալար ձայնի նմանությամբ կոչվեց Տուրտուր, որ հետո ձևափոխվեց ու դարձավ Տրտու։ Հենց այս Տրտուն է, որ աղավաղվել և այժմ կոչվում է Թարթառ։

## Բաղարջ

Գիշեր էր։ Լսվում էր ջրաղացների միալար քսվուտոցը.

— Ա-ղո՞ւն, ա-ղո՞ւն, ա-ղո՞ւ...

Այդ ձայնի տակ կարելի է քուն մտնել և քնի մեջ էլ յոթ երաղ տեսնել։ Բայց ջրաղացպանի քունը չէր տանում։ Նա սովոր էր։ Կեսգիշերին որտեղից հաց գտնես։ Քաղցածությունից ջրաղացպանի աղիքները քոր էին գալիս։ Նա մտմտում էր, մտմտում, բայց ելք չէր գտնում։ Հանկարծ աշքին ընկավ աղունավարձի ամանը։ Մտքում ինչ-որ բան փայլատակեց։ Առանց ժամանակ կորցնելու՝ նա մի քանի բուռ ալյուրից խմոր հունցեց, ապա կրակ վառեց ու խարուցկի կողքին տափարակ մի քար ցցեց։ Հետո խմորից գնդիկ արեց, հարթեցրեց ու տափարակ քարին կպցրեց այնպես, ինչպես թոնրի պատին են հաց կպցնում։

Այդպես ծնվեց հայկական բաղարջը՝ անթթխմոր հացը, որի համը մնաց ջրաղացների ալրոտ պատերի ներսում։

## Խորակ

Մի ժամանակ Հայոց աշխարհի բոլոր կողմերում ցորենի ալյուրը մաղում էին սովորական մաղով, ապա մաղածը երկրորդ անգամ մաղում մանրաշք մաղով ու ստանում խորակ ընտիր ալյուրը, որից հաց էին թխում տոնական հանդիսությունների 3—Հացապատում

**Ժամանակ:** Հարս ու փեսա խորակ էին ճաշակում մեղքամիսի բոլոր օրերին: Նավասարդյան տոնախմբությունների ձիարշավների հաղթողներն անմիջապես ստանում էին խորակ ալյուրից թխած թարմ հաց:

Հետո սկսեցին այդ ալյուրից ճաշ պատրաստել և անունը դնել խորակ: Արցախում այնքան սիրեցին այդտեսակ ճաշը, որ ընդհանրապես բոլոր ճաշերն անվանեցին խորակ: Եվ արցախեցիներն իրենց շուրթերին պահեցին Հայոց աշխարհի մյուս կողմերում մոռացության տրված հնամենի այդ բառը:

## Առանց փշրանքի սուփրեն չեն հավաքում

**Մեզնից հազար** ու հազար տարի առաջ ծտերն ապրում էին միայն Մասիսի լանջերին: Բայց ահա Հայքի ծայրակալ մասեռում երևացին բազմաբազում միջատներ, որոնք խժուում ու ոշնչացնում էին արտերն ու այգիները, բոլոր բույսերն ու բանջարեղենը: Թվում էր, թե ուր-որ է միջատները պիտի ամայացնեն ամբողջ երկիրը:

Հենց այդ ժամանակ մարդիկ Մասիսի լանջերից բազմաթիվ ծաւեր բռնեցին, լցրին կողովների մեջ և տարան ու բաց թողեցին միջատաշատ գավառներում: Մի մեծ կոփվ սկսվեց միջատների ու ծտերի միջև: Ծտերը հաղթեցին ու դարձան մարդու հավիտենական բարեկամները: Մարդը հացի փշրանքը ծտերին է տալիս՝ վարձահատույց լինելով այն բանի համար, որ ծտերը խժուղ միջատներից փրկել են բոլոր հացահատիկները:

Հայոց աշխարհի ամեն մի գյուղում սեղանից վեր կենալիս շեն շեն անում, այսինքն՝ սուփրեն շեն հավաքում, եթե ծտերի համար հացի կտորտանք ու փշրանք չի լինում սուփրի մեջ:

## Արագիլ

Հարքում ասում են, թե դա եղել է Հայկ նահապետից առաջ: Բել բռնակալի պապը արշավել է մեր թորգոմա տուն, գերել բոլոր մշակներին և տարել ու բաց թողել հրաշեկ ավազուտներում՝ կարծելով թե նրանք անմիջապես կմեռնեն: Սակայն թորգոմազունները աննկատելի անէանում են բռնակալի աշքից և հրաշքով դառնում արագիլներ: Հետո թոշում են և գնում ու ապրում հեռավոր երկրում: Բայց հայրենիքի կարոտը այրում է նրանց սիրտը և գարնան սկզբին տուն են դառնում արագիլ դարձած:

Ամեն տարվա մարտի 9-ին Հայաստան աշխարհի գյուղերի մարդիկ դիմավորում են արագիլների վերադարձը։ Եթե արագիլն իր կտուցով հասկ կամ կանաչ շյուղ է բերում, ապա դա նշան է, թե տարին բերքառատ կլինի։ Շինականն իրեն բախտավոր է համարում, եթե արագիլը նրա տանիքին բույն է դնում։

Արագիլները մի քանի ամիս վայելում են գյուղացիների հյուրընկալությունը և չեն գիպշում ոչ հացահատիկներին, ոչ պտուղներին, ոչ էլ բանջարեղենին։ Նախկին մշակ-արագիլը ինչպես կարող է ձեռք տալ մշակի քրտինքով աճեցրած վաստակին։

Աշնանն արագիլները երամ-երամ չվում են դեպի հարավ։ Ասում են հեռավոր երկրում մի գետ կա, նրանք գնում և լողանում են այդ գետում ու դառնում իսկական մարդիկ։ Հետո հաջորդ տարվա գարնանը նույն գետում նորից են լողանում՝ հավքի թեր հագնում և թոշում դեպի Հայաստան։

## Ածիկ

Հարքը Հայոց աշխարհի տանիքն է։ Մի անգամ ձմեռն այնպես պինդ նստեց այստեղ, որ ոչ ոք գարուն, ամառ ու աշուն շտեսավ։ Մարդիկ տներում փակվեցին, անասունները՝ գոմերում։ Մոռացան և վար ու ցանքս, և արտ ու այգի։ Մերմացու ցորնահատիկները սկսեցին ուռշել և գիշերները տարօրինակ ձայներ հանել։ Մարդիկ ստիպված ցորենի մի մասը փուեցին սկուտեղների վրա։ Ամեն օր մի քիչ ջուր էին ցողում՝ խոնավացնում, որպեսզի «մեղմեն սերմացուի բարկությունը»։ Բայց տաս-տասնհինգ օր հետո դրանք սկսեցին ծլել։ Մարդիկ մըտմտացին, մտմտացին և որոշեցին իրենց անելիքը։ Հենց որ ծիւերը բարձրացան երկու մատնաշափ, նրանք ցորենն սկսեցին ծեծել սանդերի մեջ, հյութի հետ ալյուր խառնել և եփել մինչև կարմրավուն դառնալը։

Այսպես ստեղծվեց հայկական քաղցրահամ ուտելիք ածիկը։ Հետո հայերը իմաց տվին միմյանց և Հայաստանի բոլոր կողմերում սկսեցին ածիկ պատրաստել ամեն տարի։ Դրանով նրանք «վախեցնում էին» ձմռան աշքը. եթե մի տարի ածիկ չկրիկ ձմեռն աներես հյուրի նման ամբողջ տարին դուրս չի գա Հայոց աշխարհից։

## Հայաստանի հանրային առաջին փուռը

Հայաստանում հանրային առաջին փուռը կառուցվել է մեր թվականությունից առաջ երրորդ դարում Ծոփքի քաղաքամայր Արշամաշատում։

Այն ժամանակ Արշամաշատը շուկաների ու արհեստավորաց տների քաղաք էր։

Արշամաշատում հացը թխում էին գիշերը և վաճառում վաղ առավոտյան։ Սա միակ փուռն էր աշխարհում, որն ուներ իր գուսանը, նա շրջում էր քաղաքի փողոցներով, երգով ազդարում ամենքին, որ հանապազօրյա հացը թխված է և արշամաշատցիները կարող են անուշ անել այն։ Երգը միշտ ավարտվում էր գուսանական նույն մաղթանքով։

— Եվ թող հացաբույր լինեն Արշամաշատի բոլոր առավոտները։

..

## Երվանդ Վերջին արքայի հրովարտակը

Երվանդ Վերջին հայոց թագավորը մեր թվականությունից առաջ երրորդ դարի վերջին Երասխաձոր գավառում, Երասխ և Ախուրյան գետերի միախառնման տեղում մի քաղաք է կառուցում և իր անունով կոչում Երվանդաշատ։

Իր նոր քաղաքը համայն Հայքում հոչակելու նպատակով Երվանդ Վերջինն այսպիսի հրովարտակ է արձակում. «Ով համաձայնի դառնալ Երվանդաշատի մշտական բնակիչ՝ առաջին տասը տարում արքունի ամբարներից ձրի կստանա այնքան ցորեն, ինչքան պետք է իրեն»։

## Գարի ու ցորեն հացերը

Մի քուրմ գնաց արքայի մոտ և ասաց.

— Շինական ձավը մեհյանի ցորնահարկը չի տալիս և անիծո մ է հացը։

Կանչեցին շինական ձավին։ Սա էլ ասաց, թե քուրմը ստում է։

Արքայի հրամանով երկրագործին ու քրմին նետեցին հանցանաց խուց, Բանտապետն ամեն օր յուրաքանչյուրին տալիս էր մի գավաթ ջուր, մի աման ապուր և երկու տեսակ հաց՝ մեկը

գարի, մյուսը՝ ցորեն։ Եվ ամեն անգամ էլ բանտարկյալներին ասում էր.

— Զուրը կարող եք խմել մինչև վերջին կումը, ապուրն ուտել ամբողջովին, բայց երկու հացերից մեկը պիտի ուտեք՝ կամ գարին, կամ ցորենը։ Եթե հանկարծ մոռանաք և երկուսին էլ ձեռք տաք՝ նույն օրը կգլխատվեք։

Եվ ամեն առավոտ բանտապետը ետ էր վերցնում հացերից մեկը։

Նրեք ամիս հետո բանտապետը շինական ճավին տարավ արքայի մոտ ու զեկուցեց։

— Տե՛ր իմ՝ այս երեք ամսում ճավը միայն գարի հացն է կերել, ցորնահացին ձեռք չի տվել։

Արքան դիմեց շինականին.

— Դու ինչո՞ւ ցորենը թողած գարին ես ուտում։

— Արքա՛, ես երկրագործ մարդ եմ և սովոր շեմ ծրի հաց ուտել։ Ոչ հերկել եմ, ոչ ցանել, ոչ էլ հնձել, ձեռքս ինչպե՞ս դիացընեի ցորենին։

— Այդ դեպքում դու կարող էիր ձեռք լտալ նաև-գարի հացին։

— Գարի հացը ես ուտում էի շմեռնելու համար, — լրացրեց ճավը։

— Ազատեք այս մարդուն, հացի հարգն իմացող մարդը չի անիծի հացը, — հրամայեց արքան։

Հետո արքայի մոտ բերեցին քրմին։

— Դու ինչո՞ւ գարին թողած, ցորեն հացն էիր ուտում, — հարցրեց արքան։

— Արքա՛, ո՞ր հիմարը ցորենը կթողնի, գարին կուտի։

— Բայց դու ոչ մեկի վրա քրտինք շես թափել։

— Քրտինք պիտի թափի շինականը և ոչ թե ես։

— Արդար չես։ Դու ընդունո՞ւմ ես, որ շինականի դատաժն ես ուտում։

— Այո՛։

— Ապա ինչո՞ւ ես բամբասում անմեղ շինականին։

— Ո՞վ հաստատեց իմ բամբասանքը։

— Գարի ու ցորեն հացերը, — ասաց արքան և հրամայեց քրմին նորից հանցանաց խուց տանել և այնտեղ պահել ևս երեք ամիս և միայն գարի հաց կերցնել։

## **Առաջին հասկափնջերը Ավիրում էին Անահիտին**

Հեթանոս հայերը շատ էին սիրում իրենց սնուցող ձայր աստվածուհի Անահիտին, որին անվանում էին ոսկեմայր և ոսկեծղի։ Բոլոր արտերը հնձելուց հետո առաջին բերքի հասկափնջերը տանում ու դրանցով ծածկում էին Անահիտի արձանը։

Նրանք համոզված էին, թե զոհարերությամբ ապահովում են իրենց բերքի պահպանումը ամեն տեսակ աղետից ու արհավիրքից։

### **Սեղանի թագավորը**

Հայոց Վաղարշակ թագավորը տերության բոլոր կողմերից պալատ կանչեց յոթանասուն իմաստունի և նրանց ասաց.

— Յորենավետ է այս տարի։ Շինականները յոթ տարվա համար հատիկ են ամբարել։ Ի պատիվ այս առատության մենք յոթ օր խնջույքի կնստենք և անուշ կանենք ամեն տեսակ ցորենահաց։ Ով յոթերորդ օրը կարողանա հացի մասին սեղմ ու իմաստուն մի այնպիսի խոսք ասել, որ դուր գա ինձ՝ նրան կնվիրեմ մի ոսկե մատանի։

Ասելն ու խնջույքն սկսելը մեկ եղավ։ Յոթանասուն իմաստունները կերան ու խմեցին, իրենց գինու ըմպանակները գարկեցին արքայի ըմպանակին։ Յոթ օր սեղանների վրա հանդես սարքեցին Հայաստանի սննդարար բարիքները՝ լավաշ, խորոված ու խաշած միս, կաթ ու մածուն, չորսհարյուր տեսակ համեմ ու բանջար, խաղող, տանձ ու խնձոր, ծիրան ու նուշ։

Վաղարշակ թագավորը ամեն ինչ սեղանի վրա էր թափել, որ իմաստունները կարողանան համեմատության մեջ արժեքավորել հացը։

Մտմտացին, մտմտացին իմաստունները և յոթերորդ օրը ամեն մեկը մի բան ասաց հացի մասին։ Բայց ոչ մի խոսք դուր շեկավ արքային։ Հենց այդ ժամանակ Վաղարշակ թագավորը դիմեց իր խոհարարին։

— Գուցե դո՞ւ ասես, թե ինչ է հացը։

— Սեղանի թագավոր, — հանգիստ պատասխանեց խոհարարը։

— Հրաշալի՛ է։ Հացն, իրոք, սեղանի թագավոր է, առանց

Հացի սեղան չի լինի: Դու ավելի իմաստուն ես, քան այս յոթանասունը,— ասաց Վաղարշակը և արքայական մատանին նվիրեց խոհարարին:

## Պահ ցորենի ծղոտներից

Ոչ մի տեղ նորափեսայի գլխին այնքան գեղեցիկ պսակ չէին դնում, ինչպես Հայոց աշխարհի Հարք գավառում: Պսակն այստեղ հյուսում էին ցորենի ծղոտներից, ապա ներկում գույնը զույն, Պսակի ծղոտները եռագույն էին անում, խարիսխը՝ ցորենագույն, հյուսվածքը՝ կարմիր ու կապույտ:

Այս ամենն անելուց հետո պսակադրության ժամանակ նարոտ պսակը կապում էին փեսայի ճակատին:

Զէ՛, շկարծեք, թե սա հենց այնպես էին անում՝ փեսային զուգելու համար: Հարքեցիք այդ պսակով նորաստեղծ ընտանիքին հացառատություն էին մաղթում:

## Համբուրում են հացը

Տմորիքի հայերը մի սովորություն ունեն: Վերցնում են գետնին ընկած հացը, թափ տալիս փոշին, համբուրում և դնում մի բարձր տեղ:

Ասում են՝ գետնին ընկած հացը շտեսնելու տվող հայի յոթերորդ պորտն այլևս սերունդ չի ունենում:

## Մի օր ջուր չեմ խմում

Հայաստանի Աղձնիք նահանգի Տատիկ գավառի բոլոր գյուղերում ով գիտե որ ժամանակներից սկիզբ առնող մի սովորություն է եղել: Ամուսն երաշտին շինականները ձեն-ձենի են տվել և միասնաբար որոշել մի օր ջուր չխմել: Նրանց թվում էր, թե կիզիչ արեկից խանձվող արտերը տեսնում էին այդ զոհաբերությունը, ուժ առնում և դիմանում երաշտին:

## Կալոց

Արաքսի ձախ ափին, Արշարունիք գավառում, հացաշատ մի գյուղ է եղել:

Մի անգամ ամուսն հնձի ավարտին թշնամին գրավեց այս

գյուղը, բայց ավարի համար հարմար բան չգտնելով՝ շարացավ և հերկեց գյուղի հազար կալերը։ Ու հեռացավ՝ կարծելով, թե հայ շինականների բերքը կփչանա։ Դե՛, եթե կալ չկա՝ որտե՞ղ պիտի կալսես խրձերը։

Թշնամու հեռացնալու հաջորդ օրը, մի գիշերվա մեջ, գյուղի մեծ ու փոքրը վրա թափվեցին և պատրաստեցին հապար նոր կալ։

Այդ ժամանականից էլ գյուղը կոչվեց Կալոց։

## Երդվում են հացով

Քաղաքամայր Արտաշատի արքունի դատարանը հոտնկայս դիմավորում է մեծ դատավոր արքայազն Վրույրին։ Վերջինս հագել էր ծիրանի պարեգոտ, գլխին դրելորդան կարմիրի գույնի կնգուղ։

Մեծ դատավորը մոտենում է բարձրադիր բազմականին և հայացքն ուղղում բազմամարդ սրահին։

Քիչ անց զորականների ուղեկցությամբ ներս են բերում հանցավորներին։ Հետո սրահի աջ անկյունում շարվում են վկաները։ Ամենքն սպասում են։ Դատավորը դեռ կանգնած է ոտքի վրա։ Ու մի ձայն չի լսվում, թվում է, թե սրահում լուր վթյան մի դար է նստել։

Վերջապես ներս բերեցին եռոտանին, որի վրա մի թարմ հաց էր դրված։ Հանցավորներից մեկը մոտեցավ եռոտանուն, ձեռքը դրեց հացի վրա և ասաց.

— Երդվում եմ հացով, որ դատարանին կհայտնեմ ճշմարսությունը՝ ինչքան էլ այն դառն լինի ինձ համար։

Նույնը կրկնեցին մյուս հանցավորները։

Սպա եռոտանուն մոտեցավ վկաներից մեկը։

— Այս հացը վկա, ես կասեմ միայն ճշմարտությունը, եթե ստեմ, թող հացը կուրացնի իմ աշքերը, — ասաց նա։

Նույն ասացին մյուս վկաները։

Մեծ դատավորը նստեց բազմականին և դատավարությունն սկսվեց։

## Մատ կտրողին մեկ տարով գրկում էին հաց ուտելուց

Այրարատ նահանգի Արշարունիք գավառում, Ախուրյան գետի աջ՝ ափին, մի բերդաքաղաք է եղել Բագարան անունով։ Մեր թվականությունից առաջ երկրորդ դարում այս քաղաքի մոտ տնկել են Ծննդոց կոչվող նշանավոր անտառը։

Այդ անտառից թեկուզ մի ծառ կտրողը Երվանդ արքայի հրամանով նետվում էր Հանցանաց խուց և այնտեղ մնում մեկ տարի։ Բանտարկյալին տալիս էին զանազան ուտելիքներ և ջուր, բայց ոչ Հաց։ Մի ամբողջ տարի նա Հացի համ չէր առնում և Հանցանաց խցից դուրս էր գալիս ուժասպառ դարձած։

— Դա ամենաարդար պատիճն է, — ասում էր Երվանդ արքան, — թող ծառ կտրողն իմանա, որ ծառը բնության համար նույնն է, ինչ մարդու համար Հացը։

## Ինչպես էր մառանապետ ընտրում Արտաշես արքան

Հայոց արքունիքի համար մառանապետ էին որոնում։

Մի օր սենեկապետը մտավ գահասրահ և Արտաշես արքային գեկուցեց։

— Տե՛ր իմ, մառանապետի պատշաճ թեկնածու եմ գտելի

— Ինչո՞վ է նա պատշաճ, — Հարցրեց արքան։

— Գեղադեմ է, քաջադանուր, բարձրահասակ, լայնաթիկունք, ամուր ոտքերով։ Նաև անուշ ժպիտ ունի։

Արտաշեսն ասաց.

— Այդ ամենը կարող է ունենալ ամեն մի տղամարդ։ Բայց ամեն մարդ չէ, որ կարող է մառանապետ լինել։

— Ես ինչպե՞ս պիտի վարվեմ, տե՛ր իմ։

Եվ արքան ասաց.

— Կապիր այդ մարդու աշքերը և թևանցուկ արած մտիր արքունի ամբարանոցներն ու մառանները։ Հոտ քաշելով նա պետք է որոշի, որ ինքն անցնում է ցորենի ամբարով, ապա գարու ու կորեկի ամբարներով, հետո մտնում է պանրատուն։ Այնտեղից իջիր խոր նկուղները, ձեռքով շոշափելով նա պիտի որոշի, որ դա ոչ թե Հացահատիկի, այլ գինու կարաս է։ Եթե անսխալ

պատասխաններ կտա՝ կնշանակե այդ մարդը աշքերը փակ սթերքները տարբերում է իրարից և կարող է մառանապես լինել:

## Ախորժակի մասին

Այրարատ նահանգի Ուրծաձոր գավառում հացի մի կտոր էին վերցնում, կոխում Երասխի ջրի մեջ և տալիս ախորժակ շունեցիղ մարդուն: Եվ հավաստում էին, թե փակ ախորժակն իսկույն բացվում է:

Մի անգամ շինական Պսակը հնձից հետո նստեց հացի: Սակայն ինչ արեց-շարեց, հացը կուլ չէր գնում: Նա վերցրեց հացը և քայլեց դեպի Երասխի ափը: Տեղ հասնելով՝ հացը կոխեց ջրի մեջ, որոշեց մտքում հաշվել մինչև տասներկուսը և նոր հացը հանել ջրից: Բայց դեռ չորսին շհասած՝ մի ձուկ հացն առավ ու սուզվեց ջրում: Պսակի ձեռքին մնաց մի փոքրիկ պատառ Շինականը ժպտաց ու ինքն իրեն ասաց.

— Ախորժակ ունեցողը ուրիշի ձեռքից էլ հաց կփախցնի, ինչպես արեց ձուկը: Ինձ պես հիմարին սա քիչ է: Գետի ջուրը ձկան ախորժակը կբացի և ոչ թե մարդու:

## Ստամոքսը հացով գերլցնելը հանցագործությունն է

Աշխարհի բոլոր հզորների նման քմահաճ էր հայոց արքայից արքա Տիգրան Մեծը, բայց տեղն եկած տեղը իմաստնանում էր մի իմաստունի շափ:

Մի անգամ նորակառուց Տիգրանակերտ մայրաքաղաքում շատակերների մրցություն էր կազմակերպվել: Արքայից արքային զվարճացնելու համար այստեղ էին հավաքվել Հայրի բոլոր կողմերի որկրամոլները: Մեկն ասում էր, թե կարող է տասը հավ ուտել՝ ոսկորներն էլ հետը, մյուսը՝ երկու խաշած գառ, երրորդը՝ խորոված մի եղջերու, չորրորդը՝ մի տիկ գինի խմել:

Մեկին էլ ցույց տվեցին, որը պատրաստ էր ուտել տասներկու կլորակ մեծ հաց:

— Այս մեկը չեղավ, — զայրացավ արքայից արքան: — Մարդը կարող է ամեն տեսակ ուտելիքով ու հեղուկով լցնել իր ստամոքսը, բայց հացով գերլցնելը հանցագործություն է: Հացը

նրա համար է, որ մարդ հագեցնի միայն օրվա քաղցր։ Զափազորությունն ամենից ջատ պիտի երևա հենց այդ բանում։ Հացը կարասում են ամբարում և ոչ թե մարդկային ստամոքսում։

## Եղի

Լուր տվին հայոց արքայից արքա Արտավազգին։

— Մուշի գավառի Խոփեր գյուղում ոչ մի տղամարդ չի հիվանդանում մինչև վաթսունին հասնելը։ Ոչ ոք չի կարող մեկնել խոփերցիների դիմացկունության գաղտնիքը։

Արտավազգը ելավ և քաղաքամայր Արտաշատից հասավ Խոփեր։

— Մենք ոչ մի գաղտնիք էլ չունենք, — արքայից արքային պատասխանեցին Խոփերի շինականները, — էլ ինչ տղամարդ, որ շկարողանա մինչև վաթսունը ոտքի վրա մնալ առանց հիվանդանալու։

Խոփերցիների ամբարտավան պատասխանը շբավարարեց Արտավազգին։ Նա իր մոտ կանչեց գյուղի ամենատարեց մարդուն՝ հարյուրսանամյա Վառգոշին և երկրորդեց իր հարցը երկարակյացը արքայից արքային ասաց։

— Ամուն սկզբին ցորենի դեռահաս արտերից հրաշալի բուրմունք է բուրում։ Հենց այդ ժամանակ կակուղ ու կաթուռ հասկերից շինականները փոքրիկ փնջեր են անում և սկսում խանձել ու խածղել կրակի վրա։ Այդպես խորոված ցորնահատիկը գրգռում է նույնիսկ մահամերձ մարդու ախորժակը։ Մուշի բոլոր կողմերում դա կոչվում է եղի կամ հեղի։ Եղիից համեղ բան չիք համայն աշխարհում։ Ով փոքրուց տարեկան թեկուզ մի անգամ եղի ուտի՝ մինչև վաթսունը չի հիվանդանա։ Սա է համագյուղացիներիս դիմացկունության գաղտնիքը։

— Ես ուշացել եմ հիսուն տարով, — արձագանքեց Արտավազգը և հրաժեշտ տվեց Վառգոշին ու բոլոր խոփերցիներին։

## Հացյաց դրախտ

Տարոնում, Արածանի գետի ձախ ափին, հացենիների մի պուրակ կա, որ կոչվում է Հացյաց գրախտ։ Իրավ է, գեղեցիկ ծառ է հայկական հացենին՝ ծիգ իրանով, մանր, մոխրագույն ու ողորկ տերևներով, միակուտ, երկայնկեկ պտուղներով և այն-

պիսի պահվածքով, որ նմանվում է գոտին միշտ պնդեցրած զորականի: Թայց ոչ գեղեցկուհի է, ոչ քաղցրապտուղ, ոչ էլ որևէ մեկը գուշակություն է արել նրա տերենների սոսափյունով:

Երկու հազար տարի առաջ ոչ այս ժառն է հացենի կոչվել, ոչ էլ Տարոնի պուրակը՝ Հացյաց դրախտ:

Հայոց աշխարհի թագուհի էրատոն տարօրինակ պատժի է ենթարկում իր անհնաղանդ զորականներից երկուսին, որոնցից մեկի անունը Տիրատուր էր, մյուսինը՝ Վահրիճ: Թագուհու հրամանով այդ երկու զորականներին բերում և գցում են Տարոնի ծառերի պուրակը:

— Ապրեցեք պուրակում՝ ինչքան կարող եք, եթե դուքս գաք անտառակից՝ անմիջապես կնետահարվեք, — ասացին Տիրատուրին ու Վահրիճին:

Եվ էրատոյի դրանիկ գնդի զինվորները շրջափակեցին անտառը:

Երկու ամիս հետո թագուհու զինվորները մտան անտառ՝ կարծելով, թե Վահրիճին ու Տիրատուրին կգտնեն սովահար եղած: Զարմացան՝ նրանց ողջ տեսնելով:

Ապա մարդիկ իմացան, որ Տիրատուրն ու Վահրիճը սոված չեն մնացել անտառում: Զիգ ժառերի տերեններից շաքարալից հյութ է թափվում խոտերի վրա ու պնդանալով դառնում գաղպեն:

— Մեր հացը եղել է այս մեղրահաց գաղպենը, — ասացին Տիրատուրն ու Վահրիճը, — սրանք սովորական ժառեր չեն, այլ հացենիներ, այս պուրակն էլ ոչ թե անտառակ է, այլ Հացյաց դրախտ:

Այդ ժամանականից էլ գաղպենատու ժառը կոչվեց հացենի, իսկ Տարոնի հացուտը՝ Հացյաց դրախտ:

## Հայաստանի սահմանները գծվում են կլորահատիկ ցորենի արտերով

Աշխարհում առաջին ցորենն աճել է այն ժամանակ, երբ Մասիսի կատարին դեռ ձյուն չէր նստում: Կլորահատիկ է, կարմըրիկ, հուռթի, համարյա անքիստ հասկերով, Ասում են՝ հայերի լեզուն բացվել է, երբ սկսել են կլորահատիկ ցորենի հացուտել: Այդ ցորենից են իրենց գույնն առել հայերի այտերը:

Կլորահատիկը ամենասննդարան է բոլոր ցորենների մեջ:

Իրավ է, դժվար էր այն ցանելն ու աճեցնելը, բայց շկար հայ-  
կական մի գյուղ, ուր կլորահատիկի արտ լիներ: Այդ պատճա-  
ռով էլ հին Հայաստանի սահմանները գծվում էին այդ ցորենի  
արտերով:

Երկու հազար տարի առաջ հույն գիտուն Սարաբոնը ոտքով  
անցավ Հայաստանի մի ծայրից մյուսը: Եկավ ու գրեց իր ական-  
ջով լսածի ու աշքով տեսածի մասին: Նա առաջին պատմիչն էր,  
որ ասաց, թե Հայաստանը միալեզու է՝ այսինքն Հայաստանի  
բոլոր բնակիչները խոսում են հայերեն: Այն ժամանակ Հայաս-  
տանի եզրերը գծվում էին հայերեն խոսակցության սահմաննե-  
րով, այսինքն Հայաստանը ձգվում էր այնքան, ուր վերջանում  
էր հայերեն խոսքը:

Ստրաբոնը գրեց, թե Կուր գետի ձախ ափին, Ալազանի հով-  
տում, Հնարակերտ քաղաքի ուղղությամբ, հայկական մի գա-  
վառ կա Կամբեճան անունով, որը Մեծ Հայքի սահմանները  
Կուրի աջ ափից տանում էր ձախ ափը:

Այն ժամանակ բավական դյուրին էր Ստրաբոնի գործը: Նա  
Հայաստանը շափում էր հայերենով ու հայկական ցորենի ար-  
տերով:

## Արտը խախուտ, մհանեն՝ կարկուտ

Կապուտան լճի հյուսիսարևմտյան կողմում մի հին քաղաք  
է եղել Զարեհավան անունով: Պարսկահայք նահանգի տարբեր  
կողմերից շատ մարդիկ էին գալիս այստեղ և դիմում գուշակ  
Ապավենի օգնությանը:

Ապավենը համարյա անսխալ գուշակում էր, թե երբ անձրև  
կգա, երաշտն ինչքան կտեի, ինչպիսին կլինի այդ տարվա բեր-  
քը:

Մի անգամ Ապավենի մոտ եկավ ջինական Փառներսեհը: Սա  
ծույլ մարդ էր, հողը մշակում էր կիսատ-պոատ և կիսատ-պոատ  
էլ բերք ստանում: Զգիտես ինչու Փառներսեհը ուզում էր, որ  
կարկուտ կամ երաշտ լինի, ամենքի արտերը փշանան, որպես-  
ուի ինքն էլ բոլորի նման մեղքը գցի կարկուտի կամ մի ուրիշ  
բանի վրա:

Ապավենը, որ Ցանաշում էր Փառներսեհին, ասաց.

— Այս տարի ոչ երաշտ կլինի, ոչ էլ ուրիշ արհավիրք,  
ամենքն առատ բերք կստանան:

- Իսկ եթե աղետաբեր մորեխի ամպը հասնի մեզ,— չարությամբ խոսեց Փառներսե՞լը:
- Մորեխի ամպ էլ չի լինի:
- Իսկ եթե կարկուտ լինի:
- Արտը խախուտ, մհանեն՝ կարկուտ,— պրույցը եղբափակեց Ապավենը:

## Հաց Էին թխում Թուխ գետի ջրով

Աղձնիք նահանգում սկիզբ առնող թուխ գետը գնում-թափվում է Վանա լիճը: Հնում կարծում էին, թե այս գետի ջուրը խոսնակ ուժ ունի: Հայոց աշխարհի բոլոր կողմերից մարդիկ գալիս էին թուխի ափերը, մի-մի շիշ ջուր վերցնում և, տուն վերադառնալով, այդ ջրով խմոր հունցում, հաց թխում ու կերցնում կակաղող աղջիկներին ու տղաներին: Նրանք համողված էին, թե դրանից հետո կակաղողների լեզուն կբացվի:

## Հին ու նոր ալյուրը

Երեկի ոչ մի տեղ ցորենն այնքան շուտ չի հասնում, որքան արեալառ Փայտակարանում: Գուցե այդ պատճառով է, որ հայուհիներն այստեղ մի տարով ավելի շուտ էին ամուսնանում, քան Հայաստանի մյուս նահանգներում: Տասնվեց տարեկան աղջիկը շատ բան պիտի իմանար աշխարհի ու կյանքի մասին:

Փայտակարանում աղջիկներին համեմատում են ալյուրի հետ: Նոր ալյուրից թխում են հրաշալի ու անուշահամ հացեր: Հինք դժվար է շաղախվում և հացն էլ համով չի լինում: Փայտակարանցին ի բերան գիտե հացի դասը՝ նոր ալյուրը լավ է, հինը՝ անպիտան: Հին ալյուրը նման է այն աղջիկներին, որոնք ամուսնանում են քառասուն տարեկանից հետո: Դժվար է ասել՝ նրանք երեխա կունենա՞ն, թե ոչ:

## Թիլի ցորենը

Կապուտան լճում թիլ անունով մի կղզի կա, որի անունով լիճը երբեմն կոչել են թիլ:

Առաջին դարում Վարժ անունով մի մարդ էր ապրում այս կղզու վրա: Մի փոքրիկ հողակտորի վրա Վարժը ցանում էր տար-

բեր տեսակի ցորենի սերմեր: Յանելուց առաջ հատիկները լվանում էր մի քանի անգամ, հողն էլ այնպես էր փխրեցնում՝ ոնց որ մաղած ալյուր:

Ու մի օր էլ Վարժի ցանած ցորենն աճեց ու հասունացավ ինն օրում: Վարժը նորից ցորեն ցանեց և ինն օր հետո բերք ստացավ: Այսպես շարունակվեց մինչև աշնան կեսը: Յոթ ամսում նույն հողակտորից Վարժն ստացավ քսաներեք բերք:

Վարժը հասկանում էր, որ ինքը մի այնպիսի աշխարհաշեն հայտնագործություն է արել, որին աստծու ուժն էլ չէր պատի: Նա գնաց Հայոց քաղաքամալր Արտաշատ և այդ մասին հայտնեց արքունիքին: Զհավատացին: Այդպիսի բանը մարդ պետք է տեսնի իր աշքով: Բայց Վարժին թվում էր, թե ցորենն ինն օրում աճեցնելու գաղտնիքը բացելուց հետո ոչ ոք չի հավատա, որ դա իր գյուտն է: Զէ՞՞ որ ինն օրում ցորենն ստանալը այնքան դյուրին բան էր, որ ամեն մեկը կարող էր իրեն վերագրել:

Փառասեր Վարժը ծանրութեթև արեց և ոչ մեկին շհայտնեց ինն օրում ցորեն աճեցնելու գաղտնիքը: Վարժն իր հետ գերեզման տարավ մի հայտնագործություն, որը ցորենատարագ կդարձներ աշխարհը:

## Միայն ալյուրով հալվա չի լինի

Խոյ քաղաքում Տոնիկ անունով մի մարդ էր ապրում: Մի օր սա իր կնոջն ասում է.

- Կնիկ ջան, հարստանալու ճամփեն գտել եմ:
- Ո՞նց, — հարցնում է կինը:
- Հալվա կպատրաստեմ ու կծախեմ:
- Հալվայի համար յուղ է պետք, շաքար կամ մեղր է պետք, միայն ալյուրով չի լինի, դու ինչպե՞ս կարող ես հալվա սարքել ու վաճառել:

- Միայն ցամաք ալյուրով կպատրաստեմ, ոչ յուղ կիսառնեմ, ոչ էլ շաքար կամ մեղր:
- Մարդիկ համը կառնեն, ու տեսնելով, որ հալվայի նման չէ լին առնի:

Աշխարհում անփորձ մարդիկ շատ կան: Եթե այդ անփորձներից յուրաքանչյուրը մի անգամ իմ հալվայից առնի՝ ես կարգին կհարստանամ:

## Ամենա արտում մարդակերպ մի հասկ էր լինում

Այրաբատ նահանգի նիգ գավառում յուրաքանչյուր շինական ուզում էր իր արտի հովանավորը դառնալ աներևույթ ձևով։ Ցանքսի ժամանակ շինականը մարդակերպ մի գնդիկ էր սարքում խմորից՝ մեջը մի սերմացու տեղավորում և զնում հողի մեջ։

Եվ ահա սերմը ծլում է, գլուխը վեր բարձրացնում խմորի փոքրիկ արձանիկի ձև ստանալով։ Հենց այդպես էլ արտի մեջ աճում է մարդանման հասկը։

Ամեն արտում լինում է մի այդպիսի հասկ, որն ասես տիրություն է անում մյուս հասկերին։

Մարդը աստվածանում էր հասկի մեջ և աստվածացնում արտն ու նրա տված բերքը։

## Ամենասրբազան տունը թոնիրն է

Ծատ տարիներ առաջ Փայտակարանում պսակադրությունն արել են թոնրատանը։ Աղջիկն ու փեսան ծեռք-ծեռքի տված պտտվել են թոնրի շուրջը, ապա համբուրվել։ Հետո աղջիկը հայրական թոնրից մի բուռ մոխիր է վերցրել ու լցրել գրպանը։ Երբ մտել են փեսայի տուն՝ հարս ու փեսա նախ երեք անգամ պտտվել են կրակարանի ու թոնրի շուրջը, ապա չոքել ու համբուրել կրակարանն՝ ու թոնիրը։ Հենց այդ ժամանակ էլ հարսը հոր տնից բերած մոխիրը թափել է թոնրի մեջ։

— Թոնիրը հայ շինականի առաջին սրբազան տունն է, — ասում են Փայտակարանում։

— Մարդու համար սրբազան տունը աստծու տաճարն է՝ եկեղեցին, — առարկում են եկեղեցու հայրերը։

— Ոչ մի եկեղեցի սոված մարդուն չի կերակրել, իսկ թոնիրը հաց է տալիս ամենքին, — համառում է փայտակարանցին, — հացով է կենդանի մարդը, հետևապես սրբազան տների մեջ ամենասրբազանը թոնիրն է։

## Յորենի յուրաքանչյուր հասկի մեջ եղած հատիկները առանց մնացորդի բաժանվում են յոթի

Բանաստեղծ ու դրամատուրգ, Հայոց աշխարհի՝ արքայից արքա Արտավազդը մի անգամ քաղաքամայր Արտաշատ հրավիրեց յոթ սրամիտ-հնարագեաների:

— Այս ոսկե ըմպանակը կշահի նա, ով կարողանա մի այնպիսի սրամիտ ու իմաստուն բան ասել, ոք մինչև հիմա չի անցել ոչ մի իմաստունի կամ գիտունի մտքով:

Առաջին վեց հոգու ասածներից ոչ մեկը դուր չեկավ արքայից արքային: Յոթերորդն ասաց.

— Աշխարհի ամենազարմանալի հացահատիկը հայկական կլորահատիկ ցորենն է: Ոչ ոք չգիտե, որ նրա յուրաքանչյուր հասկի մեջ եղած հատիկները բաժանվում են յոթի՝ յոթ, տասնըշորա, քսանմեկ, քսանութ, երեսունհինգ, քառասուներկու, քառասունինը, հիսունվեց, վաթսուներեք, յոթանասուն և այսպես անվերջ: Մի հատիկով ավել կամ պակաս լինել չի կարող: Եղածն առանց մնացորդի բաժանվում է յոթի:

— Դու շահեցիր մրցանակը, — հիացած բացանկանշեց Արտավազդը: — Հիմա կսուրուզենք քո ասածը:

Քիչ հետո արքայից արքայի մոտ բերեցին քաղաքամերձ արտի տարբեր կողմերից պոկված հասկեր: Հաշվեցին: Յոթերորդ սրամիտ-հնարագետը իրավացի էր:

### Բանտում Էլ իր արտն է վարում

Մի շինականի կանչեցին արքայի մոտ և ասացին.

— Դու պետք է թողնես գյուղը և տնով-տեղով փոխադրվես քաղաքամայր Արտաշատ, կղառնաս քաղաքացի ու հարմար մի գործ կգտնես:

— Զեմ կարող, առարկեց շինականը:

— Ինչո՞ւ

— Ես ինչպես պիտի ապրեմ առանց հողի, առանց արտի ու ցանքսի:

— Կվարժվես, քաղաքը մաքուր է, դու կմոռանաս ցեխուտ գյուղը, կմոռանաս թրիքի հոտը: Իսկ այստեղ, Արտաշատում,

արքայական պարտեզների բուրմունքը խուսուս է տալիս մարդու քիմքը:

— Ոչ մի պարտեզ չի կարող այնպիսի հոտ արձակել, ինչպես դաշտերից քաղած թարմ խոտը, որ երեկոյան փռում եւ տանդ բակում, — համառեց շինականը:

— Դու համարձակվում ես արհամարհել արքայական պարտեզի հոտը:

Եվ անմեղ շինականին նետեցին հանցանաց խուց: Բանտապանն ամեն օր անցքից հետեւում էր, թե խցի մեջ ինչ է անում շինականը և անմիջապես զեկուցում արքային:

Գարնան սկիզբ էր: Շինականը բանտում ետ ու առաջ էր շարժվում և ինքն իրեն ասում:

— Սա իմ Կլոր տափն է, իմ արտատեղը: Ես հիմա կլծեմ եզները, ահա այսպես, — և շինականը շարժումներով ցույց էր տալիս, թե ինչպես է լծում եզները, — հիմա մաճը կուղղեմ և կսկսեմ, դե՛, ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտ, ահա և իմ առաջին ակոսը, մեկը հազար կանես, դրա փոխարեն ես մի կայթ ցորեն կնվիրեմ քո տաճարին:

Երկու ամիս հետո բանտապանը նկատում է, թե շինականն ինչպես է քաղհանում արտը ու սրտապարար զրույց անում իր զեղջուկ կնոջ հետ:

Այդպես ամեն օր շինականը հոգով ու մտքով իր արտի հետ էր, իր հայրենի գյուղում:

Մի անգամ էլ նա պատկերացրեց, որ արտն արդեն հասել է և նթե ժամանակին չհնձի՝ հասկերը կկծղեն:

Զարմանալին այն էր, որ շինականը, գտնվելով փակ խցում, ճիշտ էր կուահում արտի հասունացման փուլերը:

Մի առավոտ բանտապանը ներս մտավ՝ ու շինականին ասաց.

— Դուքս գնա:

— Ո՞ւր:

— Ձեր գյուղը, արտդ հասել է, գնա հնձիր:

— Գնամ հնձեմ-պրծնեմ ու ե՞տ գամ:

— Ոչ, մնա գյուղում, արքան քեզ ազատ է արձակում, քո մայրաքաղաքը ձեր գյուղն է:

## ԻԱՀՈՒ ԵՅ ԱՐՄԵԳՐԵՐԻՆ ՀԱՍԿԵՐ ԹՈՂՑՈՒՄ ԹՇՉՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մոկք նահանգի Մյուս իշխար գավառում հնձի ժամանակ թըռչունների համար արտեզրերին թողնում են մի քանի հասկեր:

Մի անգամ իշխան Կյուրեղը, որ բազում արտեր ուներ Մյուս իշխարի բոլոր գյուղերում, իր մշակներին հրամայում է արտերը հնձել ամբողջովին, առանց մի հասկ թողնելու: Թըռչունները խոռվում են և հեռանում Մյուս իշխարից: Հաջորդ տարում մորեխի ամպերը նստում են արտերի վրա և սկսում ոշնչացնել հասկերը: Ագահ իշխանը տասը հազար մշակ է վարձում մորեխի դեմ կովելու համար: Բայց ոչինչ չի ստացվում, մշակները շեն հասցնում հնձել նույնիսկ մի հասկ:

— Մի՞թե հնարավոր չէ ոչինչ փրկել, — հուսահատված ասում է Կյուրեղը:

— Ո՛չ, իշխան, մեր ուժից վեր է ոշնչացնել այսքան մորեխից, — ասում են մշակները, — սա թոշունի գործ է: Հազար թըռչուն ավելի շատ մորեխ կոշնչացներ, քան տասը հազար մշակը:

### Վահագն աստծու զբոսարանը

Մի ժամանակ Արցախի Տրտու գետի հովտում, Վաղուհաս գյուղի մերձակա Գայլ լեռան կատարին, Վահի անունով երկու զանգակատուն կար: Երաշտ ժամանակ արցախեցին ջուր էր լցնում մի զանգակատան վրա՝ հուսալով, թե անձրև կգա, իսկ անձրևոտ օրերին կրակ էր վառում մյուս զանգակատան վրա՝ հուսալով, թե ուր որ է կծագի արևը:

Ասում են Գայլ լեռը եղել է հայոց արևի աստված Վահագնի զբոսարանը: Տիրության պահին Վահագնի արցունքը անձրև էր դառնում, իսկ խնդության ժամանակ նրա այտերի հուրհատումից լուսավորվում էր համայն աշխարհը:

Արցախեցին յուրաքանչյուր նոր բերքից մի րուր ցորեն էր տանում ու դնում Գայլ լեռան վրա և ասում.

— Սա էլ մեր Վահագն աստծու բաժինը:

## Յիկնանց տիկին Հեղինեն փրկեց սովորմաներին

Հայոց Սանատրուկ թագավորը 91 թվականին արշավում ու գրավում է Եղեսիա քաղաքը։ Պարտված թագավոր Աբգարն էլ հայ էր։ Վերջինիս տիկնանց պիկին Հեղինեն երեխ ամենագեղեցիկ հայուհին էր ամբողջ աշխարհում։ Նա շատ բաներում էր օգնել Սանատրուկին, այդ պատճառով էլ հաղթողը արժանին մատուցեց Հեղինեին և նրան նշանակեց Միջագետքի դշխո։

Հեղինեն, սակայն, Միջագետքում չապրեց, վեր կացավ ու զնաց Երուսաղեմ Հենց այն ժամանակ, երբ մեծ սովը ամայացնում էր այդ կողմերը։ Տիկնանց տիկինը ծախսեց իր ունեցած մի սնդուկ ոսկին և վրայի արդուզարդերը, Եգիպտոսից Յորմն գնեց և բաշխեց բոլոր սովորմաներին։

Այդ պատճառով երուսաղեմցիները Հեղինեին դասեցին սըրբերի շարքը և երբ մահացավ՝ նրա մարմինը թաղեցին քաղաքի մեծ դարպասի առջև, որ նշան էր, թե սովը կվախենա և այլևս չի մոտենա Երուսաղեմին։

## Մասիսը Հայաստանի ցորենն է, Փոքր Մասիս՝ գարին

Գարու ցողունը կարճ է լինում, ցորենինը՝ երկար։ Հին հայ իմաստասերներն այդ միտքն արտահայտում էին պատկերավոր։

— Մասիսը Հայաստանի ցորենն է, Փոքր Մասիս՝ գարին։

Մի անգամ նախարարներից մեկը փորձեց փեսայանալ հայոց արքային։

— Ես շգիտեմ՝ դու կարո՞ղ ես իմ դստերն այնպես պահել, որ նա ամեն օր թարմ ցորնահաց ուտի, — ասաց արքան։

Նախարարն անմիջապես շպատասխանեց։ Նա տուն վերսպարձավ, մի պատկերահան վարձեց և ասաց, թե ինչ սնել։

Պատկերահանը կտավի վրա այսպես պատկերեց. արքայադուստրը նստել է ցորնահատիկներից կազմված Մասիսի վրա, իսկ մի ձի գլուխը խոթել է գարու հատիկներից կազմված Փոքր Մասիսի մեջ։

Եվ նախարարն այդ նկարն ուղարկեց արքային։

## Հիվանդ ունեցող կոշեցին լավաշ է թխում

Հին ժամանակներում Աշտարակի շրջանի Կոշ գյուղում հիվանդ ունեցող տղունը թարմ լավաշ էր թխում, հետո տան անդամներից մեկը վերցնում էր մի մեծ խորձ լավաշ, ամբողջ օրը կանգնում գյուղից դուրս տանող ճանապարհի եզրին և հաց բաշխում անցնող դարձողին:

Կոշեցին համոզված էր, թե աստված տեսնելով այդ սրտաբացությունը՝ օգնում է, որ հիվանդը շուտ ապաքինվի:

## Հինգ տարում հինգ բուռ ցորեն

Երրորդ դարում Կորճայք նահանգի Որսիրանք գավառում երիտասարդ մի իշխան էր ապրում Բագունի անունով։ Հայրը սրան սովորելու է ուղարկում Եփիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը։ Բագունին հետը վերցնում է հինգ բուռ հայկական ցորեն։

Նա Ալեքսանդրիայում մնում է հինգ տարի։ Ամեն տարի՝ մի բուռ ցորեն էր ուտում՝ որպեսզի հայրենի տան ճամփան շմոռանա:

Օտարությունից տուն վերադառնալուց հետո Բագունին նախ հայկական հացն է համբուրում և նոր ողջագուրվում հարազատների հետ։

## Արտն աչք ունի

Չորրորդ Հայքի Խոզան գյուղաքաղաքում Կիրակետուր անունով մի մարդ էր ապրում։ Նոր բերքից թխած առաջին հացը նա վերցնում և գնում էր իր արտի խոզանը, մի կտոր դնում խոզանի վրա, մյուսն անուշ անում։

— Իմ արտն աչք ունի, — ասում է Կիրակետուրը, — թող նա տեսնի, որ ես իմ բաշխած հացը կիսում եմ իր հետ։

## Հնձվորն ինչպես է իր երախտագիտությունը հայտնում Արածանի գետին

Տորուբերան նահանգի Ապահունիք գավառում, Արածանի գետի ափին, հունձն սկսվում է ամռան կեսերին։

Հնձվորը մանգաղի առաջին կտրած հասկափնչից՝ ընտրում

է մի հուրթի հասկ, մոտենում Արածանի գետին, ձեռքի ափի մեջ տրորում հասկը և սոսուռ ցորենը նետում ջրի մեջ:

— Հոսքդ հավիտենական լինի, Արածանի, անուշ արա քո տված բարիքի առաջին բուռը,— ասում է շինականը և, վերադառնալով արտի մոտ, սկսում հունձր:

## Երկյուղեցին հացից

Քրիստոնեություն տարածող Հայոց Տրդատ արքայի զորաբանակը շրջապատել էր Եկեղյաց գավառի Թիլ ավանի նանե աստվածուհու տաճարը: Երկու օրվա անդադրում գրոհը ոչինչ չտվեց: Քրմերը չէին ընկրկում, տաճարը մնում էր անմատչելի: Երրորդ օրը արքայի զորականները որոշեցին բարաններով քանդել տաճարը, սակայն, ասես զարմանքից քար կտրած, կանգ առան տեղում: Մեհյանն օղակող պարիսպների աշտարակային հատվածների շորս բոլորքը քրմերը ծածկել էին լավաշ հացով: Դե արի նետ արծակիր, կամ բարան մոտեցրու պարիսպին:

Արքունի զորականները հացից ավելի շատ երկյուղեցին, քան Քրիստոսից: Նրանք հեռացան նանեի տաճարից և մի ամբողջ տարի շերեացին Թիլում:

## Մի կոտ ցորեն Էին նվիրում բորոտանցներին

Բոր հիվանդությամբ տառապողներին մեկուսացնելու և նրանց կյանքի մասին հոգալու համար Հայաստանում կառուցում էին բորոտանոցներ: Պատմիչ Փավստոս Բուզանդը իր «Պատմություն Հայոց» գրքում այդ մասին գրում է. «Որոնում գտնում էին պատշաճ տեղեր, զատում էին՝ նրանց մեջ աղքատանոցներ շինելու համար, որտեղ պետք է հավաքեին ախտավորներին, բորոտներին, հաշմանդամներին, ցավագարներին: Որոշեցին շինել ուրկանոցներ, սահմանել նրանց սնունդ և դարման, իսկ աղքատների համար՝ պատսպարան»:

Ամեն տարի, հնձից հետո, շինականները մի կոտ ցորեն էին նվիրում բորոտանոցներին: Հին ժամանակների գրիչն այդ մասին ասում է. «Դա միակ հարկն էր, որ շինականը տալիս էր սրտանց»:

## Այս գրուցքը տեղի է ունեցել Գառնի ամրոցում մեզնից 1680 տարի առաջ

Ազատ գետի աջ ափին, ժայռեղեն բարձունքի վրա, Հայկ  
Նահապետի ծոռ Գեղամը մի ամրոց է հիմնադրել, որը նրա թո-  
ռան՝ Գառնիկի անունով կոչվել է Գառնի։ Հետո այստեղ տա-  
ճար է կառուցվել, որ 301 թվականին դարձել էր Հայոց Տրդատ  
թագավորի քրոջ՝ Խոսրովիդուխտի Հովանոցը։

Խոսրովիդուխտն ուտում էր սև կաքավի միս, կարմրախայտ  
և նաշիճ ալյուրից թխած հաց։ Տաճարում ամեն օր խնոցի էին  
հարում և թարմ կարագ մատուցում նրան։

Մի անգամ Բյուզանդիայից Խոսրովիդուխտի մոտ էր եկել  
բարձրատոհմիկ մի տիկին։ Վերջինս Հյուրասիրության ժամա-  
նակ Տրդատի քրոջն ասաց։

— Իրա՞վ է, որ Հայոց փափկասուն տիկնանց համար առան-  
ձին ճաշ են պատրաստում, տղամարդկանց համար՝ առանձին։

— Այո, — պատասխանեց Խոսրովիդուխտը, — Հայ օրիորդ-  
ներն ու տիկնայք սնվում են նուրբ մսից պատրաստված ճաշե-  
րով, ինչպես սև կաքավից սարքած այս կերակուրը։

— Դա զարմանալի է, նուրբ միսը կանանց են կերցնում,  
կոշտն իրենք ուտում, ահա թե ինչպիսին են Հայոց այրերը, ես  
նախանձում եմ Հայուհիներին, — արձագանքեց բարձրատոհմիկ  
բյուզանդուհին։

— Մի նախանձիր, դրա փոխարեն շատ հաճախ Հայ կանայք  
իրենց բերանից կտրում են և տալիս տղամարդկանց, — ասաց  
Խոսրովիդուխտը։

## Մեղա՛, հացիկ

Աղանայի Հայերը հացապաշտ են։ Անշափ զգույշ են վար-  
վում հացի հետ, ջանում են, որ ոչ մի կտոր չընկնի գետնին։ Իսկ  
եթե հանկարծ հացը գետնին է ընկնում՝ նրանք, ոնց որ իրենց  
մեղքը քավելով, ասում են։

— Մեղա՛, հացիկ։

## Պիզափայտ

Պիզափայտ լեռան կատարին կանգնած արցախեցուն թվում  
է, թե այդտեղից տեսնում է համայն աշխարհը։ Հավանաբար

**Մարդկային կյանքի մեծագույն վայելքներից մեկն էլ Դիզա-  
փայտի կատարից աշխարհը դիտելն է:**

Հին զրույցն ասում է, թե ինչու է լեռը Դիզափայտ կոչվում,  
կափար՝ Դիզակի, Դա եղել է վաղուց: Հոները վրա են տվել ու  
նվաճել Արցախը, Թշնամին գերի է վերջրել հայոց աչբուքենի  
հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի աշակերտներին, որոնց մեջ էր  
զեղանի տիկին Թագուհին: Հայուհու գեղեցկությունից շլացած  
հոների զորապետը որոշում է նրան ուժով դարձնել իր կինը:  
Սակայն թագուհին մերժում է զորապետին և բզկտվում: Այդ  
գիշեր ամբողջ դաշտում պայծառ լուս է արձակվում: Հոների  
զորապետին հայտնում են, թե այդ լուսը արձակում են տիկին  
թագուհու՝ դաշտում թափված արյան հետքերը: Այդ հրաշքով  
հմայված հոների զորապետը իր զինվորների հետ ընդունում է  
քրիստոնեությունը:

Հսելով այդ մասին, հոների արքան գլխատել է տալիս իր զո-  
րապետին, բայց վերջինիս որդիներին՝ Մովսեսին ու Երանոսին,  
հաջողվում է փախչել: Այնուամենայնիվ արքայի զորականները  
հասնում են բոնում են նրանց լեռան կատարին, սրախողող անում  
և դիերը փայտերի նման ցորենի ու գարու գեղերի վրա դնում ու  
այրում: Այդ ժամանակվանից էլ այս լեռը կոչվել է Դիզա-  
փայտ, իսկ գավառը՝ Դիզակ:

Արցախեցիները կարծում են, թե այնտեղ, ուր այրվել են  
Մովսեսն ու Երանոսը, դեռ պահպանվում են ցորենի ու գարու  
հատիկներ: Այդ պատճառով արցախեցի կանայք երբեմն ուխտի  
են գնում Դիզափայտի կատարը, ձեռքով փորփրում հողը և ցո-  
րենի ու գարու հատիկներ փնտրում: Նրանք համոզված են, ոռ  
եթև ցորեն գտնեն՝ տղա կունենան, գարի գտնեն՝ աղջիկ:

## **Ամեն մի հասկ լցվում է յոթ հատիկով ավելի**

Մի ժամանակ Արած գավառը մի ոտքով հենվում էր Արա-  
րատյան դաշտի, մյուտավ՝ Շարուրի դաշտի վրայ Երկու դաշտե-  
րի եղբերը քիթ-քիթ են տալիս Արածի կենտրոնում, որ մի առա-  
պար է Արաքսի ձախ ափին:

Արածի շինականները սերմը հերկի մեջ այնպես չէին ցանում,  
ինչպես աշխարհի ուրիշ կողմերում: Նրանք Արաքսից սափորով  
չուր էին վերցնում և բերում ու ցողում հերկի մեջ:

Ասում են՝ Արաքսի սրբազան ջրի շնորհիվ ամեն մի հասկ

լցվում է յոթ հատիկով ավելի։ Այդ պատճառով աշխարհի ոչ մի անկյունում հասկերն այնքան բազմահատ չեն, որքան Արածի դաշտում։

## Լավաշը ամենաերկարակյաց հացն է աշխարհում

Մի իշխան երկար ճանապարհ էր կտրել և Հնդկաստանից եկել ու հասել Հայոց քաղաքամայր Դվին։ Նա զարմացած շըրջում է հայկական շուկայում ու արհեստավորաց տներում։ Դվինում շատ բան դուր եկավ նրան։ Բայց ամենից շատ նրան հիացրեց լավաշը։ Նա չէր պատկերացնում, որ կարող է աշխարհում այսքան բարակ ու այսքան համեղ հաց լինել։

Մի անգամ հնդիկը գնաց շուկայի փոխ տիրոջ մոտ և ասաց.

— Ե՞ս, բարեկա՞մ, ձեր այս լավաշը քանի՞ օրվա կյանք ունի։

— Ինչքան պահես կմնա, — պատասխանեց հացթուխը, — թարմությունը պահում է հինգ-վեց ամիս, նույնիսկ մինչեւ մի տարի։

, — Հավատալս չի գալիս։

— Իդուր։

— Լսի՞ր, բարեկա՞մ, վերցրու այս դրամը և հարյուր լավաշ տուր ինձ, ես պիտի փորձեմ քո ասածը։ Իմ գործերը վերջացրել եմ և վաղը պիտի ճամփա ընկնելի դեպի Հնդկաստան։ Բայց հենց հիմա որոշեցի, որ Դվինում կմնամ ես վեց ամիս, մինչեւ որ համոզվեմ, որ այս լավաշները դիմանում են վեց ամիս և նույն համն ունեն։

— Դա՝ քո գործն է, մնա և համոզվիր, բայց դու կարող էիր ժամանակ շկորցնել և ճամփա ընկնել տուն մի ուղտաբեռ լավաշ գնած։

Հնդիկը Դվինում մնաց վեց ամիս և փորձելով իր գնած լավաշների համը՝ համոզվեց, որ հայկական լավաշը ամենաերկարակյաց հացն է աշխարհում։

## Մարդը բազմափորձ է դարձել նաև մրջյունից սովորելով

Հինգերորդ դարի իմաստաւեր Եղիշիկ Կողբացին «Եղծ աղանդոց» գրքում գրել է. «Մոջյունը ամառվանից նախապատրաս-

տում է ուտելիքը և հատիկը կտրում է երկու մասի, որ չբռննի, իսկ տաք ժամանակներում բնից հանում է կտրված հատիկն ու շորացնում»:

Տեսավ մարդը, թե ինչ է անում մրջյունը և ինքն էլ ցորնահատիկի արմատը կտրեց, որպեսզի այն չծլի: Դրա համար էլ ասում են, որ մարդը բազմափորձ է դարձել նաև մրջյունից սովորելով:

## Ամոթալի ճամփորդություն

Հինգերորդ դարի հայոց կաթողիկոս և իմաստասեր Հովհաննես Մանղակունին հարբեցողության երդվալ թշնամի էր նա ասում էր.

— Հարբեցողը մարդկության համար նույնն է, ինչ որոմք հացահատիկի մեջ: Որոմնաշատ հացից մարդ կարող է թունավորվել, իսկ շատ հարբեցողներ ունեցող հասարակությունը՝ անդամալույծ լինել:

Հարբեցող մարդուն Մանղակունու հրամանով ստիպում էին երկու հեծյալ զորականների ուղեկցությամբ, առանց մի կտոր հաց ուտելու, ոտքով անցնել քառասուն հրասախ ճանապարհ: Դա տեսում էր հինգ-վեց օր: Այդ միջոցում պատժվածին տանում էին շրջակա վայրերում ապրող նրա բոլոր հարազատների, բարեկամների ու ծանոթների մոտ: Հեծյալ զորականներից մեկը առջեկից էր գնում, մյուսը՝ պատժվածի ետևից: Առջեկի հեծյալի ձիու գավակին կապվում էր լավաշի մի խուրձ, որը գտնվում էր օրերով սոված փորով քայլող մարդու աշքի առջև:

Հովհաննես Մանղակունու ժամանակներում դա կոչվում էր ամոթալի ճամփորդություն: Այդպիսի ճամփորդները երկար չէին ապրում:

## Ոչ միայն հացիվ

Դվինի արքունի սպանդանոցի առջե մի վաճառական զրուցի էր բռնվել իմաստասերի հետ:

— Ինչո՞ւ եք մորթել տալիս այս հինգ հարյուր ոչխարը, — ասում է վաճառականը:

— Մագաղաթի համար Միսը կմնա մարդկանց, իսկ մորթիներից խաղախորդները մագաղաթ կպատրաստեն, — պատասխանում է իմաստասերը:

- Եվ այսքան մագաղաթից քանի մատյան կդրվի:
- Մի մեծ դիրք:
- Իսկ արժե՞՞ գիրք գրել այս հացապակաս տարում: Այսքան մորթիներով կարելի է մի քանի կայթ ցորեն գնել:
- Մարդն ապրում է ոչ միայն հացիվ,— ասաց իմաստասերը,— հացի պակասից մարդու մարմինն է մեռնում, գրքի պակասից՝ հոգին: Հոգու սովն ավելի կործանարար է, քան հացինը:

## Հասկը զինանշան

Ցորենի հասկը եղել է Աղձնիք նահանգի Սղերդ քաղաքի զինանշանը: 59 թվականին հոռմեացի զորապետ Կորբուլոնը մըտնում է Աղձնիք, գրավում Տիգրանակերտ քաղաքը և մըտենում Սղերդին: Հոռմեացին զարմանում է, տեսնելով, թե հայերը ինչպիսի հասկ-կոթողներ էին կերտել քարերից ու դրել քաղաքի պարիսպների վրա: Սղերդի պաշտպանները թշնամու բանագնացներին դիմավորում են աղուհացով և ոսկեձույլ մի հասկով:

Արագագնաց բանբերը ոսկեձույլ հասկը անմիջապես հասցընում են Կորբուլոնին: Զորապետն ասում է.

— Հայերին վերադրեք իրենց քաղաքի զինանշանը: Երեւում է՝ նրանք շատ են հպարտանում այս հասկով: Հայտնեցեք նրանց, որ ես քաղաքի կողքով կանցնեմ՝ եթե նրանք ինձ տան շորս հարյուր ձիաբեռ ցորեն: Հասկ պաշտողը պիտի ցորեն ունենա: Իսկ եթե ցորեն չտան՝ ես հողին կհավասարեցնեմ Սղերդը:

Հայերը կատարեցին Կորբուլոնի պահանջը:

Բոնակալը գնաց, Սղերդը մնաց:

## Մախաղը

Դվին մայրաքաղաքի և Խոսրովի անտառի հիմնադիր հայոց եռորսվ Կոտակ թագավորը 336 թվականին հրովարտակ արձակեց և տերության բոլոր կողմերից մուրացիկներին խնջույքի հրավիրեց: Մինչ այդ ոչ մի հայ թագավոր այդպիսի հրովարտակ չէր արձակել: Լսվա՞ծ բան է, որ թագավորը մուրացիկների համար խնջույք կազմակերպի:

**ԵՎ ահա մի օր մուրացիկները հավաքվում են Դվինի մեծ հրապարակում Արքայական պալատի պատշգամբից Խոսրով Կոտակը դիտում է նրանց խնջույքը։**

**Մուրացիկները ուսերից իշեցրին իրենց մախաղները և նըստեցին սեղանների շուրջը։ Արքունի սպասավորներն ու մատըռվակները ընտիր ուտելիքներ և ըմպելիքներ էին մատուցում, առանց դիպչելու նրանց արժանապատվությանը։ Մատուցում էին այնպես, ինչպես կմատուցեին պալատականներին։**

**Խոսրով Կոտակը դիտում էր մուրացիկների խնջույքը ու դառն ժպտում։ Հացի ու ամեն ինչի կարոտ այս մարդիկ թող մի օր սնվեն արքայավայել, մտածում էր թագավորը։**

**Ամեն տեսակ փորձության ու ձախորդության հանդիպած Կոտակը մոտը նստած դշխոյին ասաց։**

— Այս մարդիկ չգիտեն, որ մուրացիկը կարող է մի օրով թագավոր դառնալ, իսկ արքայությունից դեպի մշտական մուրացիկություն՝ մի քայլ է։

— Ես հաշվեցի, — ասաց դշխոյն, — երկու հարյուր հիսուներկու մուրացիկ կա այստեղ, բայց ինձ թվում է, թե նրանցից մեկը մուրացիկ է ձեանում։

— Ինչո՞ւ ես այդպես կարծում, — հարցրեց Կոտակը։  
— Նա հրապարակ մտավ առանց մախաղի։  
— Կարո՞ղ ես ցույց տալ նրան։  
— Այո, ա՞յ, աչ կողմի երկրորդ շարքում, այս կողմից շորորոդը։

**Արքան մի պահ մտածեց, ապա ձայնեց սենեկապետին։**

— Խնջույքի ավարտից հետո համտնիր բոլոր մուրացիկներին, որ նրանք կստանան մեկական ոսկի, պայմանով, որ յուրաքանչյուրը արքունի գանձապետին պիտի մոտենա իր մահաղով։

**Մի քանի ժամ հետո խնջույքն ավարտվեց։ Մուրացիկները գոհ ու երջանիկ հեռացան արքունի հրապարակից։ Մնաց միայն մեկը, որին բերեցին Կոտակի մոտ։**

— Ո՞ւր է քո մախաղը, — հարցրեց արքան։  
— Ես մախաղ չունեմ, — պատասխանեց մուրացիկ ձեացողը։  
— Ի՞նչ մուրացիկ առանց մախաղի։  
— Երբեք մախաղ չեմ սնեցել։ Ես իմաստասեր Մեծատուրն եմ։

- Բայց ինչո՞ւ խառնվեցիր մուրացիկներին:
- Մի օրվա մուրացիկությունը իմաստասերին կրկնակի իմաստասեր է դարձնում:

## Գյուղն ինչու կոչվեց Հացի

Մի տարի Արցախում ցորենի այնպիսի առատ բերք եղավ, որ ցորնատներում այլևս տեղ չմնաց հատիկի համար:

Արցախի իշխան Օշինը դիմեց շինականներին և ասաց.

— Ձեր ավելորդ ցորենը փոխ տվեք ինձ, ես կվերադարձնեմ այն ժամանակ, երբ զգաք դրա կարիքը:

Մարդիկ իրենց ավելցուկ ցորենը հանձնեցին իշխանին ու մոռացան այդ մասին: Առատության մեջ մարդու տվածը աշքին չի երևում:

Շատ տարիներ անցան: Ու մի անգամ երաշտը խանձեց Արցախի Հյուսիսը, Հարավը, արևելքն ու արևմուտքը: Սովոր այնպես պինդ նստեց՝ ասես պիտի կուլ տար բոլոր մարդկանց:

Հենց այդ ժամանակ Օշինը սուրհանդակներ ուղարկեց Արցախի բոլոր կողմերը ասելով.

— Եկեք տարեք ձեր փոխ տված ցորենը, ես այլևս ձեր ապրանքը պահելու տեղ չունեմ:

Արցախի մոտ ու հեռավոր գյուղերից մարդիկ զարժվեցին դեպի Օշինի նստավայր գյուղը՝ իշխանի ամբարները սովոր փըրկեցին համայն Արցախը: Այդ ժանր տարում մարդիկ իրար հանդիպելիս ասում էին.

— Ո՞ւր ես գնում:

— Հացի գյուղ:

— Որտեղի՞ց ես գալիս:

— Հացի գյուղից:

Այդպես էլ մարդիկ մոռացան Օշին իշխանին և նրա նստավայր գյուղը: Հիմա հացառատ գյուղ է Հացին: Բայց այստեղ երեխ չգիտեն, թե ինչու է գյուղը Հացի կոչվում:

## Հացից բացի ուկով կարելի էր ամեն բան գնել

522 թվականին սովոր աշք ածեց աշխարհի այս ու այն կողմը և եկավ շոքեց Հայաստանում: Քաղցից կոտորվում էին մարդիկ,

**Գյուղեր ու ավաններ էին ամայանում, մարդն ուտում էր... մարդուն:**

Այդ տարվա մասին գրիշն իր հիշատակարանում միայն մի բան գրեց. «Հացից բացի ոսկով կարելի էր ամեն բան գնել»:

## **Արցախական հրովարտակ հյուրընկալության մասին**

Արցախում մի հայ թագավոր է եղել Վաշագան Բարեպաշտ անունով։ Սա իր թագավորության սահմաններում կառուցել է տարվա օրերի թվով եկեղեցիներ ու վանքեր։

Այս Վաշագան Բարեպաշտը Մեծառանք գավառում, Տրտու գետի աջ ափին, գեղեցկանիստ մի տեղ է գտնում և կառուցում արքայանիստ մի ավան, անունն էլ զնում Գյուտական։

Արցախամուր աշխարհի Գյուտականը, սակայն, տարբերվում էր բոլոր մայրաքաղաքներից։ Այստեղ հենց որ մի հյուր էր երևում՝ հյուրընկալում էր այն տունը, որն այդ օրը հաց է թիւել։ Այդ մասին իր հրովարտակում գրել էր Վաշագան Բարեպաշտը։ Հետո այս պարտադիր օրենքը դարձավ սովորություն և, դուրս գալով Գյուտականից, տարածվեց Արցախի մյուս կողմերում։

## **Դավիթ Անհաղթ**

Բյուզանդիայի քաղաքամայր Կոստանդնուպոլսում իմաստասերների մրցավեճ էր։ Նրանց մեջ էր քերթողահայր Մովսես Խորենացու քրոջորդի Դավիթը։

Չորս ժամ անընդմեջ նա պատասխանում էր բյուզանդացի գիտունների բազմաթիվ ու բազմաբնույթ հարցերին։ Անպատասխան չէր թողել և ոչ մի հարցում ու թվում էր, թե նա հաղթում է իմաստասիրական ճակատամարտում։ Բայց ահա մըրցավեճի ղեկավարն ասաց.

— Դավիթ, դու փայլեցիր քո իմացությամբ ու պերճախոսությամբ։ Մնաց մի պայման։ Եթե դու անմիջապես պատասխանես վերջին հարցին, ապա քեզ կօժենք մեծ իմաստասեր։ Այն ի՞նչ բան է, որից մարդ երբեք չի ձանձրանում։

Դավիթը պատասխանեց.

— Հացը։ Ամեն տեսակ ուտելիք, ինչքան էլ այն համեղ լինի, կարող է ձանձրացնել մարդուն, իսկ հացը՝ երբեք։ Ինչ էլ

ուտես՝ միևնույն է, առանց հացի շիս կշտանաւ։ Հացը մարդուն  
պետք է ամեն օր։ Հացը աշխարհում չի ձանձրացրել և ոչ մի  
մարդու։

— Ճիշտ է, — ասաց մրցավեճի գլխավորը։

Այս ու այն կողմից վրա տվին։

— Նա անհաղթ է, նա անհաղթ է...»

— Անվանենք նրան Դավիթ Անհաղթ։

Այդ մրցավեճից հետո հայ հիմաստասերը կնքվեց Դավիթ  
Անհաղթ անունով։

## Վանա Շուռը

Նուան ծառերը գեղեցկացնում են Եփրատի, Տիգրիսի, Արաք-  
սի ու Կուրի հովիտները։ Իսկ Հայկական Կիլիկիայում նուան ըն-  
դարձակ պուրակներ կան։ Բայց Հայոց աշխարհում ամենաըն-  
տիր նուռն աճում է Վանա լճի ափերին։

Վանում նուան հյութով խմոր էին հունցում և հաց թխում ու  
տալիս այն կանանց, որոնք իրար ետեից աղջիկներ էին բերում։  
Հավատացնում էին, թե այդտեսակ կանայք նուան հաց ուտե-  
լուց հետո տղա են ծնում։

Վանեցի Եղնիկ տիկինը շորս դուստր ունենալուց հետո սկսեց  
նուան հաց ուտել։ Մի տարի անց նա ծնեց մի տղա, երկու տա-  
րի անց՝ երկվորյակ տղա, շորս տարի անց՝ միանգամից երեք  
տղա բերեց, իսկ ութ տարի հետո՝ շորս տղա։

Այնուհետև Եղնիկին ոչ նուան հաց էին տալիս, ոչ նուռ։

— Տասնշորսը հերիք է, — կատակով ասում էին վանեցինե-  
րը, — այդպես որ գնա տիկին Եղնիկը կծնի միանգամից հինգ,  
միանգամից վեց, միանգամից յոթ տղա, էղ ո՞ւր կհասնի, նրա  
խեղճ ամուսինը ինչպե՞ս պիտի պահի այդքան երեխաները։

## Անանիա Շիրակացին ինչպես լուծեց իշխանի խրախնանականը

Մի իշխան գնաց Անանիա Շիրակացու մոտ և ասաց.

— Իմ գավառում վեց հազար շինական կա։ Նրանցից յուրա-  
քանչյուրը որպես հարկ տարեկան տալիս է երեք կայթ ցորեն։  
Երաշտ տարում նրանք դժվարանում են հարկ վճարել, իսկ շա-  
տերն էլ մահանում են սովից։ Միշին հաշվով յոթր տարին մեկ  
երաշտ է լինում։ Ես մտադիր եմ փոխել հարկ վերցնելու կարգը,

**բայց** այնպիս անել, որ հարկի շափը մնա նույնը։ Շինականը երեքի վոխարեն տարեկան ինձ կտա հինգ կայթ ցորեն, իսկ յոթերորդ, այսինքն երաշտ տարում, ես ոչ միայն նրանցից հարկ չեմ պահանջի, այլ անհատույց կտամ հինգ կայթ ցորեն։ Ասա ինձ, իմաստունդ Անանիա, հարկի շափը չի՞ մնում նույնը։

— Ո՞ւ, իշխան, քո նոր հարկակարգով յոթ տարում յուրաքանչյուրից ավելի կվերցնես շորս կայթ ցորեն։ Եթե իրոք ճշշմարիտ են խոսքերդ և դու մտադիր ես ավելի հատիկ շվերցնել, ապա յոթերորդ տարում հինգի վոխարեն դու պետք է շինականին վերադարձնես ինը կայթ ցորեն։

## Գուշակը կարճում է մարդու կյանքը

Գիտուն Անանիա Շիրակացին ատում ու արհածարհում էր բոլոր սնոտիապաշտներին։ Գուշակներին նա համարում էր խաբեբաններ։

Հակառակի պես մի անգամ նրա մոտ եկավ մի գեղուհի գուշակ։

— Ասում են՝ դու չես հավատում գուշակներին, — ասաց գեղուհին։

— Այո՛, չեմ հավատում, — արձագանքեց գիտունը։

— Իսկ եթե ես մարգարեանում եմ և կանխատեսում այն, որ անպալման կատարվում է։

— Փորձիր համոզել ինձ, — կարծես տեղի տվեց Անանիա Շիրակացին։

Գուշակը նայեց գիտունի ձախ ձեռքի ափագծերի դասավորությունը և ասաց.

— Դու կապրես վաթսուն տարի։

— Ինչո՞վ կարող ես հաստատել ասածդ, — հարցրեց գիտունը։

— Ահա ափագծերը գնում, գնում են և հատում այստեղ, սա քո կյանքի վաթսուներորդ տարին է։

— Դու չհամոզեցիր, գուշակ, ընդհակառակը, ինձ պատճառեցիր մի այնպիսի տհաճություն, որից ես չեմ ազատվի ամբողջ կյանքում՝ եթե հավատ ընծայեմ քեզ։

— Ի՞նչ տհաճություն։

— Դու ասացիր, թե ես պիտի ապրեմ վաթսուն տարի, մեկ ուրիշին էլ ասում ես՝ թե կապրի քառասուն կամ հիսուն տարի։

**Քո** գուշակություններով դու կարճում ես մարդկանց կյանքը,  
Զկա ավելի տանջալի բան, քան այն, երբ մարդ գիտե, թե ինքն  
ինչքան պիտի ապրի աշխարհում։ Հնարավոր է, որ առանց քո  
գուշակության ես ապրեմ յոթանասուն կամ ութսուն տարի, բայց  
դու ինձ համար սահման ես դրել վաթսունը։ Եվ ես ինչքան մո-  
տենամ դեպի վաթսունը՝ այնքան կնախապատրաստեմ ինձ մեռ-  
նելու համար։ Այդպես էլ բոլոր նրանք, որոնց համար դու գու-  
շակել ես նրանց կյանքի սահմանը։ Ուրիշ ի՞նչ կարող ես գու-  
շակել։

- Հիմա երաշտ է, ճի՞շտ է։
- Այո՛, երաշտ է, արտերից էլ այրվածի հոտ է գալիս։
- Հինգ օր հետո անձրև կգա։
- Դարձալ սխալ գուշակեցիր։ Անձրև կգա վաղն առավոտ-  
յան։
- Ինչ է, դո՞ւ էլ ես գուշակում։
- Ո՛չ, ես նայում եմ ամպերի շարժմանը և հայտնում, թե  
երբ պիտի նրանք վերածվեն անձրևի կաթիլների։
- Եվ համոզված ես, թե վաղն առավոտյան անձրև կգա։
- Այո։
- Իսկ եթե չգա։
- Գրազ եմ գալիս։
- Ինչո՞վ։
- Եթե վաղն անձրև չգա, կեսօրին կգաս և ես քեզ կտամ  
հարյուր ոսկի։

Հաջորդ օրը անձրև եկավ, իսկ Անանիա Շիրակացին այլևս  
չտեսավ գուշակին։

## Օ՛, Մարգարիտ

618 թվականը եղել է Հայաստանի հին ու նոր ժամանակների  
ամենաբերքառատ տարին։ Ցորենի բոլոր կարասները լցվել են  
պոկեպունկ, շինականը լիաթոք շունչ է քաշել։

Սակայն այդ առատության ականատես պատմիլ Սեբեռսը  
618 թվականը համարել է սովոր տարի։ Հոգու սով է եղել, մար-  
դիկ իրենց տվել են ուտել-խմելուն։ Երևի արտասովոր բարիքը  
հղփացրել է ամենքին։

Այդ նույն տարում, երբ հոգու սովը կոփվ էր տալիս հայոց  
հողի պարզե ծով բերքի հետ, Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը  
5—Հացապատում

Վաղարշապատ քաղաքի կողքին հիմնադրեց Հռիփսիմեի տաճարը, որը դարձավ հայկական ճարտարապետության առաջին հրաշալիքը։ Հաջորդ վեց հրաշալիքները հայերը կառուցեցին հետագա դարերում։

Մինչ այդ կույս Հռիփսիմեի աճյունն ամփոփող եկեղեցի է եղել, որ ավերվել ու անշքացել էր։ Եվ ահա, 618-ին, փորում են Հողը, որպեսզի հանեն Հռիփսիմեի աճյունը և հետո տեղադրեն։ Հանում են և տեսնում, որ աճյունն ամբողջական է մնացել։

Եվ սկսվում է հայոց փառահեղ տաճարի շինությունը։ Հենց այդ ժամանակ Կոմիտաս կաթողիկոսը գրում է Հռիփսիմեին ու նրա ընկերուհիներին նվիրված իր մեծահամբավ «Անձինք նուիրեալք» բանաստեղծությունը։ Իսկ Սեբեոսը, Հռիփսիմեին անվանելով ցորենի թանկարժեք հատիկ-մարգարիտ, գրում է.

«Օ՛, Մարգարիտ, եգիպտական ցորենի առատությամբ շտեմարաններում ամբարված լինելով՝ այս սովոր ժամանակ կերակրում ես Թորգոմյան աշխարհ»։

## Արիստոտելի և Անանիա Շիրակացու պատասխանները

Հույն մեծ փիլիսոփա, Ալեքսանդր Մակեդոնացու դաստիարակ Արիստոտելին մի անգամ հարցրին.

— Դու ինչո՞վ ես տարբերվում մարդկանց մեծ մասից։

— Նրանք ապրում են ուտելու համար, իսկ ես ուտում եմ ապրելու համար, — պատասխանեց իմաստասերը։

Հազար տարի հետո նույն հարցը տվեցին հայ մեծանուն գիտուն Անանիա Շիրակացուն։ Նա պատասխանեց.

— Եթե կարողանային՝ բոլոր մարդիկ էլ կուտեին ապրելու համար։

## Կարկտասար

Արեգունի լեռնաշղթայի կատարը Կարկտասարն է։ Կար ժամանակ, որ կարկուտը ծեծում էր Արեգունիի շորս կողմի դաշտերն ու այգիները։

Մի անգամ շինականները գնացին ամենագետ Անանիա Շիրակացու մոտ և ասացին.

— Ամեն տարի կարկուտը մեր բերքը կես է դարձնում։ Ինչպես ազատվենք այդ աղետից։

— Գնացեք և երկաթյա յոթ խոփ դրեք Արեգունիի ամենաբարձր կատարին, այդ խոփերը կարկուտը դեպի իրենց կքաշեն, — խորհուրդ տվից գիտունը:

Շինականները այդպես էլ արեցին: Եվ զարմանքով տեսան, որ կարկուտն իրոք ծեծում է այն լեռան կատարը, որտեղ խոփիր են դրել: Ահա թե ինչու է լեռը կարկտասար կոչվել:

## Ծովյ մարդը երազում հաց չի տեսնում

Մի իմաստասեր շրջեց ամբողջ Հայաստանը, հարցուիրձեց բոլոր ծույլերին և գրի առավ նրանց երազները: Զարմացավ. Ոչ մի ծույլ երազում հաց չի տեսել: Երկար ժամանակ քննեց այդ բանը ու ինքն իրեն իմաստասիրեց.

— Անբանությունն արատ է ու դժբախտություն: Որ հացին թողնես՝ ծույլի ձեռքին չի դիպչի, հացը ծույլին իր տեսությանը չի արժանացնում նույնիսկ երազում: Եթե ծույլը երազում հաց տեսնի՝ աշխարհում անբանների թիվը մի քանի անգամ կմեծանա:

## Օրինայլ լինես, հա'ց, մի ժամում դու ինձ որտեղից որտեղ հասցրիր

763 թվականին Հայաստանում բռնցքաշափ կարկուտ տեղաց: Հետո արտեղ ամայացնող մորեխի ամպեր եկան հեռավոր ավազուտներից: Սրան էլ հաջորդեց երաշտը: Սովոն սկսեց իր հունձը:

Հենց այդ ժամանակ Մուշի գավառի Հավատորիկ գյուղի շենական Վիրապը գնաց անտառ՝ հուսալով, որ քաղցը կհագեցնի ծառերի կանաչ ոստերով: Բայց Վիրապի բախտը բերեց: Մի քարայրում նա գտավ մի կույտ լավաշ: Այդ պահին նա մոռացավ ամեն բան՝ և՛ աշխարհը, և՛ տանը մնացած իր սովահար կնոջն ու երեխաններին: Սկսեց ագահորեն ուտել: Հետո գնաց մոտակա աղբյուրից ջուր խմեց, մի քիչ շունչ քաշեց ու սկսեց նորից ուտել: Այս անգամ նա հիշեց երեխաններին ու կանգ առավ: Նայեց լավաշին ու ասես միանգամից ուշքի եկավ: Չէ՞ որ այդքան հացը տնեցիններին կարող է հերիքել մի քանի ամիս: Նստեց, ժպտաց ու ասաց.

— Մի ժամ առաջ գաղան էի, կես ժամ հետո դարձա կիսավայրենի, իսկ հիմա սովորական մարդ եմ՝ նախկին Վիրապը: Օր հյալ լինես, հաց, մի ժամում դու ինձ որտեղից որտեղ հասցրիր:

## Հացը որ հաց Է՝ առանց ծամելու կոկորդով շի գնա

Մի իմաստունի հարցրին,

— Ի՞նչ ցուցանե առածս. Հացը որ հաց Է՝ առանց ծամելու կոկորդով շի գնա:

Եվ իմաստունն այսպես պատասխանեց.

— Դա նշանակում է, որ մարդ իրավունք չունի աշխարհի վրա տեղ զբաղեցնել առանց աշխատելու, որ մարդ իրավունք չունի ձեռքը հացի պատառին տանել՝ եթե քրտինք շի թափել նրա համար: Ոչ մի խաղուպար էլ շկա, ամեն տեսակ գործի համար էլ ջանք է պետք:

## Սրինգ

Վասպուրականում մի ամրոց է եղել Սրինգ անունով: Կարծում եք այդպես է կոշվել նրա համար, որ թշնամու հարձակման ժամանակ սրնգով զգուշացրել են ամրոցի պաշտպաններին:

Ոչ, թշնամու հարձակումը զուժել են եղերափողերով:

Ամրոցի կողքի ընդարձակ դաշտում ցորեն էին ցանում: Յանքսի կամ հնձի ժամանակ պաշտպանների մի մասը դուրս էր գալիս ամրոցից և բանում: Դաշտից նրանց ճաշի էին հրավիրում սրնգի քաղցր ու քնքուշ կանչով: Ասում են՝ սրնգի այդ կանչը ախորժաբեր է: Դրա համար են իրենց ամրոցը Սրինգ կոշել:

## Հացագործյան

Վան քաղաքում մի իշխան էր ապրում Երվանդ անունով: Մի անգամ սա ի լուր ամենքի ազդարարում է, թե իր շնաշխարհիկ դուստր Վարսեին կնության կտա նրան, ով թիսի ամենահամեղ հացը:

Վանեցի երիտասարդները իրարով անցան: Նրանցից քշերը գիտեին հաց թխել, իսկ շատերը չէին կարող նույնիսկ թթիսմոր

Հունցելի Բայց գեղեցկուհի Վարսեին տիրանալու փափազը բոլոր երիտասարդներին հացթուխ դարձրեց:

Ամեն օր թարմ հաց էին տանում Երվանդին: Իշխանն առնում էր հացի համը, բայց չէր կարողանում որոշել, թե որն է ամենալավը:

Վերջապես իշխանի մոտ իր թխած ցորնահացը տարավ նաև երիտասարդ Վարդանը: Երվանդը հացի համն առավ ու զարմացավ: Մինչև այժմ ինքն այսքան համեղ հաց չէր կերել:

Հետո շուռումուռ տվեց հացը և դիմեց Վարդանին.

— Թվում է, թե քո հացը ոչնչով չի տարբերվում մյուսների թխածներից, բայց սա ավելի համեղ է, քան նրանցը: Հո սրա ալյուրը ուրիշ տեղից չե՞ս բերել:

— Ո՛չ, իշխան, և՛ ալյուրն է նույնը, և՛ թթխմորը, և՛ ջուրը, և՛ աղը: Բայց ես հացը թխում եմ լուսադեմին, իսկ լուսադեմին թխած հացը ավելի համեղ է լինում, քան ցերեկվա ու գիշերվա թխածը, — ասաց Վարդանը:

— Դու հաղթեցիր, երիտասարդ, քո հմտությունը հիացրեց ինձ, դու իսկական հացագործ ես, — ասաց իշխանը և Վարսեին կնության տվեց Վարդանին:

Այդ ժամանակվանից Վարդանն ու իր բոլոր հետնորդները ստացան Հացագործյան մականունը, որը դարձավ նրանց ազգանունը:

## Ինչու է կղզին կոչվում Արտեր

Մի ժամանակ Վանա լճում հինգ կղզի կար՝ Լիմ, Կոտոց, Աղթամար, Արծկե, Արտեր: Ամենամեծը Լիմն էր, ամենափոքը՝ Արտերը: Վերջինս այնքան էլ հեռու չէր Աղթամարից:

Շատ ու շատ տարիներ Աղթամարի միաբանները փոքրիկ կղզու վրա ցանում ու աճեցնում էին ցորենի, հաճարի, կորեկի ու գարու արտեր: Ասում են այդ պատճառով էլ կղզին ստացել է Արտեր անունը:

## Խնձորն ու հացը

Վանա լճի արևելյան ափին, Վան քաղաքի կողքին, մի ավան է եղել Արտամետ անունով:

Հայաստանի ամենահամեզ և ամենակարմիր խնձորն աճել է այս Արտամետում: Իսկական արքայախնձոր է, որի մեջ կո-

րիկները շարժվում են շնկշնկոց հանելով։ Քաղցր է, նուրբ կեղիով, փխրուն, հյութեղ, հոտավետ։ Արտամետի խնձորը թաքշրնիկ չես կարող, զմայլելի հոտը կմատնի նրա տեղը։ Աշխարհում ոչ մի խնձորի հոտ այնքան երկարակյաց չէ, որքան Արտամետինը։ Դրա համար էլ ասում են՝ Վանի հարսանեկան սնդուկներում խնձորահոտը մնում է քառասուն տարի։

Ավանում մի պարտիզան էր ապրում Ատոմ անունով։ Նա խենթի պես սիրում էր իր աճեցրած խնձորը։ Մի օր էլ Ատոմը մտքում դրեց, որ սնվի միայն խնձորով։ Հացն ի՞նչ է իր խնձորի մոտ։ Ցոթ-ութ ամիս նա իրեն առույգ ու կայտառ էր զգում, բայց հետո միանգամից ուժասպառ եղավ և քիչ մնաց շունչը փշեր։ Ու ստիպված ձեռքը տարավ հացին։ Հենց այդ օրերին նա մի երազ տեսավ, որտեղ խնձորը լեզու առած խոսեց նրա հետ։

— Ուտելիքների մեջ, Ատոմ, ես մի քիչ սնունդ եմ, մի քիչ էլ զարդ։ Ոչ մի մարդու կող ինձնով չի պնդացել։ Դու հազար նախնի ես ունեցել, որոնք ապրել են հացով։ Նրանցից ժառանգած՝ քո մարմինը կարոտ է հանապազօրյա հացի։ Այո, Ատոմ, դու կարող էիր խնձորով ապրել՝ եթե քո մարմինը սկսվեր քեզնով։ Բայց դու հացով ուշքի եկած արարածների շարունակություն ես։ Հացից հրաժարվելը քեզ համար նույնն է, ոնց որ ինքդ քեզնից հրաժարվես։

## Թոնիրը նման է Թոննդրակին

Արադայի դաշտի ու Կոգհովտի միջև Թոնդրակ լեռնաշարն է, որի կատարներից մի քանիսը նման են կրակը անթեղած այն թոնիրներին, որոնցից երբեմն-երբեմն տաք գոլորշի ու ծուխ է բարձրանում։

Ասում են՝ Հայաստանում թոնիրները սարքել են Թոնդրակի հրաբխի խառնարանների նմանությամբ։ Եվ լեռան անվան նմանությամբ էլ գետնափոր փուռը կոշվել է թոնիր։

## Աշուտ Բագրատունի մսակեր

Ութերորդ դարի վերջին ու իններորդ դարի սկզբին հայոց իշխանն էր Աշուտ Բագրատունին։ Քաջ մարդ էր, հայրենի երկրի բոլոր թշնամիների հետ զենքով էր խոսում։

Մի ճակատամարտից հետո հոգնատանց իշխանը ցանկացավ եղնիկի մսի խորոված ուտել։ Թիկնապահներն անմիջապես գոր-

ծի անցան։ Բայց խորովածի բուրմունքը իշխանի քիմքին դեռ չհասած՝ երեաց քահանան և ասաց, որ պասի օրեր են, միս ուտել չի կարելի, պիտի բավարարվել միայն չոր հացով։

— Իսկ ինչո՞ւ աստված այնպես չի անում, որ թշնամին պասի օրերին չհայտնվի մեր դեմ, — բացականչեց իշխանը և արհամարհելով քահանայի նախաղգուշացումը, հաճույքով կերավ խորավածը։

Այդ օրվանից իշխանն ստացավ Մսակեր մականունը։

## Հաց հղի կանանց համար

Վասպուրականի Հայոց ձոր գավառում Հայկ Նահապետի ժամանակներից մնացած մի սովորություն կար։ Հղի կանանց համար թխում էին մի տեսակ հաց, որի խմորը հունցում էին Վահա ծովակի ջրով։

Վանը հայոց սրբազն ծովակն էր։ Հայերը համոզված էին, թե նրա ջրով հունցած հացը ուժ է տալիս կնոջը հեշտությամբ ծննդաբերելու։

## Վաղինակի հուոթի հասկերը

Դա եղել է հազար տարի առաջ։ Վայոց ձորի Գնդեվազ գյուղում Վաղինակ անունով մի մարդ էր ապրում։ Սա դարձել էր իր աշխատասիրության գերին։ Մարդը գիշեր-ցերեկ աշխատում էր, բայց չէր հոգնում։ Ոչ քնում էր, ոչ հանգստանում։ Նրա համար օրվա մեջ երկու օր կար, գիշերվա մեջ՝ չորս օր։ Այնպես որ աշխարհի բոլոր մարգկանց համար օրը մի օր էր, իսկ Վաղինակի համար՝ վեց օր։

Վաղինակի աշխատասիրությունը զայրացրեց գավառի իշխանին։ Սա խլեց Վաղինակի բոլոր արտերը և նրան թողեց մի թիզ քարքարուտ։ Գյուղացին սկսեց կոփվ տալ քարի հետ։ Գիշերները ձորի աղբյուրից տիկներով ջուր էր կրում և ջրում իր փոքրիկ արտը։ Վաղինակն էլ չիմացավ, թե ինքն ինչ արեց, որ իր մի թիզ արտից ավելի շատ ցորեն ստացավ, քան ուրիշները՝ իրենց ընդարձակ արտերից։ Նրա փոքրիկ արտի բոլոր ցողուններն արմատից հասկ էին դարձել ու լցվել հատիկով։

Իշխանն իմացավ այդ մասին և խլեց նաև Վաղինակի այդ մի թիզը։ Եինականը թողեց՝ իր տունը և բույն հյուսեց բարձր ժայ-

ոերի ծերպերից մեկում։ Չար ու նախանձ իշխանը մարդիկ ուղարկեց, որոնք վերադարձան ու ասացին.

— Այստեղ հասկի կամ ուրիշ բույսի նշան չկար։ Այդ շոր ժայռերի մեջ նա կմեռնի սովից։

Վաղինակը մարդկանց աշքից հեռու, ժայռերի վրա, աճեցրեց իր Շուռթի հասկերը։ Բայց այնքան շատ բերք ստացավ, որ ինքը լցնելու տեղ չուներ։

Պատահեց այնպես, որ Վայոց ձորում մի քանի տարի իրար վրա երաշտ եղավ։ Սովն սկսվեց և մի բուռ հատիկի համար մարդը կարող էր սպանել մարդուն։ Բայց ահա Գնդեվազում լուր տարածվեց, թե ժայռերի բնակիչ Վաղինակն ամենքին ցորեն է տալիս։ Մարդիկ շտապեցին դեպի լեռները։ Այստեղ ծերպերի վրա Վաղինակը ցորենի փոքրիկ շեղեր էր արել մարդկանց համար։

Դեպի լեռները գնաց նաև սովահար իշխանը։ Նա ծերպից ծերպ անցավ, բայց մի բուռ ցորեն էլ չգտավ։ Ասում են՝ շարությունից նրա աշքը Վաղինակի ցորենը քարից չէր տարբերում։

## Երբ պիտի ցորենը դառնա ընկույզի չափ

Վան քաղաքի հյուսիսային կողմում մի ժայռ կա, որ կոշվում է Մհերի դուռ։ Այդ դուռը տանում է դեպի այն քարանձավը, որտեղ փակվեց հայ վերջին դյուցազն Մհերը։ Ասում են՝ տարին մի անգամ Մհերը դուրս է գալիս քարանձավից, փորձում հողի ուժը և, զգալով, որ այն չի դիմանա իր ծանրությանը, վերադառնում է ետ։ Մի անգամ ժայռը բացվելիս Մհերին հանդիպում է մի հովիվ և հարցնում, թե ե՞րբ պիտի նա լույս աշխարհ դուրս գա։

— Ես անձավից դուրս կգամ այն ժամանակ, — պատասխանում է Մհերը, — երբ ցորենը դառնա ընկույզի չափ։

## Ինչպես էին վարուցանքս անում Խոզաբերքում

Վասպուրականում, Բերկրի քաղաքի մոտ, մի գյուղ կար Խոզաբերք անունով։ Այս գյուղում ասում էին.

— Ոչ մի արտ բերք չի տա, եթե գյուղացին աշխատանք ու քրտինք շթափի, տագնապ շապրի այդ արտի համար։

Եթե վարուցանքի ժամանակ մեկի խելքին փշի նստել տանը, ապա շինականները իրենց բան ու գործը կիսատ թողած՝ կշտապեն ծույլի մոտ և նրան կքշեն դեպի դաշտ, դեպի աշխատանք:

— Մի ծույլն էլ բավական է,— ասում էին նրանք, — որ աստծու աչքին ամենքս ծույլ երեանք և նա զրկի մեղ բերք ու բարիքից:

## Հարսը հաց է ուտում գեղեցիկ տաճարին նայելով

Վանա ծովակի մեջ, Աղթամար կղզու վրա, տասներորդ դարում, Գագիկ Արծրունի թագավորը կառուցել էր մի մարգարիտաղաք, որն ավելի գեղեցիկ էր, քան հին աշխարհի մի քանի մայրաքաղաքներ միասին վերցրած։ Բայց Աղթամարի ճարտարապետական գոհար-կառուցների թագը Սուրբ Խաչ եկեղեցին էր։ Այնքան գողտրիկ էր այդ տաճարը, որ թվում էր, թե այն ոչ թե կառուցել, այլ ասեղնագործել են։ Հանճարեղ այր էր Սուրբ Խաչի ճարտարապետ Մանուելը։

Վասպուրականում հարսանիքից առաջ հարսին բերում էին այս տաճարի մոտ և նրան մի լավաշ տալիս։ Հարսը պարտավոր էր հայացքը զցել տաճարի գեղաքանդակներին և հացն անուշ անել։ Վասպուրականցիները համոզված են, թե դրանից հետո հարսը լույս աշխարհ է բերելու միայն գեղեցիկ երեխաներ։

## Տրդատ ճարտարապետի սովորությունը

Տասնմեկերորդ դարում Հայաստանի ամենագեղեցիկ քաղաքը Անին էր։ Այս քաղաքի շքեղաշուք շենքերը կառուցել է Տրդատ ճարտարապետը՝ այն եղակի հանճարներից մեկը, որոնք աշխարհը ողողում են հազար տարի անշեց մնացող լույսով։

Տրդատը մի զարմանալի սովորություն ուներ՝ յուրաքանչյուր շինություն կառուցելիս մի բուռ ցորեն էր նետում հիմքի մեջ, որպեսզի շենքը բնավ սով չտեսնի։

## Գրիգոր Նարեկացու խորհուրդը

Գեղեցիկ էր Ռշտունիքի Գավաշ գավառի Մոխրաբերդ գյուղը՝ փոված Վանա լճի հարավարելլան ափին, Ծոտաքար լեռան լանջերին, Աղթամար կղզու դիմաց:

Մոխրաբերդցիները Վանա լճում տառեխ էին որսում, իրենց արգավանդ դաշտերում ցանում ցորեն, գարի ու կորեկ: Ծովի ջրերը ժամանակ առ ժամանակ բարձրանում էին և կու տալիս արգասաբեր շատ հողակտորներ: Այդ պատճառով մոխրաբերդցիները մի տարի որոշեցին գարի ու կորեկ չցանել: Հակառակի պես, այդ տարի նրանց ցանած ցորենը կարգին բերք չտվեց, իսկ ձկնորսները շկարողացան մի տառեխ էլ բռնել: Դե արի իմացիր, թե տառեխն ուր չքացավ:

Մոխրաբերդցիները գնացին մեծահանճար բանաստեղծ Գրիգոր Նարեկացու մոտ:

— Բնության մեջ հաճախ մեկի գոյությունը պայմանավորված է մյուսով,— ասաց Գրիգոր Նարեկացին,— գնացեք և առաջվա պես ցորենի հետ ցանեցեք նաև գարի ու կորեկ: Եվ դուք կտեսնեք, որ տառեխի վտառները կգան դեպի ծովեղը:

## Արճեշը հացի շտեմարանները պահում է իր գլխին

Տուրուբերանի Աղիովիտ գավառում, Վանա լճի հյուսիսային ափին, մի մեծ քաղաք է եղել Արճեշ անունով, որ հետո քրամուլն է եղել:

Մի խենթ ու խելառն էլ այս Վանա լիճն է: Աշխարհի բոլոր լճերի ջրերը նվազում են, իսկ Վանա լճի մակարդակը ահա արդեն քանի հարյուր տարի է անընդհատ բարձրանում է: Կարծես թե հեքիաթային մի ուժ հրում է ներքեցից:

Ամեն տարի լճի ջրերը խենթանում են մի քանի անգամ և լափին տալիս ու ողողում արճեշցիների տները, այգիները, հանդերը: Հսկա ալիքները խփում են Արճեշին, փշուր-փշուր լինում ու սողում ետ: Բայց մայիսին կամ հունիսին նրանք ձեռնունայն շեն վերադառնում: Իրենց գիրկն են առնում հացահատիկի նորահաս արտերը և տանում լին:

Արճեշցիները ծանրութեթև արեցին և որոշեցին ամենակով ալիքներից փրկել արտերը: Նրանք ծովափին թողեցին իրենց տները, այգիները, հին ու նոր գերեզմանատները և սկսեցին

վարուցանք անել լճափից բարձր սարավանդների վրա։ Վանա  
լիճն ինչքան էլ մոլեգներ՝ այդտեղ չեր հասնի։

Այդ նոր արտատեղերը վերսկից էին նայում Արծեշին։ Այդ  
պատճառով էլ ուրիշ վայրերից այստեղ եկողներն ասում են.

— Արծեշը հացի շտեմարանները պահում է իր գլխին։

### Կուզես երկարակյաց լինել՝ քիչ կեր

Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորը մի խոհարաբ  
ուներ Տիրոց անունով։ Թագավորից բացի, սա բոլոր արքունա-  
կաններին խորհուրդ էր տալիս.

— Եթե մարդ ուզում է երկար ապրել՝ պետք է քիչ ուտի։

Մի անգամ Գագիկը կանչեց Տիրոցին և ասաց.

— Դու ինչո՞ւ ամենքին խորհուրդ ես տալիս քիչ ուտել, իսկ  
ինձ այդ մասին ոչինչ չես հայտնում։

— Արքայի խոհարարը պարտավոր է ընտիր, ախորժահամ  
և առատ ճաշեր մատուցել իր տիրոջը։ Քչով պիտի բավարա-  
վեն ուրիշները, բայց ոչ արքան։

— Տիրոց, իշիր հաճոյախոսության նժույգից և հստակ ասա  
ասելիքդ՝ քիչ ուտելը օգտակա՞ր է մարդուն, թե ոչ։

— Օգտակար է, տեր իմ։

— Ինչո՞վ է օգտակար։

— Սանրաբեռնված ստամոքսով մարդը ավելի շուտ է  
մաշվում ու ծերանում։ Թեթև բեռով ձին ավելի երկար ճանա-  
պարհ է անցնում, քան ծանր բեռան տակ տնքացողը։

— Դա նաև ի՞նձ է վերաբերում։

— Ո՞չ, տեր իմ։ Ես այդ մասին քեզ չեմ հայտնում, որով-  
հետեւ առանց այն էլ դու քիչ ես ուտում, առատության մեջ մար-  
դու աշքը կուշտ է լինում։ Իսկ արքունականները ագահ են, ես  
նրանց խորհուրդ եմ տալիս քիչ ուտել՝ ոչ նրա համար, որ սըր-  
տանց ցանկանում եմ երկարացնել նրանց կյանքը։ Եթե նրանք  
քիչ ուտեն՝ և՛ դուք հարուստ կլինեք, և՛ տերությունը և հպա-  
տակների բերանն էլ մի շոր պատառ կընկնի։

### Անալյուր

Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին մի անգամ  
սերության սահմաններում շրջագայելիս կանգ առավ գեղեցկա-  
նիստ մի գյուղում, որն ուներ զով, հաճելի օդ։

Սկսեցին խնջույքի պատրաստություն տեսնել։ Արքայի սպասավորները կանչեցին գեղջավագին և նրան ասացին.

— Գաղիկ արքան սիրում է թարմ հաց։ Մենք ինքներս կթրինք, միայն թե ալյուր է պետք։

Գեղջավագը տնետուն ընկավ, բայց շկարողացավ ամբողջ գյուղում մի կոտ ալյուր գտնելու Արքատ գյուղ էր, յուրաքանչյուր շինական իր ունեցած ալյուրից հաց էր թխել մի քանի շաբաթվա կամ երկու-երեք ամսվա համար։

Եվ արքայի խնջույքը տեղի չունեցավ։

— Այ քեզ անալյուր գյուղ, այ անալյուր գյուղ, — կրկնում էր Գաղիկը արքունիք վերադառնալու ճանապարհին։

Այդ օրվանից էլ գյուղն ստացավ Անալյուր անունը։

## Անիի և օրը

912 Թվականի գարնանը սովը հասել էր Անի։ Սմբել-կծկվել էր գեղեցկաշեն քաղաքը։ Շուկաներում ամեն ինչ ծախում էին, հացից բացի։

Բայց մի օր Անին միանգամից ալեկոծվեց։ Քաղաքում լուր էր տարածվել, որ Սմբատ արքայի համբարանոցները պոկեպուոնկ լցված են ցորենով։ Մարդիկ հավաքվեցին Բուն փողոցում և բազմություն կազմած դիմեցին դեպի հայոց թագավորի պալատը։ Խղված ձայնով սովյալները ճշում էին.

— Հաց, հաց, հաց...

Սմբատ արքայի դրանիկ գնդերը շթողեցին, որ բազմությունը հասնի պալատին։ Ամբոխը ետ դարձավ և կրկնապատկված հուզմունքով սկսեց Բուն փողոցում ետ ու առաջ շարժվել։ Հանկարծ մեկը բարձրացավ կողքի տանիքի վրա և դիմեց բազմությանը.

— Արքուն չի ուզում մեզ հաց տալ, նա մտադիր չէ օգնել իր սովյալ հպատակներին։ Մեզնից մի քանի քայլ այն կաղմ արքայի ախոռատան դեղերն են, եկեք հրդեհնք, գուցե արքան ուշքի գա և հաց տա մեզ։

Բոլորը համաձայնեցին և վազեցին դեպի ցույց տված կողմը։ Շուտով արքայի դեղերի հրդեհի բոցերը վեր ելան այնքան, որ Սմբատը տեսավ իր պատշզամբից։

Թագավորն այդ օրը զորք շուղարկեց ըմբոստ քաղաքացիներին պատժելու համար։

— Պատշաճ չէ արքայիս, որ խոտի համար ես գլուխ դնեմ այդ խելառների հետ,— ասաց Սմբատը և փակվեց իր գահապահում:

Հաջորդ օրը սովորական երի ամբոխը հավաքվեց մայր տաճարի բակում: Ամենքն էլ աղոթեցին, բայց ոչ մեկի քաղցը չհագեցավ: Հենց այդ ժամանակ մի հանդուգն այր վերցրեց եկեղեցու խնկածիշը և բարձրացավ դանգակատուն:

— Դու ի՞նչ ես անում այդտեղ,— հարցրին մարդիկ ներքեւից:

— Ի լուր ամենքի ես ասում եմ, որ հիմա պիտի գնամ և այս բուրզառով հրդեհեմ արքայի ցորենի համբարանոցը,— ասաց հանդուգն այրը:

Ասաց, իջավ դանգակատնից և մեն-մենակ քայլեց դեպի արքունիք:

— Արքայի զորականները կտան նրա վզակոթին,— ասացին այս ու այն կողմից:

Եայց մարդն աներկյուղ քայլեց և հասավ պալատ: Դրանիկ գնդի զորականները բռնեցին նրան, արքայի հրամանով հանեցին աշքերը, ապա մարմինը խոտով ու եղեգներով ծածկելով կրակ տվին: Մարդը ողջ-ողջ հրո ճարակ դարձավ: Ապա արքունականները նրա մոխրացած դին տարան ու շպրտեցին քաղաքի պարիսպներից դուրս:

Դա Անիի սև օրն էր:

## Այս հայերը ո՞ւր պիտի հասնեն այսքան պարզամտությամբ

918 թվականի սովից Հայաստանը սսկվել էր: Երաշտն այնպես էր խանձել հողը, որ նույնիսկ գաղանները, լեռներում ու անտառներում ուտելու բան չգտնելով, բնավեր եղան և սկսեցին պտույտ տալ գյուղերի, ավանների ու քաղաքների շուրջը: Եվ մարդկանց թվաց, թե երկրում գաղանները բազմացան:

Այդ նույն տարում բյուզանդացի մի վաճառական Կոստանդնուպոլսից գալիս էր Անի: Դեռ քաղաքին չհասած՝ մի քանի սովորական հայեր կտրեցին բյուզանդացու ճանապարհը և տակնուվրա անելով նրա ունեցած-շունեցածը, վերցրին միայն ուտելիքները՝ երկու մեծ հաց և մի կտոր ապիտած միս:

Թյուզանդացին զարմացավ, երբ հայերը հացի ու մսի դիմաց երկու ոսկի տվեցին:

— Սա ի՞նչ է նշանակում,— հարցրեց վաճառականը երկյուղից դեռ շաղատված:

— Սա նշանակում է, որ մենք քեզ չենք կողոպտում, պարզապես վերցնում ենք քո հացը և նրա դիմաց վճարում բազմապատիկ շատ,— ասացին հայերը և բաց թողեցին բյուզանդացուն:

— Այս հայերն ո՞ւր պիտի հասնեն այսքան պարզաբանությամբ,— ասաց վաճառականը, զարմանալով կատարվածից:

## 1032 թվականի աշխարհավեր սովը

Հայոց աշխարհի ամենամեծ սովերից մեկը եղել է 1032 թվականի սկզբին: Տասնմեկ-տասներկուերորդ դարերի պատմիչ Մատթեոս Ուոհայեցին այդ մասին գրել է. «Ողջ երկրում սաստիկ սով եղավ, և մարդկանցից շատերը սովամահ եղան: Շատերը, հացի կարոտ, վաճառում էին իրենց կանանց և երեխաներին: Սովն այնքան սաստիկ էր, որ մարդիկ խոսելու ժամանակ իրենց շունչն էին փշում: Ահա նման ձեռվ երկիրը սովից ավերակ դարձավ»:

## Աստղագուշակի հնարամտությունը

1033 թվականի Հունիսի 29-ին, ուրբաթ օրը, կեսօրին, արերխավարեց:

Աստղագուշակ ու իմաստասեր՝ Թուխմանուկը այդ մասին գիտեր մի քանի օր առաջ: Նա որոշեց այդ խավարումն օգտագործել և պատժել մեծահարուստ Վարոսին:

Վարոսը մարդախոշոշ վաշխառու էր և դարձել էր Պարսկահայք նահանգի Զարավանդ գավառի ինքնիշխան տիրակալը: Ծինականներից խլել ու ամբարել էր այնքան ցորեն, որով կարող էր կերակրել աշխարհի կեսը: Բայց շատն ագահի ախորժակն ավելի էր բացում: Նա շարունակում էր կողոպտել մարդկանց, նոր ցորնահորեր լցնել և քմահաճորեն տարին դարձնել հացապակաս:

Եվ ահա արևի խավարման նախօրեին Թուխմանուկը գնաց Վարոսի մոտ ու ասաց.

— Ամեն մարդ երկնքում իր բախտի աստղն ունի:

- Դա գիտեն ամենքը, — պատասխանեց մեծահարուսալը:
- Երկնքում է նաև քո բախտի աստղը:
- Ես այդ մասին գիտեի ծննդյան օրից:
- Մի քանի օր է, ինչ ես նկատում եմ, որ քո աստղի լույսը նվազում է:
- Ես շեմ հավատում քեզ, ոս ի՞նչն է պակաս, որ աստղիս լույսը նվազի:
- Քո մեջ համարյա թե մարդ չի մնացել, Վարոս, եթե աստված թույլ տա՝ դու աշխարհը կտեղավորես քո ցորնահորերում:
- Դա նախանձ ու շարակամ մարդու խոսք է:
- Ո՞չ, Վարոս, վաղը կեսօրին կխավարի արել:
- Ինձ ի՞նչ:
- Վաղը կեսօրին կխավարի արել, — Հաստատակամորեն կրկնեց աստղագուշակը:
- Հետո՞ւ:
- Մի ամիս հետո էլ երկնքում կմարի քո բախտի աստղը: Թե ուզում ես՝ աստղդ շխավարի, բաց արա քո ամբարները և ցորենդ քառասուն անգամ էժան գնով վաճառիր մարդկանց:
- Ինչ է, ուզում ես, որ ես իմ հարստությունը մարդկանց բաշխեմ ձրի՞ւ:
- Դու պարտավոր ես այդպես անել՝ եթե շես ուզում, որ քո բախտի աստղը ընկնի երկնքից, — իր խոսքն ավարտեց թուխմանուկը և հեռացավ Վարոսի մոտից:

Այդ օրը Վարոսը փորձեց բանի տեղ շղնել աստղագուշակի ասածները: Սակայն հաջորդ օրը, տեսնելով արեի խավարումը, մեծահարուստի ծնկները թուացան: Մահվան ահը մտավ նրա սիրտը: Եվ նա սկսեց իր ցորենը ձրի բաշխել ամենքին:

## Միայն ձուկ ուտողը ձուկ կտեսնի

Տուրուբերան նահանգի թղնունիք գավառում, Վանա լճի հյուսիսային ափին մի գեղեցիկ քաղաք է եղել Արծկե անունով: Շատ ձեռագրեր էին ընդօրինակում Արծկեում:

Այստեղ էր ապրում գրիշ Հակոբ Նետրարենցը, որը սնվում էր միայն տառեխ ձկնով: Նա ձուկը չորացնում էր արեի տակ, նրանից ալյուր սարքում և հաց թխում: Տարիներ հետո գրիշի տեսողությունը վատանում է:

Բժիշկը նրան ասում է:

— Միայն ձուկ ուտողը ձուկ կտեսնի։ Աշխարհն ու մարդկանց տեսնելու համար պիտի ամեն օր ցորեն հաց ուտել, երբեմն-երբեմն էլ՝ ձուկ։

## Պատմիչը գրում է

Տասնմեկերորդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցին, խոսելով Արծն քաղաքի 1049 թվականի կոտորածի մասին, աշխարհակործան աղետների ու արհավիրքների պատճառ է համարում մարդկանց աշքածակությունն ու ագահությունը, խաբեությունն ու չարությունը։ Եվ պատմիչը գրում է. «Բայց այնուհետև մեր եկեղեցիները մտան սեքստացիներն ու պիհոռնացիները, և արդարության օրենքը փոխվեց անիրավության, արծաթասիրությունը ավելի հարգի դարձավ, քան աստվածասիրությունը, և մամոնան ավելի՝ քան Քրիստոսը. այն ժամանակ ամեն կարգի հարստությունը խոտորվելով՝ վերածվեց անկարգության։ Սրա իշխանները դարձան գողերի գողակից, վրիժառու և արծաթի ծառաներ, դատավորները՝ կաշառակեր և կաշառքի համար արդարությունը խարդախողներ, ոչ որբերի իրավունք էին պաշտպանում, ոչ այրիների դատը հանձն առնում։ Վաշխերի ու տոկոսների համար օրենքներ հաստատվեցին, իսկ ցորենի փոխատվության համար բազմապատկություն սահմանվեց, որի պատճառով հողը պղծվելով՝ արգելակիչ է դառնում իր արգանդի ժամանակին պտղաբերելուն՝ մարդկանց կերակրելու համար։ Ով խաբում էր իր ընկերոջը, պարծենում էր, որ խելացի է, իսկ ով հափշտակում էր, ասում էր՝ «Ես հզոր եմ»։ Դրացի աղքատների տներն ու նրանց արտերի սահմանները հարուստները հափշտակում էին և չէին մտաբերում տիրոջ ծառա Մովսեսի ձեռքով գրված աստվածապատվեր անեծքը. «Անիծյալ է նա, ով հափշտակում է ընկերոջ արտերը», կամ մեծ խայլու այդպիսիներին սաստող կշամքանքը. «Վա՛յ նրանց, որոնք տունը տան և արտը արտին են միացնում, որպեսզի ընկերոջից խլեն»։

## Թավթուկն ուներ ութիարյուր գութան

Տասնմեկերորդ դարում Հայոց մեծ ու բազմամարդ Արծն քաղաքում մի քորեպիսկոպոս էր ապրում Թավթուկ անունով։ Հայոց աշխարհի ոչ մի քրքա այնքան գանձ ու հարստություն

չուներ, որքան Դավթուկը։ Վարուցանքի ժամանակ ամեն օր նրա տնից դւրս էր գալիս ութ հարյուր գութան, որոնցից յուրաքանչյուրին յծված էր վեց եզ։

1049 թվականին սելջուկները գրավեցին Արծնի և հիմնահատակ կործանեցին այն։ Միայն Դավթուկ քորեպիսկոպոսից խլած գանձերը բարձեցին քառասուն ուղտի վրա։

Եղթայակապ Դավթուկին բերեցին Իբրահիմ Յանալ զորապետի մոտ։ Վերջինս ասաց.

— Դավթուկ, ճի՞շտ է, որ դու գետնի տակ թաքցրած հացի շտեմարան ունես։

— Այո՛, իմ Հորերում քառասուն հազար ուղտաբեռ կարմրահատ ցորեն կա։ Բայց ինչ էլ լինի՝ ես չեմ հայտնի շտեմարանի տեղը։

— Դավթուկ, քեզ ծեծեցին և դու ստիպված էիր հայտնել քառասուն ուղտաբեռ գանձերի տեղը, ոսկին ու մարգարիտը հանձնել ես, հիմա խնայում ես ցորե՞նը, չէ՞ որ դրա համար քեզ կսպանենք։

— Կուզեք՝ կտոր-կտոր արեք, ես չեմ հայտնի ցորենի տեղը։ Ուսկին ու մարգարիտը Հայաստանը կարող են պահել տարվա մեջ մի օր, իսկ ցորենը մեզ կերակրում է տարին բոլոր։

## ~ Կորկոտ

Հայոց աշխարհի տասներկու հազար ճաշերի ցուցակն սկըսվում է կորկոտով։ Թեփահան արված ցորենը լցնում են պղնձե կաթսան և երեկոյան դնում մարմանդ կրակ ունեցող թոնիրի մեջ։ Առավոտյան հանում են կաթսան և վայելում աստվածային կորկոտը։ Ոչ մի ճաշ այդպիսի համ չունի։

Կորկոտ են եփում ծննդյան տոնին, հարսանիքին ու մեռելահացին։

Հայոց աշխարհի բոլոր նոր տարիների արշալույսները բացվել են կորկոտի ախորժագրգիր բուրմանքով։

Մի անգամ բյուզանդացիները հարցում արեցին հայերին.

— Ինչո՞ւ եք կորկոտով սկսում նոր տարին։

— Ցորենով ենք սկսում, որպեսզի ցորենաշատ լինի ամբողջ տարին, — պատասխանեցին հայերը։

## Հացը մարդուն ճշմարտախոս է դարձնում

Հայաստանում տասնմեկերորդ դարում մի իմաստուն մարդ էր ապրում Գրիգոր Պահլավունի Մագիստրոս անունով։ Այդպիսի իւնիթ ու մեծ իմաստասեր հարյուր տարին մի անգամ է ծնվում։ Այս իմաստունը սովորություն ուներ որևէ բան գրելու ժամանակ դիմացը մի կտոր հաց դնել և նոր գրիչը շարժել մագաղաթի վրա։ Դա նշան էր, թե նա ամեն ինչ ճիշտ է գրում։

— Հացին նայելուց մարդ յոթնապատիկ ճշմարտախոս է գառնում, — ասում էր իմաստունը։

## Ծուշանց

Վասպուրականի Սենեքերիմ թագավորը մի դուստր ուներ Շուշան անունով։ Մի անգամ այս Շուշանը թագավորից գաղտնի քառասուն ձիաբեռ ցորեն է նվիրում մի խումբ շինականների։

Իմանալով այդ մասին՝ հայրը զայրանում է և կանչում դրատերը։

— Դու գիտե՞ս, որ սովէ մեր աշխարհում, — ասում է Սենեքերիմը։

— Իմ ննջասենյակի պատշգամբից ամեն ինչ պերճ ու գեղեցիկ է երևում, իսկ աշխարհի պակաս-պուտը տեսնելու համար արքունականներն էլ մի աշքով կույր են, — ալասասիրանում է Շուշանը։

Այդ դեպքից հետո ցորեն ստացած գյուղի շինականները, շիմանալով, թե ինչպես արտահայտեն իրենց երախնտադիտությունը արքայադստեր հանդեպ, խոսքի տակին-գլխին Շուշան, հա Շուշան են ասում։ Այնքան Շուշան ասացին, որ գյուղն այնուհետև կոչվեց Շուշանց։

Դա եղել է հազար տարի առաջ։ Սովը գնաց, Շուշանցը մնաց։

## Ներսես Շնորհալին ու հացը

Տասնմեկերորդ դարի բանաստեղծ Ներսես Շնորհալին իր մեծանուն պապի՝ Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի նման, հացապաշտ էր։

Ներսես Շնորհալին ծնվել է Շոփաց աշխարհի Անձիտ գավառի Շովք դղյակում։ Մինչև նրա ծնունդը Շովքի հայերը ոտից

գլուխ բանաստեղծ են եղել։ Իրենց մեծ լիճը և նրա կողքի երկու լճերը կոչել են Շովք՝ ծովեր։ Հետո այդ անունով են կոչել Պահապումիների հին դղյակը։ Բայց թշնամին չթողեց, որ ներս նես Շնորհալին իր մանկության տարիներն անցկացնի այս դրդյակում։ Ներսեսի ծնողները տեղափոխվեցին Կոմմագենեի Տլուք գավառը։ Այստեղ էլ նրանց կալվածքը դարձան երեք լճեր, ճիշտ այնպիսին, ինչպիսին Շովքում էր։ Նրանք այս լճերի մոտ դղյակ կառուցեցին։ Հետո և՛ դղյակը, և՛ լճերը կոչեցին Շովք։

Ներսես Շնորհալին շատ էր սիրում Տլուքի այս Շովքը։ Սովորեց Մե լեռան Կարմիր վանքում, երկար ժամանակ ապրեց Եփրատի աջ ափին գտնվող Հոռմելա բերդում, հետո Շողական ամրոց գնաց ու այցելեց Կիլիկիայի շատ ու շատ վայրեր։

Բացի Շովքից նա ոչ մի տեղ կուշտ փորով հաց չէր ուտում։  
— Տունդարձի ճամփան ամենից առաջ մոռանում է նա, ով ուրիշ տեղ քաղց չի զգում, — ասում էր բանաստեղծը։

## Անիում հաց են վաճառել գիշերվա բոլոր ժամերին

Անի մայրաքաղաքի ամենամեծ մայրուղին կոչվում էր Բուն փողոց։ Մայրուղու աջ կողմում մի փուռ-կուղպակ կար, որտեղ գիշերվա բոլոր ժամերին հաց էին վաճառում։

Մի անգամ Կոստանդնուպոլսից Անի եկած բյուզանդացի մի վաճառական կեսպիշերին եկավ փուատիրոց մոտ և գրուցի բոնվեց նրա հետ։

— Ես եղել եմ աշխարհի մոտ ու հեռավոր քաղում քաղաքներում, — ասաց վաճառականը, — բայց ոչ մի տեղ հացի գիշերային խանութ չեմ տեսել։ Ի՞նչ է անեցիներն այդքան շատ են քաղցում, որ գիշերն էլ եք հաց թխում նրանց համար։

— Սխալվում ես, հարգարժան վաճառական, — պատասխանեց փուատերը։ — Անին ամեն օր հազարից ավելի հյուր է ընդունում։ Նրանցից շատերը քաղաք են հասնում ուշ գիշերով։ Այդ ժամին որտեղից հաց գտնի քաղցած հյուրը։

— Բայց հազար հյուրից հետը կարող է հաց չունենալ և քաղցած մնալ միայն մեկը։

— Գագիկ արքայի և Կատրանիդե թագուհու հրամանով իմ փուռ-կուղպակը գիշերն է գործում հենց այդ մեկի համար։ Մեր

քաղաքում ոչ մի հյուր շպետք է քաղցած քնիւ Այս փուռ-կուղ-պակը հյուրընկալող Անիի արժանապատվության գիշերային պաշտպանն է:

## Հացկնի

Խարբերդի Արաբկիր գավառում, Եփրատի վտակ Ոսկեգետակի աջ ափին, Սև լեռան ստորոտում, Հացկնի գյուղն էր։ Սա եղել է հացի շտեմարան։ Այստեղից ցորեն էին տանում գավառի Մաշկերտ, Շագ, Անջրդի, Ամպրկա, Քուշնա, Բաղնիք գյուղերը, Արաբկիր ու Ակն քաղաքները։

Հացկնիում աճեցնում էին ազնվագույն ցորեն ու խաղող։ Աշխարհում ինչ էլ տեղի ունենար՝ այս գյուղում անպակաս էին հացն ու գինին։ Այդ պատճառով հազար տարի առաջ գյուղը կոչվեց Հաց ու գինի, հետո հնչյունափոխվեց դարձավ Հացկնի։

## Գուգլակի վիմափոր մթերանոցը

Տասնմեկ-տասնշորսերորդ դարերի Հայկական Կիլիկիայում, գեղի Լամբրոն բերդաքաղաքը տանող ճանապարհի վրա, մի հզոր բերդ է եղել Գուգլակ անունով՝ համանուն կիրճում։

Մեծ մայրուղու վրա գտնվող բերդն ուներ վիմափոր ջրամբարներ ու մթերանոցներ։ Տասնշորսերորդ դարի երկրորդ կեսում, հայկական պետության արևամուտին, Գուգլակն այնքան էր ձեռքից ձեռք անցնում, որ շատ տերերի համար դեղի ջրամբարներն ու մթերոցները տանող գաղտուղիները մնում են անհայտ։

Մի անգամ թշնամին պաշարեց Գուգլակը։ Երկար ժամանակ բերդապաշտպանները չէին հանձնվում։ Բայց սովն ընկավ բերդը, և բերդակալը որոշեց ինքնասպանություն գործել ու շտեռնել ամրոցի անկումը։ Նա իջավ բերդի նկուղներից մեկը և պատահմամբ դեմ առավ մթերանոցի ելքին։ Այնտեղ այնքան ցորեն էր ամբարված, որ Գուգլակի պաշտպաններին կարող էր հերիքել հարյուր տարի։

## Կարմրախայտը հայկական ձկների ցորենն է

Բազմահանճար Գրիգոր Պահլավունի Մագիստրոսը շատ էր սիրում կարմրախայտ ձուկը, նա հավաստում էր, թե դա ամենասննդարար բանն է։

— Կարմրախայտը, — ասում էր իմաստասերը, — նման է կայծքարի, որը բորբոքում է մարդու թմրած մտքերը և հոգու նիրհող հուզվերը։ Կարմրախայտը հայկական ձկների ցորենն է, մնացածը՝ հաճար, կորեկ ու գարի են։

Մի անգամ Գրիգոր Մագիստրոսի դստրայր Մամիկոնյան իշխան Թոռնիկը խոստանում է որպես հարգի նվեր կարմրախայտ ուղարկել աներոջը։ Մագիստրոսը ուրախանում է և զավեշտորեն ասում, որ պատրաստ է օրերով քաղցած մնալ ու տենչանքով սպասել կարմրախայտին։ Բայց տեսնելով, որ փեսան ուշացնում է ուղարկել խոստացածը, լուր է տալիս, թե խոստումներով քաղց չի հագենա, «այնպես մի արա, որ կոկորդս չորանա և քո կարմրախայտը չկարողանա ներս մտնել»։

Ինքը՝ իմաստասերն էլ սիրում էր ուրիշներին կարմրախայտ նվիրել, Մի անգամ Սյունյաց արքեպիսկոպոսին նա նվելք է ուղարկում Արածանի գետից որսած մի մեծ կողով կարմրախայտ։

Ոչ մի խոհարար չէր կարող այդ հրաշալի ձուկն այնպես խորովել շամփուրի վրա կամ խաշել սանի մեջ, ինչպես դաշտանում էր ինքը՝ Գրիգոր Պահլավունի Մագիստրոսը։ Խորոված կամ խաշած կարմրախայտի վրա նա ցանում էր փափկաճաշակ քիմքերը գրգռող այնպիսի համեմունքներ, ինչպիսիք են ոսկեգույն քրքումը, ոետինը և ոքսիմելին, այսինքն՝ քացախամեղը։

## Աղանձուգետ

Որոտանը Գորիսի շրջանում մի վտակ ունի, որ սկիզբ է առնում Բարգուշատի լեռներից և աջ կողմից գետին խառնվում Տանձատափ գյուղի մոտ։ Հնում այս գետ-վտակն անուն չուներ։ Բայց աշխարհում երևի ոչ մի բան անանուն չի մնում։ Ահա թե ինչպես անուն ստացավ այդ փոքրիկ գետը։

Մի տարի սովոն այս ձորերում ինչ տուն ասես որ չքանդեց Գարնան վերջն էր։ Մարդիկ օրեր էին հաշվում և սպասում նոր բերքին։ Հակառակի պես առաջինը հասկակալեցին իշխանի արտերը։ Մարդիկ մոռացան իշխան ու իշխանություն և սկսեցին արտից հասկափնջեր անել, խանձել խարույկների վրա և անուշ անել քաղցրահատիկ ցորենը։ Իշխանն իմացավ այդ մասին և շտապեց իր արտերի մոտ, Նա շինականների գրպաններից հանեց աղանձը և նրանց աշքի առաջ լցրեց անանուն գետը։ Մար-

դիկ թուքը կուլ տալով, սկսեցին վազել գետի ափով և դիտել, թե  
յսրենի հստիկներն ինչպես են լողում ջրերի վրա:

Այդ դեպքի պատճառով էլ գետը կոչվեց Աղանձուկետ:

## Առողջ մարդն ավալի լավ ախործակ է ունենում, քան տկարը

Անի քաղաքում Գազ անունով մի բժիշկ կար: Որևէ բուժում  
կատարելուց առաջ նա հիվանդին հյուրասիրում էր տեսակ-տե-  
սակ ճաշերով: Երբ նրան հարցնում էին, թե ինչու է հյուրասի-  
րությամբ սկսում իր բուժումը, Գազը պատասխանում էր.

— Բժիշկը նախ պիտի հիվանդը տարբերի առողջից: Իսկ  
առողջ մարդն ավելի լավ ախործակ է ունենում, քան՝ տկարը:

## Խողնավար

Գորիսի շրջանում մի գյուղ կա Խողնավար անունով: Սկզբում  
կոչվում էր Խողանավար: Հետո ամեն ինչի մեջ մի բան կրծա-  
տելու սիրահար գյուղացիները մի տառը կուլ են տալիս և Խո-  
ղանավարը դարձնում Խողնավար:

Դուք տեսե՞լ եք, թե հնձելուց հետո ինչի է նմանվում արտի  
ցողունների գետնին կպած մասը: Ոնց որ խոզի ցից-ցից ստեների  
Դրա համար էլ այդպիսի արտը կոչում են խոզան՝ խոզի նման  
ցից-ցից մազեր ունենալու պատճառով: Նույն պատճառով էլ  
մեր շորերը մաքրելու մազափունջը կոչում ենք խոզանակ: Խո-  
զանը գետնատարած խոզանակ է:

Մի տարի Խողնավարի շինականները ուշացրին հերկել իրենց  
խոզանը, իսկ աշունն արգեն վերջանալու վրա էր: Հարևան գյու-  
ղերից նկատում են, որ Խողնավարի հնձած արտերը մնացել են  
անվար: Այդպես էլ այդ տարի խոզանավարը մնաց: Այդ ժա-  
մանակվանից էլ գյուղն ստացավ Խողնավար անունը:

## Երեք հարյուր երեսունվեց ուղտաքեռ ցորեն մի գրքի համար

Հին ու միջնադարյան Հայտատանում յոթանասուն հազար բերդ  
է եղել, որից յոթ հազարը կոչել են անմատչելի: Սակայն ոչ մի  
բերդ էլ անմատչելի չմնաց: Թշնամին նվաճեց հայոց մատչելի  
ու անմատչելի բոլոր բերդ-ամրոցները: Դրանցից մեկն էր Բա-

ղաբերդը՝ հին Կապան քաղաքի արևմտյան դարպասը։ 1170  
թվականին սելջուկները գրավեցին Բաղաբերդը և ավարի մատ-  
նեցին Սյունիքի տարբեր կողմերից այստեղ հավաքված տասը  
հազար մագաղաթյա ձեռագիր։ Դրանց մեջ էր Մովսես Խորե-  
նացու «Պատմություն Հայոց» գիրքը։

Կապանցի մի հայ իշխան գնաց սելջուկների հրոսակապետ  
Ելակուզի մոտ և փորձեց գերությունից ու աքսորից փրկել գոնե-  
մեկը՝ Մովսես Խորենացու մատյանը։

— Փրկագինը ես կասեմ երկու օր հետո, — ասաց Ելակուզը։  
Իշխանը եկավ երկու օր հետո։ Հրոսակապետը նրան ասաց.

— Տասը հազար մատյաններից չորս հարյուրն այդ գրքից է։  
Մատյանում կա երեքհարյուր երեսունվեց հազար գիր։ Եթե  
ուզում ես մեկը փրկել, ապա պետք է տաս երեք հարյուր երե-  
սունվեց ուղտաբեռ ցորեն։ Չորս հարյուրն արժե երեքհարյուր  
երեսունվեց անգամ հարյուր ուղտաբեռ։

Իշխանին հաջողվեց փրկել միայն մի մատյան։

## Տասներկու պայման

Տասներկուերորդ դարի մեծ բժշկապետ Մխիթար Հերացուն  
հարցրին։

— Միայն սննդո՞վ է պայմանավորված մարդու երկարակե-  
ցությունն ու առանց հիվանդանալու ապրելը։

— Ո՞չ, ժամանակին մեռնելու համար տասներկու պայման  
կա։

— Ի՞նչ է նշանակում ժամանակին մեռնել, մի՞թե մարդու  
տարիքի համար սահմանված որոշակի եղբագիծ կա։

— Մարդը պետք է ապրի մինչև չորս հարյուր տարի։

— Բայց աշխարհում ոչ ոք այդքան չի ապրել։

— Ճիշտ է, առայժմ մարդ մնում է կեսմանապարհին, բայց  
նրա կառուցվածքն այնպիսին է, որ նա պարտավոր է գոնե չորս  
հարյուր տարի ապրել։ Դա շատ չէ, արծիվն ու կաղնին դրանից  
երկար են ապրում։

— Դու ասացիր, որ երկար ապրելու համար տաւներկու պայ-  
ման կա։

— Այս։

— Որո՞նք են այդ պայմանները։

— Առաջին պայման՝ միայն ցորնահաց ուտել, բայց երկու անգամ քիչ, քան ուտում է սովորական մարդը:

Երկրորդ պայման՝ խմել աղբյուրի մաքուր ջուր, խաղողի, նուան ու խնձորի օշարակ, յոթ օրը մեկ մի գավլ գինի, ամեն օր կես ըմպանակ կաթ:

Երրորդ պայման՝ ամեն օր ուտել մածուն, որևէ ջրալի ապուր, կանաչեղեն, զանազան համեմունքներ, երեք օրը մեկ՝ մսաշուր, յոթ օրը մեկ՝ խորոված միս: Այս ամենի հետ պիտի ուտել խընդոր, ծիրան, տանձ, նարինջ, նուշ, կարագ ու պանիր:

Չորրորդ պայման՝ մարդ պիտի մինչև կյանքի վերջն աշխատի: Սովորվեսը «Էղիպտական» նշանավոր ողբերգությունը գրել է հարյուր տարեկան հասակում: Հանգստանում են թեթև գործանելով, բոլորովին շաշխատելով մարդ իրեն ինքնակամ դատապարտում է մահվան:

Հինգերորդ պայման՝ մարդ պիտի բնության հետ քնի, բնության հետ էլ արթնանա:

Վեցերորդ պայման՝ հանգիստ և ուրախ պահիր քեզ: Մարդ տարին մեկ անգամից ավելի շպետք է զայրանա:

Տոթերորդ պայման՝ ստախոսությունը ամենաանուղղելի ստախոսին էլ ինչ-որ տեղ հոգս է պատճառում: Աշխարհում ոչ մի մարդ չի կարողանում իր կյանքն սկսել ու ավարտել առանց ստի: Բոլոր մարդիկ էլ քիչ-միշ ստում են, ոչ մի բացառություն չկա: Բայց պետք է ամենքն իմանան, որ հոգուն ցավ պատճառող սուտը ծերացնում է մարդուն:

Ութերորդ պայման՝ բավարարվիր նրանով, ինչ ինքդ ես ձեռք բերում քո աշխատանքով:

Իններորդ պայման՝ սիրիր մեկին և մշտապես հիշիր՝ գեղեցիկ է նա, ում սիրում ես:

Տասներորդ պայման՝ ապրիր աղմուկից հեռու: Իհարկե, աղմուկ չէ բնական ոչ մի ձայն. ոչ գետակների ու պղբյուրների քշքոցը, ոչ ջրվեժների ճողփյունը, ոչ թոշունների ճովողյունը:

Տասնմեկերորդ պայման՝ ոչ մի մարդ երջանկության տեր չէ, որովհետեւ երջանկությունը ուրիշների վերաբերմունքն է քո հանդեպ:

Տասներկուերորդ պայման՝ աստծուն կարող նս հավատալ այնքան, ինչքան քեզ ես հավատում, և շհավատալ այնքան, ինչ-քան քեզ չես հավատում:

## Ազահությունն աղի ջրի նման է, ինչքան խմես՝ այնքան ավելի կծարավես

Հայկական Կիլիկիայի Լևոն Մեծագործ թագավորը կանչեց  
մի ագահ մարդու և ասաց.

— Քեզ հիմա կտանեն արքունի սեղանատուն, այնտեղ ամեն  
տեսակ ուտելիք կա, կեր՝ ինչքան սիրտդ տալիս է, ինչքան մնա՝  
վաղը ես ու դու միասին կուտենք:

Ագահին տարան սեղանատուն և դուռը փակեցին ետևից:  
Այստեղ խորոված մի եղնիկ էր, հաց և մի սափոր օշարակ:

«Ասում է՝ ամեն ինչ կա, բայց եղնիկից բացի ուրիշ բան չեմ  
տեսնում,— փնթփնթաց ագահը,— ոչի՞նչ, կեսը ես կուտեմ,  
մյուս կեսը վաղը անուշ կանեմ թագավորի հետ»:

Ասաց ու գործի անցավ: Կերավ, օշարակն էլ վրայից անուշ  
արեց ու ինքն իրեն ասաց.

— Զէ՛, ավելի լավ է՝ կեսի կեսն էլ ուտեմ:

Կերավ դժվարությամբ: Զգում էր, որ շնչահեղձ է լինում,  
բայց շարունակում էր կրծել ոսկորները:

Հաջորդ առավոտյան սպասավորները բացեցին սեղանա-  
տան դուռը: Ազահն անշունչ փուլել էր հատակին՝ խորոված եղ-  
նիկի ոսկորի վերջին կտորը ձեռքին: Եկան ու զեկուցեցին ար-  
քային: Եվ Լևոն Մեծագործն ասաց.

— Ագահությունն աղի ջրի նման է, ինչքան խմես՝ այնքան  
ավելի կծարավես:

### Կոհակ

Արցախի Խնուշինակ և Ճարտար գյուղերի միջև գտնվող բլրի  
վրա մի մատուռ կա Կոհակ անունով: Կոհակ հնում նշանակել է  
և՛ ալիք, և՛ բլուր: Հիմա բլուրը մոռացել են, մնացել է ալիքը:  
Բայց Արցախը քարեղեն վկայագրով պահել է այդ բառի հնա-  
մենի իմաստը: Այո՛, Կոհակ նշանակում է բլուր: Նախ՝ բլուր,  
հետո՝ ալիք:

Մի ժամանակ այս բլրի վրա հոխորտացել է Լենկթեմուրը:  
Նա ասպատակել էր Արցախը և գերել արցախեցի հարյուր գե-  
ղուհիների: Արցախեցիները փորձեցին փրկել իրենց աղջիկնե-  
րին: Լենկթեմուրը պայման դրեց.

— Եթե յոթ օրում այնքան ցորեն հավաքեք այստեղ, որ շեղն ավելի բարձր լինի, քան այս բլուրը՝ ես ազատ կարձակեմ ձեր գեղուհիներին:

Արցախն իրարով անցավ: Ինչքան ցորեն ունեին՝ բերեցին ու թափեցին բռնակալի ոտքերի առջև: Ցորենի շեղը հավասարվեց բլրին, բայց վեր չբարձրացավ:

Լենկթեմուրն ասաց.

— Դուք կատարեցիք անկարելին: Բայց ձեր շեղը չի բարձրացել բլրից: Այդ պատճառով հարյուր գեղուհիներից ես ձեզ եմ դիշում իննսունիննին:

Բռնավորն իր հետ տարավ մի գեղուհու: Բայց Արցախը շմոռացավ իր դստերը: Եվ հենց այս բլրին նրա հիշատակը հավերժացրեց՝ կառուցելով Կոհակ մատուռը:

## Թորոս Ռոսլինի պայմանը

Տասներեքերորդ դարում Հայկական Կիլիկիայի մեծահամբավ նկարիչը Թորոս Ռոսլինն էր: Նա ապրում էր Հռոմեայում:

1262 թվականին արքունի բանբերը հասավ Հռոմեա և Թորոս Ռոսլինին հայտնեց.

— Լեռն թագավորը քեզ հրավիրում է իր հարսանյաց հանդեսին:

— Ոչ ոք հենց այնպես արքայի ուշադրությանը չի արժանանում, — ասաց նկարիչը:

— Այո, Թորոս Ռոսլին, իրավացի ես, դու պետք է հարսանիքի ժամանակ պատկերահանես թագավորին և կեռան թագուհուն:

— Զեմ կարող:

— Ինչո՞ւ:

— Այս հացապակաս տարում ես սիրտ չունեմ ներկա լինելորեէ խրախճանքի:

Բանբերը վերադարձավ ձեռնունայն: Բայց ահա Սիս մայրաքաղաքից Հռոմեա եկավ ինքը՝ լեռն թագավորը:

— Հարսանյաց հանդեսը պատկերահանելու համար քո քառվ մեկ ոսկի կատանաս, — ասաց արքան:

— Իմ ինչի՞ն է պետք ոսկին, — արձագանքեց նկարիչը:

— Իսկ ի՞նչ ես ուզում:

— Հիմա Կիլիկիայում սով է, հրամայիր թող բացեն արքու-

նի ամբարները և ցորեն բաշխեն ամենքին, միայն այդ գեղքում  
ես կհամաձայնեմ նկարել քեզ ու կեռան թագուհուն:

Հետո թագավորը գլխով համաձայնության նշան արեց:

## Զմերուկի տեղ՝ ցորեն

Աղջնիքում աճում են շատ մեծ ձմերուկներ: Եթե տասը տարեկան երեխան նստի ձմերուկի վրա՝ նրա ոտները գետնին չեն հասնի:

Ձմերուկի ընդարձակ այգի ուներ Սմբատը: Բայց մի քանի տարի անց նա այգու մեծ մասը դարձրեց արտ և ցորեն ցանեց:

— Ի՞նչ բանի ես, Սմբատ, — ասացին հարևանները, — չէ՞ որ քո այգում ամենամեծ ձմերուկներն են աճում, ցորենն ի՞նչ է որ, ամեն տեղ էլ ցորեն կարելի է աճեցնել:

— Բայց ինձ այդքան ձմերուկ պետք չէ:

— Ինչո՞ւ միայն քեզ, ոու կարող ես վաճառքի հանել քո ձմերուկը:

— Ինչպե՞ս, չէ որ շատ մեծ են, ես մեն-մենակ չեմ կարող տեղից շարժել, ինչպե՞ս դնեմ սայլի մեջ ու քաղաք տանեմ:

— Ճիշտ ես ասում, քո ձմերուկները ոչ մի սայլի մեջ ողջառողջ քաղաք չեն հասնի, — հաստատեցին հարևանները: — Իսկ գուցե՞...

— Գուցե ի՞նչ, քաղաք գնամ ու գնորդնե՞ր բերեմ: Բայց եթե նրանք նույնիսկ գան՝ ես կարող եմ միայն հյուրասիրել, Զէ՞, բարեկամներս, ես չափել-կշռել եմ, ձմերուկը քաղցր չուր է, որի ավելորդ կումով ձմեռը փորդ չի կշտանա:

## Գիտոր

Հայաստանի սև ներկատու բույսը գիտորն է, որ աճում է Եփրատի ու Արաքսի հովիտներում: Ամենալավը Բաղեշինն է:

Ասում են՝ հին ժամանակներում գիտորը հոտաղ է եղել: Կեսօրին մաճկալը նրան տուն է ուղարկել հաց բերելու Հոտաղը տուն է հասել, հետն առել հացը և շտապել դեպի դաշտ: Ճանապարհին սովածացել է, նստել ու կերել իր և մաճկալի բաժին ամբողջ հացը: Ուտելուց հետո գլխի է ընկել, որ ինքը վատ բան է արել, գուցե՝ ամենավատ բանն աշխարհում: Էլ ինչ երեսով

վերադառնաս մաճկալի մոտք Ամոթից՝ դեմքը ծածկում է ձեռքերով և գլուխը դնում գետնին։ Ու այլես չի բարձրանում։ Այդ ժամանակվանից էլ սկսերես հոտաղը դառնում է գիտոր։

## Յորենի թարմ հացն ավելացնում է աշքի լույսը

Մանրանկարիչ, քանդակագործ ու ճարտարապետ Մոմիկի հանճարը մոմի պես այրվելով լույսի խրձեր վառեց Վայոց մթին ձորում։

Մոմիկը Օրբելյան իշխանական տան պատկերահանն էր, Գլածորի մանրս նկարիչների ամենամեծ րաբունապետը, 1306 թվականին Նորավանքում քանդակել է պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մահարձան խաչքարը։

Անդադրում գործելուց նվազեց նրա աշքերի լույսը, Ուզեց մի կողմ քաշվել, բայց Թամթա խաթունը չթողեց։

— Դու պետք է նորից խաչքար կերտես, — ասաց Թամթա խաթունը։

— Ես համարյա չեմ տեսնում, — փորձեց գործից հեռու մնալ Մոմիկը։

— Ես կօգնեմ քեզ։

— Ինչպես։

— Յորենի թարմ հացն ավելացնում է աշքի լույսը։

Մի ամբողջ տարի Թամթա խաթունը ամեն օր թոնիրում ցուրենի հաց էր թխում և թարմ-թարմ մատուցում Մոմիկին։

Մոմիկն զգաց, որ կամաց-կամաց ավելանում է իր աշքի լույսը։

## Հոգու քաղցը հազար տարի չի հագենա

Հայկական Կիլիկիայի ամենաայգեշատ վայրում 1166 թվականին մի վանք է հիմնվել և կոչվել Այգեկ, այսինքն՝ այգեշատ, այգեվետ։ 1206 թվականից այստեղ է ապրել հայոց մեծ առակագիր Վարդանը, որն այս վանքի անունով էլ կոչվել է Վարդան Այգեկցի։ 1212-ին նա այստեղ գրել է ամենալավ հայկական առակները, որոնց շնորհիվ աշխարհաճանաչ դարձան և ինքը, և Այգեկ վանքը։

Եվ ահա մի օր ցորենաբարձ հազար ուղտով Այգեկ հասավ  
մի հարուստ իշխան, Վարդան Այգեկցուն նա ասաց.

— Ես ուզում եմ գնել քո րոլոր առակները: Ամեն մի առակիդ  
յոթ ուղտաբեռ ցորեն եմ տալիս: Հացասակավ այս տարում դու  
կդառնաս Կիլիկիայի ամենահարուստ մարդը:

— Քո ցորենով կարող եմ կշտացնել միայն փորս, բայց եթե  
գրկվեմ իմ առակներից՝ հոգուս քաղցը հազար տարի չի հագե-  
նա, — պատասխանեց առակագիրը և մերժեց իշխանի առա-  
շարկը:

## Ծիանը՝ օժիտ

Արցախի ծարտար գյուղում հարսանիք էր: Գեղանի Վահա-  
նուշը ամուսնանում էր գովական երիտասարդ Վահազնի հետ:

Զուգված-զարդարված հարսանքավորների թափորը հարսի  
տնից շարժվում էր դեպի փեսայի տուն: Երկարաշունչ նվագի  
տակ գինովցած հարսանքավորները օրոր-շորոր էին գալիս, և  
թվում էր, թե ամբողջ թափորը պար է բռնել:

Առջևից տանում էին հարսի օժիտը, հսկա գեղազարդ սնդու-  
կը՝ լցված նորահարսի հանդեռձներով, մի մեծ գորգ, որի վրա  
կարող էին միանգամից նստել հարյուր խնջույքավորներ, և կեռ-  
ճանկ երկարավիզ մի ծհան:

Ծհանն այնպես էին վերուվար անում՝ ասես օժիտի զարդը  
լիներ: Թվում էր, թե Վահանուշին ոչ թե փեսայի տուն, այլ թոն-  
րի մոտ են տանում: Թող ցույց տա իր շնորհքը, տեսնենք ծհանն  
ինչպես է շարժում ու թոնրի միջից հանում ախորժահամ ցորե-  
նահացը:

Հարսանքավորների թափորի առջև մի օտարական հայտնը-  
վեց և սկսեց զարմանքով նայել օժիտի դրոշ դարձած հացհան  
ծհանին: Նա կանգնեցրեց մի տարեց հարսանքավորի ու ասաց.

— Ասա ինձ, բարեկամ, ծհանի եղածն ի՞նչ է, որ օժիտ եք  
դարձրել:

Արցախիցին նրան պատասխանեց.

— Սա է պահում մեր աշխարհը: Էլ ի՞նչ օժիտ՝ եթե մեջը  
ծհան չինի: Հարսը ծհանով ուզում է ասել, թե հաց ու առատու-  
թյուն է տանում փեսայի տուն:

## Երաշտի ժամանակ արորով վարում էին գետը

Հին ժամանակներում Սյունիքում սովորություն է եղել երաշտի ժամանակ արորով վարել չորացած գետակի հունը։ Եղների փոխարեն արորին լծվում էին մի քանի կանայք, որոնք գետի մեջ երեք-չորս ակոս էին անում և աղոթելով՝ աստծուց անձրեալ պատճենում։

Մի անգամ Տաթևի համալսարանի իմաստասերներից մեկը տեսնելով չորացած գետի հունում արորին լծված կանանց, մոռեցավ նրանց ու ասաց.

— Ես աստծու մոտից եմ գալիս։ Հրեշտակներն ասացին, որ նա քուն է մտել և կարթնանա տասներկու օր հետո, այնպես որ ձեր շարշարանքն ու աղոթքը անտեղի են, նա ձեզ չի լսում։ Ավելի լավ է՝ դուք հիմա տուն գնաք և ձեր արորը ջուր մտցնեք այն ժամանակ, երբ աստված քնից արթնացած կլինի։

Կանայք լսեցին նրան և դուրս եկան գետից, իմաստասերը ծիծաղեց քթի տակ և, շարունակելով ճանապարհը, ինքն իրեն ասաց.

— Գուցե առաջիկա տասներկու օրում անձրե գա, իսկ եթե չգա՝ գլուխը քարը, թող հերկեն գետը՝ ինչքան կուզեն։

### Գիծք հաց

Խելում անունով մի խեղճ շինական է լինում։ Սա չի կարողանում որոմի հասկն ու հատիկը տարբերել ցորենի հասկից ու հատիկից։ Հնձում է իր արտը, կալսում, հատիկը տանում ջրաղաց և աղունը տուն բերում։

Հետո ախորժակով ուտում է թարմ ալյուրից թխած հացը։ Ուտում է թե չէ՝ գլուխը սկսում է ցավելի Քիչ հետո խելումի գլուխը պտտվում է, սիրտը խառնում և նա ընկնում է գետնին։ Հարեւանը հասնում է, մածունից թան սարքում, խմեցնում և ուշքի բերում նրան։

— Այնուամենայնիվ, ինձ հասցրու բժշկի մոտ, — խնդրում է խելումը։

— Կարիք չկա, — ասում է հարեւանը։

— Ինչո՞ւ

— Քո գլուխը չի պտտվի, եթե դու գիծք հաց լուտես։

— Գիծք հա՞ց:

— Այո, Այդպես է կոչվում որո՞ի խառնուրդով թխված հացը, Որոմի հատիկի ալյուրի մեջ հարբեցնող թունավոր խառնուրդ կա, Սղունը ջրաղաց տանելուց առաջ պետք է ցորենը զատես որոմի հատիկից, Եթե ինքդ չես կարող, խնդրիր՝ թող անի մեկ ուրիշը, Թե չէ գիծք հացով երկար չես ապրի աշխարհում:

## Հովհաննես Արճիշեցի Ռոպնակեր

Տասներեքերորդ դարի վերջին և տասնչորսերորդ դարի սկզբին Արճեց քաղաքում Հովհաննես անունով մի գրիչ էր ապրում, Տասնյոթ տարի անընդմեջ նա սնվել էր միայն ոսպով, որի համար էլ ստացել էր Ռոպնակեր մականունը:

Մահից առաջ նա խնդրեց, որ իր գերեզմանի վրա ոսպ ցանեն:

— Ինձ համար ամենասրտապարար բանը ոսպի չորացած հատիկների խշխշոցն է, — ասում էր Հովհաննես Արճիշեցի Ռոպնակերը,

## Բանաստեղծն ու արտը

Տասներեք-տասնչորսերորդ դարերի սիրո հանճարեղ տաղերգու Կոստանդին Երզնկացին մի սիրուհի ուներ Մորճ անունով:

Կոստանդինի և գեղանի Մորճի սերը երկար չի տեսում, Անսալով բամբասանքներին՝ Մորճը երես է թեքում բանաստեղծից և նրան մատնում հուսահատության:

Կոստանդինն իր տողերի մեջ ողբում է կորցրած սերը: Բայց մի օր լսում է, որ Մորճը նույնիսկ իր տաղերն էլ չի կարդում, Բանաստեղծը սիրուհու հետ կապի միջոց է որոնում, զգալով, որ առանց նրան ապրել չի կարող, նա գնում է Մորճի հայրական արտը և մշակին ասում:

— Թույլ տուր քո փոխարեն ես մշակեմ այս արտը՝ Քերկեմ, ցանեմ, հնձեմ, կալսեմ: Դու Մորճի հորը ցույց տուր, թե գործն ամբողջովին դու ես անում:

Ասում է ու մշակին երկու ուկի տալիս: Մշակը համաձայնում է:

Մի անգամ բերքահավաքից հետո մշակն օգնում էր Մոլճին նոր հացահատիկից թխված լավաշը դարսելու հացատանը։ Կարծես ի միջի այլոց մշակն ասում է։

— Ոնց որ այս տարվա ցորենն ավելի ճերմակ լինի, քան անցյալ տարվանը։ Բանաստեղծի քրտինքից է ասրափայլ դարձել։

— Ի՞նչ բանաստեղծ, — զարմացած հարցնում է Մորճը։

— Ջեր արտն այս տարի հերկել, ցանել, մշակել, հնձել ու կալսել է տաղերգու Կոստանդինը, — խոստովանում է մշակը ու ավելացնում, — այս լավաշի մեջ նրա քրտինքն է, այնպես որ ամեն օր հաց ուտելիս դու ձեռքով կամա-ակամա «պիտի դիպ-լես Կոստանդինին»։

## Իրար նման տասնհինգ Ամանոր

Հնում Հայոց աշխարհը բաղկացած էր տասնհինգ փոքր աշխարհներից կամ նահանգներից։ Բարձր Հայք, Ծոփաց կողմ կամ Չորրորդ Հայք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Սյունիք, Արցախ, Փայտակարան, Ռտիք, Գուգարք, Տայք, Այրարատ։

Երբ տասնհինգը միաձույլ էին ու հայախոս՝ Ամանորը Հայաստան էր մտնում նույն գիշերը։ Բոլոր տասնհինգ նահանգներում նավասարդյան տոնախմբություններն սկսվում էին միաժամանակ։ Հայք հաց է գրել հին ու նոր տարիների սահմանավորին, կարմրահատ ցորենով ճարմանդել հին տարվա ավարտն ու նորի սկիզբը։

Բարձր Հայքում մի ճերմակ ցորնհաց էին թխում, կեսն ուտում հին տարում, կեսը՝ նոր տարում, որով կարծես խնդրում էին հայոց աստվածներին հնի պես հացառաւ դարձնել նաև նոր տարին։

Ծոփաց կողմում ցորենաղանձ էին անում, մի մասն ուտում, մյուսը՝ թափում գետի կամ առվակի մեջ, համարելով, որ նվիրում են անձրեսի աստծուն՝ նոր տարին ցորենաբեր դարձնելու համար։

Աղձնիքում նոր տարվա ուտելիքներով ծանրաբեռնված սնդանի վրա մի քանի բուռ հացահատիկով փոքրիկ ցորենաբլուր էին սարգում և ասում։

— Հիմա Անահիտ աստվածուհին կգա, կշնորհավորի նոր

տարին, մի պատառ բան կվերցնի և եկող տարի ցորենի թլուրներով կվարձատրի մեր արդար աշխատանքը:

, Տուրուրերանում հին ու նոր տարիների սահմանագլխին թոնիր էին վառում և թարմ լավաշի հոտով լցնում տունը:

Մոկքում նոր տարվա սեղան նստելուց առաջ շինականը դաշտ էր գնում և մի քանի անգամ պտույտ տալիս իր արտի եզրերով, որով ուզում էր հավաստել, թե աստծու շափ երկրպագում է հողը, որի բարիքների շնորհիվ է, որ մարդը մի տարուց անցնում է մյուս տարուն:

Կորճայքում տան գլխավորը շորեթաթ է տալիս սենյակում ու նոր տարվա համար թխված լավաշից կտորներ բաշխում տան անդամներին: Դրանով ուզում է ասել, որ նոր տարում աստվածները հաց կտան նրան, ով մեջքը ծուած աշխատի օրնիբուն:

Պարսկահայքում նոր տարվա հացի խմորը հունցում էին Կապուտան լճի ջրով, հուսալով, որ նոր տարում երաշտ չի լինի: Պարսկահայքում ասում էին, թե երաշտ տարում Կապուտանը փոթորկվում է, նրա ցայտերը թռչում են երկինք և ապա անձրև դարձած թափկում տապից տոշորվող արտերի վրա:

Վասպուրականում նոր տարվա նախօրեին փակում էին գինու բոլոր կարասների ու տիկերի բերանները: Նրանք կարծում էին, թե հայոց Ամանորի պատանի աստվածը կարող է մի գավգինի խմել, հարբել ու մոլորվել: Բայց հաշվի առնելով, որ Ամանորը երկար ճանապարհ է անցել և քաղցած կլինի՝ կարասների ու տիկերի բերաններին մի-մի կտոր թարմ հաց էին դնում նրա համար:

Սյունիքում նոր տարվա շեմին իրարից խռով մարդիկ պետք է կծեն հացի նույն կտորից, այլապես աստված որոմնաշատ կդարձնի նրանց արտերը:

Արցախում ցորեն էին խաշում, լցնում մեծ ամանի մեջ և դնում սեղանի վրա: Խաշելուց հատիկներն ուռչում են և սովորականից երկու անգամ մեծ երկում: Արցախեցին գրանով հուշում էր՝ աստվածներին, որ հաճելի կլիներ, եթե նոր տարում ցորենի հատիկները այդքան խոշոր լինեն:

Փայտակարանում նոր տարուց մի քանի ժամ առաջ տանը եղած գարին գոմ էին տանում կամ մի այնպիսի գաղտնի անկյունում պահում, որ Ամանոր աստծու աշքով լընկնի և նոր տարին ամբողջովին ցորենաբեր դարձնի:

Ուտիքում մի կտոր հաց էին կախում տան շքամուտքի բիղից, ցանկանալով հավաստել, որ ամենքը կարող են հյուրընկալվել և մի կտոր հաց անուշ անել:

Գուգարքում Ամանորը դիմավորում էին բոլոր ջրաղացները գործի գցած:

Տայքում նոր տարվա նախօրեին բարձրանում էին մոտակա սարերը և ձեն տալիս.

— Ամանո՞ր, Ամանո՞ր, ճաշը պատրաստ՝ քեզ ենք սպասում:

Տայքում կարծում էին, թե Ամանորը կարող է ուշանալ: Գուցե հոգնել և մի տեղ քնով է անցել, պետք է արթնացնել և տուն հրավիրել:

Այրարատում համոզված էին, թե նոր տարին ձյունափայլ լավաշն ուսած իջնում է Մասիսի կատարից, մտնում և հաց բաշխում նախ աշխատասեր մարդկանց տները, նոր մնացածը տալիս հարուստ ծույլերին և ծույլ աղքատներին:

## Աղուն

Աղունն աղալու համար պատրաստված հացահատիկն է: Խախալում են ցորենը, հաճարը, գարին ու կորեկը, լցնում պարկերի մեջ, տանում ջրաղաց և ալյուր դարձրած բերում տուն:

Ամեն մարդ իր ունեցածի շափով է աղուն անում՝ մեկը ամբողջ տարվա, մյուսը մի ամովա, երրորդը՝ մի շաբաթվա համար:

Երբ ալյուրը ջրաղացից տուն են բերում՝ սեբաստահայ տանտիկինը ալրատանը խունկ է վառում:

Ծթե մեկը հարցնի.

— Ինչո՞ւ ես խունկ վառում, սա հո աստծու տաճար չէ:

Տանտիկինը նրան կպատասխանի.

— Մարդու գոյության տաճարն ալրատունն է, նախ ոչ յսաւեղ պիտի խունկ վառել, հետո եկեղեցում:

## Ամենամաքրասեր մարդիկ

Երեխ աշխարհի ամենամաքրասեր մարդիկ ապրում են Մեղրու ձորահովտում: Առածն ասում է. «Կարող ես յուղը թափել մեղրեցու տան կտուրին ու հավաքել»:

Մի անգամ այս ձորահովտի Տաշտուն գյուղից մի մարդ գա-

Այս է Արարատյան դաշտ և մի հարուստի մոտ հնձվոր վարձվում:

**Մեծահարուստը շատ է գովում տաշտունեցում:**

— Դու արտը մաքուր ես հնձում, հրաշալի խրծակալ ես անում և խրծերն էլ այնպես ես դարսում, որ հանկարծակի անձրեզ չփշացնի հատիկը: Բայց դու միակը չես, իմ հնձվորների մեջ քեզ նման մեկն էլ կա:

**Մեծահարուստը տաշտունեցուն տանում է այն հանդամասը, որտեղ աշխատում էր գովական հնձվորը: Վերջինս այդ պահին զրի էր գնացել:** Տաշտունեցին նայում է նրա հնձած արտին ու մեծահարուստին հարցնում.

— Քո այդ հնձվորը մեղրեցի՞ է:

— Ոչ:

— Չի կարող պատահել:

— Ինչո՞ւ:

— Այսքան մաքուր գործ միայն մեղրեցին կանի:

Հենց այդ ժամանակ աղբյուրից վերադառնում է հնձվորը:

— Ողջուն, բարեկամ,— բարեսում է տաշտունեցին:

— Ողջուն:

— Որտեղացի՞ ես:

— Մեղրու գավառի Կարճեան գյուղից:

## Հացը երեսից կուտվի

**Մահից առաջ հողագործ հայրը որդուն ասաց,**

— Հացը երեսից կուտվի:

Որդին մտքում պահեց հոր խոսքերը, բայց իմաստը շընկալեց: Շատ տարիներ անցան: Մի անգամ տուն վերադարձավ և տեսավ, որ կինը հյուրընկալել է մի ծեր մարդու: Բարե տվին, բարե առան, բայց հյուրը նկատեց, որ տանտերն այնքան էլ սիրալիր շընդունեց իրեն:

— Դե, ես հանգստացա, պիտի շարունակեմ ճամփաս,— ասաց հյուրը:

Տանտերը փորձեց առարկել, բայց հյուրը նրան ասաց.

— Հացը երեսից կուտվի:

— Հողագործի որդին ցնցվեց և հյուրին հարցրեց.

— Ներող եղիր, բարեկամ, ինչո՞ւ ասացիր՝ Հացը երեսից կուտվի, ի՞նչ բան է դա:

— Հին խոսք է, որ նշանակում է, թե մարդուն սիրում ու հարգում են վարմունքի համար,— ասաց հյուրն ու հրաժեշտ տվեց հողագործի որդուն,

## Տիրատուր վարդապետը քառասուն տարեկան է

1450 թվականին գրված ձեռագիր մի մատյանում, որ պահպում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում, գրված է.

«Տիրատուր վարդապետին պաշտոն տվեցին և հենց այդ օրը մոռացան հաց տալ: Իրիկունք նրան տուն տարան: Եվ պարոնն ասաց.

- Վարդապետ, քանի՞ աւարեկան ես:
- Քառասուն տարեկան՝ մի օր պակաս:
- Ինչո՞ւ մեկը պակաս:
- Այս օրը, որ քաղցած պահեցիր ինձ, ժամանակի մեջ չի մտնում»:

## Ճաշիկ

1426 թվականի սեպտեմբերի 23-ին Գյումրիում ծնվեց Հայոց աշխարհի ամենագեղեցիկ աղջիկը: Գյումրեցիներն ասում էին.

— Այսքան էլ գեղեցիկ, ուտելու բան է, իսկական ճաշի՛կ է, ճաշի՛կ...

Ասացին ու աղջկանը կնքեցին ճաշիկ անունով:  
Երբ մեծացավ՝ շատ երիտասարդներ ցանկացան ամուսնանալ նրա հետ: Ճաշիկը հավանեց վանեցի մի իշխանորդու: Սակայն գյումրեցիները խանգարեցին այդ ամուսնությունը և աղջրկան ասացին.

— Դու պիտի ամուսնանաս միայն գյումրեցու հետ, ընտրիր՝ ում ուզում ես: Եվ ներիր մեզ այս հարկադրանքի համար: Մարդիր տան եփած ամենալավ ճաշը ինքը պիտի ուտի և ոչ թե հարեանին տա: Իսկ դու Գյումրիի հմայքն ես: Քեզ տեսնելիս՝ ոչ միայն մեր սրտերն են փափկանում, այլև բացվում է բոլորիս ախորժակը:

## Խու

Բագրեանդ գմբվառում մի դաշտ է եղել Խու անունով, որ մարդիկ կատակով անվանել են Հայաստանի բուրմունքի ամբարանոց։ Այստեղ բուրմունք էին արձակում ոչ միայն ծաղիկները, այլև հողը։ Բուրումնավետ էին նույնիսկ նոր հերկած ակոսները։ Հրաշալի հոտ ուներ այս դաշտում աճած ցորենը։ Բագրեանդի բոլոր հարսանիքների համար Խվի ցորնահաց էին թխում։

Խու դաշտի բուրումնավետ ծաղիկները տանում էին նույնիսկ Հռոմ։ Այդ ծաղիկների հոտն առել է նաև հոռմեացի բանաստեղծ Ալբիոս Տիբրուլոսը, որն ապրել է մեր թվականությունից առաջ, 54—19 թվականներին։ Իր գեղուհի Դելիային ձոնած բանաստեղծության մեջ Ալբիոս Տիբրուլոս գրել է.

Հեռու մինչև բուրումնավետ Հայաստան…

Դա Հայաստանին նվիրված բանաստեղծական առաջին տողն է հոռմեական քնարերգության մեջ։

Խու դաշտի ծաղկի ու հացի բուրմունքը մնաց մինչև 1453 թվականը։ Հետո չիմացան, թե ինչ եղավ, ո՞վ կու տվեց այդ բուրմունքը։

## Հացունի

Վաշե Զորտափյանն ամբողջ կյանքում ոչ մի անգամ կուշտ փորով հաց չէր կերել։ Կիսասոված ու սոված են ապրել նաև նրա հայրը, պապն ու ապուպապը։

Մի շոր տափ են ունեցել, որի կիսատ-պոատ բերքը չի բավարարել տոհմի անդամներից ոչ մեկին։ Հերիք չէ, որ պապինական հողակտորը մի բան չէ, այդ հողակտորի անունով էլ կոչել են իրենց տոհմը՝ Զորտափյան։

Վաշեն զայրացած էր ոչ այնքան շոր տափի, որքան տոհմական ազգանվան վրա։

Ազգանվան մեջ էլ պիտի մի քիչ հույս ու երազանք լինի, — ասաց նա, — այսուհետև մենք մեզ կկոչենք Հացունի, մի կտոր հացի տեր դառնալու համար այդ ազգանունն ավելի շատ եռանդ կտա իմ զավակներին, քան հնօրյա աղքատությունը վավերացնող Զորտափյան մականունը։

## Խոաշբուտ

Գյուղացի Ուսիկը իր արտը հնձելու վերջին օրը ցորյանի ընտիր հասկերից հյուսեց մորուքի նմանվող մի խաշբուռ, իրիկունն անցկացրեց մանգաղի ծայրին և երգելով տուն վերադարձավ:

Նա խաշբուռը կախեց տան մեծ սյունից, ժամանակ անցավ։ Այդ հացապակաս տարում Ուսիկը իր ունեցած ցորենի մի մասը տվեց հարեաններին ու ազգականներին։ Գարնան վերջում Ուսիկենց տանը ուտելու բան չմնաց.

— Իշեցրու այդ խաշբուռը, դրանով կարող ենք երկու օր կուշտ սնվել, — ասաց կինը,

Ուսիկն առարկեց.

— Իսկ եթե հյուր գա՞՝, Խաշբուռը նրա համար է, որ տանտերը հյուրի մոտ ամոթով չմնա:

Երկու օր հետո մի հյուր բախեց Ուսիկի դուռը։

Գյուղացին սիրով ընդունեց նրան, սյունից իշեցրեց խաշբուռը, ձեռքով տրորեց հասկերը և դեղնահատիկ ցորենը աղորիքով աղալուց հետո թարմ հաց հրամցրեց նրան։

## Հացի քաղաքը

Պտղավետ քաղաքներ են Ամասիան, Եղովիան և Մալաթիան, Մեկը մյուսից քաղցր մրգեր կան նրանց այգեստաններում։ Բայց արի ու տես, որ սրանց կողքին Սեբաստիա մեծ քաղաքը համարյա միրգ չունի։ Ամասիան, Եղովիան և Մալաթիան հինգ հարյուր տարի անընդմեջ հեգնում են և Սեբաստիան անվանում շաղգամի, ստեղղինի և կաղամբի քաղաք։

Բայց Սեբաստիան իր լայնարձակ դաշտերի և հովիտների ոսկեհատիկ բերքով միշտ եղել է ոչ միայն Հայաստանի արևմբարյան մասի, այլև՝ համայն Փոքր Ասիայի ցորենի ամբարը Փոքր Ասիայի հայաստանաշափ Շիրակը։

Մի անգամ երաշտը եկավ և թոնիր վառեց տյստեղ։ Հետո երաշտի ստվեր սովը բռնեց աշխարհի շորս կողմը։ Հենց այդ ժամանակ Սեբաստիան մեծահոգաբար իր ամբարները բացեց ամասիացիների, և վղովացիների և մալաթիացիների առջև,

**Մարդիկ սրտների ուզածին չափ ցորեն են տանում, բայց ցորենահորերը մնում են լեցուն ու լեցուն:**

— Որ տասը տարի էլ կրեք ու կրեք՝ մեր ամբարների հատակին չեք հասնի, — հպարտությամբ ասում էին սերաստացիները:

Այդ ժամանակվանից ամասիացիները, եվդոկացիները, մալաթիացիները և Հայոց աշխարհի բոլոր կողմերի մարդիկ Սեբաստիան կոչեցին Հացի քաղաք:

### **Հացը՝ սովորան, ջուրը՝ վեզիր, մնացածը՝ գզիր-մզիր**

**Սուլթանը կանչեց իր ամենախելոք պալատականին և ասաց.**

— Գնա, շրջիր աշխարհը և իմացիր, թե ինչ պիտի ուտի մարդ՝ երկար ապրելու համար:

Պալատականը գլուխ տվեց սուլթանին և գնաց:

Ոտի տակ տվեց աշխարհի հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը և, վերադառնալով, զեկուցեց տիրակալին.

— Հացը՝ սովորան, ջուրը՝ վեզիր, մնացածը՝ գզիր-մզիր:

### **Ս.րդար մարդու հացը չի կտրվի**

**Սիսիանի շրջանի կոր գյուղում մի պառավ կին էր ապրում Վանան անունով։ Մի օր սա տանը նստած մտմտում էր, թե ինչպես վարի տան գործերը, Ամուսինը՝ Վազգենը, մահացել էր մի քանի ամիս առաջ։ Հակառակի պես հունձը սկսվել էր, իսկ պառավի տանը մանգաղ բռնող տղամարդ չկար։**

Գյուղացիները մոռացել էին Վանանին, ամեն մեկն իր գործն էր անում և ժամանակ շուներ կողքին նայելու։ Ամեն օր Վանանը գնում էր իրենց արտի մոտ, կրծքի վրա խաչակնքում ձեռքերը և տիսուր-տիսուր նայում կարմրին տվող ցորնահասկերին։ Վանանը հասկանում էր, որ մի քանի օր հետո հասկերը կկծղեն և ցորենը կթափվի։ Բայց ի՞նչ անի, ո՞ւմ դիմի, ո՞վ կթողնի իր գործը և կգա ու կհնձի Վանանի արտը։

Սակայն մի օր պառավը արտի մոտ հասավ և զարմանքից մնաց ապշահար։ Արտը հնձել էին և այս ու այն կողմում խրձերի մի քանի դեղ դրել։

Քիչ հետո մի սայլ երկաց ու կանգ առավ արտի մոտ։ Սայլ-

վորն սկսեց Վանանի արտի խրձերը դարսել սայլի մեջ։ Պառավորն այս անծանոթ մարդուն ու հարցրեց.

— Եղբայր ջան, ամոթ Ախնի հարցնելը, դու ո՞վ ես։

— Ես Թարսեղի եմ, Լծեն գյուղից։ Այս լորում մի արդար մարդ էր ապրում Վազգեն անունով։ Նեղ օրին նա ինձ երկու կոտ ցորեն է նվիրիլ։ Ես նրա լավությունը շեմ մոռացել։ Գիշերս եկա ու հնձեցի նրա արտը, հիմա էլ պիտի գյուղ հասցնեմ, օգնեմ, որ Վազգենի այրի Վանանը կալսի և հացը չկտրվի նրա տնից։

## Ննդիկ տոհմիկ բրուտագործները

Ննդի գյուղը Արցախի բրուտանոցն է։ Այստեղ ընտիր կավից թրծում են ամեն ժեսակ կուժ ու պուլիկ, թաս ու աման, բայց ամենից շատ՝ կարմաւ։

Տարիներ առաջ Ննդիում ապրում էին տոհմիկ բրուտագործներք եղբայր՝ Պողոս, Պետրոս և Մուխան Խաչունցները։ Նրանք երեքով թրծել են հարցահատիկի հազար կարաս։

Խաչունցները Արցախը լցրել են կարասներով։ Հետո մարդիկ ոչ պատվեր էին տալիս, ոչ էլ կարաս գնում։ Բայց Պողոս, Պետրոս և Մուխան եղբայրները մինչև իրենց կյանքի վերջը շարունակեցին կարաս պատրաստել։

Մի անգամ Մուխանին հարցրին.

— Էդ շարշարանքն ինչի համար է, այսքան կարաս եք թրծել, առնող չկա, իսկ դուք շարունակում եք նորերը թրծել։

Բրուտագործը մատասխանեց.

— Եթե մի տարի կարաս շպատրաստենք՝ երաշտ կլինի և սովը կնսուի Արցախում։ Ավելի լավ է կարաս թրծենք, թեկուզ առնող Ախնի, քան բրուտագործներիս պատճառով տարին հացապակաս լինի։

## Եղիպատրուն

1528 թվականին ցորենը ներմուծվեց Ամերիկա, իսկ Եգիպտացորենը կամ Մինասացորենը՝ Հայաստան։ Մինչ այդ ոչ ամերիկացիներն էին ցորեն տեսել, ոչ էլ հայերը՝ Եգիպտացորեն։ Եգիպտացորենի հայրենիքը Ամերիկան է, այստեղ այն կոշվում է մայիս։ Այսերիկյան հացահատիկը աշխարհի որ կողմն

**Ել Հասավ մայիս կոչվեց կամ իր տեսքին պատշաճ մի անուն ստացավ:**

Հայերը շուռումուռ տվեցին եգիպտացորենը, զարմացան նրա հասկակոթով, որ նման էր պրտնակի: Մինչ այդ նրանք այդպիսի մեծահատիկ ցորեն չեն տեսել: Կաել էին, որ Եգիպտոսում կամ Մարա երկրում մեծ-մեծ հատիկներով սպիտակ ցորեն է աճում: Հայերին թվաց, թե այս նոր հացահատիկը եգիպտական հայտնի ցորենն է: Եվ այն կոչեցին եգիպտացորենի երես շտեսած Եգիպտոսի անունով: Շատ տարիներ հետո այս նույն հայերը Հայաստանում տունկ գցած նոր ցորենի սերմբ տարան Եգիպտոս: Եվ հասկանալի է, որ ամերիկյան հացահատիկը Եգիպտոսում եգիպտացորեն չկոչվեց:

## Երգնկայի դաշտը

Եկեղյաց գավառը Երգնկայի դաշտն է, որի միջով անցնում է Եփրատը: Այստեղ է Երգնկան՝ աշխարհի հնագույն քաղաքներից մեկը, որը տեսել է քառասուն երկրաշարժ: Քաղաքի արևմբարյան կողմում Սեպուհ լեռն է, որի քղանցքին նստել է Շողակաթ վանքը: Հարավում, Մնձուր սարի ստորոտում, բերդի նըման իր պարիսպները վեր է խոյացրել Զարշարանաց կուսավորիչ վանքը, որի առջևից քջքալով անցնում է Մերջան գետակը:

Բարեբեր, ջրառատ, հազար բարիք տվող անդաստան է այս դաշտը: Ցորենի քաջահասկերն այստեղ հասնում են մարդու ուսերին:

Միջնադարյան Հայաստանի համալսարաններում, եթե բարունապետը հարցներ, թե իր գեղեցկությամբ և բարեբերությամբ ո՞րն է մեր երկրի փոքրիկ Արարատյան դաշտը, սաներն անմիջապես կպատասխանեին.

— Երգնկայի դաշտը:

## Տանհինգ հացայր

Հայաստանում բազում մեծ ու փոքր լեռնակատարներ կան: Նրանցից հազար հինգհարյուրը մեծ են, բայց այդ մեծերի մեջ հացայր են ունեցել տասնհինգը՝ Բյուրակն, Այծպտկունք, Նեմրութ, Սուկավետ, Կոփ, Ընկուզեկ, Նահապետ, Սիմսար, Կորդվաց, Եղնախաղ, Սասնասար, Ծնձաքիսար, Իշխանասար, Սիփան, Մաղկոտն լեռները:

**Այդ լեռներով կամ նրանց կողքով անցնող մեծ ճանապարհ-**  
**ների եզրերին մարդիկ ընտրել են հարմարավետ ու չոր փոք-**  
**րիկ այրեր և տարին բոլոր այնտեղ պահել հաց ու աղ՝ հոգնած**  
**ու սոված ճամփորդների համար։ Մերձակա գյուղերի շինական-**  
**ները հաց են թխել նաև հացայրերի համար։ Տասնհինգերորդ**  
**դարում իտալացի մի ճանապարհորդ, որ անցել էր Հայաստա-**  
**նի դժվարամատուց ճանապարհներով, վերադառնալով Եվրո-  
պա, ասել է։**

— Բնական ասպնջատուն, ձրի աղ ու հաց, ահա թե ինչ բան  
է հայոց հացայրը։

## **Ինքնաբուս կորեկ Մասիսի լանջերին**

1600 թվականին արևը Արարատյան դաշտում թափեց բյուր  
անգամ բյուր թոնրի հոռը, որը խոտ ու կանաչ խանձելուց հետո  
շարժվեց Մասիսի լանջերն ի վեր։ Սկսեց հալչել հնանիստ ձյու-  
նը։ Վիթխարի լեռան հազարամյա ճերմակաձյուն գլխարկը  
փոքրացավ։

Ապա երաշտը շարժվեց դեպի երկրի ծայրակալ մասերը։  
Ամառվա կեսերից ամբողջ Հայաստանում սով սկսվեց, Հենց  
այդ ամռանը Մասյացոտն գավառի մարդիկ զարմանալի բան  
տեսան։ Զգիտես որտեղից Մասիսի ստորոտամերձ լանջերին  
վայրի կորեկի արտեր բուսան, Այ քեզ բա՞ն։ Ոչ ոք այդ մասե-  
րում կորեկ չէր ցանել։ Մարդիկ սկսեցին հնձել այդ ինքնաբուս  
արտերը և երկնային պարզել համար աղոթել աստծուն։

## **Ամիրդովլաթի ցորեադաշտը**

Տասնհինգերորդ դարի հանճարեղ բժիշկ Ամիրդովլաթ Ամա-  
սիացին իր հայրենի Ամասիա քաղաքում մի մեծ հողադաշտ-  
ագարակ ուներ, որտեղ աճող հայկական կարմրահատ ցորենը  
ամենագովականն էր համայն Ամասիայում ու նրա շորս կող-  
մերում։

Ամիրդովլաթի կյանքի շատ տարիներն անցել էին ծննդավայ-  
րից հեռու։ Մահից առաջ բարեբեր իր ցորեադաշտը նա կտակել  
էր բոլոր ամասիացիներին, որոնք հերթով ցանում ու վարում  
էին այն և առատ բերք ստանում։

Ամիրդովլաթ Ամասիացու մահից իննսուներկու տարի հետո,

**1588** Թվականին, Հավկիթի մեծությամբ կարկուտ տեղաց Ամասիայում, որը բզկտեց բոլոր դաշտերն ու այգիները, նաև՝ ջառհյուղակներ, Բայց ինչ հրաշք ասես, որ բնության մեջ չի լինում, Ամիրդովլաթի ցորնադաշտում ոչ մի կարկուտ չէր ընկել, այստեղ չէր ծովել նույնիսկ մի հասկ:

Ամիրդովլաթի ցորնադաշտի այդ տարվա բերքը բաժանեցին բոլոր ամասիացիների մեջ: Հետո մարդիկ սրբացրին այդ ցորենը: Յուրաքանչյուր ամասիացի Ամիրդովլաթի ցորնադաշտից մի բուռ ցորեն էր բերում ու պցում իր ցորնահորը՝ Հուսալով, թե դրանով իր հացամբարն ապահովում է ամեն տեսակ աղետից ու արհավիրքից:

## Բախտի աջ ձեռքը աշխատասիրությունն է, ձախը՝ չափավորությունը

Տարոնում, Մուշ-Բաղեշ ճանապարհի ձախ կողմում, մի գյուղ է եղել Առնիստ անունով: Այս գյուղից էր երկրագործ Սահակը: Սա չէր ամուսնանում, որովհետև չէր կարողանում ոչ մի բան ետ գցել: Մի քիչ ծույլ էր, մի քիչ բկիկ: Առավոտյան տանը հաց էր ուտում, հետո կեսօրվա համար հաց կապում և ճամփա ընկնում դեպի դաշտ: Տեղ էր հասնում թե չէ՝ միտքը փոխում էր, ինքն իրեն ասում.

— Ոնց որ քաղցած լինեմ, ավելի լավ է կեսօրվա բաժինն էլ հիմա ուտեմ՝ նոր անցնեմ գործի:

Ասում էր ու տնից բերած հացը միանգամից հոփ անում, Հետո շունչ էր քաշում ու ինքն իրեն ասում.

— Շատ աշխատողի հերն էլ անիծած, ինչ պիտի տանեմ աշխարհից, որ գիշեր-ցերեկ աշխատեմ, կուշտ փորով մարդը չի կարող աշխատել, ավելի լավ է մի քիչ հանգստանամ՝ նոր սկսեմ:

Ասում էր, պառկում ու քնում մինչև կեսօր: Իսկ հենց որ սկսում է գործի անցնել՝ զգում է, որ և հոգնած է, և քաղցած:

Սահակն այսպես գերի էր դարձել ինքն իրեն: Նա այդպես էլ մինչև կյանքի վերջը խեղճ ու կրակ ապրեց, չնայած, ոչ ոք չէր խանգարում նրան:

Այս կարգի մարդկանց համար է ստեղծվել առածը.

Բախտի աջ ձեռքը աշխատասիրությունն է, ձախը՝ չափավորությունը:

## Ոչ մի բարդի չկարվեց

1579 թվականին ժանտախտն ու սովը շոքել էին Հայաստանի բկին։ Հացն ավելի թանկ էր, քան ոսկին։

Քաղցից ուժասպառ էին եղել նաև Դերսիմի լեռնաստանի Բարդի գյուղում։ Ոչ ոք շգիտեր, թե քանի հազար տարեկան է այդ գյուղը։ Նրա կողքին սրբազան բարդիների անտառն էր, որի համար էլ գյուղը Բարդի է կոչվել։

Սովի այդ տարում գյուղ եկավ մի իշխան և շինականներին ասաց։

— Ինձ պետք է բարդի ծառի փայտ, Եթե դուք թույլ տաք այստեղից տասը բարդի կտրեմ, ապա յուրաքանչյուրիդ կտամ այնքան ցորեն, որ հերիքի մինչև եկող տարվա բերքը։

— Բայց սրանք պատվածային ծառեր են, որ մենք ժառանգել ենք մեր նախնիներից, — ասացին Բարդի գյուղի մարդիկ։

— Իսկ սո՞վը, — ասաց իշխանը։

— Ո՛չ, ավելի լավ է մեռնենք, քան տեսնենք մեր բարդիների տապալումը։ Սրանք միայն ծառեր չեն, այլև մեր անունը, մեր պատմությունը, մեր էությունը։

## Իմաստասերի պատասխանը

Մի իմաստասերի հարցրին։

— Ե՞րբ է քո միտքն ավելի լավ գործում։

— Այն ժամանակ, երբ ոչ կուշտ եմ լինում, ոչ էլ՝ սոված, — պատասխանեց իմաստասերը։

## Ոսկե ճաշ .

1603 թվականին Պարսկաստանի Շահ-Աբաս արքան գրակց Հայաստանի մի քանի շրջաններ և եկավ նստեց Զուղա քաղաքում։ Բոնակալի սիրտը շահելու համար զուղայեցի խոշանաշիկը շքեղաշուք խնջույք սարքեց նրա պատվին։

Ճաշասեղանները պայթում էին առատությունից։ Շահ-Աբասին ուտելիքներ ու ըմպելիքներ էր մատուցում ինքը՝ խոշանաշիկը։ Ահա նա շահի առջև դրեց մի մատուցարան, որի վրա եղած ամեն ինչ ոսկուց էր։ Այստեղ կար և՛ եղերվի խորոված աղդր, և՛ սև կաքավի միս։ Ամեն ինչ այնքան քնական էր, որ արքային թվաց, թե դրանք խսկական են, նա ձեռքը տարավ որևէ

բան ուտելու լրակացավ, որ մատուցարանի վրա եղած ամեն  
բան ոսկուց է: Ապշեց, ժպտաց ու խոչա Խաչիկին ասաց.

— Դու ալիքի հարուստ ես, քան ես:

— Սա ինձայում եմ քեզ, արքա,— Հաճոյացավ խոչան և  
ամբարտավկան ալով ավելացրեց,— դու առաջինն ես Հին ու նոր  
բոլոր արքակիրի մեջ, որին Հայաստանը ոսկե ճաշ է մատու-  
ցում:

Դա վերջն ճաշկերույթն էր Զուղայում: Խոչա Խաչիկի սըր-  
տարաց Հյուրնկալությունը Շահ-Արաս արքային առիթ տվեց  
մտահղանակու մի մեծ ոճրագործություն: Ինչո՞ւ թողնել, որ  
այսքան հարուստ ու ճարտարվեստ մարդիկ մնան Հայաստա-  
նում, մտածեց արքան, թող գնան և ծաղկեցնեն Պարսկաստա-  
նը: Եվ արքան Զուղայի ու շրջակա վայրերի երեք հարյուր հա-  
զար հայերի բռնագաղթեցրեց Պարսկաստանի խորքերը: Են ու  
բարգավաճ քուղան, որ դարձել էր Հայաստանի երկրորդ Անին,  
ամայացավ:

Հե՞յ, խոչա Խաչիկ, տեսա՞ր, թե ոսկե ճաշն ինչ խաղ խաղաց  
քո հայրենիքի գլխին:

## ՈՐՄՈՒՆԵԼ ԲԱԳ՝ ԷՅԱՏԵԼ ԿԱՋ

1607 թվականին խորշակաբեր մորեխը ցատկեց Եղեսիային  
մերձ Թլկուրան գյուղի վրայով և տարածվեց Հայաստանում:  
Դեռ մորեխը դժւրս չեկած՝ եկավ նաև սովը:

Այդ տարիում, ասես ձեն-ձենի տալով, Թլկուրան լցվեցին  
Հայոց Միջագետքի թափառական բոլոր գուշակները: Գյուղի  
ամեն մի ընտանիքին մի գուշակ էր ընկնում: Ասպնջական Թլկու-  
րանից նրանք հեռանալու ցանկություն չունեին: Ինչու հեռանա-  
յին, այստեղ առատ ուտելիք կար, իսկ մյուս տեղերում սով էր:

Թլկուրանում թոռնիկ անունով մի սրամիտ մարդ կար: Մի օր  
սա գլխին հավաքեց գուշակներին ու ասաց.

— Դուք բացեցիք բոլորիս բախտը ու ասացիք՝ ձեր ասելի-  
քը: Ձեր գուշակությունների համաձայն առաջիկա տարիներին  
Թլկուրանը կդրսոնա աստվածային երկրորդ դրախտը: Մեր շի-  
նականներից քառասուն մարդ կդառնա թագավոր: Եթե ձեր գու-  
շակությունները իրականանան, ապա աշխարհի քառասուն տե-  
րությունների սիրակալներ պիտի հրաժարական տան և իրենց  
տեղը զիջեն թլկուրանցիներին: Կարճ ասած՝ դուք հաճելի պատ-

**բանքներով եք պարուրել բոլորիս հոգին։ Հիմա էլ եռ եմ բացում ձեր բախտը։ Դուք նստակյաց դարձաք սովի պատճառով։ Ապերախտ չեք՝ ձեր կերած մի կտոր հացի համար բոլորիս երշանկություն եք մաղթում։ Հենց որ սովը վերջանա դուք հրաժեշտ կտաք թղկուրանին։**

## **Հացը չի կարելի կոխել**

**Ծատախի նավահանդ գյուղում Վարագ անունով մի մարդ էր ապրում։ Մի անգամ այս Վարագը ոտով անզգուշորեն կոխում է հացի մի կտոր։ Զգալով, որ ինքը աններելի բան է արել՝ ցընցվում է ամբողջ մարմնով և մտմտում է, թե ինչպես քավի իր մեղքը։ Իր տառապանքի մասին նա ուղի ուշինչ չի ասում և որոշում է ինքն իրեն պատժել։ Ցոթ օր զրկում է իրեն հացից և ապրում է միայն ջրով։ Ութերորդ օրն ինքն իրեն ասում է.**

**— Հիմա կարող ես ձեռքդ տանել հացին, բայց եթե մյուս անգամ ոտղ հացի վրա դնես՝ ես քեզ սոված կթողնեմ յոթանասուն օր։**

## **Խուստովի**

**Մասիսից հետո հայոց ամենագեղեցիկ լեռը Խուստովին է։ Նրա արկելահայաց լանջին, Քոլու կոչվող վայրում, ծաղկազարդ մի բացատ կա, որն ամենագեղեցիկ անկյունն է համայն աշխարհում։**

**Ստամբուի այլ և այլ հիվանդություններ և մշտական գլխացավ ունեցող մարդիկ ամեն տարվա հունիսի 8-ին այս բացատն են գալիս, լավաշը թրջում բացատի կողքի Հացին աղբյուրի սառնորակ ջրի մեջ և ուտում։ Ոմանք բուժվում են, ոմանց էլ թվում է, թե բուժվել են։**

**Ասում են ամեն տարվա հունիսի 8-ին բացատի աղբյուրի ջուրը բուժիչ է դառնում՝ եթե այն ցողես լավաշի վրա։ Զուրը կենարար է դառնում միայն հացի միջոցով։ Դրա համար էլ կոչվում է Հացին աղբյուր։**

**Հնում այստեղ իշխաններից ու իշխանություններից փախած մի անապատական է եղել, որը տասներկու տարի ապրել է մի խուրձ լավաշով և Հացին աղբյուրի ջրով։ Նա է մարդկանց հայտնել, որ հունիսի 8-ին բացատի աղբյուրի ջուրը բուժիչ է դառնում։**

**Ու մի բան այնպես քաղցր չէ, որքան կուստուիի լանջին կերած մի կտոր լավաշը:**

## **Հացաբաշխ**

**Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում թոնիր վառած ու Գաց թխող ընտանիքի փոքր երեխաներից մեկը ձեռքին է գցում լավաշի փրփուր-փրփուր թերթերը և, անից-տուն անցնելով, շրջում գյուղում:**

**Փոքրիկը մի-մի լավաշ է նետում այն երդիկներից, ուր հղի կին կա: Դա նշանակում է, թե թող հացաշատ լինի այն տունը, որտեղ նոր մարդ է լույս աշխարհ գալու:**

## **Հացով բուժել են հիվանդին**

**Բարձր Հայք նահանգի Սպեր գավառի մարդիկ հացով բուժել են հիվանդին: Նրանք մի կտոր հաց են դրել հիվանդի գրբանը, ապա վերցրել և այդ հացը տվել շանը, որպեսզի հիվանդությունն անցնի նրան:**

**Մի տարի արտերը որոմնաշատ եղան: Մարդիկ հունձ էին անում, բայց չեին կարողանում որոմը զատել ցորենից: Հենց այդ ժամանակ շունն օգնում է մարդուն, ուտում է հացահատիկի մեջ եղած ամբողջ որոմը, մարդուն թողնելով մաքուր ցորենը և լեզու առած ասում. «Ես քո ցավն էլ կուտեմ»:**

**Մարդը այդ ժամանակվանից աշխատում է իր ցավերի մի մասը շանը տալ՝ հավատալով, որ դա հավատարիմ կենդանու սրտովն է:**

## **Աղքատն ինչու չեր ուզում կշտանալ**

**Վասպուրականի Կարճկան գավառի Եղեգիս գյուղում Պարունակ անունով մի մարդ էր ապրում: Սա հացից չեր կշտանում, բայց որովհետև զատ երեխաներ ուներ՝ ամեն կերպ զսպում էր իրեն:**

**Մի անգամ Պարունակը հնձվոր վարձվեց մի մեծահարուստի մոտ: Արտատերը, իմանալով, որ Պարունակը մինչև հիմա զեռ կուշտ փորով հաց չի կերել, որոշեց մի լավ բան անել և ամբողջ կյանքում հպարտանալ դրանով: Նա ասաց.**

— Պարունակ, իմ պայմանն այսպիսին է. Հնձավարձդ վարձ, ուտելդ ձրի, ինչքան կուզես՝ կեր:

Պարունակն աշխատում էր քափ-քրտինքի մեջ մտած: Մեծահարուստը աշքի պոշով հետևում և տեսնում է, որ Պարունակն ուտում է այնքան, ինչքան մյուս հնձվորները:

— Լսիր,— ասում է արտատերը,— դու օրական ինչքա՞ն հաց ես ուտում:

— Այնքան, ինչքան ուտում էի մեր տանը,— պատասխանում է Պարունակը:

— Բայց չէ՞ որ դու հնարավորություն ունես ուտելու այնքան, ինչքան ուզում ես:

— Չեմ կարող, այստեղ լինի թե տանը՝ ամեն մի ավել պատառ պիտի կտրվի իմ երեխաների բերանից: Եթե այս մի քանի-օրում սովորեմ շատ ուտել և տանը շկարողանամ զսպել՝ այդ դեպքում իմ երեխաներին բան չի մնա:

## Մանկան օրորոցից ցորեն էին կախում

Մուջ քաղաքում մանկան օրորոցից ցորեն էին կախում: Այդ սովորությունը տասը հազար տարեկան է: Փոքրիկ քսակի մեջ մի բուռ ցորեն են լցնում և կախում նորածնի օրորոցից: Մայրը օրորում է երեխային և ասում:

— Տանդ միշտ ցորեն լինի: Թող կյանքդ ու արտի երաշտ շտեսնեն: Հոգիդ մաքուր մնա մինչև խոր ժերություն և մարդիկ սիրեն քեզ արդար ցորենի պես:

## Թորոսը քաջը է արածացնում

Քաջքերը, երեակայական այդ ոգիները, իրենց տիրապետությունը Հայաստանի ծորերում ու հովիտներում պահպանել են մի քանի տասնյակ հազար տարի:

Մեր նախնիներին թվում էր, թե քաջքերի մեջ կան նաև բերք հափշտակողներ:

Մի անգամ շինական թորոսը նկատում է, որ ինչ-որ մի արարած է մտել իր արտը և ոտքի կոխան դարձրել: Նույնը կըրկընվում է երկու օր հետո:

Թորոսը գլուխը կորցրել, շէր իմանում, թե ինչ անի: Եթե արտն այդպես փշանա՝ ինքն ու երեխաները սովամահ կլինեն:

Գյուղում իմացան այդ մասին ու սկսեցին խոսել.

— Դա քաջքերի արածն է:

— Քաջքերը երկնքից իջնում են, իրենց բաժին արտև ուստում ու վեր բարձրանում, այնպես որ Թորոս, այս անգամ վիճակը քեզ է ընկել, դու համարյա անելիք չունես, Հո շե՞ս կարող կոփվ տալ քաջքերի հետ:

Ասում էին, ցավակցում, ափսոսում:

Իսկ Թորոսը ավելի էր զայրանում: Որտեղից հայտնվեց այս քաջքը, ինչո՞ւ բոլոր շինականների արտերը թողած միայն իր արտն է կոխկրտում ու լափում: Գուցե այստեղ ուրիշ բան կա:

Եվ Թորոսը մտքին դնում է գիշերը պահակ կանգնել արտում: Դե՛, եթե պիտի ձմռանը սովամահ լինի, ավելի լավ է՝ հիմա մեռնի, քան տեսնի իր երեխաների մահը: Թող այդ քաջքն արտի հետ իրեն էլ ուտի:

Ասում է ինքն իրեն ու մի իրիկնադեմի գնում-նստում է արտում: Կեսգիշերին խշխոց է լսվում: Ծղոտները կոխելով մեկը մտնում է արտի խորքը: Լուսնի լույսով Թորոսը նկատում է, որ իր առջև կանգնած է սովորական մի ձի, որը խժում ու անուշ էր անում ցորենի հասկերը:

Նա հանգիստ վեր է կենում տեղից և բռնում ձիու քաշը: Հետո քթի տակ ծիծաղելով, որ բռնել է գիշերային գողին, ձին բերում է տուն:

Սուավոտյան ոտից գլուխ նայում է ձիուն: Զէ՛, համագյուղացիներից ոչ մեկինը չէ: Նստում է ձին, գնում հարեան գյուղերը և հարց ու փորձ անում, բայց տերը չի հայտնվում:

— Դա հեռու կողմերից տարագիր է ընկել ու հասել այստեղ, համարիր, որ աստված քեզ համար է ուղարկել,— հաճոյախոսում էին հարեանները:

Գյուղացիները ձիուն կոշում են Թորոսի քաջք: Հենց որ Թորոսը՝ ձին նստած որևէ տեղ էր գնում, գյուղացիք կատակով հարցնում էին.

— Այ տղա, Թորոս, ո՞ւր ես տանում քաջքդ:

— Տանում եմ արածացնելու,— պատասխանում էր Թորոսը.

## Պարտիզակցին չի մոռացել հարազատ Սեբաստիայի հացը

Մի խումբ սեբաստահայեր թողնում են տուն ու տեղ, գնում հասնում Մարմարա ծովի ափերը և 1625-ին այնտեղ հիմնում  
8—Հացապատում

**Պարտիզակ գյուղաքաղաքը:** Այստեղ զմայլելի ու ակնահաճո էր ամեն ինչ՝ և՛ Սուրբ Մինասի բլուրը, և՛ Ճատքանջուր ջրվեժը, և՛ Ջաղցի ձորը:

Այսինքն գյուղաքաղաք էր Պարտիզակը: Բայց սերաստահայերը չէին մոռացել մայր հողի հացը: Նրանք Սերաստիայից սերմացու էին հասցրել Պարտիզակ և ցանում ու պահպանում էին հայրենի սերմացուն: Ամեն նոր տարի պարտիզակցին նախ ուտում էր Սերաստիայի ցորենով թխված մի կտոր հաց և նոր ձեռքը տանում խնջույքի սեղանին: Այդպես էին վարվում նաև Պարտիզակից հեռու ապրող պարտիզակցի երեսելի բանասերներ Վարդան Հացունին, Արքեն Ղազիկյանն ու Մկրտիչ Պոտույանը:

## Խմորդ քցախի

Արցախի Սոս գյուղում երկու կովարար կանայք էին ապրում, մեկի անունը Վարդեհատ էր, մյուսինը՝ Փառանձեմ: Զնայած մեկը մյուսից լավ չէր ապրում, բայց նախանձի որդը կրծում էր երկուսի սիրութը: Փոխադարձաբար հայրոյում ու անիծում էին միմյանց՝ երբեմն նաև առանց որևէ պատճառի, հենց այնպես:

Մի անգամ Վարդեհատենց ձին տան բակում ընկավ և սկսեց շունչը փշել: Հենց այդ ժամանակ հարեան տնից լսվեց Փառանձեմի բարձրաձայն քրքիջը: Վարդեհատին թվաց, թե Փառանձեմը տեսավ ձիու տապալվելը և իր ուրախությունն արտահայտում է փոթկոցով:

Այդ օրն, իհարկե, ձին սատկեց: Բայց Վարդեհատին ավելի շատ տանջում էր ոչ թե ձիու կորուստը, այլ Փառանձեմի փոթկոցը: Ամբողջ գիշերը նա շուտումուռ եկավ իր թախտի վրա, բայց շկարողացավ քնել: Մտմտում էր, թե ինչ անեծք տա Փառանձեմին: Իր իմացած բոլոր անեծքները մտովի կողք-կողքի դասդասեց, բայց դրանք աշքին թույլ երեացին: Հարկավոր էր մեծ, մի ահեղ անեծք, որ Փառանձեմն ամբողջ կյանքում չմոռանա: Հանկարծ մտաբերեց տատի խոսքերը. «Ինչ ուզում ես ասա, բայց հացն ու խմորը շանիծես»: Կարծես թե գտավ, հիմա իր սիրութ կհովանա:

Լուսադեմին Վարդեհատը դուրս եկավ պատշպամք և ձայն տվեց Փառանձեմին: Քնատ հարեանուհին արձագանքեց նրան: — Ե՞նչ է եղել, Վարդեհատ:

— Դու ինձ լա՞վ ես լսում, Փառանձեմ:

— Լսում եմ, ասա:

— Փառանձեմ, խմորդ քցախի:

Վարդեհատը դա այնքան բարձր ասաց, որ լսեցին Սոսի Համարյա բոլոր բնակիչները:

Այդ ժամանակվանից էլ Արցախում տարածվեց «խմորդ քցախի» չար անեծքը: Այսինքն՝ ինչպե՞ս թե տարածվեց: Մարդիկ լսեցին, որ Սոս գյուղում մեկն այդպիսի անեծք է տվել: Հետո բերներեան անցնելով այն վերափոխվեց: Սոս գյուղում Վարդեհատ անունով մի կին անիծել է Հարեանուհու խմորը: Նույն օրը սատկել է Վարդեհատի ձին, իսկ հաջորդ օրը մահացել են նրա երկու որդիները:

Դե՛, երեխա ունեցող արցախեցի կինն էլ ինչպե՞ս կարող է տնիծել խմորը: Թող դա անի չբեր կինը: Իսկ Արցախում Համոզված են, որ չբեր կնոջ անեծքը չի կատարվում:

## Ծոթ

Երեկի դուք չեք առել շոթ՝ անեկ հացի համը: Չի կարելի աշխարհում ապրել և գոնե մի անգամ շոթ չուտել:

Թոնրի հացերի մեջ շոթը ամենապատվականն է՝ չնայած մի քիչ դժվարամարս է անթթխմոր լինելու պատճառով: Շոթը հացի շուտասելուկն է՝ ալյուրից խմոր են անում և անմիջապես հաց թխում:

Դե եկ ու հարցրու շոթ թխող հացթուխին.

— Ինչո՞ւ չես թողնում, որ խմորը խմոր դառնա:

Նա կպատասխանի.

— Սա հնօրյա սովորություն է: Թշնամին միշտ ընկել է մեր ետեկից և չի թողել, որ մեր խմորը հասունանա: Մենք ստիպված ենք եղել տեղնուտեղը հունցել ու հաց թխել: Այնպես որ՝ շոթը մեր կենսագրության մի էջն է:

## Մարդը կարող է ապրել այնտեղ, ուր ցորեն է աճում

Մխիթար Մերաստացին գրական ու կրթական միաբանություն ստեղծելու նպատակով 1717 թվականին ոտք է դնում Վենետիկի կողքին գտնվող Սուրբ Ղազար կղզու վրա: Դա բորոտների կղզի էր, որ մարդիկ լքել էին վաղուց:

**Մխիթարի աշակերտներից մեկն ասաց.**

— Ես լսել եմ, որ երկու հարյուր տարի առաջ վենետիկցիները բորոտներին բերում էին այստեղ թողնում և իրենք ետ փախչում սարսափահար: Սա ցամաքի անիծված կտոր է, անա ինչքան ժամանակ է ոչ ոք ոտք չի դրել այստեղ: Եթե այս հողակտորը իսկական հողակտոր լիներ՝ իտալացիները չեն, զի՞ հայերիս:

**Մխիթարը նրան պատասխանեց.**

— Մենք այստեղ ցորենի մի փոքրիկ արտ կցանենք, եթե աճեց ու բերք տվեց՝ անեծքը կվերանա կղզու վրայից:

Եվ Մխիթարը մի քանի բուռ ցորեն ցանեց: Շատ շանցած մի թիզ արտը փարթամ ցողուններ տվեց: Բերքն էլ ընտիր էր, չնայած եղած-չեղածը մի քանի խուրձ էր:

— Մարդը կարող է ապրել այնտեղ, ուր ցորեն է աճում,— ասացին միաբանները և Սուրբ Ղազար կղզին դարձրին իրենց և հետնորդների մշտական բնակատեղին:

## **Կուզես ճանաչել մարդուն՝ հետը հաց կեր**

Գորգիկն ու Բուժիկը ընկերացան և որպես հնձվոր օրավարձով աշխատանքի մտան մի հարուստի մոտ: Իրիկնաղեմին, հնձից հետո, արտատերը Գորգիկի ու Բուժիկի առջև լավաշ ու մածուն դրեց: Հնձվորները բրդում արեցին փայտե ամանի մեջ և վերցրին իրենց գդալները:

Դեռ մի քանի գդալ շարած՝ Գորգիկը նկատեց, որ Բուժիկը երկու-երկու գդալ է ուտում և շտապելուց քիչ է մնում խեղդվի:

— Դու կեր, Բուժիկ, ես կշտացա,— ասաց Գորգիկն ու վեր կացավ տեղից:

— Այդքան շո՞ւտ:

— Ավելի լավ է ես սոված մնամ, քան տեսնեմ, թե շտապելուց ինչպես ես խեղդվում դու,— պատասխանեց Գորգիկը:

## **Ծամձորեցի Տաճատը**

Ղարաբաղի Հաղբութի շրջանի Ծամձոր գյուղում երկու հարյուր տարի առաջ մի մարդ էր ապրում Տաճատ անունով: Որպես հնձվոր Տաճատը իր նմանը չուներ: Մի անգամ նա գրազ եկավ և վկաների ներկայությամբ մի օրում մանգաղով հնձեց երկու հարյուր խուրձ:

Այդ ժամանակվանից շատ ջրեր են հոսել, ինչ ասես որ չի կատարվել աշխարհում, բայց մարդիկ հիշում են Տաճատին։ Հենց որ Ղարաբաղում լավ հնձվորի մասին խոսք է բացվում՝ ասում են։

— Ոչ ոք ծամձորեցի Տաճատին չի հասնի, մարդը մի օրում երկու հարյուր խուրձ է հնձել։

### Կինտոների խաղը

Մի անգամ թիֆլիսի մեծահարուստ Սիմոնը, որ մեծ փուռ ուներ քաղաքի կենտրոնում, երկու կոպեկով բարձրացրեց հացի բոքոնի գինը։

Լսելով այդ մասին՝ զվարճասեր կինտոները որոշեցին խաղալ Սիմոնի գոգու հետ և խմբով հավաքվեցին նրա փոխ մոտ։

— Ի՞նչ եք ուզում, — հարցրեց Սիմոնը։

— Ոչինչ էլ շենք ուզում, մենք մեզ համար հոտ ենք քաշում։

— Ի՞նչ հոտ։

— Քո թիսած հացի։

— Հոտ քաշելով ձեր փորը բան չի ընկնի։

— Մեր փորը բան չի ընկնի, բայց քո հացի մեջ էլ հացի հոտ շենք թողնի, լրիվ կքաշենք՝ կհանենք։

— Քաշեք՝ ինչքա՞ն քեփներդ տալիս է, անբան խելառնե՞ր, — ծաղրելով ու արհամարհելով ասաց Սիմոնը և գնաց իր գործին։

Սակայն կեսօրին հարուստը գունատվեց։ Նրա հացի խանութից մարդիկ հաց շէին առնում։ Քաղաքով մեկ փսփսում էին, թե Սիմոնի հացը համ ու հոտ չունի։

Սիմոնը հասկանում է, որ կինտոները իր գլխին խաղ են խաղում, որից ազատվելն այնքան էլ հեշտ չէ։ Կինտոներին նա ասում է.

— Ուզում եմ հաշտվել ձեզ հետ։

— Մենք դեմ շենք։

— Ի՞նչ եք ուզում, որ անեմ։

— Երկու կոպեկով էժանացրու հացիդ գինը։

### Երաշտի ժամանակ ղողանջում են եկեղեցիների զանգերը

Մեզնից շատ ու շատ տարիներ առաջ, երբ երաշտ էր լինում՝ ղողանջում էին Հայաստանի եկեղեցիների զանգերը։ Մարդկանց

թվում էր, թե աստված կլսի այդ աղեկտուր զողանզը և անձրև կբաշխի իրենց:

Հեգնելով սնոտիապաշտական այդ սովորությունը մի գյումրեցի գնաց եկեղեցի և, մի բուռ դրամ խոթելով քահանայի գըրպանը, ասաց.

— Տեր հայր, հրամայե, թող եկեղեցու զանգերը հնչեցնեն:

— Իսկ ինչո՞ւ ես ուզում հնչեցնել տալ զանգերը, որդյակ:

— Կուզեմ՝ աստված այնքան ջուր թափե երկնքից, որ մեր քաղաքի կողքին Սևանի շափ մի ծովակ առաջանա, Գյումրին էլ դառնա նավահանգիստ:

— Որդյակ, ո՞վ է լսել, որ զանգահարությամբ աստված ծովակ սարքի մարդկանց համար:

— Տեր հայր, իսկ ո՞վ է լսել, որ զանգահարությամբ աստված անձրև բաշխի մարդկանց:

## Հաշվել պետք չէ

Կոտայք գավառը ցորենի շափ տարիք ունի: Այստեղ միշտ էլ սվավացել են ցորենի լեցուն ու բազմահատ հասկերը:

Եթե ինչ-որ տեղ ինչ-որ ժամանակ հաց ու հացահատիկ չի եղել, ապա արգավանդանող Կոտայքում միշտ էլ ծփացել են ցորենի արտերը:

Կոտայքեցին չի սիրում շափել ու հաշվել, թե ինչքան հացահատիկ ունի ինքը, թե քանի հաց կա իր տաշտում: Նա ունեցած ցորենը լցնում է հորերի ու կարասների մեջ և հարազատներին չի հայտնում իր բերքի շափը: Թող ամենքն իմանան, որ իր բերքն անհատնում է:

— Հաշվել պետք չէ,— ասում է նա,— քաջքերը կիմանան և կոչնչացնեն մեր ցորենը: Մարդ պետք է առատաձեռն լինի ինչքան ուզում է, բայց չհաշվի ոչ ունեցածը, ոչ ունենալիքը:

## Ինչպես է գարին ցորենի համ ստանում

Շոռոթ գյուղաքաղաքում Մարգար անունով մի ջրաղացպան էր ապրում: Սա ոչ ոք չուներ, ինքն էր ու իր գլուխը: Զնայած նրա ջրաղացը գործում էր գիշեր-ցերեկ, բայց նեղ օրվա համար նա ետ չէր գցում նույնիսկ մի կոտ ալյուր: Մարդիկ չգիտեին, թե նա ինչ է անում այդքան աղունավարձը:

Նրա ջրաղացը գարի տանողները պիտեին, որ Մարգարը աղունավարձ չի վերցնում։ Բայց ջրաղացպանը գարի աղալիս ոչ միայն աղունավարձ չի վերցնում, այլև իր պաշարած աղունավարձ ցորենից մի քիչ խառնում էր գարուն։

Եվ գարու տերերին թվում էր, թե իրենց աղունը հրաշքով է ցորենախառն դառնում։

— Մարգարն օրհնված ձեռք ունի, — ասում էին շոռոթեցիք, — նրա ջրաղացում գարին ալյուր դառնալիս մի քիչ ցորենահամ է ստանում։

## Համտես, համտես՝ պուտուկը կես

Մի կին թանով ապուր եփեց, լցրեց պուտուկի մեջ և տարավ դաշտում աշխատող ամուսնուն։ Ճանապարհին ախորժակը տրվեց։ Գդալը հանեց և համտես առավ։ Մի քիչ գնաց՝ նորից համտես առավ։ Մինչեւ տեղ հասնելը ինքն էլ չիմացավ, թե քանի տեղ կանգնեց ու գդալը բերանն առավ։

Պուտուկը կիսատ տեսնելով՝ ամուսինը կնոջը հարցրեց.

— Ճանապարհին հո մեկին չե՞ս հյուրասիրել։

— Չէ, — պատասխանեց կինը, — մի երկու գդալ ես եմ համտես արել։

— Համտես, համտես՝ պուտուկը կես, — ասաց ամուսինը։

## Մի օրով սովի ներն անիծեց

Փոքր Հայքի մայրաքաղաք Սեբաստիան, որ միշտ կոչվել է Հացի քաղաք ու շտեմարան և մեծ սովերն անցել են նրա կողքով, խեղճացավ միայն մի անգամ։ 1797 թվականի հունիսի 8-ին մորեխը հեղեղի պես վրա տվեց և ամայացրեց Սեբաստիայի բոլոր արտերը։ Այդ աղետի ականատես պատմիլ Հովհաննես Սեբաստացին գրում է, որ սով եղավ և մեկ կիլո ցորենը վաճառվեց 35 դահեկանով։

Հենց սովի այդ տարում սեբաստացի դարբին նահապետ նահապետնեցը երկու ձիաբեռ ցորեն առավ, հաց թխեց և սկսեց հյուրասիրել անցնող ու դարձող համաքաղաքացիներին։ Հաջորդ օրը նրա տանը մի կտոր հաց լմնաց։

— Դու այդ ի՞նչ արեցիր, Նահապետ, — ասացին Հարևանները:

— Մի օրով սովի հերն անիծեցի, — պատասխանեց Նահապետը:

## Ղարաբաղի մեծ սովը

Ղարաբաղի հին ու նոր ժամանակների ամենամեծ սովը եղել է 1798 թվականին: Մեկ տարում տասնյակ հազար հայ թողեց պապենական Ղարաբաղը և գաղթեց աշխարհի տարբեր կողմեր:

Դա զարմանալի բռնագաղթ էր: Յուրաքանչյուր գյուղում հաշվում էին ունեցած հացի պաշարը, տեղում թողնում այնքան մարդ, որ կարող էր եղած պաշարով հասնել մինչև հաջորդ բերքահավաքը, իսկ մյուսները հեռանում էին հայրենի եզերքներից: Գնացողները մնացողներին ասում էին.

— Պետք չէ, որ սովից բոլորս կոտորվենք: Դուք կապրեք և կպահեք մեր հողը: Իսկ մենք աշխատանքով հաց կվաստակենք այստեղ ու այնտեղ: Մենք չենք մնա հեռուներում: Ղարաբաղցու վերջին կանգառը Ղարաբաղն է լինելու:

Ասացին ու գնացին: Այդ ժամանակվանից անցել է համարյա երկու հարյուր տարի: Ոչ ոք չի հաշվել, թե նրանցից քանիսն է վերադարձել Ղարաբաղ:

## Աշխարհի ամենահամեղ հացը

Զրաղացպանին հարցրին.

— Ո՞րն է աշխարհի ամենահամեղ հացը:

— Բաղարջը, — պատասխանեց զրաղացպանը:

## Պանդխտության մեկնողի բարձի տակ հաց են դնում

Եփրատի աջ ափին, խոտորնակ-խոտորնակ լեռնալանջերի վրա, յոթ ծունկ է տվել հայրենների ոստան Ակնը: Իր կյանքի բոլոր քսանչորս տարիներն այս քաղաքում անցկացրած Վահրամը վաղը պիտի՝ մեկներ պանդխտության, Վաղը պիտի Ակնից մի հայրեն պակասեր:

Կինը՝ Վախախսը, որ նազենի իրան ուներ ու փխրուն ժպիտ,

այդ գիշեր ամուսնու բարձի տակ մի շոթ հաց դրեց և մտովի ասաց.

— Թող իմ Վահրամը պանդխտության մեջ հացի կարոտ շզգա և քաղցի պատճառով գլուխը շդնի ուրիշի բարձի: Ակնի շոթը թող նրան Ակն վերադարձնի անփորձ ու անվնաս:

## Հացամոլ համշենցիները

Հայերը սիրում են ամեն ինչին մականուն տալ: Մականուն ունեն նույնիսկ գավառները: Ասում են՝ ետ-ետ քայլող ոստանցի, իր մեկը երկու տեսնող բաղիշեցի, խոսքից խոսք սարքող գյումրեցի: Համշենցիներին էլ անվանում են հացամոլ: Սրանք չեն բավարարվում հացին հաց ասելով: Համշենցու համար հաց է նաև ընկույզի ու նուշի միջուկը, ամեն տեսակ ճաշ, նույնիսկ՝ մածունը: Մի բույս կա, որն ուտելուց առատանում է կանանց կրծքի կաթը: Այդ բույսն ուտողը շատ զավակներ է ունենում: Համշենցին այն անվանում է հացհամեմ: Ցորենի հասկն իր ցողունով աշխարհի բոլոր մարդկանց համար հասկ է: Համշենցին մեղք կհամարի հասկին հասկ անվանելը: Ցորենի հասկը նա կոշում է հացի ծառ: Դե, ի՞նչ, մի՞թե նա իրավացի չէ: Չէ՞ որ մարդուն զորավոր սնունդ տվող հասկը ավելի հարգի ու պատվական է, քան ամեն տեսակ տունկ ու ծառ:

## Հունիս

Արտ ունեցող գյուղացու համար տասներկու ամիսների մեջ բախտորոշը հունիսն է: Հենց այդ ժամանակ նա կարող է մի հայացք նետել իր արտին ու ասել, թե ինչպես կապրի ձմռանը: Իզուր չէ, որ այդ ամիսն առած է դարձել գյուղացու համար.

— Հունիս, հունիս, ունիս՝ ունիս, շունիս՝ շունիս:

## Մարծեղ գյուղում ոչ մի ծովյլ չկար

Ամեն գյուղում առնվազն մի ծույլ է լինում: Բայց ահա Շատախի գավառի Մարծեղ գյուղում ոչ մի ծույլ չկար: Հաց ուտող մարծեղցին չի կարող պարապ մնալ նույնիսկ մի օր: Եթե մեկը գործ չունենա՝ կսկսի հող քանդել և նորից լցնել նույն տեղը: Փորձիր հարցնել, թե ինչու է այդպես անում, նա կպատասխանի.

— Որովհետև ամաշում եմ կերածս հացից։ Ավելի լավ է մարդ գետինը մտնի, քան հաց ուտի և ոչինչ շանի։

## Ինչու Քնքուշը բաժանվեց ամուսնուց

Մի իրիկնադեմի ջափանի շրջանի Սրաշեն գյուղում իրարանցում սկսվեց։ Նորահարս Քնքուշը փաթաթել էր իր փալասփլուազ և պատրաստվում էր հեռանալ ամուսնու տնից։ Հարեվանուհիները հավաքվել էին Քնքուշի գլխին և փորձում էին տարհամոզել նրան։

— Վրթանեսն այնքան էլ վատ մարդ չէ, — ասում էր կանանցից մեկը, — Եթե հարբեցող՝ տղամարդկանց կանայք լքեն իրենց տուն-տեղն ու հեռանան՝ վերջն ո՞ւր կհասնի։

Քնքուշը պատասխանեց.

— Այսօր հարբած առն եկավ ու սկսեց անխղճորեն ծեծել ինձ։ Հետո պատուհանից դուրս թափեց իմ ձեռքով թխված թարմ լավաշը։ Ես նրան լքում եմ ոչ թե ինձ ծեծելու, այլ լավաշը դուրս թափելու համար։ Զեզանից ո՞վ կհանդուրժի հացի պատիկն անարգող ամուսնուն։

— Ոչ ոք, — արձագանքեցին մի քանի կանայք։

— Դե, ինձ մի մեղադրեք, — ասաց Քնքուշը, շորերը շալակն առավ և բռնեց հորանց տան ճանապարհը։

## Հայաստանը մի մեծ արտ է

Լոռու Ճոճկան գյուղում մի մարդ էր ապրում Աստվածատուր անունով։ Սա ոչ մաճ բռնել գիտեր, ոչ հնձել, ոչ կալսել։ Այդ պատճառով էլ Ճոճկանում ոչ ոք մտադիր չէր նրան աղջիկ տալ։ Իսկ Աստվածատուրի ամուսնության ժամանակն անցնում էր։ Մի օր սա զայրանում է իր բախտի վրա, թողնում է Ճոճկանը և ճանապարհ ընկնում ինքն էլ շգիտեր, թե դեպի ուր։ Հարցուփորձելով գյուղից գյուղ է գնում։ Մտադիր էր մի այնպիսի շեն գըտնել, որտեղ ոչ վար ու ցանքս կա, ոչ էլ արտ ու հունձք։

Աստվածատուրը ոտի տակ է տալիս Հայաստանը, նորից վերադառնում Ճոճկան և ինքն իրեն ասում։

— Ես ուշ եմ լույս աշխարհ եկել, Հայաստանը մի մեծ արտ է դարձել, խոպան շգտա։

## Թոմարի առաջին մեկ-երկու հացը տալիս են հարևանին

Սկանի շրջանի Վարսեր գյուղում, երբ մեկը թոնիր է վառում  
ու հաց թխում՝ առաջին մեկ-երկու հացը բաշխում է հարևանին։  
Նոր հաց թխելիս փոխադարձաբար այդպես է վարվում նաև  
հարևանը։

Վարսերում համոզված են, որ եթե որևէ շինական իր թարմ  
հացը չկիսի հարևանի հետ, ապա մորեխը կփշացնի նրա արտը։

## Հայերն ինչպես են տան հիմն արկանում

Գորիսի շրջանի Տեղ գյուղում որևէ տան հիմն արկանելիս  
թարմ լավաշի մի խուրճ են դնում հիմնափոսի կողքին և գյուղի  
յուրաքանչյուր գերդաստանից հրավիրում մեկին։ Մարդիկ գա-  
լիս են մի կտոր հաց անուշ անում, որից հետո որմնադիրը դնում  
է տան հիմնաքարը։

Սովորույթս ցուցանե, թե մարդիկ ցանկանում են, որ այս  
նոր տունը գյուղի մյուս տների հետ կապված լինի սրբազն  
հացի ուժով։

## Հյուրի համար ցորեն կգտնենք

1805 թվականին ուսւ քաջարի զինվոր Վասիլի Վասյուկովը  
Հյուրընկալվում է Հաթերք գյուղում։ Առաջինը նրան հյուրասի-  
րում է գեղավագը, որ հարուստ մարդ էր։ Այստեղ զինվորը  
անուշ է անում ցորենի թարմ կլորակ հացը։

— Հիմա էլ ինձ տարեք ամենաաղքատ մարդու տունը,--  
խնդրում է Վասիլի Վասյուկովը։

Զինվորին տանում են մի շինականի տուն, որ հազիվ էր գա-  
րի հաց գտնում իր երեխաների համար։

Բայց Հյուրին տեսնելով՝ հաթերքցի աղքատը գլուխը չի կորց-  
նում։ Նա հարևանից երկու ցորեն հաց է փոխ առնում, կրակի  
վրա տաք տալիս ու դնում Հյուրի առջև։ Զինվորը սրտանց հացի  
է նստում նաև աղքատի հետ։ Գիտե՞ք ինչ բուրմունք ունի Ղա-  
րաբաղի տաք տված հացը։

Վասիլի Վասյուկովը շնորհակալություն է հայտնում շինա-  
կանին և կատակով ասում։

— Այսօր դու ինձ հետ ցորեն հաց կերար:

— Այո, մեր տանը միշտ գարի հաց ենք ուտում: Բայց հյուրի համար քարի տակից էլ լինի ցորեն կգտնենք:

## Հայը ոուսին տված խոստումը չի դրժի

1825—27 թվականներին Ռուսաստանում սով էր: Երկիրը թանկ գնով ցորեն էր գնում մոտիկ ու հեռու վայրերից: 1827-ի ապրիլին Օգեսա հասավ եգիպտական ցորենով բեռնված մի նավ, որի տերն էր Եփրեմ Զարգարյանը: Նավահանգստում վըխտացող վաճառականները հարցատարափի տակ առան Զարգարյանին.

— Դու ի՞նչ գնով ես ուզում վաճառել քո ցորենը:

— Այն գնով, ինչ համաձայնել է գնել նահանգական վարչությունը 1824 թվականին,— պատասխանեց Զարգարյանը:

— Խե՞նթ ես, ի՞նչ է, դու չգիտե՞ս, որ Ռուսաստանում հիմա սով է:

— Հետո ինչ որ սով է:

— Դու այս մի նավ ցորենով կարող ես մեծ հարստության տեր դառնալ: Վաճառիր մեզ, մենք մեկին տասը կտանք:

— Ո՞ւ, ես իմ ցորենը նահանգական վարչությանը կտամ 1824 թվականի գներով: Ես հայ եմ, իսկ հայը ոուսին տված խոստումը չի դրժի թեկուզ ոչ թե շորս, այլ քառասուն կամ շորս հազար տարի անցնի, — հաստատակամ պատասխանեց Եփրեմ Զարգարյանը:

## Հացի պատառը կիսում է արծվի հետ

Վանա ծովակի հարավարևելյան կողմում գեղեցկանիստ Աղթամար կղղին է, որի ամենաբարձր կետը կոչվում է Բարձր քար կամ Բաֆֆու քար:

Վիպասան Բաֆֆին այցելել է Աղթամար կղղին, նստել այդ քարի վրա և գրել իր «Զայն տուր, ով ծովակ» բանաստեղծությունը:

Ասում են՝ 915—921 թվականներին, կղղու վրա Սուրբ Խաչ եկեղեցու հրաշակերտ տաճարը կառուցելու ժամանակ, ճարտարապետ Մանուելը ամեն օր մի կտոր հաց էր վերցնում, ծայրից կծում և դնում Բարձր քարի վրա: Կեսօրին երկնքում մի արծիվ էր հայտնվում, որ գեղեցիկ ճախրապտույտներ անելուց հե-

տո, վայրէջք էր կատարում թարձր քարի վրա, անուշ անուած հացի կտորը ու նորից վեր սլանում:

Մի անգամ Գագիկ Արծրունի արքան Մանուելին հարցրեց, թե հացի պատառն արծվին տալն ինչ նշան է:

— Արծվաթոփ կոթող արարելու համար մարդ պիտի իր հացի պատառը արծվի հետ կիսի, — պատասխանեց ճարտարապետը:

## Գաղպեն

Գաղպենը կամ մանանան Հայոց աշխարհի երկրորդ՝ մեղրն է: Ամենահրաշալի գաղպենը լինում է Տարոնում և Սասունում: Մեղրահամ այդ քաղցր խեժը նստում է կաղնու և հացենու տերեների, մատուտակ խոտի և գազ փշոտ թփի վրա: Այդ տերեների հյութը գոլորշիանում է և մութն ընկնելուց ցողանման հաւիկներ դարձած թափվում գետնին: Լուսաբացին հացենու ու կաղնու տերեները և կանաչ բացատները ծածկվում են մեղրանման թանձր հյութով: Ամենից շատ գաղպեն նստում է կաղնու և գազ թփի փետրաձև տերեների վրա. Հենց գազ թփի անունով էլ մեղրանման հյութը կոչվում է գաղպեն:

Գաղպեն լինում է շորս տարին մեկ, հուկիս ամսին: Կանայք՝ հետները տաշտեր առած, խմբերով մտնում են անտառ: Տաշտերը լցնում են շրով և փունջ-փունջ տերեները նրա մեջ թաթախելով լվանում այնքան, որ զուրն ստանար խաղողի քաղցուի հյութեղություն: Ապա շիրան եփում են կաթսաների մեջ և պնդացած հյութը լցնում հողե բղիկները:

Գաղպենից պատրաստում են ամենաքաղցրահամ ուտելիքները: Սով տարիներ են եղել, երբ տարոնցիք ու սասունցիք մի քանի ամիս ապրել են միայն այդ քաղցր խեժով:

Գաղպենով բուժում են թոքախտը:

1880 թվականին Սասուն եկավ ֆրանսիացի մի բժիշկ:

— Ի՞նչ ես որոնում մեր սարերում, — հարցրին ֆրանսիացուն:

— Ես ուսումնասիրում եմ թոքախտն ու բուժում թոքախտավորներին, — ասաց բժիշկը:

— Ի՞նչ բան է թոքախտը:

— Դուք չգիտեք, թե ինչ է թոքա՞խտը: Մի՞թե այստեղ ոչ մեկի թոքը չի հիվանդացել:

- Ո՛չ, մեր թոքերը պինդ են մեր սարերի պես:
  - Զի կարող պատահել, ես ոտի տակ եմ տվել աշխարհի շորս բոլորքը, չկա մի երկիր, ուր թոքախտ չլինի:
  - Եթե չես հավատում՝ ինքդ որոնիր, — ասացին սասունցիք:
- Ֆրանսիացին երեք ամիս շարունակ շրջեց Խութ, Մոտկան, Փսանք, Խիանք, Տալվորիկ, Շատախ և Սասուն գավառների ու գավառակների բոլոր գյուղերը, բայց ոչ մի թոքախտավորի չհանդիպեց:

Հետո բժիշկը իր օրագրում գրեց. «Քառասուն տարի ես ամեն տեսակ դեղ սարքեցի թոքախտը բուժելու համար: Միայն այս-տեղ հասկացա, որ իմ արածը մի բանի նման չէ: Գազպենով կարելի է բուժել աշխարհի բոլոր թոքախտավորներին»:

## Հացը հանեց կրակի միջից

Այս բանը տեղի է ունեցել հարյուր տարի առաջ Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում: Շինական Տոնապետի տանը հրդեհ էր բռնկվել:

Կուրթանցիները վրա տվին, բայց չկարողացան հանգժնել հրդեհը: Ուր որ է՝ պիտի թափվեն տան մոխիր դարձող հեծանները:

Այդ ժամանակ դաշտից տուն վերադարձավ Տոնապետը: Անվախ տղամարդ էր: Իրեն տուն նետեց՝ գոնե մի բան փրկելու համար: Քիչ հետո նա կրակի միջից դուրս եկավ հացի տաշտը գրկած:

Կրակը մարելուց հետո, երբ նրան հարցրին, թե ինչու տեղաշորերը կամ տան մյուս իրերը թողած կրակի միջից նա հացը հանեց, Տոնապետը պատասխանեց.

— Մարդուց հետո տան ամենասրբազան բանը հացն է: Հացի հետ մարդու պատիվն էլ կայրվի: Խսկ տունը՝ ոչինչ, նորը կսարքենք:

## Բախտով միացող մարդը պիտի հացով էլ միանա

Շամշադինի շրջանի Զորաթան ու Պառավաքար գյուղերը շատ էլ հեռու չեն իրարից: Զորաթանեցի Մանուշակը հարս գնաց Պառավաքար գյուղը: Աղջիկը հորանց տնից հետը մի բուռ

**ցորեն տարավ։ Ցանքսի ժամանակ նա հացահատիկը տվեց ամուսնուն և ասաց.**

— **Սերմացուիդ այս մի բուռն էլ խառնիր։ Բախտով միացնողը պիտի հացով էլ միանա։**

## **Սերմացուն հարատեսության աղբյուր է**

**Արածանի գետը Չորրորդ Հայք նահանգի Բալահովիտ գավառը երկու կես է անում։ Աշխարհում ոչ մի տեղ կանաչը, ծառն ու ծաղիկը այնքան հոտավետ չեն, որքան այստեղ։ Բայց 1882 թվականի, ամուսն մի օր մարախուր սև ամպի պես նստեց Բալահովիտի դաշտերում ու ձորերում և բարձրացավ մինչև Սուրբ Լույս լեռն ու Կեսօր քարը։ Մարախուր խժոնց ցորենի արտերն ու պարտեզները և կանաչի հետք շթողեց Արածանիի աջ ու ձախ ափերին։**

**Մի քանի ամիս անց սովը հասավ Բալահովիտ։ Հարեան հայկական շրջանները սկսեցին ցորեն ուղարկել Բալահովիտ։ Շատ շեր ուղարկածը, բայց բալահովիտցիները նախ առանձնացրին սերմացուն և սկսեցին աշնանացանը։**

**Մարդիկ ցանում էին հաջորդ տարվա համար, համոզված մինելով, որ կապրեն մինչև գարուն։**

— **Սոված մարդու համար արտերի կանաչը ավելի հուսատու է, քան մի քանի օրվա պարենը։ Սերմացուն հարատեսության աղբյուր է։**

## **Դիլիջան քաղաքի տոհմիկ անունն է Հովք**

**Աղստեհի հովտի գեղեցկուհի Դիլիջանը նորաթուխ անուն է։ Այն միշտ էլ հովանոց, այսինքն ամառանոց է եղել և կոչվել է Հովք։ Իսկ գիտեք, թե երեք հազար տարեկան Հովքը ինչպես վերանվանվեց Դիլիջան։ Հիմա Հովք է կոչվում Աղստեհի ձորահովտի ամենաբարձր կատարը, որը վերևից նայում է Դիլիջանին և զարմանում, թե մարդիկ ոնց մոռացան իր անունը։**

**Դա այսպես եղավ։ Տասնյոթերորդ դարում եվրոպացի երկու քարողիշ Աղստեհի ձորահովտի են գալիս հայերին կաթոլիկացնելու նպատակով։ Այստեղ նրանք պատրաստում են մի մեծ կառք, զարդարում այն սրբապատկերներով։ Կառքը, որ քա-**

բողիշներն անվանում են դիլիժանս, երբեք տեղից չշարժվեց և ձորահովտում մնաց երկար ժամանակ։ Կառքը քարոզիչների բնակարան-քարոզատեղին էր։ Այստեղ նրանք հայերին վաճառում էին զանազան դեղեր։ Աղստեղի հայերն, իհարկե, կաթոլիկ չդարձան, բայց դիլիժանս, դիլիժանս ասելով՝ քարոզիչների նստավայր Հովքը վերանվանեցին Դիլիջան։

Հազար տարի առաջ իմաստունների իմաստուն Գրիգոր Պահլավունի Մագիստրոսը ասել է.

— Եթե աստված բարեհաճեր մի անգամ Հայաստան գալ, ես նրան կհյուրասիրեի Հովքում։ Սա աշխարհի բոլոր գեղեցիկ անկյուններից տարբերվում է նրանով, որ այստեղ մարդ մոռանում է մահվան մասին։ Այս հովտի օղը ոչ միայն գովարարու սրտապարար է, այլև՝ սննդարար։ Այստեղ կերած մի կտոր հացը մարդուն չորս օրվա ուժ է տալիս։

## Պարտքը մարեց

Մի անգամ վիպասան Բաֆֆին գնաց խանութպանի մոտ և խնդրեց ապառիկ հաց տալ։ Խանութպանը, որ հրապուրված էր վիպասանի վեպերով, բայց անձամբ չէր ճանաչում նրան, հաց շտվեց։

Այդ դեպքից մի քանի ամիս անց Բաֆֆին մահացավ։ Նրա մահը ասես տակնուվրա արեց ամբողջ Թիֆլիսը։ Թաղմանը գնաց նաև խանութպանը և ճանաչեց այն մարդուն, որին մերժել էր մի բոքոն հաց տալ։

Խանութպանն այնպես ցնցվեց, որ նրան թվաց, թե անսովոր հուզմունքից ուղ որ է շնչահեղձ կլինի։ Երկի աշխարհում իրենից նվաստ մարդ չկար՝ ինչպես կարողացավ մերժել մի մարդու, որի գրքերով հիացել, լացել ու խնդացել է այսքան տարի։

Երկար ժամանակ մտմտում էր, թե ինչպես քավի իր մեղքը։ Մի օր էլ գնաց Բաֆֆու կնոջ մոտ ու ասաց.

— Տիկին Աննա, ձեր ամուսնուն ես պարտք եմ քսան ոռւբլիւ ։  
— Դո՞ւք եք պարտք, թե ամուսինս է ձեզ պարտք, — շնչավատալով լսածին, հարցրեց վիպասանի այրին։

— Ո՞չ, ես եմ պարտք, ես նրան խոստացել եմ այդ գումարի դիմաց մի ամբողջ տարի հաց ուղարկել ձեր տուն։

Տիկինը կասկածամտորեն գլխով արեց,

Բայց հաջորդ օրվանից սկսած մի ամբողջ տարի խանութպանն ամեն օր երկու բոքոն էր բերում և տալիս Բաֆֆու կնոջը:

## Ինչու դստերը կնության չտվեց

1893 թվականի սովը ծանրորեն նստել էր Հայաստանում: Ոստելու հաց շէին գտնում նաև Սպեր գավառի Խողաղբյուր գյուղում: Բայց ի՞նչ կարող ես անել, որ գյուղի երիտասարդներից մեկը՝ Արիստակեսը, ինչպես ասում են՝ ոտքը մի կոշիկի մեջ էր դրել և ստիպում էր, որ իր հարսանիքը շնորհածգվի:

Հարսնացուի ծնողները շէին համաձայնում: Երբ Արիստակեսը շարունակեց համառել, աղջկա Գայրը կանչեց նշան ու ասաց.

- Ձեր տանն ի՞նչ եք ուտում:
- Դեսից-դենից, ապուր-մապուր:
- Հա՛ց, հա՛ց կա՞:
- Ո՞չ: Բայց մեկ-մեկ սոված ենք լինում, մեկ-մեկ կուշտ:
- Ես չեմ կարող իմ զստերը կնության տալ այն մարդուն, որն ուտելու հաց շունի և կուշտն ու քաղցը իրարից չի տարբերում, — ասաց աղջկա հայրը և իր տնից դուրս հանեց Արիստակեսին:

## Ինչ իմանաս

1899 թվականի ամռան նրաշտը խանձում էր Գանձակ քաղաքի շրջակա գյուղերի արտերը: Խաշակապ, Բանանց, Բարում և ուրիշ գյուղերի մարդիկ ուտքով գնում էին հեռավոր Արթոն լեռը, նրա վրայից մի քար վերցնում և բերում ու գցում իրենց գյուղի գետը, որ անձրև գա:

Անձրև շէր գալիս, իսկ շոգն ավելի ու ավելի էր հուրհրատում:

Մի անգամ դեպի Արթոն գնալիս մի քանի գյուղացիներ հանդիպեցին գրող Ղազարոս Աղայանին:

Հարցուիրձ անելուց հետո Աղայանը նրանց ասաց.

- Որ Արթոն լեռն էլ շալակեք՝ միևնույն է անձրև չի գա:
- Ավելի լավ է՝ ետ դառնաք, ձեր բանին ու գործին գնաք:
- Մեր արտերը շորանում են, այս տարի մենք սովից կմեռնենք:

— Զեք մեռնի, անձրև կդա:

— Ե՞րբ:

— Տասներեք օր հետո,— պատասխանեց զրողը:

Գյուղացիները լսեցին Աղայանին և վերադարձան իրենց տները: Իրոք, տասներեք օր հետո անձրև տեղաց:

Պատահական զուգաղիպություն էր: Իսկ գուցե Աղայանը կուհել է հեռազգացությամբ: Ի՞նչ իմանաս:

## Դերջանի ցորենը

Մի ժամանակ Հայաստանում ամենաշատ ցորենն աճում էր Բարձր Հայք նահանգում, ամենալավ ցորենը՝ Բարձր Հայքի Դերջան գավառում:

Մարիամ լեռան կատարից դիտելիս թվում է, թե Դերջանի դաշտը ցորենի մի մեծ արտ է: Գավառի Բագառիճ, Սաղկար, Խլածոր հնամենի գյուղերում մարդիկ դարերով ցորեն հացից բացի ուրիշ բան չեն կերել:

Բագառիճեցի Գեղիկը, Գեղիկի որդի Տողանը, Տողանի որդի Ջաջուռը, Ջաջուռի որդի Պոռշը, Պոռշի որդի Մեծիկը, Մեծիկի որդի Ճերմակը, Ճերմակի որդի Մանուկը, Մանուկի որդի Կեցունը, Կեցունի որդի Խաչատուրը, Խաչատուրի որդի Ջգոնը մեկական դար ապրելով 900 թվականը կամրջել են 1900-ին: Տասը մարդ անցել են հազարամյակի մի ծայրից մյուսը:

— Մեկական դար ապրում են նրանք, ում ժպտում է բախտը, — մի անգամ ասել են Ջգոնին:

Ջգոնը պատասխանել է.

— Ինձ ու իմ տոհմանդամներին ժպտացել է ոչ թե բախտը, այլ մեր՝ Դերջանի հացը: Մեր ցորենն ուրիշ ցորեն է: Նրա մեջ և՛ հաց կա, և՛ կաթ, և՛ յուղ, և՛ մածուն, և՛ կանաչեղեն, և՛ մեղք, և՛ ամեն տեսակ սնունդ:

## Կակաչները հին հնձվորներ են

Հայաստան աշխարհում ամենաշատ կակաչներն աճում են իշեանի շրջանում: Այդ պատճառով էլ Աղստեր անվանում են Կակաչների հովիտ:

Ինչ հրոսակ ասես, որ չի մտել հեքիաթային այս ձորահովիտը: Հայը կովել է, զոհվել և իր սրբազան արյունով ներկել այս

Հողը։ Ասում են՝ այդ արյունից են ամեն տարի ծնունդ առնում կարմրաթերթ կակաչները։ Ամեն մի կակաչ հայրենիքի համար զոհված մի զինվոր, մի հին հնձվոր է, որ ժամանակին կիսատ է թողել իր գործը։ Հիմա հարություն է առել արտերի կողքին և ուզում է ավարտել իր հունձը։

## Հացլաթ

Մեր թվականությունից առաջ վեցերորդ դարի սկզբում Տիգրան անունով մի հայ թագավոր է եղել։ Նրանից առաջ հայ թագավորներ են եղել, բայց ոչ մեկը Տիգրան անունը չէր կրում։ Նրա մասին քերթողահայր Մովսես Խորենացին գրել է. «Նա խաղաղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուղով ու մեղրով։ Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով, քաղը նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր»։

Ահա այս Տիգրանը արծվենի քիթ ուներ և ոստանիկ պահվածք։ Մի անգամ նրա՝ սենեկապետը գահասրահ մտավ, արքային ցուցանեց եղբերն ասեղնազործած կերպասե մի գեղեցիկ լաթ, և ասաց.

— Տե՛ր իմ, պատրաստ է, գեղեցիկ սփոռց է։

— Ինչ ասացի՞ր, սփոռց։

— Այո՛, տիրակա՛լ, սա սփոռց է, որով կարելի է ծածկել սեղանը և նրա վրա դասավորել ուտելիքներն ու ըմպելիքները։

— Բայց ամենից առաջ ի՞նչ պիտի դնես սեղանի վրա։

— Հաց։

— Այո, սենեկապետ, սեղանի վրա նախ պիտի հաց դնել, բոլոր ճաշկերութներն սկսվում ու ավարտվում են հացով, հետեւապես սա սփոռց չէ, այլ՝ հացլաթ։ Մյուս բոլոր ուտելիքները կարելի է զետնին թափել և նոր ուտել, իսկ հացին պիտի արձանին հատուցել, նրա՝ զլուխը շպետք է դիպչի շոր տափին։ Սփոռցը կամ լաթը նախ և առաջ հացի համար է, մյուս ուտելիքները կարող են նրա կողքին լինել կամ Աինել, հետևապես սա պետք է կոչել հացլաթ և միայն՝ հացլաթ։

Մինչև 1900-ական թվականները, այսինքն՝ համարյա երկու հազար հինգ հարյուր տարի շարունակ հայր ճաշասեղանի վրա գցվող շորի այդ կտորին հացլաթ է ասել:

## Ալիշանի վերջին բառը

Մեծերի մեջ մեծ գիտնական Ղևոնդ Ալիշանը ծնվել է Կոստանդնուպոլսում և իր կյանքի մեծ մասն անցկացրել Վենետիկի Սուրբ Ղազար կղզում։ Ապրել է ութառնմեկ տարի, բայց բնավ չի եղել Հայաստանում։ Սակայն այնպես է նկարագրել իր հայրենիքը՝ ասես ոտի տակ է տվել ամեն մի քար ու թուփ։

Ալիշանը մի եղբայր ուներ Սերովբե անունով, որն ապրում էր Կոստանդնուպոլսում։ Սա հնագետ-դրամագետ էր և երազում էր հայկական հնագիտական թանգարան հիմնել։

Երկու եղբայրները շատ էին սիրում միմյանց։ Մահից մի տարի առաջ Ալիշանը նամակ գրեց եղբորը՝ խնդրելով, որ նա ուղարկի հայկական հողի վրա թիված լավաշ։ Սերովբեն ելավ, Կոստանդնուպոլսից հասավ Վանա լճի ափ, այդտեղ լավաշ թխեց և ուղարկեց Վենետիկ՝ եղբորը։ Ստանալով հայկական հացը Ալիշանն ասաց.

— Իմ կյանքը մի տարով էլ կերկարի։

Նրա մարգարեռթյունը կատարվեց։ Նա ապրեց ևս մի տարի։ Մահից առաջ էլ միայն մի բառ արտասահնեց։

— Լավա՞շ։

## Փոխինձ

Պաշարված ամբոցում հացն սպառվել էր, Պարկերի մեջ լրցված ալյուրից հաց թխել չէին կարող, որովհետև ոչ ջուր կար, ոչ թոնիր։ Հնարամտությունը ծնվում է նեղ օրում։ Պաշարվածները սկսեցին սաջի վրա ալյուր բռվել։ Այդպես ստեղծվեց հայկական փոխինձը։

Հետո շինականի ոչ մի երեխա շմեծացավ առանց քիթ ու մոռվթը փոխինձի մեջ թաթախելու։

Համեղ բան է փոխինձը։ Բայց ավելի համեղ է դառնում, երբ այն խառնում են մեղրի կամ շաքարի ջրով և կլոր գնդիկներ շինում։

Իսկ գիտեք, որ փոխինձից նաև խաշիլ են պատրաստում։

## Որդան կարմիրով հացը

Արարատյան դաշտը մի անհատնում շտեմարան է, որի բարիքներով պոկեպունկ լցվում ևն հայոց մառանները։ Մի ժամանակ այդ բարիքներից ամենաթանկն ու Հայաստանին համաշխարհային ճանաչում բերողը եղել է որդան կարմիրը։ Այդպես են կոչվում Արարատյան դաշտի մի տեսակ սեղերի վրա աճող միջատները և կարմիր այն ներկը, որ ստանում են այդ միջատները եփելով։ Ոչ մի կարմիր ներկ չի կարող մրցել որդան կարմիրի հետ։ Դրանով ներկվել են արօայական պարեգուտները և հայրապետական նախորդութեան նախորդութեան մեջան են սարքել և գրել հայոց մագաղաթյա մատյանները։ Հետո այս աշխարհի հզորները իրենց հրովարտակներն ու վավերագրերը սկսել են ստորագրել հայկական որդան կարմիրով, որով հիմք է դրվել կարմիր թանաքով ստորագրությանը։ Գիտնականները հավաստում են, որ հայկական որդան կարմիր ներկը իր պայծառությունը պահում է հարյուր հիսուն հազար տարի։

Մեր նախնյաց համար թանկ բան է եղել որդան կարմիրը։ Ամենաթանկ հյուրին դիմավորելիս հայը նոր թխած հացի վրա որդան կարմիր է քսել և իր սրտաբացությունը հավաստել՝ մատուցելով նրան Հայոց աշխարհի երկու անզուգական բարիքը՝ հացը և որդան կարմիրը։

## Հացի տաշտը

Դարանաղի գավառի Թորդան գյուղում, որ գտնվում էր Սեպուհ լեռան արևելյան լանջին, երկու-երեք տարին մեկ մի ծուխ էր ավելանում։

Նորաստեղծ ընտանիքը իր տունն էր կառուցում և հին երդիկների ծխափնջին խառնվում էր նորը։

Բայց մինչև նորաշեն տան մեջ քնելը՝ տանտերը կառուցել էր տալիս իր հացի տաշտը և դնում մառանում։ Թորդանցիք ունեին աշխարհի ու մարդկանց կյանքի մասին իրենց շափանիշը՝ տունն սկսվում և տուն է դառնում հացի տաշտով։

## Հարյուրութանամյա Ընձակի խոսքը

Բաբերդ՝ բաշաքում հնձակ անունով մի մարդ առանց հիվանդանալու և աշքերի լույսը կորցնելու ապրեց հարյուր ութսուն տարի:

Մահից առաջ հնձակն ասաց.

— Ես քիչ ապրեցի, որովհետեւ շկարողացա ամեն օր ցորեն Հայց ուտել:

## Հովհաննես Թումանյանի երազը

Ասում են՝ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը հեռազգաց էր: Մի անգամ նա երազում տեսնում է, որ իր հայրենի Դսեղ գյուղի արտերը կծղել են: Առավոտյան վեր է կենում և Թիֆլիսից հասնում Դսեղ:

Գյուղի ծայրում բանաստեղծին առաջինը ողջունում է ծերունի Վարազդատը:

— Ես ո՞ւր ես շտապում, Հովհաննես, ի՞նչ է, աշխարհում բա՞ն է փոխվել:

— Զէ՛, Վարազդատ ապի, եկա տեսնեմ ինչ կա, ինչ չկա գյուղում: Հունձը դեռ չե՞ք սկսել:

— Շուտ է, Հովհաննես, հունիսը դեռ նոր է կիսում:

— Իսկ ես կարծում էի, թե հնձելու ժամանակն անցել է և արտերը կծղել են:

— Հովհաննես, դու հենց էնպես բան չես ասի, գուցե իրո՞ք արտերը կծղել են, և մենք գլխի շենք ընկել:

Հետո ծերունի Վարազդատը բանաստեղծի հետ գնում է և ստուգում մոտիկ մի արտ:

Այ քեզ բա՞ն: Հասկերը կծղել էին:

— Հովհաննես, դու Թիֆլիսում նստած ո՞նց իմացար, որ մեր արտերը կծղել են:

— Դե իմացա, էլի՛ Վարազդատ ապի, իմացա՞:

— Այ տղա, դու մարգարե՞ս ես, թե մեր Հովհաննեսը:

## Հացտուն

Ալաշկերտի դաշտում մի գյուղ կա Խաստուր անունով: Հնում այն կոչվել է Հացտուն: Հացառատ լինելու համար է այդպիսի

անուն ստացել։ Ալաշկերտում ամեն գյուղ մեկ կամ երկու ջրաղաց ուներ, իսկ Հացտունն ուներ տասը ջրաղաց։ Ի՞նչ աղուն էին աղում այստեղ։ Յուրաքանչյուր հացտունցի յոթանասուն տարվա համար ամբարած ցորեն ուներ։ Ալաշկերտցիք այդպիսի առած ունեն։

— Եթե տիեզերքը երաշտից խանձվի՝ Հացտունն իր հացով կպահի աշխարհը։

## Երկու Խորվիրապ

Արտաշատի Խորվիրապը հնում արքունի բանտ՝ հանցանայ խուց է եղել, հետո դարձել է ուխտատեղի։ Մի ուրիշ Խորվիրապ էլ եղել է Կարին քաղաքի հյուսիսարևելյան կողմում, Մուտուրկա գյուղի մոտ Սուրբ Լուսավորիչ վանքում։ Արտաշատի Խորվիրապի կողքով առանց գոշունի հոսում է ալեհեր Արաքսը, իսկ Մուտուրկա գյուղի Խորվիրապի կողքին Գոշգոշան ջրվեժն է։

Երկու Խորվիրապներն էլ ուխտատեղիներ են։ Բայց Մուտուրկայի Խորվիրապն ուներ իր գաղտնաբանը։ Շինականները այստեղ ցորեն էին ամբարում «սև օրվա» համար։ Նրեմն թշնամին հարձակվում ու կողոպտում էր Մուտուրկան՝ կարծելով, թե սովոր մատնեց ամբողջ գյուղը։ Այդ ժամանակ էլ գյուղացիները բացում էին Խորվիրապի գաղտնի շտեմարանը։

## Արճակի ու Խառակոնիսի վեճը

Վասպուրականի Արճակ լճի հարավարևելյան ափին մի գյուղ է եղել Արճակ անունով։ Սրա կողքին Խառակոնիս գյուղն էր, որտեղ աճում էին գեղեցիկ բարդիներ։ Խառակոնիսցիները ընությունից օժտված են եղել սքանչելի ձայնով։ Մինչև 1915 թվականը, համարյա շորս հազար տարում, այս գյուղում շէր ծնվել մի մարդ, որ երգելու շնորհք շունենար։ Ամենքին թվում էր, թե այդ բնատուր ձայնի համար խառակոնիսցիները պարտական են իրենց գեղասաղարթ բարդիներին։ Գուցե իրոք Խառակոնիսի բարդիները ձայնատո՞ւր են։ Եթե այդպես չէ, ինչո՞ւ հարեան Արճակ գյուղում ոչ մեկը կարգին ձայն շունի։

Բայց Արճակն էլ հայտնի է եղել իր սրսուռ ցորենով։ Արճակի ճերմակաթույր ու անուշ հացի բույրը հասնում էր մինչև Խառակոնիս։

Արճակեցիներն ու խառակոնիսցիները սիրում էին հեղնել միմյանց:

Խառակոնիսցին արճակեցուն ասում էր.

— Եկեք մեր բարդիների շվաքի տակ քնեք, որ ձեններդ դուրս գա փորներիցդ:

Արճակեցին էլ խառակոնիսցուն պատասխանում էր.

— Եթև ձեր քիմքին մեր հացի հոտը շդիպչի՝ դուք ոչ միայն լրդել, այլև խոսել էլ շեք կարող:

## Հազար ջրաղացպան մի գյուղում

Հայիս գետի վերին հովտում, Սեբաստիա քաղաքի կողքին, Մայրագոմ լեռան ստորոտում, մինչև 1915 թվականը Դավրա անռնով մի գյուղ է եղել: Սա միակ գյուղն էր աշխարհում, որի բոլոր տղամարդիկ զբաղվում էին ջրաղացպանությամբ: Հալիս գետի ափերին գործող հազար ջրաղացների բոլոր ջրաղացպանները դավրացիներ էին: Նրանք նուրբ ալյուր պատրաստող վարպետներ էին:

Հալիսի հովտում ասում են.

— Ո՞ր գյուղից ես:

— Դավրայից:

— Դավրան ո՞րն է, հե՞ր օրհնած, դե էնա ասա՝ ջրաղացպանների գյուղից ես, էլի՛:

## Անհատակ ցորնահորը

Բարձր Հայք նահանգի Բասեն գավառում մինչև 1915-ը ամեն տարի հավաքվել է հարյուր հազար տոննա ճերմակ ու կարմրահատընտիր ցորեն: Մեծ շտեմարան էր Բասենը:

Հազար տարի առաջ բասենցի գրիշը մագաղաթի վրա դրոշմել է. «Եվ տունն Հայկա ուներ գավառ մի Բասեն անունով: Սա հայոց անհատակ ցորնահորն է: Բասենը կարող է կերակրել բոլոր հայերին՝ եթև նույնիսկ յոթ տարին մեկ երաշտ լինի մեր աշխարհում»:

## Ալյուր

Վասպուրականի Տոսպ գավառում, Վան քաղաքից հյուախ արևմտաք, մինչև 1915 թվականը Ալյուր անոնզ մի գյուղ է եղել:

Դա Ալյուր անոնզ միակ գյուղն էր: Այդ հացավետ գյուղում պատրաստում էին և նաշիճ, և խորակ, և ուրիշ տեսակ ալյուրներ: Գյուղացիները պաշտում էին ալյուրը, նրանց թվում էր, թե ալյուրից է շաղախված նաև աստված: Մի հմայիշ, արբեցնող հոտ ուներ Ալյուրի ալյուրը:

Ասում են՝ այս գյուղից երբ մեկը հարս էր զնում հարեան գյուղ՝ հարսանիքի առջեկց որպես օժիտ տանում էին մի մեծ աման նաշիճ, որով ուզում էին հավաստել, թե հարսն ընտիր է, ինչպես նաշիճը՝ բոլոր ալյուրների մեջ:

Դրա համար էլ գյուղը կոչվել է Ալյուր:

## Խոփեր

Մինչև 1915 թվականը Մշո գավառում մի գյուղ է եղել Խոփեր անոնզ, ուր պատրաստում էին ամենալավ խոփիները: Հեռու ու մոտիկ վայրերից մարդիկ գալիս և արորի խոփի էին առնում այստեղից: Խոփերցիներն ամենքին համոզել էին, թե իրենց խոփիներով հերկած արտերին ոչ երաշտ է դիպչում, ոչ էլ մորեխա:

Մի տարի Խոփերի շինական Սիրադեղի արտի բերքը կիսատպուտ դուրս եկավ:

— Զեր խոփի զորությունն ո՞ւր մնաց, — կատակով հարցնում էին հարեան գյուղերի մարդիկ:

— Այս խոփը բաղեցի վարպետ է սարքել, մեր խոփն էսպես չէր անի, — ճարահատյալ մեղքը՝ ուրիշի վրա է գցում Սիրադեղը:

## Վարդաթիլ

Հայերենի տարեց բառերից է: Նշանակում է բլուր: Մինչև 1915 թվականը Խարբերդի դաշտում մի գյուղ է եղել Վարդաթիլ անոնզ, որ գտնվում էր վարդերի բլուրի վրա: Վարդաթիլ գյուղն իսկական վարդաթիլ-վարդաբլուր էր: Անուշ համ ուներ այստեղի ցորենը, իսկ թութը գովական էր համայն Հայաստանում:

Ոչ մի տեղ խմորն այնպես չէին հունցում, ինչպես Վարդա-

**Թիլում:** Հարս ու աղջիկ դաշտերից ծաղիկների փնջեր էին հյուսում, բերում ու դնում խմորի տաշտի մոտ և սկսում ալյուր մաղել ու հունցել։ Վարդաթիլցի կանայք հավաստում էին, թե ծաղիկների բուրմունքը անցնում է խմորին։ Դրա համար էլ շատ քաղցր էր Վարդաթիլի հացը։

## **Գաղթելիս ճանապարհի երկու կողմում ցորեն են ցանում**

Հայ ազգի անվանադիր Հայկի հայր Թորգոմը մի կովի ժամանակ պարտվում է։ Թշնամին գերում է Թորգոմին ու նրա տոհմը և քշում հեռացնում բնօրրանից։ Հայրենի եզերքներից հեռանալիս Թորգոմը ճանապարհի աջ ու ձախ կողմերում տեղտեղ ցորեն է շաղ տալիս։

Մի քանի ամիս անց թշնամին արձակում է Թորգոմին ու նրա մարդկանց՝ համոզված լինելով, որ նրանք կմոլորվեն ճանապարհին և չեն կարող վերադառնալ տուն։ Բայց հենց այդ ժամանակ աճել ու հասկակալել էին Թորգոմի շաղ տված սերմերը։ Եվ թորգոմազուններն այդ ուղեցույց հասկերով վերադառնում են տուն։

Այդ ժամանականից հայերը իրենց գաղթի ճամփաների աջ ու ձախ կողմերում ցորեն են շաղ տվել՝ հուսալով, թե մի օր տուն պիտի վերադառնան։ Շատ ամառներ ու աշուններ են անցել, տուն կանչող ճամփաների հասկերը կծղել են, թափվել գետնին, վայրենացել։ Հիմա էլ հայկական վայրի հասկերը կանչում են իրենց տերերին։

## **Ինչու են կանայք բարձր կրունկներով կոշիկ հագնում**

**Բարձր կրունկներով կոշիկները երեան են եկել միջնադրում։ Այդ տեսակ կոշիկների հայրենիքը Փարիզն է։**

Բայց ինչո՞ւ պիտի կինը իր կրունկները բարձր պահի և մարմնի ծանրությունը հենի ոտքերի թաթերի վրա։ Դրա պատճառը եղել է փողոցների կեղտոտությունը։ Փարիզի փողոցների մեծ մասը սալահատակված չէր և մարդիկ մի փողոցից մյուսն անցնելու ժամանակ երբեմն խրվում էին ցեխի մեջ ու դուրս գալիս ամբողջովին կեղտոտված։ Եվ ահա մի քանի հնարագետ

կոշկակարներ ոտքը գետնից բարձր դնելու համար հնարեցին բարձր կրունկները, որը հարմար միջոց էր ցեխոտ փողոցներով անցնելու համար։ Բոլոր փարիզեցիները, կին թե տղամարդ, սկսեցին բարձր կրունկներով կոշիկ հագնել։

Բարձրակրունկ կոշիկը նորածնությունների մայրաքաղաք Փարիզից տարածվեց աշխարհի բոլոր կողմերում։ Հետագայում՝ տղամարդիկ դեն նետեցին իրենց բարձրակրունկները և հագան սովորական կոշիկներ։ Իսկ կանայք հավատարիմ մնացին բարձրը կրունկներով կոշիկներին, իհարկե, ոչ թե ցեխը չկոխելու, այլ՝ նուրբ երևալու համար։

Կանացի բարձրակրունկը հասավ նաև ինուս գավառի Արու գյուղը։ Բայց հարյուրավոր տարիների ընթացքում արոսցի ոչ մի կին այդպիսի կոշիկներով արտերի մոտ չերևաց։

— Եթե աստված տեսնի, որ կինը արտը մշակում է ոտի թաթերի վրա հենված, այսինքն՝ օրորալով-շորորալով, ոչ մի հասկ չի բուցնի և մենք կմնանք հացի կարոտ, — ասում էին Արոսի կանայք և բարձրակրունկ կոշիկները հագնում տանը, հարսանիքի կամ ուրիշ հանդիսությունների ժամանակ։

## Սոմին

Մինչև 1915 թվականը Ստրաբոնի և Ամիրդովլաթ Ամասիացու ծննդավայր Ամասիա քաղաքի յուրաքանչյուր հայ տուն ուներ իր փուռը։ Մի շաբաթվա համար թխում էին սոմին կոշվող մեկուկես կիլոգրամանոց անուշահոտ նկանակներ։

— Տնից պիտի հացի հոտ գա, — ասում է ամասիացին, — չի կարելի թողնել, որ տունն առանց հացի հոտի մնա թեկուզ մի օր։

Սոմինը տուն մտնողի կամ տան կողքով անցնողի ոռւնգը խուտուտ է տալիս ընդամենը մի շաբաթ։ Ամասիացին սովորաբար սոմինը թխում է կիրակի օրը։ Տան հացի հոտով երբեմն նա կարող է որոշել, թե այդ օրը շաբաթվա ո՞ր օրն է։ Հենց որ հացի հոտն սկսում է նվազել նա առանց սխալվելու աստամ է։

— Այսօր շաբաթ է, վաղը կվառենք փուռը։

## Գյուղ Կորեկ անունով

Ինչ անուն ասես, որ հայերը չեն տվել իրենց գյուղերին, Մինչև այժմ էլ Արցախում մի գյուղ կա Հարավ անունով։ Դե

արի իմացի՛ց, թե ի՞նչու է այդպես կոչվել: Տայքում չէ մի գյուղ և եղել Աշունք անունով: Գարուն ու Ամառ անուններով ավաններ են եղել Տմորիքում: Զմեռոց անունն է կրել Ուտիքի ագարակներից մեկը:

Հին մագաղաթը պահել է այդ զարմանահրաշ անուններով գյուղերից մեկի պատմությունը: Պարտավ քաղաքի մոտ մի գյուղ է եղել Կորեկ անունով: Հայոց Վաշագան Բարեպաշտ արքայի հրամանով այդ գյուղի մարդիկ պարտավոր էին շատ կորեկ ցանել: Կորեկը դիմանում էր երաշտին և հացապակաս տարում գյուղը դառնում էր շրջակա գյուղերի հացամբարը:

## Գլուխ

Կորեկանման գրլգըլ խոշորահատիկը երևի ամենից լավ աճում է Սասունում: Նրա արտը վարում են չորս-հինգ անգամ, որպեսզի հողը փխրանա լավագույնս: Դրա շնորհիվ գրլգըլը այնքան արագ էր աճում, որ տասնհինգ օրում նրա ցողունը բարձրանում էր կես մետրից ավելի:

Հավանաբար ամենագծվար բանը գրլգըլի հասունացած արտերի պաշտպանելն է ճնճղուկներից ու արջերից: Գրլգըլի հասունացած հասկերը նմանվում են ճնճղուկների: Արտերին նայելիս թվում է, թե ցողունների վրա ճնճղուկների երամներ են նստած: Այդ պատճառով էլ ճնճղուկները շեն հեռանում գրլգըլի արտերից:

Գրլգըլի հնձի օրերը մոտենալուն պես սասունցիք տնովատեղով արտապահ էին դառնում: Նրանք պարսատիկով ու ճիպոտով կոփիվ էին մղում ճնճղուկների դեմ, իսկ զիշերները զինված պահակ կանգնում արտերի եզրերին և խանգարում, որ արջերը արտ մտնեն: Սասունի արջերն էլ ամենից շատ սիրում էին խաղալ գրլգըլի ցողունի հետ:

Սեպտեմբերին գրլգըլը հնձում էին, ամբարում ճերմակ հատիկները, դա սասունցու համար հացի ամենալավ պաշարն էր: Սասունում աճում է կարմիր, սև և սպիտակ կորեկ: Բայց սացունցու համար գրլգըլը կորեկից բարձր է:

1915-ի կոտորածներից մազապուրծ մի սասունցի Եվրոպայում հանդիպում է նորվեգացի նշանավոր ճանապարհորդ ու դիտնական, մեծ մարդասեր Ֆրիտիոֆ Նանսենին:

— Ի՞նչ է անունդ, — հարցնում է նանսենը:

- Սանասար:
- Որտեւացի՞՞ ես:
- Երկրից, Սասունի Կապածգետ գյուղից,— ասում է Սանասարը և բացելով ուսապարկը ցույց տալիս նեղ օրվա համար պահած գըլգըլի սերմացուն:
- Սա ի՞նչ է:
- Գըլգըլ:
- Հացահատի՞կ է:
- Այո՛:
- Ոչի՞նչ, ես կօգնեմ քեզ, Կհաստատվես մի այնպիսի երկրում, որտեղ դրա փոխարեն ցորնահաց կուտես:
- Գըլգըլն ինձ համար ավելի համով է, քան ամենալավ ցորենը:
- Դե՛, եթև ցորեն չես ուզում, քո այդ գըլգըլը կցանես:
- Բայց սա ուրիշ տեղ չի աճի, գըլգըլը միայն Սասունում է գըլգըլ,— և Սանասարն սկսեց գըլգըլ-գըլգըլ արտասուք թափել:

## Մեր քաղցր հաց աշխարհն ուտեր՝ չեր կշտանա

Լուսաքնար բանաստեղծ Վահան Թեքեյանը եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում հանդիպեց լայնաթիկունք մի հայ բեռնակրի, որը քայլում էր ծանր բեռան տակ ու երգում.

Մեր քաղցր հաց աշխարհն ուտեր՝ չեր կշտանա...

Բանաստեղծը մոտենում է և ուղեկցելով բեռնակրին, զրույցի բոնվում նրա հետ:

- Երկրի՞ց ես:
  - Այո՛:
  - Ե՞րբ բնավեր եղար:
  - Մի տարի առաջ:
  - Այդ ի՞նչ երգ է, որ միայն մի տողը կերգես:
  - Ես եմ հորինել:
  - Շարունակությունն ինչո՞ւ չես երգում:
  - Շարունակություն չունի, մի տող է:
  - Բայց ինչո՞ւ ես բեռան տակ երգում:
  - Այս օտար ափերում ես ուժ կառնեմ միայն մեր հացը.
- Հիշելով:

## Վարդան Մախոխյանի գլուխգործոց կտավը

Եթե Հովհաննես Այվազովսկին չիներ՝ աշխարհի ամենամեծ ժողովանկարիչը կհամարվեր Վարդան Մախոխյանը:

Հաճախ մեծերի և երջանկության բաժինն է մեծ լինում, և դժբախտության: Ճակատագիրը դժբախտության ահռելի բաժին հասցրեց Վարդան Մախոխյանին: Մեծ եղեռնի ժամանակ նրա հարազատները գոհվեցին Տրապիզոնում:

1920-ական թվականներին աշխարհի բոլոր որբ երեխաների կեսից ավելին հայեր էին, որոնք ապաստանեցին հիսունից ավելի երկրներում: Վարդան Մախոխյանը նիցցայում տեսալ մի քանի հայ որբ երեխաների և քիչ մնաց թե հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասի պես խելքը թոցներ:

Սովանկարիչը մոտեցավ ու հարցրեց առաջին որբին.

— Ի՞նչ կուզենայիր?

— Հաց:

Երկրորդին դիմեց նույն հարցով.

— Հաց:

Երրորդն ասաց առանց հարցումի սպասելու.

— Հաց:

Մախոխյանը, ժամանակ չկորցնելով, որբերի ապաստարանից ասես մի ոստյունով իրեն տուն գցեց: Այս ու այն կողմ տարավ ձեռքը, բայց դրամ չգտավ: Հետո աշքն ընկավ իր գլուխութուց նկարին: «Տրապիզոնի ծովափը» լուսաղող, չնաշխարհիկ մի գործ էր, որին նայելիս թվում էր, թե ամբողջ Սև ծովը երևում է Տրապիզոնից:

Կտավը նոր էր՝ ավարտել և մտադիր չէր ոչ վաճառելու, ոչ էլ որևէ մեկին զիշելու: Մի քանի օր առաջ մեծահարուստներից մեկը մեկ միլիոն ֆրանկ առաջարկեց նկարը գնելու համար, բայց Մախոխյանը մերժեց:

Հիմա, երբ մտապատճերում միայն հայ որբերն էին, չիմացավ, թե ինչպես մոռացության տվեց իր վճիռը և, կտավը վերցնելով, դուրս թռավ փողոց:

Վազելով հասավ երկար-երկար փողոցի ծայրը և մտավ մի փուռ: Տերը զարմացած նայեց քրտնաթոր մարդուն և հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում:

— Վաճառում եմ, — ասաց ու ցույց տվեց կտավը:

— Լավ նկար է երևում, ի՞նչ տամ:

— Չգիտեմ:

— Ֆրանկ չունեմ, սուս դիմաց քսան բոքոն կտամ, համաձա՞յն ես:

— Այու:

Մախոխյանը բոքոնները տարավ ու նվիրեց հայ որբերին: Նրան թվաց, թե այդ գիշեր աշխարհի բոլոր որբերը կընեն կուշտ փորով:

## Հայաստանի գերբը

1921 թվականի սեպտեմբերին Հայաստանի լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ինքնությունը խորհրդանշող գերբ ստեղծելու գործը հանձնարարեց գեղանկարիչ Մարտիրոս Սարյանին, որն ընդամենը մեկ ամիս առաջ Ռուսաստանից եկել և մշտական բնակություն էր հաստատել Երևանում:

Մարտիրոս Սարյանն իսկույն գործի է անցնում: Շուտով պատրաստվում է գերբի գծագիրը և արժանանում Հայաստանի կառավարության հավանությանը: Գերբի գծագրի գրաֆիկական աշխատանքը կատարում է Հակոբ Կոջոյանը:

1921 թվականին էլ Հայաստանի գերբը կյանք է մտնում և դրոշմվում հանրապետության պետական դրոշակի, կնիքների, վավերագրերի ու փաստաթղթերի վրա: Այն մինչև այժմ էլ ոչ մի փոփոխության չի ենթարկվել:

Մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը մի առանձին հպարտությամբ էր հիշում հայկական գերբի ստեղծման պատմությունը:

— Հաճախ,— ասում էր Սարյանը,— երբ խոսում են իմ արվեստի մասին, բոլորովին մոռանում են մեր գերբը: Բայց ճշշմարտությունն այն է, որ իմ ամենամեծ ստեղծագործությունը ես մեր հանրապետության գերբն եմ համարում: Ոչ մի գործ այնպիսի լրջությամբ ու մեծագույն պատասխանատվությամբ չեմ կատարել, ինչպես դա: Ինձ՝ արվեստագետիս, այժմ էլ անսահման հուզմունք է պատճառում, երբ մտաբերում եմ, որ հայրենի հողի վրա կերտած իմ առաջին ստեղծագործությունը եղել է մեր պետական գերբը:

— Ամեն ազգ ու ժողովուրդ իր առասպելական նահապետն է ունեցել,— շարունակում է Սարյանը, — նա իր տոհմի համար

բնակության վայր է ընտրել աշխարհի այս կամ այն մասը՝ Մենք մինչեւ այժմ էլ ասում ենք, որ ուրիշ ազգերի նահապետներն ավելի լավ ընտրություն են կատարել, քան մեր Հայկ նահապետը։ Ինչո՞ւ է նա հանգրվանել այս քարաստան երկրում։ Ըստ երեսութին Հայկ նահապետը օժտված է եղել բանաստեղծական խառնվածքով, հրապուրվել է Մասիսի վեհաշուք տեսարանով և վրան զարկել այնտեղ։ Նրա այդ երազային խառնվածքը հավանաբար ժառանգել են բոլոր հայերը։

Մասիսը Հայաստան երկրի հավերժության խորհրդանիշն է։ Ես մտածել եմ, որ այդ խորհրդանիշն ուժ կտա նորաստեղծ հանրապետությանը ոտքի կանգնելու, ամոքելու իր վերքերը, հավատ կներշնչի վաղվա հանդեպ, որ ճերմակափառ Մասիսը կհրապուրի և տուն կկանչի իր տարագիր որդիներին ու կասի՝ «Եյստեղ է համայն հայության միակ հայրենիքը»։ Հայաստանի համար բնորոշ է նրա տիրոջ՝ հայ ժողովրդի ստեղծարադոգին և հարատեկլու, հավերժելու գաղափարը։ Մեր գերբի վրա, հնգաթե աստղի հետ, պատկերված են Հայկական լեռնաշխարհի ընտրագույն բարիքները՝ ցորենի հասկեր և խաղողի ողկույզ։ Աշխարհում առաջին ողկույզն աճել է Մասիսի ոտքերի տակ փոված Արարատյան դաշտում։ Խաղողը միշտ մեղ հետ է եղել, Խաղողը դարձել է հայ ժողովրդի կենսունակության խորհրդանիշը։ Վաղնջական ժամանակներից Հայաստանը եղել է նաև ցորենի հայրենիք, այստեղ աճում է ամբողջ աշխարհի բոլոր ցորենատեսակների ութսուն տոկոսը։ Ցորենը Հայաստանի առատության խորհրդանշանն է։

## Արշակ Զոպանյանի պատասխանը

Լուսապայծառ բանաստեղծ ու բանասեր, հայ մշակույթի ու գրականության անդուգական գիտակ Արշակ Զոպանյանը 1920 թվականի նոյեմբերի 29-ից հետո այնպես ներծծվեց Սովետական Հայաստանով, որ թվում էր, թե նրա արյան յուրաքանչյուր կաթիլի մեջ մի Հայաստան կա։ 1922 թվականին մեծահարուստ մի հայ ի պատիվ Արշակ Զոպանյանի Փարիզի ճաշարաններից մեկում խնջույք սարքեց։

— Մի՞թե կարելի է այդքան անտարբեր լինել այս սրանշելի ճաշերի ու բմպելիքների հանդեպ, — ասաց մեծահարուստ

տը Զոպանյանին,— ինձ թվում է, թե դուք ուսում եք ոչ թե կշտանալու, այլ սովից շմեռնելու համար:

— Դուք իրավացի եք: Կուշտ փորով ես կարող եմ հաց ուտել միայն այն ժամանակ, եթե իմ հայրենիք Սովետական Հայաստանում բոլոր մարդիկ կուշտ լինեն,— պատասխանեց Զոպանյանը:

## Զորովորցիք ինչպես էին սերմ ցանում

Գուգարքի Զորովոր գավառում, որ այժմ կոչվում է Թումանյանի շրջան, հնում սերմն այնպես չէին ցանում, ինչպես հիմա: Զորովորցի սերմնացանը կապում էր գոգնոցը և կանգնում հերկի կողքին: Կինը պարկից ցորեն էր լցնում գոգնոցի մեջ և ասում:

— Մեկը հազար դառնա:

Ապա սերմնացանը հերկի մեջ բուռ-բուռ շաղ էր տալիս ցուրենը և, արտի հետ խոսելով, մեկ-մեկ ասում.

— Ա՛րտ իմ, բեղուն լինես ինչպես իմ կինը:

## Գարուսար

Սիսիանի շրջանում, Աղուղի գյուղից հյուսիս, մի բարձր լեռ կա Գարուսար անունով:

Հնում Գարուսարն անուն չուներ: Դե, սա շինական Կիրակոսի արտատեղն էր: Նա այստեղ գարի էր ցանում, գյուղում առաջինն սկսում հունձը և ստանում աշխարհի ամենալավ գարին:

Գյուղի հարուստ թաղեռուր աշքը վաղուց էր տնկել Կիրակոսի արտատեղի վրա:

— Աղքատն իր խելքից է աղքատ,— ասում էր Թաղեռուր շինականներին,— բա մարդ այդպիսի արտատեղ ունենա ու գարից ցանի: Տո՛, Կիրակո՞ս տղա, ցանում ես՝ ցանում, ցորեն ցանիր, էլի՛, ինչո՞ւ ես գարի ցանում:

Հետո այնպես եղավ, որ պարտքերի տակ ընկած Կիրակոսը ստիպված էր իր արտատեղը զիջել Թաղեռուին:

Հենց առաջին տարին հարուստը Կիրակոսի սարի վրա ցորեն ցանեց, բայց հասկերը մի մատնաշափից վեր շբարձրացան: Թաղեռուր բերք շտացավ նաև հաջորդ տարի: Բայց տասը տարի շարունակ նա սարի վրա համառորեն ցորեն էր ցանում՝ առանց մի խուրձ անելու:

Նա չեր ուզում լսել մարդկանց, որոնք ասում էին.

— Արտ կա՝ գարու, արտ կա՝ ցորենի համար է, տեղերը փոխեցիր՝ ոչ ստացածդ գարին գարու նման կլինի, ոչ ցորենը՝ ցորենի:

Հետո թաղմոսը արտատեղը վաճառեց շինականներից մեկին: Վերջինս Կիրակոսի նման սարի վրա գարի ցանեց: Հաւկերը ծփացին և շինականն առատ բերք ստացավ: Այդ ժամանակ էլ մարդիկ ասացին,

— Սա իսկական գարու սար է:

Այդպես էլ անունը կոչվեց Գարուսար:

## Ամպասար

Զի կարելի Կալինինոյի շրջան գնալ և շտեսնել Ամպասարը: Զկարծեք, թե այն միշտ ծածկված է լինում ամպերով: Ամպերն այս սարի վրա միայն մի անգամ են շաբաթներով նստել: Դա եղել է շատ դարեր առաջ: Մարդախոշոշ մի հրոսակապետ մտել էր այս հացառատ գավառը և մինչև վերջին հատիկը կողոպտում էր շինականի ունեցած-չունեցածը: Նախապես տեղեկանալով հրոսակապետի գալու մասին, մարդիկ մի քանի հարյուր պարկ ցորեն բարձեցին սայլերին և տարան ու թողեցին սարի կատարին: Երբ հրոսակապետը այստեղ հասավ, ասես հրաշքով ամպը նստեց սարի վրա և քսանմեկ օր ավաղակի աշքից ծածկած պահեց շինականների պահ տված ցորենը: Քսանմեկերորդ օրը հրոսակապետը հեռացավ, ամպերն էլ սարից վեր բարձրացան:

Այդ ժամանակվանից էլ լեռը կոչվեց Ամպասար:

## Գմբեթ

Վարդենիսի շրջանում, Կարճաղբյուր գյուղից հարավ, Գըմբեթ անունով մի սար կա: Մի ժամանակ շրջակա գյուղերի մարդիկ սարի վրայի քարայրը դարձրել էին ամբարանոց և նեղ օրվա համար ցորեն էին պահում այգտեղ: Հունձը վերջացնելուց ու կալսելուց հետո յուրաքանչյուրի հաշվով մի կայթ ցորեն էին հավաքում և մեկտեղում Գմբեթի անձավում: Դա միակ «հարկն» էր, որ գեղջուկը սրտանց էր տալիս:

Երբեմն թշնամին ասպատակում էր այս կողմերը և ամեն

ինչից զրկված մարդիկ իրենց հույսը ղնում էին գմբեթի ամ-  
րարանոցի վրա:

— Մենք մեղնից վերև երկու աստված ունենք, — ասում էին  
մարդիկ, — մեկը երկնքում է, մյուսը՝ Գմբեթի անձավում:

## Գութանաթումք

Գորիսի շրջանում Եռաբլրի սարավանդը մի գագաթ ունի  
Գութանաթումք անունով: Հեռվից նայելիս սարը նմանվում է  
գութանի:

Ասում են՝ բյուր տարի առաջ Սյունիքի առաջին տերը Սյու-  
նին, որ մի դյուցազն էր, որոշում է իր լեռնոտ երկիրը հարթա-  
վայր դարձնել: Նա մի վիթխարի գութան է սարքում և սկսում  
վարել սար ու ձոր: Կեսօրին գութանը կանգնեցնում է և հոտաղ-  
ներին ասում:

— Ես հոգնեցի, դուք հաց կերեք՝ մինչև աշքս մի քիչ կկըպ-  
ցընեմ ու վեր կկենամ:

Ասում է, թիկն տալիս ու քնում: Մինչև հիմա չի արթնացել  
Նրա քարացած գութանն է, որ այժմ կոչվում է Գութանաթումք:

## Գութանասար

Հրազդանի շրջանում, Ֆանտան գյուղի կողքին, մի լեռ կա  
Գութանասար անունով: Հազար երկու հարյուր տարի առաջ  
մարդիկ որոշեցին հերկել այս սարի լանջերը: Յորեն, գարի ու  
կորեկ ցանեցին մի քանի տարի, բայց բերք չստացան, հասկը  
գետնից չեր բարձրանում:

— Գուցե մեր ցանքերն արտեր չեն դառնում այն պատճա-  
ռով, որ մենք արորո՞վ ենք հերկում սարը, — ասացին մարդիկ, —  
հերք գութանով հերկենք՝ տեսնենք ինչ է լինում:

Ասացին, սարը հերկեցին գութանով և առատ բերք ստացան:  
Ահա թե ինչու է սարը կոչվել Գութանասար:

## Մատնաքաշ

1930-ական թվականներին էր: Երևանը նոր-նոր մայրաքա-  
ղաքի կերպարանք էր ստանում: Մի անգամ Երևանի քաղսովեսի  
գործկոմի նախագահ Արամայիս Երզնկյանը կանչեց հացթուխ  
Օգսենին և ասաց.

— Հացի նոր տեսակ պիտի ստեղծել, — այնպիսի հաց, որ արժանի լինի մայրաքաղաք Երևանին:

Ե՞՛ր շաբաթ անց Օգոստը ներկայանում է Արամայիս Երզականին և նրա առջև ընում երկարուկ, երեսին մատներով ակտուած և նախշեր քաշած մի հաց:

— Տե՛ս, այնպիսի ակոսներ Լմ արել, ոնց որ արտն է ունենում, — ասում է հացթուխը:

Երդնկյանը առնում է հացի համն ու ասում.

— Այո՛, համեղ հաց է, ակոսներն էլ գեղեցիկ են, հայ ժողովուրդը հաղար-հաղար տարի միայն ակոսի հետ է կապել իր երջանկությունը: Բայց թշնամին խանգարել է և ակոսները լըցրել մեր անմեղ արյունով: Հիմա դարձել ենք մեր բախտի, մեր հողի տերը: Մենք մեր ակոսները կդարձնենք հացավետ: Ակոսի մեջ մեր գոյության հաղարամյա խորհուրդն է, ի՞նչ կոչենք այս հացը:

— Մատնաքաշ, ակոսածն նախշերը մատներով եմ քաշել, — ասաց Օգոստը:

— Գեղեցիկ անուն է, թող մատնաքաշ կոչվի, — ասաց քաղաքագլուխը:

Այդ ժամանականից էլ Երևանի հացի գործարանները, ուրիշ տեսակների հետ, սկսեցին նաև մատնաքաշ թխել:

## Գութանաքար

Թումանյանի շրջանի Հագվի գյուղի կողքի սարի անունը Գութանաքար է: Դա շատ հին անուն է:

Սսում են՝ Եվբսինյան Պոնտոս ծովի հատակից մարդանըման մի հրեշ դուրս եկավ և ասաց.

— Ես պիտի վերջ տամ բոլոր հայերին: Նրանցից ամեն մեկը մի աստծու շափ երազանք ունի: Ի՞նչ է, ուզում են աստծո՞ւ հետ ոտք գցել:

Եվ հրեշը կանգնեց Հայաստանի եզր Պարսար լեռների վրա ու գոռաց: Բայց հայերը չվախեցան և հրեշի ոտքերը շընկան:

— Դե հիմա տեսեք, թե ես ի՞նչ կանես, — ասաց հրեշն ու մի պահ ծովամույն եղավ, ապա ջրի երես բարձրացավ մի գութանի մաճ բռնած: — Սա կախարդական գովթան է, սրանով ես

Հայոց՝ աշխարհն այնպես կհերկեմ, որ բոլոր հայերը կմնան հողի տակ:

Հերկելով, այսինքն աշխարհն ավերելով, հրեշը եկավ ու հասավ լոռի: Այստեղ նրա խոփը դեմ առավ այս լեռանն ու ջարդվեց: Այստեղից հրեշը ետ դարձավ և նորից ջրամույն եղավ Եվքսինյան Պոնտոսում: Իսկ հրեշի գութանը ջարդող սարը կոչվեց Գութանաքար:

## Խոփիիգլուխ

Նոյեմբերյանի շրջանում, Շավարշավան գյուղի կողքին, Խոփիիգլուխ անունով մի լեռ կա:

Ասում են՝ Արար անունով մի պատանի էր ապրում: Սա սիրում էր իշխանի գեղանի դստերը և ուզում էր կնուժյան առնել նրան: Բայց իշխանը այսպիսի պայման է զնում պատանու առջե.

— Ես կհամաձայնեմ իմ դստերը կնուժյան տալ քեզ, եթե դու կարողանաս կես օրում գութանով մի ակոս անել իմ գավառի մի ծայրից մյուսը:

Արարը հսկա մի գութան է շինում և բացում ակոսը: Բայց կես ճանապարհին նրա խոփը խրվում է գետնի մեջ՝ ու այլես դուրս չի գալիս: Հուսահատված Արարը գլուխն առնում ու հեռանում է այս կողմերից: Իսկ նրա գութանի գետնի վրա մնացած գլուխը քարանում է, լեռ դառնում և կոշվում Խոփիիգլուխ:

## Ներկարար

Սպիտակի շրջանում, Շաղկաբեր գյուղի կողքին, Ներկարար անունով մի լեռ կա: Տարվա մեջ մեկ-երկու անգամ այս սարը դառնում է իսկական ներկարար: Դա պատահում է այսպես: Գարնան վերջին կամ ամռանը իրիկնադեմին արևը բարձրանում է Ներկարարի գագաթը և ծածկվում ամպերի մեջ: Հենց այդ ժամանակ ամպերի քողը պատովում է յոթ տեղից և արևի յոթ ճառագայթախրձեր ծիածանի յոթ գույներով են ներկում Շաղկաբերի ցորենի արտերը: Բնության այդ զարմանահրաշ գունախաղերի շնորհիվ Շաղկաբերի արտերը դառնում են անձեռակերտ, հանճարեղ կտավներ:

## Եղիշե Զարենցն ամաչեց հացից

1934-ին՝ գրական մի ասուլիսում գրականագետ Հայկ Գյուլիքիսյանը կծու խոսքեր է ասում բանաստեղծ Եղիշե Զարենցի հասցեին:

Լսեւով այդ մասին՝ Զարենցը որոշում է հանդիպել Գյուլիքիսյանին և ավելի կծու խոսքերով պատասխանել նրան։ Այդ ժամանակներում Երևանի ամենամարդաշատ փողոցը Աբովյանն էր։ Ասենք՝ դա միայն փողոց չէր, այլ բացօթյա դահլիճ, որտեղ բոլոր երևանցիների մի կեսը ամեն օր կարող էր հանդիպել մյուս կեսին։ Հենց Աբովյան փողոցով քայլելիս բանաստեղծն ինքն իրեն ս սում է. «Ես նրան իմ ասելիքը կասեմ այս փողոցում, թող ամբողջ Երևանը տեսնի ու լսի»։

Հաջորդ օրը իր երկրպագուների ուղեկցությամբ Զարենցը դուրս է գալիս Աբովյան փողոց՝ համոզված, որ պիտի հանդիպի Հայկ Գյուլիքիսյանին։ Մկում են ետ ու առաջ քայլել և սպասել։ Վերջապես երեսում է գրականագետը՝ իր գեղեցիկ բեղերով։ Գյուլիքիսյանի ձեռքին մի թարմ մատնաքաշ կար։ Հավանաբար գնել էր խանութից և տուն էր տանում։ Զարենցի հայցքն ընկավ մատնաքաշին և ասես նրա լեզուն կապ ընկավ։

Գրականագետը սովորականի պես բարենց Զարենցին ու նրա ուղեկիցներին և շարունակեց ճանապարհը։ Երբ մի քիչ հեռացավ, բանաստեղծի երկրպագուներից մեկն ասաց.

— Վարպետ, դու քո խոսքի տերը չեղար։

— Մատնաքաշը խանգարեց, Զեմ կարող թեկուզ մի չոր խոսք ասել այն մարդուն, որի ձեռքին հաց կա։ Ես ամաշում եմ հացից, — պատասխանեց բանաստեղծը։

## Շոռբուլաղի ցորենի դաշտը հինգ հազար տարով մեծ է Քեռփսի բուրգից

1934-ին Հայաստան այցելեց ակադեմիկոս, սելեկցիոներ, հացահատիկային բույսերի աշխարհահոչակ գիտակ Նիկոլայ Իվանովիչ Վավիլովը։ Նա եղավ Շոռբուլաղ գյուղում, որն այժմ մտնում է Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջանի մեջ։ Այս գյուղի կողքին հայտնաբերվել էր վայրի ցորենի մի դաշտ, որը համաշխարհային հետաքրքրության առարկա էր դարձել։

Հուլիսի 24-ին ելույթ ունենալով Երևանի Կուտուրայի տանը, Վավիլովն ասաց.

— Շորովագի ցորենի դաշտը ամենահետաքրքրական տեղն է ամբողջ աշխարհում։ Մարդու ձեռքով ստեղծված աշխարհի յոթ հրաշալիքներից միայն եպիպտական Քեռփսի բուրգն է պահպանվել, իսկ հնադարյան հացահատիկներից՝ Շորովագի ցորենի դաշտը։ Վերջինս հինգ հազար տարով մեծ է Քեռփսի բուրգից։

## Շաքարջուր

Գորիսի շրջանում մի գետ կա Շաքարջուր անունով, որ Քարահունջ գյուղի կողքին խառնվում է Վարարակ գետին։

Ասում են՝ ամեն նոր տարվա նախօրեին այս գետի ջուրը քաղցրանում, շաքարի համ է ստանում։ Շրջակա գյուղերի մարդիկ գետից սափորներով ջուր են վերցնում և դրանով հունցում նոր տարվա գաթաների խմորը։

## Բանաստեղծի բոքոնը

Իմաստուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը Հայաստանից ոտք դուրս էր դնում թե՝ չէ՝ անմիջապես հայրենի հողի կարոտն էր քաշում։ 1921 թվականի մի օր Եվեցարիայի ժնկ քաղաքում բանաստեղծը Հայաստանի կարոտից սկսում է հոնգուրհոնգուր լաց լինել։ Նրան թվում է, թե ուր որ է այդ կարոտից պիտի մեռնի։ Հանկարծ մտաբերում է ժնկում ապրող ֆրանսախոս մի հայուհու, որը վաղուց մոռացել էր հայերենն ու հայությունը։ Իսահակյանը գնում է, մի փոքրիկ տոպրակ ալյուր առնում և շտապում ֆրանսախոս կնոց մոտ։

— Շատ եմ խնդրում, եթե կարող եք, հենց հիմա ինձ համար հաց թխեք այս ալյուրից, — ասում է Իսահակյանը։

— Դա դժվար բան չէ, ես կասեմ իմ սպասուհուն և նա ձեզ համար հաց կթխի, — պատասխանում է կինը։

— Ո՞չ, ո՞չ, միայն դո՞ւք, ես ուզում եմ, որ միայն դո՞ւք թխեք այդ հացը։

— Ինչո՞ւ հատկապես ես։

— Ես դժվարանում եմ պատասխանել այդ հարցին։

Կինն ուսերը թոթվելով մի կերպ համաձայնում է և բանաստեղծի ներկայությամբ սկսում խմոր հունցել։ Հետո վառւմ է փուռը ու թխում երկու բոքոն։ Իսահակյանը մի բոքոնը տա-

լիս և ֆրանսախոս հայուհուն, շնորհակալությամբ համբուրում է նրա ձեռքը և մյուս բոքոնն առած գնում իր կացարանը:

Բանաստեղծին թվում է, թե ինքը Հայաստանում է: Զէ՞ որ հայկական մի բոքոն ունի: Այսինքն՝ ինչպես թե հայկական Ալյուրն ու փուռը շվեյցարական են, միայն հացթուխն է հայուհի, այն էլ հայերեն շիմացող հայուհի: Հետո ինչ, բայց հայուհի է, այդ կնոջ տատն ու պապը Հայաստանում հայերեն են խոսել: Ֆրանսախոս այդ կինն իր համար հիմա Հայաստան է, տիեզերքի շափ մեծ մի Հայաստան:

Բանաստեղծն անուշ է անում իր բոքոնը, և նրա վրգովված հոգին խաղաղվում է:

Իմանալով, թե իսահակյանն ինչու է իրեն մի երկու ժամով հացթուխ դարձրել հիսունամյա ֆրանսախոս հայուհին հուզվում է և որոշում սովորել հայերեն:

Շատ տարիներ հետո բանաստեղծը Երևանում հանդիպում է իր հին ծանոթուհուն և զարմացած ասում.

- Դուք ինչպես սովորեցիք հայերեն:
- Ինձ հայերեն սովորեցրեց ու վերստին հայուհի դարձրեց այն հացը, որ ես թխեցի ձեզ համար,— պատասխանում է կինը:

## Արեք երկնքի բաղարջն է

Մի անգամ, երբ ես շատ փոքր էի, մատս տնկեցի դեպի երկինք և դիմեցի մորս.

- Արեք կարմիր հա՞ց է:
- Այո՛, տղաս, արեք երկնքի բաղարջն է,— ասաց մայրս:
- Իսկ ե՞րբ են ուտում:
- Երեկոյան, երբ օրը մթնում է:
- Ո՞վ է ուտում:
- Ամենալավ աշխատողը:
- Իսկ ինքը գիտե՞՞, թե ով է ամենից լավ աշխատում:
- Իհա՛րկե, տղաս, չէ որ երկնքից նա տեսնում է, թե երկրի վրա ով ինչ անում:
- Մայրիկ, երբ մեծանամ, ես այնպես կաշխատեմ, որ երկնքի բաղարջն ամեն օր մեր տուն գա,— ասացի ես ինքնավստահ:

## Հունձ ճակատամարտի թեժ պահին

1940 թվականին Սիսիանի շրջանի Սիսիան գյուղը ստացավ Հացահատիկի ամենաբարձր բերքը ամբողջ Սյունիքում և վերանվանվեց Հացավան։ Մի աւարի հետո սկսվեց Հայրենական մեծ պատերազմը և շատերի հետ ուազմի դաշտ մեկնեց Հացավանցի Իշխանը։ Մարտիկ դարձած քաջ ու ժրաջան հնձվորը մի անգամ փոքրիկ ջոկատի հետ ուկրաինական մի բարձունքի վրա կռվի էր մտել թշնամու հետ։ Ֆաշիստները գրոհում էին, Հագրոհում, բայց բարձունքը մնում էր անառիկ։

Բարձունքի կողքին արտի մի հասված էր, որտեղ ոչ մի արկ չէր ընկնում։ Իշխանը մի քանի օր հետևեց և տեսավ, որ ցորենի այդ փոքրիկ արտի հասկերը ուր որ է պիտի կծղեն։ Հին հընձվորը դարձավ ավելի անհանգիստ։ Նա չէր վախենում մահից, բայց մտածում էր, որ աշխարհում ամենամեղք բանը հասած արտը չհնձելն է։ Զգիտես որտեղից՝ նա մի մանգաղ գտավ և մի գիշեր դուրս գալով խրամատից աննկատ հնձեց փոքրիկ արտը։ Առավոտյան զորացոկատի հրամանատարը, նկատելով հնձված արտը, զարմացավ և դիմեց մարտիկներին։

- Ո՞վ հնձեց արտը?
- Ե՞ս, ընկեր հրամանատար, — պատասխանեց Իշխանը։

— Ճիշտ ես արել, — ժայռալով խոսեց հրամանատարը, — այս անիծված ֆաշիստների պատճառով ամենքիս հունձը կիսատ է մնացել։ Ճիշտն ասած՝ ես էլ հնձվոր եմ և իմ մտքով էլ էր անցել մի գիշեր դուրս գալ խրամատից և հնձել այս մի քանի խուրձը։

## Ֆրիկ

Տասներեքերորդ դարում Հայկական Կիլիկիայում պայծառաշունչ մի բանաստեղծ էր ապրում։ Մի օր հարկահանները շոքեցին նրա դռանը։ Ամեն ինչ տվեց հարկի դիմաց՝ և՛ տուն, և՛ կալվածք, և՛ իր ու ինչք։ Բայց պարտքը մարելու համար ունեցածը շհերիքեց։ Եվ դաժան հարկահանները գրավ վերցրին նրա որդուն։ Վերցրին ու տարան՝ աստված գիտե թե ուր։ Եվ Հայրը քիչ մնաց վշտից խենթանար։

Որդուն գտնելու հույսով բանաստեղծն սկսեց ոտքի տակ տալ Կիլիկիան։ Ինքն իրեն երդել էր, որ բերանը հացի կտոր չի դնի այնքան ժամանակ՝ մինչեւ շգտնի որդուն։ Գյուղից գյուղ

անցնելիս հաց չէր խնդրում։ Երբեմն թեքվում էր դեպի արտերը։ Զեռք չէր տալիս ոչ մի օրանի։ Արտեզրերից՝ փշածածկ թվերի միջից քաղում էր դեռահաս ու կաթոտ ցորենի հասկեր, փնջեր անում, խանձում կրակի վրա, եղի դարձնում ու սնվում դրանով։ Եղին համեղ աղանձ է։ Բայց բանաստեղծին թվում էր, թե արտեզրերին բուսած հասկերը դառն հատիկներ են ունենում։ Եվ երբեմն որում էր խառնում ցորենահատիկներին, որ եղին դառնահամ լինի։ Այդ ժամանակներում Կիլիկիայի հայերը եղին ֆրիկ էին ասում։ Եվ երբ բանաստեղծին հարցնում են, թե ինչ է իր անունը, նա պատասխանում էր.

— Առայժմ Ֆրիկ։

Ասում է ու բանաստեղծական տողով հավաստում իր անունը։

Ոչ ծլեմ, ոչ բուսանեմ,

Զերդ զաղընձած սերմ եմ գերիս։

Իրեն համարեց աղանձած սերմ, որովհետև մնացել էր անզարմ։ Բանաստեղծը շգտավ իր որդուն և մարդկանց հիշողության մեջ անմահացավ Ֆրիկ անունով։

## Մարդ ինչքան կարող է ապրել առանց հացի

Ծուշի քաղաքի հյուսիսային փեշի տակ, անդնդախոր խորխորատի լանջին կպած մի գյուղ կա Քարինտակ անունով։ Այս գյուղում իմաստունի համբավ ուներ հարյուրքանամյա Վահանը։

Մի անգամ նրան հարցրին.

— Քեռի Վահան, մարդ ինչքա՞ն կարող է ապրել առանց հացի։

— Հարյուրից մեկը յոթանասունյոթ օր, տասը՝ հիսունվեց օր, տասը՝ քառասուն օր, տասը՝ քսանչորս օր, մնացածը տասներկուահից քսաներեք օր։

## Չի կարելի թողնել, որ հացի փշրանքը գետնին ընկած մնա երկար ժամանակ

Երբ հացի փշրանք էր ընկնում գետնին՝ մայրս ասում էր.

— Վեցրո՛ւ, տղա՛ս, չի կարելի թողնել, որ հացի փշրանքը գետնին ընկած մնա երկար ժամանակ։

— Ինչո՞ւ, — հարցնում եմ ես։

## Մայրս պատասխանում է.

— Հենց որ մի փշուր է ընկնում՝ երկնքից մի հրեշտակ է իշնում և, մեզ համար անտեսանելի, մի ոտով կանգնում հացի փշուրի վրա։ Կանգնում է այնքան մինչև մարդը վերցնում է հացի փշուրը։ Այնպես որ գետնին ընկած հացի բոլոր փշուրների վրա մի-մի հրեշտակ է կանգնում։ Նրանք հոգնում են, տղաս, մի մոռացիր, որ մի ոտի վրա կանգնելը դժվար է։

## Դայրս մեկ-մեկ այրված հաց էր կերցնում ինձ

Փոքր հասակում մայրս մեկ-մեկ այրված հաց էր կերցնում ինձ։ Նա փորձում էր հավատացնել, թե այրված հաց ուտողը բախտավոր է լինում։

— Այդ ի՞նչ ես ասում, մայրիկ, եթե այդպես լինի՝ աշխարհի բոլոր մարդիկ այրված հաց կուտեն, — առարկում էի ես։

— Թող ուտեն, ոչ ոք նրանց չի խանգարում։

— Իսկ այդքան բախտավորություն կա՞ աշխարհում։

— Այո՛, տղաս, բախտավորությունն ավելի շատ է, քան մարդիկ։

Իմ բարի մայրը երևի վերջին արևապաշտ հայպւհին էր աշխարհի վրա, որ իր որդու երջանկությունը կապում էր հրի ու արևի հետ։

## Հացիկ

Դա 1945 թվականին էր։ Հայրենական պատերազմը ավարտվել էր և մարդիկ գյուղ էին վերադառնում։ Ամենքն ուզում էին մոռանալ պատերազմը և պայքարել կյանքի ու հացի համար։ Ախուրյանի շրջանի Թոփառի գյուղի կոլտնտեսության նախագահը մի ժողովում ասաց։

— Բասենից, Մուշից ու Կարսից այստեղ հաստատված մեր բոլոր նախնիները եղել են հացագործ մարդիկ։ Մենք աշխարհ ենք եկել հաց արարելու համար, այդ պատճառով էլ բոլորիս ցանկությունն այն է, որ մեր գյուղը Հացիկ կոչվի։

Եվ գյուղը վերանվանվեց Հացիկ։

## ԻԱՀԵԱՍ ԵՅ ԲՈՒՆԾ ԱՆՌԱՄ ՕՃՈՒՆԵցիք

Լոռիում հնամենի մի գյուղ կա Օձուն անունով։ Այս Օձունը մի զարմանալի սովորություն ունի. Հնծի ժամանակ գեղեցիկ աղջիկները նազանքներ անելով պտտվում են հնձվորների շուրջը։ Տղամարդիկ ամաչում են աղջիկներից և աշխատում քափքրտինք կտրած։

— Դա հունձը կարճ ժամկետում կատարելու ամենահուսալի նախապայմանն է, — կատակով ասում են օճունեցիք։

## Ծաղկաձորի դպրոցականների ստուգայցը

Ծաղկաձորը ամուսնը դառնում է Հայաստանի դպրոցականների հանգստյան քաղաք։ Պիոներական բազում ճամբարներն այստեղ լուսաբացն այնպես են ազդարարում, որ թվում է, թե ոտքի է կանգնում հազար ուազմագունդ։

Հրաշալի են Ծաղկաձորի անտառները, կանաչ բացատներն ու քչքան աղբյուրները։ Անտառով անցնելիս մարդուն թվում է, թե ծառերի սաղարթներից երազանք է թափվում։

Երեխաների բոլոր տենչանքները մաքուր-մաքուր են լինում։ Իսկ այստեղ սաղարթներից թափվող երազանքը մնում է կեսանապարհին, գետնին չի հասնում, որովհետև գետնի վրա ամեն բանի կտորտանք կա։

Մի անգամ Ծաղկաձորի ճամբարներից մեկի դպրոցականները որոշեցին երկուշաբթի օրը ստուգայց կատարել անտառում։ Կիրակի օրը անտառում շատ մարդ է լինում, այստեղ ուտումխմում են և կեղտոտում ստվերախիտ բացատները։ Ճամբարի դպրոցականները պետք է իրենց հուշատետրերում նշումներ անեն այդ մասին և հավաքեն հացի թափված բոլոր կտորտանքները։

Դա տեսեց համարյա կես օր։ Հարյուր հիսուն դպրոցականներ հավաքեցին տասը կիլոգրամ հաց։ Երեխաներն այնպես էին հուզվել, որ թվում էր, թե մեղավոր էին նաև իրենք։

Հետո տախտակների վրա նրանք գրեցին. «Ոչ մի հարգանքի արժանի չէ նա, ով հացը գետնին է գցում ու փշացնում»։

Եվ այդ տախտակները կպցրին անտառ տանող ճանապարհների ու կածանների ելումուտներին։

## **Համշենցի խոհարարն ինչպես ազատվեց սնոտիապաշտությունից**

Երբ ճաշ ուտելիս գդալն ընկնում է մարդու ձեռքից, համշենցին առում է.

— Սատանան խփեց ձեռքին:

Մի անգամ բանվորական ճաշարանում, որի խոհարարը համշենցի էր, միանգամից հարյուր ճաշողների գդալներ ընկան ձեռքներից: Դա կատարվեց խոհարարի աշքի առջև: Նա հասկացավ, որ ճաշն աղի է ստացվել:

— Սա ի՞նչ բան է, սա ի՞նչ բան է,— վրա տվին այս ու այն կողմից:

— Խնդրում եմ ներե՞ք, ընկերներ, մեղավորը ես եմ և ոչ թե սատանան,— փորձեց արդարանալ համշենցի խոհարարը:

— Սատանան ի՞նչ գործ ունի այստեղ,— հարցրին մարդիկ:

— Դուք իրավացի եք, սատանան երբեք էլ գդալների հետ գործ չի ունեցել,— պատասխանեց խոհարարը՝ միանգամից ազատազրելով իրեն սնոտիապաշտությունից:

## **Սպիտակը փոխեցի սև բոքոնով**

1947 թվականին էր: Հայրենական մեծ պատերազմից հետո երկիրը նոր-նոր ոտքի էր կանգնում: Հացը դեռ քարտով էին տալիս: Երևանի շուկաներում քոիկ լավաշի կիլոգրամն արժեր հարյուր ռուբլի:

Ես ուսանող էի: Երբեմն քաղցս «հագեցնում» էի Երևանի սառնորակ ջրով: Մի կիրակի գնացի Այգեստան թաղամասի կողմը: Դավիթ անունով կարճահասակ մի մարդ առաջարկեց ինձ հիմք փորել պատի համար: Բայն ու քլունգը վերցրի ու գործի անցաւ:

Քափ-քրտինքի մեջ աշխատեցի մինչև իրիկուն և վերջացրի գործը: Հին եգիպտացիների պես ես վարձատրվեցի հացով: Դավիթն ինձ տվեց մի սպիտակ բոքոն, որը երեկ կլիներ երկու կիլոգրամ: Փրփուր-փրփուր հաց էր: Կարելի էր նստել և միանգամից ուտել: Երկու կիլոգրամն ի՞նչ էր որ: Ե՛վ հոգնած էի, և սաստիկ քաղցած:

Սակայն մի պահ հավաքեցի ինքս ինձ ու խորհեցի: Ասենք թէ՝ կերա-վերջացրի, հետո՝, իսկ վա՞ղը: Զէ՛, հիմա սպիտակ հաց

ուտելու ժամանակ չէ։ Եվ անմիջապես Այգեստանից հասա սև շուկա։ Այստեղ վաճառեցի իմ սպիտակ բոքոնը և գնեցի երկու սև բոքոն, որն ինձ կարող էր հերիքել մի քանի օր։

## Սեղանի վրա հաց տեսնելիս մորս ձեռքերն եմ հիշում

Ես շեմ հիշում, թե իմ ձեռքին ով'է հացի առաջին պատառը դրել։ Համոզված եմ, որ դա եղել է իմ մայրը։ Նա՝ դժվարությամբ է հաց հայթալիթել ինձ համար։ Իմ մանկությունն ու պատանեկությունը անցել են մի քանի հացապակաս տարիներով։ Մի կտոր հացի համար մայրս աշխատում էր նաև գիշերները։

Ինձ թվում է, թե ես ախորժակով եմ կերել միայն այն ժամանակ, երբ իմ առջև հաց է դրել մայրս։ Քիչ լիներ, թե շատ՝ կշտանում էի, որովհետեւ հաց տվողը մայրս էր։ Հիմա սեղանի վրա հաց տեսնելիս մորս ձեռքերն եմ հիշում։

## Մայրս ասում էր

Հայրս ասում էր.

— Տղաս, ամեն մարդու հացը կտրել չի կարելի, որովհետեւ հաց կտրել՝ նշանակում է բարեկամանալ տանտիրոջ հետ։ Իսկ ամենքի բարեկամությունը չէ, որ կարող է հաճելի լինել քո սրտին։

## Աղուհաց

Եվ հարցրի ես իմաստուն Տիրին, որն ընթերցել էր աղուհացի մասին գրված աշխարհի բոլոր գրքերը։

— Ինչո՞ւ են թանկադին հյուրին դիմավորելիս աղուհաց հյուրասիրում։

— Այդ սովորությունը վաղնջական ժամանակներից է։ Հացակեր դառնալուց հետո մարդը գլխի է ընկել, որ չի կարող ապրել առանց հացի ու աղի։

Հնում շատ թանկ են եղել և հացը, և աղը։

Անհուշ հազարամյակներից մի հուշ է մնացել հայերի մեջ։ Նորածին երեխայի վրա մի քիչ ազ են ցանում, որ երեխան բախտավոր լինի և ապրի առատությամբ լի կյանքով։ Զէ՞ որ

Հնում բախտավոր ու հարուստ էր նա, ում տանը միշտ աղ էր լինում.

Հացն ու աղը մարդկային ցեղի հարատեռթյան ամենակենսական գործոններից են: Ոսկով ու մարգարտով փորդ չի կշտանաւ: Ահեղ բանակներ են բախվել միմյանց, հազար անգամ հաղար դյուցազուններ են կովել իրար դեմ: Շահել են նրանք, ովքեր ոչ հաղթել են, ոչ պարտվել, ովքեր հաշտության դաշն են կնքել և աղուհացի վրա երդվել՝ գենքով շսպառնալ ոչ ոքի: Աղուհացը բարեկամության հավերժական առհավատշյան է:

Աղուհացը բարեկամության միակ լեզուն է, որ հասկանում են աշխարհի բոլոր մարդիկ: Ազգերն իրարից տարբերվում են նաև իրենց առածներով: Միայն մի առած կա, որ բոլոր ազգերի լեզվում էլ միատեսակ է հնչում.

— Աղուհացն ուրացողի հետ մի բարեկամացիր:

### Ուրիշի հացով փոր չի կշտանա

Ղափանի շրջանի Գեղանուշ գյուղում Գինոս անունով մի զվարճախոս էր ապրում: Երբ ուտելու մասին խոսք էր բացվում՝ նա ասում էր.

— Ուրիշի հացով փոր չի կշտանա:

Որևէ մեկի տուն հյուր գնալուց առաջ՝ նա կուշտ փորով հաց էր ուտում իրենց տանը: Մի անգամ հարևանի փոքրիկ տղան եկավ ու ասաց.

— Քեռի Գինոս, երկու ժամից հետո հարսանիքն սկսվում է, հայրս քեզ հրավիրում է մեր տուն:

— Տղա ջան, այսօր մեր տանն ուտելու բան շկա, իսկ սոված փորով հարսանիք գալ շեմ կարող: Հորդ ասա՝ թող հարսանիքը վաղն անի:

### Քիչը շատի կրտսեր եղբայրն է

Մի գիտուն հարցնում է.

— Մարդիկ ցանում են ցորեն, հաճար, կորեկ, վարսակ, գարի: Են զիսից էլ մարդը գիտե, որ ամենալավ հացը ստացվում է ցորենից: Բայց ահա քանի հազար տարի է՝ մարդու խելքը չի կտրում, որ Գաճարի, կորեկի, վարսակի ու գարու փոխարեն միայն ցորեն ցանի:

Մի ուրիշ գիտուն նրան պատասխանում է.

— Մինումար որդիներով տոհմերը չեն կարող հարատեել, մի խելառ պատահականություն կարող է կտրել արմատը: Ըստանիքն ամուր է բազմանդամությամբ: Աշխարհում հաճարը, կորեկը, վարսակն ու գարին միասին վերցրած ավելի քիչ է ցանվում, քան ցորենը: Թայց չի կարելի մոռանալ, որ քիչը շատի կրտսեր եղբայրն է:

## Յորնենի

Հազար տարի առաջ Ղափանի շրջանի թեխ գյուղի կողքին գտնվող Վահանավանքում մի արքայադուստր էր ապրում Ցորնենի անունով: Հայրը՝ Սյունիքի արքա Գրիգորը դստերը Ցորնենի է կոչել, որպեսզի իր տերության մեջ ցորենն առատ լինի: Հետո արքայի հրամանով Սյունիքի պատկերահանները քանդակել են Ցորնենու փոքրիկ արձանիկները և դրել արտերի եզրերին: Այդ արձանիկներից մեկը հասել է Լոնդոնի Բրիտանական թանգարան:

## Սեղանասար

Սեղանասար անունով լեռը, որ Աբովյանի շրջանում է, հարյուր հազար տարում միայն մի անգամ է խնջույք տեսել: Դա եղել է երեք հազար տարի առաջ: Հայոց Արա Գեղեցիկ արքան Աւորեստանի վավաշոտ թագուհի Շամիրամի դեմ մարտի դուրս գալուց առաջ այս լեռան վրա սեղան է սարքել իր զորականների հետ և խնջույքի նստել մահից առաջ: Դա այնքան առատ սեղան է եղել, որ կովից հետո էլ մարդիկ այնտեղ ուտելու բան են գտել: Այդ հեռավոր ժամանակներից էլ սարը կոչվել է Սեղանասար:

## Փոցխասար

Գուգարքի և Ստեփանավանի շրջանների սահմանագլխին, Անտառամուտ գյուղի կողքին, Փոցխասար անունով մի լեռ կա: Այս սարի լանջերին արտը հերկելուց հետո այլևս չէին փոցխում: Ասես հողը փխրուն էր դառնում ինքն իրեն: Ասում են դրա համար էլ լեռը Փոցխասար է կոչվել:

Մի ժամանակ այդ լեռան շուրջը երամներով արորակներ էին

ապրում։ Գիշերները նրանք սիրում էին քուջուջ անել հերկած արտերի մեջ։ Այ հենց նրանք էլ փխրեցնում էին Փոցիսասարի հերկած արտերը։

## Ուղարք հյուրասիրում է ուղտին

Մի գիտուն հարցնում է.

— Զեմ հասկանում, թե ճաշասեղանի շուրջ նստած մարդիկ ինչո՞ւ են հյուրասիրում միմյանց։

Ես նրան պատմում եմ հայկական մի հին զրույց։

Երկու ուղտ արածում են միասին։ Երբ կշտանում են, ուղտերից մեկը մի փուշ է քաղում և դնում մյուսի բերանը։ Վերջինս ասում է՝ ի՞նչ ես անում, չէ՞ որ սա նույն փուշն է, որից կերանք-կշտացանք։ Տվողը պատասխանում է՝ փուշը միշտ փուշ է, բայց դիմացինին կամ կողքինին հարգանք մատուցելու շնորհքն անուշ է։

## Կարմրաթուշ բոքոնը

Փոքրիկ Սոսը կարմրաթուշ բոքոնն ավելի է սիրում, քան մատնաքաշը։

— Մայրի՛կ, դու որտեղի՞ց ես բերում այս հացը, — հարցնում է Սոսը։

— Խանութից։

— Ինչպե՞ս ես բերում։

— Ասում եմ մեր տանը երկու խելոք բալիկներ կան՝ Սոսն ու նրա քույր Քնարը։ Առանց հացի նրանք չեն կարող մեծանալ։

— Եվ բոքոնը համաձայնում է ու քեզ հետ գալիս մեր տո՞ւն։

— Այո։

— Իսկ եթե չգա՞։

— Զէ՛, տղաս, միշտ կգա, — ասում է մայրը ու ավելացնում։ — Բոքոնը գիտե, որ դու և Քնարը շարություն չեք անում։

Սակայն մի անգամ, տեսնելով, որ տանը մարդ չկա, Սոսը բոքոնի միջուկից գնդիկներ սարքեց և շպրտեց դեպի փոքրիկ քույրը։

Մի քանի օր անց մայրը հացի խանութ գնաց ու վերադարձ ձեռնոմայն։

— Ինչո՞ւ հաց չբերեցիր, — հարցրեց Սոսը։

— Բոքոնը շուզեց մեր տուն գալ։

— Ինչո՞ւ

— Ասում է՝ քո վոքրիկ Սոսը շարություն է ֆնում, իբր թե հացից գնդիկներ է սարքում և նետում քրոջ դեմքին։ Ես բոքոնին ասացի, որ իմ Սոսը այդպիսի բան չի անում, բայց նա վսից ինձ։

Սոսն իսկույն հուզվեց և քիչ մնաց արտասվեր։

— Մայրի՛կ, բոքոնը ճիշտ է ասել, գնա և ասա նրան, որ այլևս այդպիսի բան չեմ անի, գնա ասա՝ թող ուրիշ տեղ չգնա, մեր տուն գա։

## Հացկատակ

Արքայի ախորժակը փակվել էր։

Արքունիքի պոկեպունկ լիքը մառաններից ու գինետներից սպասավորներն ու մատովակները բերում էին աշխարհի ամենահամեղ ուտելիքներն ու ամենահաճելի ըմպելիքները, ախորժակ գրգռող նգածաղիկ ու թարխուն, կծու պղպեղ ու ամեն տեսակ թթու։ Նվում էր փանդիոր, մեղմածոր երգում էին նաժիշտները, իր նուրբ ձեռքերով արքայի կողերն էր խուտուտ տալիս գեղեցկուհիների գեղեցկուհի բամբիշը։

Ոշինչ շէր օգնում, արքան ամեն բան դժկամությամբ էր բերանն առնում։

Հետո խորհրդականներից մեկն արքային ասում է։

— Քո ախորժակը կարող է բացել միայն ծիծաղ հարուցող խոսքը։

Գտան մեկին, որի անունը Վարձ էր։

— Արքայությունն ու վայելքը սկսվում են ծամելուց, — ասաց Վարձը։ — Արքայի ախորժակը կրացվի, եթե բամբիշը մի մաղ սովոր նրա բեխից։

Արքան ժպտաց և զլխով արեց դշխոյին։ Վերջինս մոտեցավ ու տիրակալի բեխից մի մաղ պոկեց։ Արքան բռնեց մազն ու դիմեց խնջույքավորներին։

— Տեսնո՞ւմ եք, այս վոքրիկ մազը ինչ ուժ է ունեցել։ Այսքան ժամանակ փակել էր իմ ախորժակը և ձեզնից ոչ մեկը գլխի շէր ընկել, բոլորդ էլ դմբոներ եք։

Եվ իրթկաց լիաթոք։ Ու սկսեց ուտել։ Կարծես թե նրա ալ ըրժակը բացվեց։

Վարձը շարունակեց իր սրամժությունները։

— Արքայի բեխի մի մազը շխառնեք ձեր մազերի հետ: Եթե ձեզնից մեկի ախորժակը փակվի՝ ողջ մազերն էլ եթե պոկի, միւնույն է, ոչինչ չի ստացվի:

Վարձը ծաղրում էր ամենքին և խնդություն պատճառում արքային:

Եվ Վարձը դարձավ արքունական առաջին ծաղրածուն աշխարհում, Նրան անվանեցին Հացկատակ, այսինքն մի մարդ, որը հացի՝ ճաշկերույթի ժամանակ կատակ էր անում:

Դա անվարձ կատակ էր, չնայած կատակողի անունը Վարձ էր:

Հետո Վարձին աբքունիքում փոխարինեցին Վարձ Երկրորդը, Վարձ Երրորդը, Վարձ Չորրորդը, Վարձ Հինգերորդը, Վարձ Վեցերորդը, Վարձ Յոթերորդը, Նրանք բոլորը ծաղրածուներ էին:

Վարձ Ութերորդից ամեն ինչ փոխվեց: Սա սկսեց շաղակրատել ու հաճոյախոսել արքային ոչ թե նրա ախորժակը բացելու կամ տրամադրությունը բարձրացնելու, այլ նրան դուր գալու ու քծնելու համար: Այդ շողոմ խոսքերի դիմաց արքան ճաշն ուտելուց հետո իր պնակը տալիս էր հացկատակ Վարձ Ութերորդին լիզելու:

Եվ հին օրերի հացկատակ ծաղրածուն դարձավ հացկատակ պնակալեզ:

Մի փիլիսոփա այսպես է ձեակերպել. «Հացկատակներն ունեցել են՝ զարգացման ընդամենը երկու փուլ: Առաջին փուլում նրանք ազնիվ ծաղրածուներ էին, երկրորդ փուլում՝ դարձան վարձով քծնողներ՝ պնակալեզներ»:

## Հացի տասնաբանյա

Շատ խմելու հետ քիչ ուտելը նույնն է, ոնց որ ծովում խեղդվողը լողա միայն մի ձեռքով:

Լիաթոք ծիծաղը մի պատառ հացը մարդու ստամոքսում Երկու պատառ զաթա է դարձնում:

Զի կարեի ճաշել հուզված վիճակում: Այդպիսի դեպքում ոչ թե դու ևս ճաշում, այլ ճաշն է քեզ ուտում:

Բավարութիր քո վաստակով, որովհետև ուրիշի ուստածը նման է այն ամպին, որը պիտի անձրեի քո աւտից հետո:

Գիրանալը նույնն է՝ ոնց որ մարդ ծիուց իջնի և ճանաւարչը շարունակի իր ձին շալակած:

Հայաստանում սրբագան պատվանում է հացով մարդը, որին  
արժանանում է լայն ու նեղ օրերին սրտաբաց հյուրընկալողը:

Հացից ամաշողը անարդար վաստակից հեռու կփախչի:

Ունքերը կիտած մարդու հացը մի կտրիր, միննույն է՝ կե-  
րած-շկերած՝ փորգ բան չի ընկնի:

Մարդկային ցեղն իր հարատեռթյան համար պարտական է  
հացի ինքնազոհությանը:

Թե կարող ես վաղվա գործն այսօր արա՝ առանց ձեռք տա-  
լու վաղվա բաժին հացին:

## Այբուբենը հոգևոր հացի ցորենն է

Օշականի՛ ճանապարհին քարե մի վիթխարի մատյան է  
կանգնած, որի կիսաբաց էջեռի վրա զրոշմված է հայկական այ-  
բուբենը: Դա ընդհանրապես այբուբենին նվիրված միակ հու-  
շարձանն է համայն աշխարհում:

Մեսրոպ Մաշտոցը հայերեն գիրն ստեղծեց 405 թվականին,  
ինքն ուսուցանեց այդ գիրը՝ դառնալով հայերենի առաջին  
ուսուցիչը: Դաժան ճակատագիրը ամեն բան խաղաց հայ ժողո-  
վորդի գլխին, բայց նրանից չկարողացավ խլել այբուբենը:  
Հայն աշխարհում հայ մնաց իր այբուբենով, որ նրա հոգևոր  
հացի ցորենն է:

Մեսրոպ Մաշտոցը մահացավ 440 թվականին: Նրան թաղեցին  
Օշական գյուղում: Գիր ստեղծողի գերեզմանը սրբացավ: Տաւ-  
նըհինգուկես դար է, ինչ մարդիկ այցի են գնում նրա շիրմին:

Ամեն տարի օշականցի որևէ կին առաջին բերքից թխած հա-  
ցի մի կտոր բերում ու դնում է Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին:  
Միաժամանակ տասնհինգուկես դար հայը հոգևոր հացի է  
նստում նրա հետ:

## Հայուհին լացում է շինձած արտի համար

Արաքսի ձախ ափին հայկական ջուղա քաղաքի գերեզմանա-  
տունն է՝ խաչքարերի ամենամեծ թանգարանն աշխարհում: 400  
տարի առաջ այստեղ 10 հազար խաչքար է եղել, այժմ՝ գերեզ-  
մանատունն անտեր դառնալուց հետո մնացել է 2650-ը, որոն-  
ցից յուրաքանչյուրը ճարտարապետական մի անձեռակերտ կո-  
թող է: Դրանցից մեկի վրա քանդակված է ցռենի ծփուն մի  
արտ, որի կողքին ձեռքերը կրծքին խաչած կանգնել է մի հա-

յուշիւ Տիբրամած հայացք ունի նաև Երևի սպում է ոչ միայն ամուսնու մահը, այլև ողբում է անտեր մնացած արտերի բախտը: Թվում է, թե ուր որ է նրա աշքերից արցունքներ կոլորվեն: Հայաստանում արտը չհնձելը համարվել է շարադետ ոշծրախտության նշան: Եվ հայուհին չհնձած արտի համար այնպես է լացել, ինչպես լացում է կորցրած հարազատի համար:

## Մեր հացի մեջ քրտինքը շատ է

1962 թվականին ամերիկյան նկարիչ Ռոքուել Քենտի հետ շրջում էի Արարատյան դաշտի գյուղերում: Մի տեղ Քենտը հյուրնկալող կոլտնտեսականին հարցրեց.

— Ինչո՞ւ ձեր հացը այսքան քաղցր է:

— Որովհետև մեր հացի մեջ քրտինքը շատ է, — պատաժանեց կոլտնտեսականն ու ավելացրեց, — գիտե՞ք, եթե Հայաստանից դուրս ինձ տային աշխարհի ամենաբարեքներ, դյուրամշակ հողերը՝ ես կհրաժարվեի: Դյուրությամբ վաստակած հացը կուշ չի գնա: Մեր ուժը մեր քարքարութ հողի հետ եապված լինելու մեջ է:

## Գողթանցի գուաններն իրենց ամենալավ երգը ձոնել են հացին

Մի անգամ մեծերի մեջ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանն ասաց:

— Ես շարունակություն եմ:

Անմիջապես սկսվեց հարցատարափը.

— Ո՞րն է քո բնօրրանը, Արամ Եղիառդի:

— Գողթն գավառը, այժմյան Օրդուքաղի շրջանի Ազագյուղը: Ասում են ժամանակին այդ գյուղը կոչվել է Ազատ և այնքան մարդաշատ է եղել, որ քաղաք են անվանել: Այդտեղ մրցել են փառաբանված գողթան հայ գուսանները: Այնպես որ ես նրանց շարունակությունն եմ՝ արյամբ, հոգով, իմ երաժշտության բոլոր հնչյուններով: Մեծերի թիվը Գողթնում հասել է հարյուրների, որովհետև գուսանական էր համայն գավառը: Ամբողջ կյանքում ես հեռազգացոթյամբ լսել եմ նրանց..

— Երաժշտությունից բացի ի՞նչն է հավաստում գողթանցի լինելու:

— Հացը: Գողթանցին սեղանի վրա սկզբում հացն է ղնում,

Հետո մյուս ուստիլիքները։ Այդպես էր վարվում նաև մայրս։ Գողթանցին նախ հացն է պաշտել, հետո՝ աստվածներին։ Եվ գուսանները իրենց ամենալավ երգը ձռնել են հացին։

— Դու այնպես ես խոսում, Արամ Եղիառդի, ասես լսել ես այն։

— Երկու հազար տարեկան այդ երգի մի բեկորը հասել էր մինչև տասու և մարել նրա շրթունքների վրա։ Այդ երգից է սկըսվել իմ երաժշտությունը, այդ երգով էլ պիտի հրաժեշտ տամ աշխարհին։

## Եղիառդու

1964 թվականին իրանի Նոր Ջուղա քաղաքից Սովետական Հայաստան վերադարձավ Գալուստ Խունկյանը։

— Ո՞ր քաղաքում կամ գյուղում ես ցանկանում ապրել, — հարցրին Խունկյանին։

Հայրենադարձը հին սնդուկից հանեց մի փոքրիկ գորգ, որի վրա զարդանախշված լին հասկեր, ներքնի մասում՝ «Եղիառդու» բառերը։

— Երեքհարյուր վաթսուն տարի առաջ իմ նախնիները ապրել են Նիկ գավառի Եղիառդու գյուղում, — ասաց Գալուստ Խունկյանը։ — Շահ-Աբասը նրանց քշել է Պարսկաստան։ Խունկյան տոհմը վեց-յոթ սերունդ եղել է տարագրության մեջ։ Այս գորգը Խունկյանների անձնագիրն է, որ պահել և որդոց-որդի են փոխանցել։ Բոլոր Խունկյաններն էլ երազել են տուն վերադառնալ և հերկել հայրենի Եղիառդու արտերը։ Բախտը ժրատացել է ինձ, ես այժմ հայկական հողի վրա եմ և ցանկանում եմ բնակվել պապենական Եղիառդու գյուղում։

— Բայց Հայաստանում հիմա Եղիառդու անունով գյուղ չկա, — ասացին Խունկյանին։

— Ինչպես թե չկա, չէ որ եղել է, ուր պիտի գնար Եղիառդու արտերը, որտեղ է Նիկ գավառը։

— Այդ անունով գավառ էլ չկա։ Գուցե քեզ ուրիշ տեղ տուն տանք։

— Չէ, ես ուզում եմ ապրել միայն Եղիառդու արտերը։

Գալուստ Խունկյանին պատասխանելու համար դիմեցին հնագետներին։

Եվ իմացան։

Երեքհարյուր վաթսում տարի առաջ Եղիպատրուշը հայաթափ լինելուց հետո կամաց-կամաց մոռացության է տրվել գյուղի հնամենի անունը։ Հետո գյուղն ստացել է օտարամուտ Տամշիլու անունը, 1935-ին վերանվանվել Մոռավյան, որ այժմ Ապարանի շրջանում է։

## Ամենատարեց ու ամենաբարձր ծառը

Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի մոտ կամի շինարի, որը Սովետական Միության տարածքում գտնվող ամենատարեց ու ամենաբարձր ծառն է։ Նրա փշակում հարյուր մարդ է տեղավորվում։

Զինարին երկու հազար տարեկան է։ Նրա շվաքի՝ տակ նրատել են Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին, Սայաթ Նովան ու Բաֆֆին։ Կորաբուն ծառի տակից բխում է Տնջրու կոչվող հորդառատ աղբյուրը, որի սառնորակ ջրից երկու հազար տարի է, ինչ օգտվում են հնձվորները։

Ամունը սխտորաշենցին որ հանդամասում էլ հունձ անելիս լինի կեսօրին շտապում է այս շինարու շվաքի տակ։ Եթե որևէ հնձվոր շինարու մոտ շգնա՞նք նրա հնձած խրձերի հատիկները կթափվեն և բերքը կես կլինի։ Մինչև հիմա էլ այդպիս է մտածում սխտորաշենցին։ Զինարին նրա համար սրբազն ծառ է։ Աստծու փոխարեն աստվածացրել է շինարին։

Այս ծառը հազար սեր է տեսել, հազար խոսք ու զրույց լսել

## Պարզ լիճը

Ասում են՝ Պարզ լիճը հայոց սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկի մի աշքն է, որ դուրս է ընկել իր ակնափոսից և գլորվել ու կպել Աղստեկի հովտին։

Ով գիտե՞ք քանի հազար տարի առաջ է եղել դա։ Մի ամռան երաշտը սկսեց շորացնել Հայաստանի բոլոր արտերը։ Դեռահաս հասկերն սկսեցին խանձվել ու այրվել։ Աստվածները վերեկց անտարբեր նայում էին արհավիրքին։ Գիտեին, որ մի քանի ամիս հետո բոլոր մարդիկ կմեռնեն սովից։ Բայց ոչ ոք չէր ուզում օգնել։ Հենց այդ ժամանակ Աստղիկը իր ակնափոսից հանեց մի աշքը և ուղարկեց երկիր։ Աստվածուհու աշքը անձրեց Հայաստան աշխարհի վրա, երաշտից փրկեց բոլոր արտերը, ապա ուժասպառ եղած ընկավ գետնին։

Հիմա ոչ ոք չգիտե, որ Պարզը իրեն զոհաբերել է հացի համար և երկնքից ընկել գետին:

Աստղկային գեղեցկությամբ լիճը կարծես թե աշքով է անում ամենքին: Նրա ափերին ոտք դնողը հոգին լցնում է երազանքի տասներկու տարվա պաշարով:

Մի ժամանակ թավուտ անտառներն իրենց գրկում մարդկանց աշքից թաքցնում էին Պարզ լիճը: Եվ լիճը մնում էր վճիռ ու պարզ: Հիմա ամենքն էլ ուզում են զբոսնել Պարզ լճի ափին, հրապուրվել նրա աստվածային գեղեցկությամբ: Գալիս են, նրա ափերին խորոված ուտում, հետո սկսում ավելցուկ հացից գընդիկներ սարքել և շպրտել լիճ: Կանգ առեք, մարդիկ, մի՞թե կարելի է լճի մեջ հաց նետել: Ի՞նչ է, ուզում եք հացով կուրացնել այդ աշքը: Բայց չէ որ դա երախտամոռություն է:

## Կոմբայնավարը

Կոմբայնավար Մարգարը այդպիսի բան չէր տեսել: Անձրեր զալիս էր քմահաճ ընդմիջումներով, հետո կես-կես ժամով շողաբձակում էր արեր: Ամառը ամառ, բայց ինչպես հնձես այն արտր, որը շորանում էր ու խոնավանում, խոնավանում էր ու շորանում:

Մարգարը մի քանի ժամ հետեւց անձրեի ու տրեկի հեռթագոյությանը, նայեց, թե արտի այս ու այն մասին ինչպես են բեկվում հասկաբեռ ցողունները:

Արեի ու անձրեի այդքան արագ փոփոխության պատճառով հաւերից հատիկներ էին թափվում, չնայած արտը կծղելուց դեռ շատ հեռու էր:

Եթե այսպես շարունակվի, ապա բերքի կեսն էլ հավաքել չես կարող, մտածեց կոմբայնավարը և որոշեց տուն չփնալ: Մի քանի ժամ արթուն մնալով Մարգարը կհնձեր այնքան արտ, որից ստացվեր շորս տոննա ցորեն: Դա մեծ հարստություն է, մի քանի ընտանիքի ամբողջ տարվա հացի պաշար:

Իրիկնաղեմին Մարգարը որսաց հարմար պահը և գոլ ծի գցեց կոմբայնը: Նա կանգ շառավ մինչև կեսդիշեր, մինչև անձրեի վերսկսվելը:

Մարգարը մնաց դաշտում:

Հուսարացին նորից հոնդաց կոմբայնը: Ինքն էլ սկսեց հե-

տեսէլ անձրկին ու արևին և բոլոր հարմար պահերին գործի գցել կոմքայնը:

Այդպես շարունակվեց մի քանի օր: Մարգարը վերջացրեց հունձը և գնաց օգնելու հարեան դաշտում աշխատող կոմքայնավար ընկերոջը: Բայց այստեղ հասկերն այնպես էին պառկել գևտնին ոնց որ գերանդիով հնձած լաս-լաս խոտ:

— Դու ուշացել ես,— ասաց Մարգարը և ընկերոջը պատմեց, թե ինչպես է հնձել ինքը:

— Իմ մտքով էլ է անցել այդպես անել,— փորձեց արդարանալ ընկերը:

— Կոմքայնավարը հունձը չպետք է ուշացնի նույնիսկ մեկ րոպեով,— ասաց Մարգարը:

— Դու իրավացի ես,— համաձայնեց ընկերը:— Պահը կորցնողը տանու է տալիս, իսկ կոմքայնավարը քառակի է տանու տալիս:

## Հացի արևը

Մի անգամ Հայաստան հյուր եկած չեխ հայագետ Լյուդմիլա Մոտալովան բանաստեղծ Փարույր Սևակին ասաց.

— Այնքան լույս կա այստեղ, ո՛՛ ինձ թվում է, թե տիեզերական արևից բացի մի ուրիշ արև էլ է լուսավորում Հայաստանը:

— Դու իրավացի ես, Լյուդմիլա, մենք մի ուրիշ արև էլ ունենք:

— Ի՞նչ արև:

— Հացի արևը, Լյուդմիլա, Հայաստանը ողողված է նաև հացի լույսով:

## Աշխարհում ամենաանթերի բանը հացն է

Գողթանավետ բանաստեղծն ու ոստանիկ խմբագիրը կանչեց սրբագրչին և դիտողություն արեց նրան հացկերույթ բառի մեջ տառասխալը շնկատելու համար:

— Եթե մյուս անգամ շնկատեք՝ ձեզ կազատենք աշխատանքից:

— Մի տառասխալի համա՞ր:

— Այս, որովհետեւ տառասխալով ոչ հաց է լինում, ոչ էլ հացկերույթ, որովհետեւ աշխարհում ամենաանթերի բանը հացն է,— ասաց բանաստեղծը:

### Իր կյանքի ընթացքում ինչքան հաց է կերել յոթանառուն տարեկան մարդը

— Իր կյանքի ընթացքում ինչքա՞ն հաց է կերել յոթանառուն տարեկան մարդը:

Այս հարցը տվեցին հաշվիչ մեքենային և կես ակնթարթում ստացան պատասխանը.

— Հայաստանում՝ տասներկու տոննա, աշխարհի մյուս կողմերում՝ մեկից երկու տոննա պակաս:

### Հացի բուրմունքը

Անգլիացիր հայ գրողը մի քանի տարին մեկ գալիս էր իր նախնյաց հայրենիք Հայաստան: Այստեղ նա մնում էր մի քանի օր, հիանում, հուզվում, մանկանում: Ամեն անգամ Հայաստանից մեկնելուց առաջ նա մի լավաշ էր վերցնում և երկար-երկար հոտ քաշում:

— Այս հոտը իմ քիմքին մնում է չորս-հինգ տարի, — ասում էր նա: — Այս հոտով էլ եմ ես կապվում պապենական երկրի հետ: Մեր լավաշի մեջ կենարար ավիշ, հայություն, հայրենիք, պատմություն, Հայաստան աշխարհի հագարամյա բուրմունք, նախնիների շնչառություն, արյան հիշողություն ու աստված կա:

### Հնդկունին խոսում է հայերեն

Մի անգամ նկարիչ Դմիտրի Նալբանդյանը բարձրատոհմիկ մի հնդկուհու դիմանկարն անելիս հանկարծ լսեց.

— Հաց:

Նալբանդյանը ժպտաց, վրձինը պահեց ձեռքում ու զարմացած նայեց հնդկուհուն: Դե արի ու կոահիր, թե ինչ է ասում նա: Գուցե հաց բառը հնդկերեն ուրիշ բան է նշանակում:

Հնդկուհին հաց բառն այնպես կրկնեց, որ նալբանդյանն այլևս չկասկածեց:

Դա հայերեն հաց բառն է, երկի հնդկուհին ուզում է ընդմիշում անել մի կտոր հաց ուտելու համար: Զէ որ երեք ժամ է,

ինչ նա բնորդ է դարձել: Եվ, այնուամենայնիվ, Նալբանդյանը մնացել էր զարմացած:

Շուտով երևաց թարգմանիչը:

Հնդկուհին ասաց, որ հացաբան է և աշխարհի երկու հարյուր քառասուն լեզուներով սովորել է հաց բառի արտասանությունը:

## Հացը որ կարծրանա, մարդու գլխում խելք չի մնա

Մի նորարար գիտնական ասաց.

— Զի կարելի թույլ տալ, որ հացն այսքան երկար մնա իր տեղում: Պետք է նոր սննդամթերք հնարել: Ասենք՝ այնպիսի խտացված ճաշ պատրաստել, որ հացը ներծծված լինի նրա մեջ, Դա շահավետ կլինի, ոչ հացի գործարաններ կլինեն, ոչ հացի խանութներ:

— Բայց դա մեզ կտանի դեպի նախամարդը, — հակադրվում են նրան:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ ամեն բան կարելի է խտացնել, բացի հացը: Հայկական առածն ասում է՝ հացը որ կարծրանա, մարդու գլխում խելք չի մնա:

## Հացաշեն

Թալինի շրջանում մի գյուղ կա, որը 1978 թվականին կոչվեց Հացաշեն: Այս գյուղի մարդիկ, որ ցորեն մշակելու յոթ հազար տարվա փորձ ունեն, վար ու ցանքսի, հունձ ու հավաքի ժամանակ յոթ հազար տարվա երազանք են խառնում իրենց հացին: Այդ պատճառով էլ գյուղի արտերից, այգիներից ու տներից, նույնիսկ մարդկանցից տարին բոլոր հացի հոտ է գալիս: Զարմանում ես, թե ինչու են այսքան ուշ գտել գյուղի անունը:

## Գրտնակը

Դե ո՞վ շգիտե, թե ինչ բան է գրտնակը: Խմորբացիկ է, ողորկ փայտիկ, որով բարակեցնում են խմորը:

Ասում են գրտնակը սկզբում եղել է հայոց հացահատիկի աստվածուհի Աշորայի ձեռնափայտը: Բայց դա սովորական գավազան չէր: Հենց որ Հայոց աշխարհում մեկը հացի մնացորդը

կամ նույնիսկ փշուրը դեն էր նետում՝ աղբին խառնելով, ապա աստվածուհու ձեռքից ձեռնափայտը դուրս-էր թոշում՝ հասնում ու հարվածում հացն անարգողի ճակատին ու ետ գալիս աստվածուհու մոտ:

Գրտնակն այդպես կլորիկ ու թմբլիկ է դարձել սրա-նրա ճակատին թմփացնելով:

Հետո այնպես եղավ, որ մարդիկ սովորեցին հացի ոչ մի փշուր դեն չնետել և աստվածուհին իր ձեռնափայտը նվիրեց մարդկանց:

Չկարծեք, թե սրանով գրտնակի պատմությունը վերջացավ։ Չէ որ հիմա աշխարհում մարդիկ կան, որոնք հացի հարգը չգիտն։ Մեկ էլ տեսար հեքիաթից մի գրտնակ գուրս եկավ ու խփեց այդպիսի մարդկանց ճակատին։ Հիմա ինչ ասես՝ որ չի լինում։

## Տաք հաց՝ պաղ գնդի հրեշտակ

Տաք հաց՝ պաղ գնդի հրեշտակ։ Այս օրհնությունը երկու հազար տարեկան է։ Հայի համար տաք հացը խմորի պաղ գնդից ծնված հրեշտակ է։

Հայ կինը թոնրի պատին առաջին հացը կպցնելուց առաջ առում է։

— Տաք հաց՝ պաղ գնդի հրեշտակ։

Հետո ավելացնում է իր սրտի ուզածը։

— Ուժ տուր իմ որդիներին։

Կամ՝

— Օգնիր աշխարհի բոլոր մարդկանց՝ խելք հավաքելու, չովը նետելու ամեն տեսակ զենք ու թողնելու, որ հաց ուտող մարդը կյանքին հրաժեշտ տա իր բնական մահով։

## Լուսինեի երազը

Մի անգամ փոքրիկ լուսինեն մորն ասաց.

— Մայրիկ, փիշերն ինչո՞ւ իմ բարձի տակ հաց չես դնում,

— Ինչո՞ւ դնեմ, աղջիկ։

— Որովհետեւ երազը բարձիս մոտիկ է։ Այս գիշեր երազում քաղցած էի, ձեռքս տարա բարձիս տակ՝ հաց չկար։

## Չատակերն ուտում է նաև մտովի

Երկու շատակերներ զրուցում էին: Մեկն ասում էր.

— Սիրտդ ի՞նչ կուզեր:

— Արքայական մառան՝ ամեն տեսակ ուտելիքներով ու ըմպելիքներով լիքը, — պատասխանում է մյուսը:

— Մառան էլ կա, մառան էլ, դու ասա, թե քո ցանկացած մառանում ինչպիսի ուտելիքներ ու ըմպելիքներ կան:

— Նախ քոիկ ցորենից թխած լավաշ, հետո կարագ, յուղ ու մեղր, ապիստած միս, կախան խաղող, հնձանից նոր հանած կ'շշացող գինի, նուան օշարակ, Ղարաբաղի թթի օղի, «Հիսուն տարի» կոնյակ, ընկույզի միջուկով պատրաստված Ղափանի լոբի, տապակած հավի հարյուր բուդ, եղնիկի խորոված միս՝ սաենք մի քսանհինդերեսուն շամփուր, շորս խաշած ամիճ, սև ձևնկիթ, մի բոք խաղող, երկու բոք դեղձ, երեք բոք տանձ, շորս բոք խնձոր, պատերից կախած սուզուխ, թոնրի մեջ եփած մի կաթսա կորկոտ, կիսահաս զկեռ...

— Ինչո՞ւ կանգ առար, շարունակիր:

— Շարունակելուց ի՞նչ օգուտ ունես:

— Դու թվարկում ես՝ ես կողքից ուտում եմ:

## Քառասուն ջրաղացի ձոր

Հազար տարուց ավելի է, ինչ Կարին քաղաքի մերձակա գետահովիտը կոչվում է Քառասուն ջրաղացի ձոր: Այդ ջրաղացները գիշեր ու տիվ ալյուր էին աղում Կարին քաղաքի համար:

Ասում են շատ տարիներ առաջ այդ ջրաղացներից մեկի ջրաղացպանն է եղել գուսան Զիվանու ապուպապը, որի անունը Ավագ էր: Սա շատ էր սիրում երգել: Զենը գլուխն էր զցում և մոռանում իր ջրաղացն էլ, աշխարհն էլ: Եթե աղունավորները չհրմշտեին նրան՝ ջրաղացքարերը կարող էին ժամերով պտտվել առանց աղունի:

— Ես լավ ջրաղացպան չեղա, — ասել է Ավագը, — ջրաղացպանը պիտի միայն իր շախշախի ձենը լսի և իր շախշախի պնս երգի:

## Զախիկները

Մեծ իմաստասեր Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի խորհըրդով Անիի և համայն Հայոց աշխարհի արքա Գագիկ Բագ-

րատունին ստեղծեց ձախլիկ նետածիգների մի վաշտ։ Մի տար-  
վա զորավարժություններից հետո պարզվեց, որ այդ վաշտի  
զորականներից ոչ մեկը չի վրիպում։ Երեկ մինչ այդ աշխարհի  
ոչ մի բանակ այդքան դիպուկ նետածիգներ չէր ունեցել։

Հետո հայ իմաստասերներն ու բժիշկները ամեն կողմից  
քննեցին ձախլիկներին և, ի լուր ամենքի, ասացին։

— Եթե պապը, հայրը և տղան իրենց սննդի մեջ ցորենն օգ-  
տագործեն չափից դուրս, ապա թոռը կծնվի ձախլիկ։ Չափավո-  
րությունը խախտվում է այսպես։ մարդիկ կան, որոնք երկար  
տարիներ առավելապես ուտում են ցորնահաց և ցորենից պատ-  
րաստված ճաշեր։ Ձախլիկ է լինում այդպիսի մարդկանց շոր-  
րորդ սերնդի ներկայացուցիչը։

Հետո ձախլիկներին սկսեցին քննել համարյա հազար տարի  
անց։

1980-ական թվականներին ձախլիկ մարդիկների մասին  
գրեցին, «Ձախլիկի մարմնի ոսկորները բարակ են, ուսերը՝  
նեղ, արագաշարժ է, ձիգ պահպանություն ունի ավելի  
տաքնապազգաց են, քան աղլիկները։ Դա պայմանավորված է  
նրանով, որ մարդկային տրամադրության կառուցվածքը վերա-  
հսկվում է ուղեղի տարբեր կիսագնդերի կողմից։ գրգովա-  
ծությունն ու տաքնապը՝ ձախ, իսկ թախիծն ու անտարբերու-  
թյունը՝ աջ կիսագնդի Բայց քանի որ ձախլիկի աջ կիսագունդն  
ավելի գործունակ է, նրա անհավասար տրամադրությունը մի-  
անգամ այն հասկանալի է։ Աղլիկի տևսողական ընկալունակու-  
թյան պատասխանատուն ուղեղի աջ կիսագունդն է, իսկ շար-  
ժական գործունակությանը՝ ձախ։ Այն բանի համար, որպեսզի  
նյարդային իմպուլսն աջ կիսագնդից անցնի ձախը, հետո այն-  
տեղից հրահանգ ստանա աջ ձեռքը, անհրաժեշտ է որոշակի ժա-  
մանակ։ Ձախլիկի ուղեղում այդ կապն ավելի պարզ է։ Ուղեղի աջ  
կիսագունդը և՛ ստանում է տեսողական պատկերը, և՛ միաժա-  
մանակ վերահսկում ձախ ձեռքի դործողությունները։ Դրա շնոր-  
հիվ ձախլիկի ուղակցիան արագանում է յոթ միլիվայրկյանով։  
Եղ ձախլիկները հաղթում են իրենց մարզական հակառակողնե-  
րին։ Ձախլիկների թիվը տարբեր ժողովուրդների մեջ տարբեր է։  
Ամենաշատ ձախլիկները հայերի մեջ են։ Յուրաքանչյուր հար-  
յուր հայից յոթից-ութը ձախլիկ է։»։

## Հացե տիկնիկը

Տիկին Խուշուշը կարկանդակի համար խմոր էր հունցել։ Փոքրիկ նունեն խմորից մի գունդ կտրեց, խմորե տիկնիկ սարքեց և դիմեց մորը.

— Մայրիկ, սա էլ եփիր, տես ինչքան նման է իսկական խամաճիկին։

— Քանդիր, դստրիկս, հացե խամաճիկ չի լինում։

— Ինչո՞ւ, մայրիկ, ինչո՞ւ չի լինում։

— Լսիր ինձ, նունե, ասենք թե մի կերպ թխեցի, հետո ի՞նչ պիտի անենք։

— Կուտենք։

— Զի կարելի, դստրիկս, մարդիկ կասեն նունեն մարդակեր է, որովհետեւ հացե տիկնիկ է կերել։

— Ինչքան խելոք ես, մայրիկ, ո՞նց չէի մտածել այդ մասին։

## Հացյուն

Անցած դարերի թիկունքում հայերս հացի անհուն դաշտեր ենք թողել և մոռացության տվալ յուն բառը, որ նշանակում է առատ։ Վասպուրականի Արտազ գավառում, Մակու քաղաքի մոտ, եղել է Հայաստանի արքունական ամենամեծ հացամբարը, որ կոչվել է Հացյուն։ Մեր թվականությունից առաջ վեցերորդ դարում այն կառուցել է տվել Աքեմենյան Դարեհ արքան։ Հնարագետ ու դիվանագետ էր Դարեհը։ Նվաճելով Հայաստանը՝ նա համոզված չէր, որ հայերը հուշ-հնագանդ կլինեն երկար ժամանակ։ Եվ ահա Հայաստանի ծայրակալ Արտազ գավառում կառուցել է տվել Հացյունը՝ ստիպելով, որ հայերը իրենց ցորնահարկը երկրի բոլոր կողմերից հասցնեն այստեղ։ Դա շատ ձեռնտու էր Դարեհին։ Նախ՝ Արտազը մոտ էր Պարսկաստանին, հետևապես ցորենը Հացյունից կարելի էր տուն հասցնել մեկերկու օրում՝ առանց հոգնեցնելու ձիերին։ Եվ ապա՝ Հացյունի ամբարներով դյուրին էր որոշել հայերի հավատարմությունը։ Ամբարների լցված վինելը Դարեհը կհամարի ապստամբության նշան։

Այդ ժամանակվանից ինչեր ասես, որ շեղան աշխարհում, Դարեհը գնաց և Արտազում մի գյուղ մնաց միայն Հացյուն անունով։ Այս անունն էլ աղավաղվեց ու դարձավ Հացյուն։ Եվ

Հիմա միայն հնագետները պիտեն, որ Հասյունը Հացյունն է և նշանակում է հացառատ:

## Ոչ թե սկիզբ է, այլ շարունակություն

Վանա լճի մոտ Սեղ անունով մի գյուղ է եղել: Այստեղ ընտիր ցորեն էին աճեցնում և սերմացու վաճառում Վանա լճի ավազանի գյուղերին: 1915-ին պիտի նշվեր գյուղի հիմնադրման շորս հազարամյակը: Բայց թշնամին արյունոտեց սեղիների մեծ տարեղարձը: Կոտորածներից մազապուրծ եղած տաս-տասներկու ընտանիք եկավ և 1921 թվականին բնակություն հաստատեց Վարդենիսի շրջանում, Սևանա լճի ափից ոչ հեռու: Առաջին տան կողքին կառուցվեց երկրորդը, երրորդը: Սևղիներն իրենց այս նոր բնակավայրը անվանեցին նորակերտ եվ շարունակեցին զբաղվել իրենց ավանդական վար ու ցանքսով: Հիսուն-վաթսուն տարի անց նորակերտը դարձավ Սևանի ավազանի հացի շտեմարանը: Հիմա նորակերտը ցորենի սերմացու է տալիս համայն Հայաստանին: Այդ սոսուն ցորենը ոչ թե վաթսուն, այլ՝ շորսհազար վաթսուն տարեկան է, ոչ թե սկիզբ, այլ շարունակություն է:

## Հյուրասիրության կանչող Աշտարակը

Ասում են՝ Քասախ գետի ափերին ընկած Աշտարակ քաղաքի անվան հետ յոթանասուն ավանդություն է կապված: Ես ուզում եմ պատմել միայն մեկի մասին:

Հին ժամանակ Հայաստանի բոլոր կողմերից շատ մարդիկ էին գալիս ու բարձրանում Արագած լեռը: Նրանք համոզված էին, թե Արագած բարձրացողը պիտի կտրի անցնի նախախնամության սահմանը և յոթ օրով երկարացնի իր կյանքը: Այդպես է մարդը, երիտասարդ տարիքում պատրաստ է յոթանասուն օր կորցնել՝ միայն թե կյանքի վերջում յոթ օր ավել ապրի:

Սոված փորով չի կարելի Արագած բարձրանալ, մարդ կարող է ուզագնաց լինել և շունչը փշել: Այդ մասին ամենքը շգիտեին: Դրա համար էլ Քասախի աջ ափին մի աշտարակ էին կառուցել, որտեղից ամեն օր դիտում էին Արագած տանող ճամփաները: Աշտարակեցիք նրբանկատ և ուրիշ մարդկանց արժանապատվության հարգը ճանաչող մարդիկ են: Նրանք ճամփորդներին չեն ասում, թե չի կարելի սոված փորով եռ բարձրա-

նալ: Ի՞նչ իմանաս, թե ով է սոված և ով է կուշտ: Կանչում էին անժանոթ մարդկանց, հյուրասիրում իրենց ունեցած շունեցածով և նոր բարի ճամփա մաղթում նրանց:

Այդ ժամանականից էլ գյուղը (որ այժմ քաղաք է դարձել) կոչվեց Աշտարակ: Ճիշտ է, հիմա հյուրասիրության կանչող Աշտարակը չկա, բայց աշտարկեցին պահպանել է իր ավանդական հյուրասիրությունը:

## Վաթառունյոթ տարեկան հաց

Դավիթ Աշնանյանը հարյուր տարեկան է:  
Զարմանալի մարդ է այս քեռի Դավիթը:  
— Քանի՞ տարեկան ես, — հարցնում են նրան:  
— Երեսուներեք և վաթսունյոթ, — պատասխանում է նա:  
— Քեռի Դավիթ, շե՞ս կարող միանգամից ասել հարյուր:  
— Զէ՛, տղաս: Երեսուներեքն ապրել եմ այնտեղ՝ Երկրում,  
վաթսունյոթն էլ այստեղ՝ Երևանում: Մեր Երկիր Վանն էր: Եթե  
հրաշք լիներ ու իմ կյանքը շարունակվեր Վանում, ևս կլինեի  
երեսունշորս տարեկան:

Քեռի Դավիթը բացում է մի հին սնդուկ և այնտեղից հանում թաշկինակի մեջ փաթաթված մի բան: Դնում է սեղանին: Հաց է:  
Չորացած հաց:

— Սա վաթսունյոթ տարեկան է, — ասում է Դավիթը, այս հացը Վանի Արարք թաղամասի մեր փոռում թխել է իմ կինը 1915 թվականին: Սա Երկրում թխված վերջին հացն էր: Պահել եմ որպես հոգեպահուստ: Մեկ-մեկ համբուրում եմ, հոտ քաշում ու առնում հայրենիքի կարոտը:

## Զրաղացիձոր

Գորիսի շրջանում, թափուտ անտառների միջով մի գլուխ է հոսում, որ Տաթե գյուղի մոտ խառնվում է Տաթե գետին և կոչվում Զրաղացիձոր:

Զրաղացիձորի ափերին հիմա մեկ-երկու զրաղաց է մնացել: Իսկ հազար հինգ հարյուր տարի առաջ այս փոքրիկ ձորում յոթանասուն զրաղաց է գործել: Եվ այն ժամանակ Զրաղացիձորն էլ մի քանի անգամ ավելի վարար է եղել, քան հիմա: Ասում են Հայոց աշխարհում սա միակ տեղն էր, որ զրաղացաններն աղումավարձ չեին վերցնում:

Իսկ երբ սկսեցին աղունավարձ վերցնել՝ մարդիկ իրենց աղունն ուրիշ ջրաղացներ տարան, ջրաղացինորի ջուրն էլ այնքան նվազեց, որ այլևս չէր կարողանում ջրաղացքարերը պտտել:

## Տոհմիկ հացագործը

Եզնիկ... այդպես է հողը, աշխատանքում հացը սրբագործած այդ կորովի երիտասարդի անունը:

— «Չորս եղբայր ենք,— ասում է նա:— Երեքը փոխադրվել են քաղաք: Ես մնացի գյուղում: Պապս ասում էր, որ ինչ էլ պատահի, ուան անդամներից գոնե մեկը պիտի հացագործ լինի, վարի, հնձի, կալսի, հաց արարի: Աշխարհում ամենասրբագան գործը հաց արարելն է: Հացը ազնիվ ու անզուգական այն շաղախն է, որ մարդուն կապում է անցյալի, ներկայի ու ապագայի հետ: Հացը մրցակից շունի, հացի մրցակիցը դարձյալ հացն է:

Չորրորդ դարի վերջում Վարագդատ անունով մի արքա ենք ունեցել: Այնչև գահ բարձրանալը նա մասնակցել է օլիմպիական խաղերին և հաղթել կովամարտում: Բայց նրա դափնեկիր դառնալը չէ, որ հուզում է ինձ: Այդ ժամանակներում օլիմպիական խաղերին մասնակցող մարզիկներին հրամցնում էին հատուկ հաց, որ կոչվում էր օլիմպիական դոֆինու: Այն թխում էին ցորենի ճերմակ ալյուրից: Վարագդատը հրաժարվեց այդ դոֆինուց՝ ասելով, թե մանկության տարիներին կերած հայկական հացը իրեն ներարկել է մշտական դոֆինով: Այո՛, ամեն մարդ պիտի իր հայրենի հացն ուտի և ուժ առնի հայրենի հացից:

Ես նայում եմ մեր ոսկեծուփ արտերին և մտովի հաշվում, թե դրանք ինչքան հաց կտան մեր ժողովրդին, մեր հայրենիքին: Այդ զգացումն իմ սիրուր լցնում է մեծ երջանկությամբ: Եվ դա ես ոչնչի հետ չեմ փոխի: Հայկական հողում մարդը հաց է արարել էն գլխից: Դա էլ մեր կենսագրությունն է, մեր գոյամարտի մի էջը, բոլոր դարերում կրկնվող մեր հացամարտը: Ես չեմ կարող լքել հողագործի իմ մարտադաշտը: Հայաստանը պետք է աշխարհին մշտապես բարի լույս ասի նաև հայկական հացով:

Աշխարհում ինչքան շատ հացագործ լինի, հացի ու խաղաղության դարաշրջանն այնքան տեսական կլինի: Իմ բոլոր պապերն ու ապուպապերը հացագործ են եղել: Ինչո՞ւ պիտի ես

լքեմ արտը, Զէ, չեմ ուզում հացարարշական գարմիս վերջը տալ, ես հպարտանում եմ իմ հացագործ տոհմով։ Նրանց մեջ շար մարդիկ չեն եղել Այսպես է մտածում նաև իմ հացապաշտ մայրը՝ տիկին Թուխծամը նա էլ է սիրում գյուղն ու արտը։ Փառավոր հացթուխ է։ Ամբողջ կյանքում նա խմորի ոչ մի կլորակ երկրորդ անգամ չի հունցել, նրա թխած լավաշները մարդուն արբեցնում են զգլխիչ բույրով։ Իսկ հաց թխելն ու մարդկանց բուրավետ հաց մատակարարելը ամենանուրբ գործերից մեկն է աշխարհում հայտնի հին ու նոր ամենանուրբ գործերի մեջ։

Միշտ չէ, որ իմ նախնիները կուշտ են եղել, հաճախ շատ հաց են արարել, բայց իրենք քաղցած մնացել։ Իսկ քաղցը մեծ աղետ է, թշվառություն։ Երբեմն հացագործները սոված էին բանում և իշխանավորները ցուց էին տալիս, թե դա չեն նկատում։ Դրա համար էլ ստեղծվել է հին առածը. «Կուշտը սովածին մանր կբռդի»։ Մեզնից 2300 տարի առաջ՝ հույն փիլիսոփա Գիոգենեսին հարցրել են.

— Հաց ուտելու համար ո՞ր պահն է հարմար, առավոտը, կեսօրը, թե՞ երեկոն։

— Հարուստն ուտում է, երբ ցանկանում է, իսկ աղքատը՝ երբ կարողանում է, — պատասխանել է իմաստունը։

Հայերս հաց շատ ենք ուտում։ Երբեմն մենք հաց ենք ուտում նաև ճաշի փոխարեն։ Դա նորօրյա սովորություն չէ, զալիս է հեռո՛ւ, հեռո՛ւ ժամանակներից։ Հացը փոխարինել է բոլոր մթերքներին։ Բայց ոչ մի բան չի փոխարինել հացին և չի կարող փոխարինել։ Ասում են հաց, դեղ և զիրք խնդրելը ամոթ չէ։ Մեր ժամանակներում այս ասույթը վերափառավորվել է. «Մարդկությունը երագում է հացի, դեղի ու զիրքի մշտնջենական թշվականության մասին»։ Ե՞րբ կսկսվի այն, զո՞յց քսանմակերորդ դարից։ Դրա համար մարդիկ պայքարում ու երևզում են։ Հնօրյա խոսք է՝ ինչ էլ անես, հացից լավ սնո նդ արարել չես կարող։ Հացի երաղանքը պիտի մշտարթուն լինի և բույլ, շտրվի, որ մարդը հացի հանդեպ դառնա անտարբեր։ Հացի համար անտարբերությունը նույնն է, ինչ որ զավակութացությունը բայց աշխատանքի բարիք է, մեր քբուժինչի զավակութիւնը, ուեւ ոնդներին իրար կապող կամուրջը։

Եզնիկն ավարտեց իր խոսքը։

Իսկ ես մտածում էի, որ ոչ ոք չի կարող հացի մասին այնպես պերճ խռուել, ինչպես իրենք՝ հողի մշակները:

Հավանաբար աշխարհի անփոխարինելի իմաստնությունը հող մշակելն ու հաց արարելն է:

## Արտույտ

Արտույտի հետ այս բանը պատահել է շատ վաղուց:

Աշխարհում ոչ մի թոշուն այնքան չի սիրում հատիկը, որքան խայտաճամուկ փետրավլորդ: Դե՛, նա ծնվել է ցորենի հետ, դարձել արտերի առաջին տերը: Այդ ժամանակներում տիեզերական մեծ խաղաղության մեջ արտույտի ճռվողյունը խառնվում էր հասկերի մեղմիվ սոսափյունին և հնչում որպես երջանկության մեծ համեմվագ: Խայտաճամուկը ուտում էր վայրի արտերի քաղցո հասիկները և ինքն իրեն անվանում արտ ուտող, աշտո տիկ, արտույտ: Նա գոհ էր և՛ իր անոնվ, և՛ իր կյանքով, և՛ եղր ու պոռոնկ շունեցող մեծ խաղաղությամբ:

Բայց ահա երևաց մարդը և արտույտը քիչ մնաց ընկներ նոր արարածի մեծ սոտիկների տակ: Թոնշակը քաշվեց արտեզրերը: Մարդը սկսեց արտեր աճեցնել: Թվում էր, թե որ է աշխարհը էղանաւ համատարած արտ: Եվ արտույտը որոշեց իր սեփական արտն ունենալ: Մարդու աճեցրած արտից նա կտուցով ցորեցի հատիկներ էր վերցնում, տանում ու թաղում կողքի հանդնրում և տեղը հիշելու համար նշան էր բռնում ամպը: Բայց աշխարհում ի՞նչն է հաստատուն իր տեղում մնում, որ ամպը մնար: Հողի տակ թաղած հատիկները ծլում են, հասկավորվում, բայց մինչև այժմ էլ արտույտը չի կարողանում գտնել իր արտը, որովհետև այդ խենթ ու խելառ ամպերը օրորշորոր են անում նրա գլխավերենում:

## Հացենի

Սառը պատահաբար չի ստացել հացենի անունը:

Դա եղել է այն ժամանակ, երբ Հայոց աշխարհի բնակիչները խռոսակելով օտար ասպատակողներից, լքում էին գյուղերն ու աշանները և սպաստանում թանձրախիտ անտառներում: Այսիդու ալյուրի սպառվելը սով էր ու մահ: Եվ մարդիկ ալյուրը «շատացնելո» համար խառնուրդ են որոնել: Նրանք ծառակեղեցից շապավեններ էին կտրում, զատում ներքին շերտը և շո-

բացնում մարմանդ կրակի վրա։ Ապա դրանք ծեծում էին փայտե սանդի մեջ, դարձնում փոշի ու խառնում ցորենի ալյուրին։ Ծառակեղենի ալյուրով հազար-հազար մարդիկ են փրկվել մահից։ Հայոց աշխարհում այդպիսի ալյուր տվող ծառը կը չկեց հացենի։

## Հյուրասեր սոսի՛ն

Իշեանի շրջանի Այգեհովիտ գյուղի մոտ, մեծ ճանապարհների խաշմերուկում, 750-ամյա մի սոսի կար, որը Սովետական Հայաստանի ամենատարեց ծառն է։

Վիթխարահասակ է, հսկա փշակով։ Նրա տակից սառնորակ մի աղբյուր է բխում։

Այս ծառի տակ Պարսկաստան գնալու ճանապարհին կանգ է առել ոռւս նշանավոր գրող Ալեքսանդր Գրիբոյեդովը։ Կողքի գյուղերի հայ շինականները շտապել են ողջունելու հայոց մեծ բարեկամին և հյուբասիրելու նրան։ Այդ ժամանակվանից սկսած հայ շինականները այդ ծառի տակ հյուրասիրել են անցնող ու դարձող երենելի մարդկանց, որի համար էլ այն կոչվել է հյուրասեր սոսի։ Մի ժամանակ նրա փշակում հաց էին դնում, որից օգտվում էին ծառի տակ հանգստացող ճանապարհորդները։ Վերջերս այդ ծառը կայծակնահար եղավ։

## Եղիցի հաց

Հին ասքն ասում է, թե ամեն գարնանամուտի Արագածի գագաթից մի հավերժահարս է իջնում, մտնում հայոց շեները և մարդկանց ականջին փսփսում։

— Եղիցի՝ հաց։

Բոլոր շինականներն այդ ծայնը լսում են և գործի անցնում։ Նրանք օրնիբուն ջանում են, որ Հայոց աշխարհում շատ հաց լինի։ Եթե հացագործները ծովանան՝ հավերժահարսը այլևս չի իջնի Արագածի կատարից և հացի առատություն չի բարեմաղթի նրանց։

Ոչ ոք չի տեսել հավերժահարսին, բայց լսել է նրա ծայնը.

— Եղիցի՝ հաց։ Եղիցի՛։ Երի՛ցս եղիցի...»

Իսկ գուցե ղա հացագործի ներքին ծայնի արձագա՞նքն է։ Չէ՞ որ այս աշխարհի ամենաուժեղ էակը հաց արարող մշակն է։ Հաց արարողը կարող է նաև հավերժահարս արարել։

## Հացը վերջաբան չունի

Հաղար-հազար տարի հացը սնեց մարդուն, ուղղեց նրա մեջքը, գեղեցկացրեց մարմինն ու հոգին, լուսավորեց նրա բանականությունը:

Բայց ինքը մնաց նույնը, չփոխվեց նրա տեսքը, համը, սնընդառությունը:

Ես ինձ համար հաստատել եմ սրբազան բառերի մի իննյակ՝ հայրենիք, մայր, հող, արե, ջուր, հաց, մայրենի լեզու, սեր, խաղաղություն: Այս իննյակով են պայմանավորված յուրաքանչյուր երկրածին մարդու երջանկությունը և համայն մարդկության գոյության հարատեսությունը:

Հողը միշտ էլ եղել է հարստության աղբյուր, ունեցածի ու չունեցածի շափանիշ: Լոռու թագավոր Դավիթ Կյուրիկյանը 1001 թվականին ըմբոստանում էր իր սյուներեն շահնշահ՝ հայոց արքա Գագիկ Բագրատունու դեմ, սակայն պարտվում է, կորցնում համարյա իր բոլոր տիրույթները, որի համար էլ կոչվում է Դավիթ Անհողին: Անշափելի է հողի տված երջանկությունը մարդուն: Հողի հետ մարդը կապված է հազար թելով:

«Մոսկվա» գրական-գեղարվեստական ամսագիրը 1982 թվականի հունվարի համարում «Խոհեր հացի մասին» խորագրով տպագրել է խմբագրության խոսքն ու Ս. Գավրիլովի «Խուսական տափաստանը» հոդվածը: Ամսագիրը գրում է. «Հողի ու նրա տված հացի գինը անշափ մեծ է, քանզի դա ոչ թե մեկ, այլ ժամանակակից ու գալիք մարդկանց բազմաթիվ սերունդների կյանքի գինն է»:

Պատերազմի ժամանակ հացը զինվոր է, խաղաղության ժամանակ՝ ճարտար պրոպագանդիստ, քաղաքագետ ու դիվանագետ: Վերջապես հացը բարեկամի ձեռք է, որ մեկնում է սովորակին կամ տարերացին աղետից տուժածին:

Պատահում է, որ ոսկու հանքերում գտնվում է այսքան ու այսքան գրամանոց կամ նույնիսկ կիլոգրամանոց բնածին կտոր: Բայց բնության մեջ բնածին հաց չկա: Հացն ինքն իրեն չի ծընվում: Սերմնացանի ոսկի ձեռքերն են հացն աճեցնում և այսպիսով արարված հացը ինքն է դառնում հազվագյուտ ոսկի:

Մեր երկրի տափաստանները ձգվում են հսկայական տարածություններով և ընդհանուր գծերով գրաղեցնում Ուկրաինայի հարավը, Հյուսիսային Կովկասը, Կենտրոնական-Աևահո-

ղային մարզերը, Ներքին ու Միջին Պովոլժիկն, Հարտվային Ուրալը, Ղազախստանի Հյուսիսային մարզերը և Արևմտյան Սիբիրի հարավը։ Սկսվելով Օդեսայից ու Քիշնեից դրանք լայն գոտով ձգվում են դեպի արևելք՝ մինչև Սեմիպալատինսկ ու Բառնաուլ։ Ապա դեպի հարավ տափաստանները կազմում են առանձին կենտրոններ և ընդգրկում ՍՍՀՄ վարելահողերի այն տարածքը, որ հավասար է մոտ 90 միլիոն հեկտարի, այսինքն՝ երկու ամբողջ վարելահողերի 40 տոկոսը։

Նախահեղափոխական շրջանում տափաստանները հերկելուն համեմատ երաշտները հաճախակի են կրկնվել։ Անթերրիությունը, սովոր ավելի ու ավելի մեծ տարածություններ են ընդգրկել, դառն թշվառության մատնելով գյուղացիությանը, որն առանց այն էլ կիսաքաղց կյանք էր վարում։

Այսպես, XVIII դարում եղել է 34 սովյալ տարի, XIX դարում՝ ավելի քան 40, իսկ XX դարի առաջին տասներկու տարուց յոթը եղել է անթերրի։ Երաշտները իրենց հետ բերել են ոչ միայն քայլքայում, կարիք ու անսպառ թշվառություն, այլև հաճախ՝ նաև սովամահություն։

Մեր ժամանակներում սոցիալիստական հասարակարգի պայմաններում, երաշտները չեն հասցնում կործանարար թշվառությունների, մարդիկ սովի ահ չեն ապրում։ Բայց և այնպես հացապակաս տարիները այժմ էլ մեծ դժվարություններ են ստեղծում ժողովրդական տնտեսության մեջ։

Տափաստանային գոտին Սովետական Միության հացի շտեմարանն է։ Այստեղ աճեցնում են աշխարհում ամենալավ ցորենը, արտադրում են շատ եղիպատճեն, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ և ուրիշ տեխնիկական կուլտուրաներ։

Բարենպաստ տարիներին այստեղ բարձր բերք են հավաքում։ Օրինակ, միայն Պովոլժիկն տալիս է մինչև մեկ միլիարդ փութ հաց, կամ սկստական գնումների մոտ մեկ հինգերորդ մասը։ Համարյա այդքան հացահատիկ կարելի է հավաքել տափաստանային Ղազախստանում։ Բայց, ցավոք սրտի, այժմ էլ քիչ են լինում այդպիսի բարենպաստ տարիներ։ Տափաստանային շրջաններում երաշտները կրկնվում են 2—3 տարին մեր իններորդ հնգամյակում եղել է երկու ծայրահեղ երաշտ տարի, տասներորդ հնգամյակում՝ նույնպես երկու տարի, իսկ 1979 թվականը վերջին քսանամյակում եղել է ամենաերաշտ տարի։

Հնագույն ժամանակներից երաշտը մեծ թշվառություն է պատճառել նաև հայ ժողովրդին: Իրավ է, Հայկական լեռնաշխարհում համատարած երաշտ չի եղել, ինչպես ուստական տափաստաններում: Բանն այն է, որ ինքնատիպ է ոչ միայն Հայկական լեռնաշխարհը, այլև նրա բնակլիման: Գիտնականները կատակով ասում են՝ Հայկական լեռնաշխարհում չորս հարյուր երկրի կլիմա կա: Այդ պատճառով նույն տարում կարող է մի տեղ երաշտ լինել, մյուս տեղը՝ հացավետ: Բայց և այնպես ամեն մի երաշտ ավերածության է մատնել համայն Հայաստանը: Պատմիչները դառնությամբ են գրել սովի ու երաշտի մասին:

Երաշտի դեմ հայերը պայքարել են տարբեր միջոցներով: Հնագույն Սոսյաց, Ծննդոց, Հացյաց դրախտ, Խոսրովի արհեստական անտառները միայն սրբազան վայր ու որսատեղիներ չեն: Դրանք ծառայել են նաև դաշտապաշտպան անտառաշերտի դեր:

Հայ ժողովուրդը մեր օրերին է հասցրել հացահատիկի հազվագյուտ տեսակներ: Դրանցից է քոփկ ցորենը, որն այժմ գալգալոս է կոչվում: Ուշագրավ է հայկական այդ ամենաընտիր ցորենի անվան պատմությունը: Վաղնջագույն ժամանակներից այդ ցորենը կոչվել է քոփկ: 1830-ական թվականներին Արևելյան Հայաստանի հատկապես այն վայրերում, ուր քոփկ էին ցանում, բնակություն հաստատեցին ուս մոլոկանները: Նըրանք քոփկն անվանեցին «գոլը կոլոս» (ГОЛЫЙ КОЛОС), այսինքն մերկ հասկ կամ անքիստ հասկ: Եվ ահա հնամենի քոփկը կոչվեց գոլը կոլոս, որ աղավաղվելով դարձավ գալգալոս: Այսպիսով գալգալոս անունը ընդամենը 150 տարվա պատմություն ունի: Ցորնատեսակների համաշխարհային անվանացանկում հայկական այդ ցորենը այժմ հանդես է գալիս երկու անունով՝ և քոփկ, և գալգալոս:

Բոլոր մարդիկ պիտի իմանան հացի պատմությունը: Այս գիրքը գրվել է այդ նպատակով: Բոլոր մարդիկ հացի հարգը պիտի պահեն իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

Եվ թող փառաբանվի ու հավերժի հացն մեր հանապազօրյա:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Առաջաբան—Հացաբան . . . . .</b>	<b>3</b>
<b>Աշորան հացահատիկի աստվածությանին է . . . . .</b>	<b>4</b>
<b>Արարատյան ցորեն . . . . .</b>	<b>5</b>
<b>Որոմ . . . . .</b>	<b>6</b>
<b>Ինչու խառն էին ցանում ցորենը, գարին ու կորեկը .</b>	<b>7</b>
<b>Ինչու են հայ աղջիկները հատիկազարդ ցրչաղքեստ հագնում . . . . .</b>	<b>7</b>
<b>Հացունաց . . . . .</b>	<b>8</b>
<b>Սանդ . . . . .</b>	<b>8</b>
<b>Հացը սուրբ է . . . . .</b>	<b>9</b>
<b>Հացեկաց . . . . .</b>	<b>9</b>
<b>Ինչու է լուսնի երեսը խմորում .</b>	<b>9</b>
<b>Քարի վրա ցորեն է աճում .</b>	<b>10</b>
<b>Հաց զարդանախշող դրոշմիշը .</b>	<b>10</b>
<b>Շատակեր Շարան և հացավետ Շիրակը . . . . .</b>	<b>11</b>
<b>Թոնիր . . . . .</b>	<b>12</b>
<b>Թրմի ու գյուղացիների վեճը .</b>	<b>12</b>
<b>Հարսի ուսին լավաշ են գցում .</b>	<b>13</b>
<b>Ճաթը . . . . .</b>	<b>13</b>
<b>Թթվամորը հացի այբուրենն է .</b>	<b>14</b>
<b>Հայոց կալի աստվածությն .</b>	<b>14</b>
<b>Վարսակ . . . . .</b>	<b>15</b>
<b>Աշխարհի ամենասպիտակ հացը .</b>	<b>15</b>
<b>Ասք լավաշի մասին . . . . .</b>	<b>16</b>
<b>Վանի ջրանցքը . . . . .</b>	<b>17</b>
<b>Կարմրահատ և սողիտակահատ ցորեն .</b>	<b>21</b>
<b>Աղորիք . . . . .</b>	<b>22</b>
<b>Տափը հայոց հողի աստվածն է .</b>	<b>22</b>
<b>Տակը ընկուղաշափ ցորենը երբ կհանձնի հայերին . . . . .</b>	<b>23</b>
<b>Մանգաղ . . . . .</b>	<b>23</b>
<b>Կողը . . . . .</b>	<b>24</b>
<b>Ծալի սուխների պուրակը .</b>	<b>24</b>
<b>Տող . . . . .</b>	<b>25</b>
<b>Նույն հացից է կծել . . . . .</b>	<b>25</b>
<b>Վրդարադատ թագավորը նման է վարուետ սերմնացանին .</b>	<b>26</b>
<b>Ինչո՞ւ գարին ավելի շուտ է հասնում, քան ցորենը .</b>	<b>26</b>
<b>Գոր . . . . .</b>	<b>27</b>
<b>Մեղրահաց . . . . .</b>	<b>28</b>
<b>Հացն ու լեզուն . . . . .</b>	<b>29</b>
<b>Կրակարան . . . . .</b>	<b>29</b>
<b>Սղոխ . . . . .</b>	<b>29</b>
<b>Յորենավետ կարասը . . . . .</b>	<b>30</b>
<b>Գարեջուր . . . . .</b>	<b>30</b>
<b>Հացարար . . . . .</b>	<b>30</b>
<b>Ժամանակ . . . . .</b>	<b>31</b>
<b>Ալեքսանդր Մակեդոնացին և հայկական լավաշը . . . . .</b>	<b>32</b>
<b>Տուրտուր . . . . .</b>	<b>32</b>
<b>Բաղարչ . . . . .</b>	<b>33</b>
<b>Լորակ . . . . .</b>	<b>33</b>
<b>Առանց փշրանքի սուփրեն չեն հավաքում . . . . .</b>	<b>34</b>
<b>Արագիլ . . . . .</b>	<b>34</b>
<b>Ածիկ . . . . .</b>	<b>35</b>
<b>Հայաստանի հանրային առաջին փուռը . . . . .</b>	<b>36</b>

Եղվանդ Վերջին արքայի հրո-	
վարտակը	36
Գարի ու ցորեն հացերը	36
Առաջին հասկափնջերը նվի-	
րում էին Անահիտին	38
Սեղանի թագավորը	38
Փափ ցորենի ծղոտներից	39
Համբուրում են հացը	39
Մի օր ջուր չեն խմում	39
Կալոց	39
Երդիում եմ հացով	40
Ծառ կտրողին մեկ տարով	
զրկում էին հաց ուտելոց	41
Ինչպես էր մառանապետ ընտ-	
րում Արտաշես արքան	41
Ախորժակի մասին	42
Ստամբուր հացով գերլցնելը	
հանցագործություն է	42
Եղի	43
Հացյաց դրախտ	43
Հայաստանի սահմանները գըծ-	
վում էին կլորահատիկ ցո-	
րենի արտերով	44
Արտր խախուտ, մհանեն՝ կար-	
կուտ	45
Հաց էին թխում թուխ գետի	
ջրով	46
Հին ու նոր ալյուրը	46
Թիլի ցորենը	46
Միայն ալյուրով հալվա չի	
լինի	47
Ամեն արտում մարդակերպ մի	
հասկ էր լինում	48
Ամենասրբազան տունը թո-	
նիրն է	48
Ցորենի յուրաքանչյուր հասկի	
մեջ եղած հատիկները ա-	
ռանց մնացորդի բաժան-	
վում են յոթի	49
Բանտում էլ իր արտն է վա-	
րում	49
Ինչու են արտեզրերին հասկեր	
թողնում թոշունների հա-	
մար	51
Վահագն աստծու զբոսարանը	51

Տիկնանց տիկին Հեղինեն փըր-	
կեց սովորական երին	52
Մասիսը Հայաստանի ցորենն	
է, Փոքր Մասիսը՝ գարին	53
Հիվանդ ունեցող կոշեցին լա-	
վաշ է թխում	53
Հինգ տարում հինգ բուր ցո-	
րեն	53
Արտն աշք ունի	53
Հնձվորն ինչպես է իր երախ-	
տագիտությունը հայտնում	
Արածանի գետին	53
Երկուղեցին, հացից	54
Մի կոտ ցորեն էին նվիրում	
բորբոքանոցներին	54
Այս զրուցը տեղի է ունեցել	
Գառնի ամրոցում մեղնից	
1680 տարի առաջ	55
Մեղա՛, հացիկ	55
Դիղափալու	55
Ամեն մի հասկ լցվում է յոթ	
հատիկով ավելի	56
Լավաշը ամենաերկարակյաց	
հացն է աշխարհում	57
Մարդը բազմափորձ է դարձել	
նաև մրցունից սովորելով	57
Ամոթալի ճամփորդություն	58
Ոլ միայն հացիկ	58
Հասկը դինանշան	59
Մախաղը	59
Գյուղն ինչու կոշեց Հացի	61
Հացից բացի ոսկով կարելի էր	
ամեն բան գնել	61
Արցախական հրովարտակ հյու-	
րընկալության մասին	62
Դավիթ Անհաղթ	62
Վանա նուրը	63
Անանիա Շիրակացին ինչպես	
լուծեց իշխանի խրախմա-	
նականը	63
Գուշակը կարճում է մարդու	
կյանքը	64
Օ՛, Մարգարիտ	65
Արիստուելի և Անանիա Շի-	
րակացու սկատասխանները	66

Կարկտասար	56
Ծույլ մարդը երազում հաց լի տեսնում	67
Օրհնյալ լինես, հա՛ց, մի ժա~ մում դու ինձ որաեղից որ~ տեղ հասցրիր	67
Հացը որ հաց է՝ առանց ծա~ մելու կոկորդով լի գնա .	68
Սրինգ	68
Հացագործյան	68
Ինչու է կղզին կոշվում Արտեր	69
Խնձորն ու հացը	69
Թոնիրը նման է թոնդրակին	70
Աշոտ Բագրատունի մասկեր	70
Հաց հղի կանանց համար .	71
Վաղինակի հուտիթի հասկերը	71
Երբ պիտի ցորենը դառնա ըն~ կույզի շափ	72
Ինչպիս էին վարուցանք անում իոզաքերքում	72
Հարսը հաց է ուտում գեղեցիկ տաճարին նայելով	73
Տրդատ ճարտարապետի սովո~ րությունը	73
Գրիգոր Նարեկացու խորհուրդը	74
Արճեղը հացի շտեմարանները պահում է իր գլխին .	74
Կուզես երկարակյաց լինել՝ քիշ կեր	75
Անալյուր	75
Անիի սև օրը	76
Այս հայերը ո՞ւր պիտի հաս~ նեն այսքան պարզամտու~ թյամբ	77
1032 թվականի աշխարհավեր սովը	78
Աստղագուշակի հնարամտու~ թյումը	78
Միայն ձուկ ուտողը ձուկ կը~ տեսնի	79
Պատմիչը գրում է . . . . .	80
Դավթուկն ուներ ութհարյուր գութան	80
Կորկոտ	81
Հացը մարդուն ճշմարտախոս է դարձնում	82
Շուշանց	82
Ներսես Շնորհալին ու հացը	82
Անիում հաց են վաճառել գի~ շերվա բոլոր ժամերին .	83
Հացկնի	84
Գուգլակի վիմափոր մթերա~ նոցը	84
Կարմրախայտը հայկական ձկների ցորենն է . . . . .	84
Աղանձուգետ	85
Առողջ մարդն ավելի լավ ա~ խորժակ է ունենում, քան տկարը	86
Խոզնավար	86
Երեք հարյուր երեսունվեց ուղ~ տաբեռ ցորեն մի գրքի հա~ մար	86
Տասներկու պայման	87
Ազահությունն ազի ջրի նման է, ինչքան խմե՞ այնքան ավելի կծարավես . . . . .	89
Կոհակ	89
Թորոս Ռոսլինի պայմանը .	90
Զմերուկի տեղ՝ ցորեն . . .	91
Գիտոր	91
Ցորենի թարմ հացն ավելաց~ նում է աշքի լույսը . . . . .	92
Հոգու քաղցը հազար տարի լի հագենա	92
Եհանր՝ օժիտ	93
Երաշտի ժամանակ արորով վարում» էին գետը . . . . .	94
Գիծք հաց	94
Հովհաննես Արճիշեցի Ոսպ~ նակեր	95
Բանաստեղծն ու արտր . . . . .	95
Իրար նման տասնհինգ Ամա~ նոր	96
Աղուն	98
Ամենամաքրասեր մարդիկ	98
Հացը երեսից կուտվի . . . . .	99

<b>Տիրատուր վարդապետը քա-</b>	
ռասոն տարեկան է . . . . .	100
<b>Ճաշիկ</b> . . . . .	100
<b>Խու</b> . . . . .	101
<b>Հացումի</b> . . . . .	101
<b>Խաշբուռ</b> . . . . .	102
<b>Հացի քաղաքը</b> . . . . .	102
<b>Հացը՝ սուլթան, զուրբ՝ վեզիր,</b>	
մնացածը՝ գզիր-մզիր . . . . .	103
<b>Արդար մարզու հացը չի կտրվի</b> 103	
<b>Ննգիի տոհմիկ բրուտագործ-</b>	
ները . . . . .	104
<b>Եգիպտացորեն</b> . . . . .	104
<b>Երզնկայի դաշտը</b> . . . . .	105
<b>Տասնհինգ հացայր</b> . . . . .	105
<b>Ինքնաբուռ կորեկ Մասիսի</b>	
լանջերիս . . . . .	105
<b>Ամիրդովլաթի ցորնադաշտը</b> . . . . .	106
<b>Բախտի աջ ձեռքը աշխատա-</b>	
սիրությունն է, ձախը՝ լա-	
փակարությունը . . . . .	107
<b>Ու մի բարդի լկարվեց</b> . . . . .	108
<b>Իմաստաերի պատասխանը</b> . . . . .	108
<b>Ոսկե ճաշ</b> . . . . .	108
<b>Որտեղ հաց՝ էնտեղ կաց</b> . . . . .	109
<b>Հացը չի կարելի կոխել</b> . . . . .	110
<b>Խուստուփ</b> . . . . .	110
<b>Հացաբաշխ</b> . . . . .	111
<b>Հացով բուժել են հիվանդին</b> . . . . .	111
<b>Աղքատն ինչու չեր ուզում կըշ-</b>	
տանալ . . . . .	111
<b>Մանկան օրորոցից ցորեն էին</b>	
կախում . . . . .	112
<b>Թորոսը քաջք է արածացնում</b> 112	
<b>Պարտիղակցին չի մոռացել</b>	
հարազատ Մերաստիայի	
հացը . . . . .	113
<b>Խմորդ քցախի</b> . . . . .	114
<b>Շոթ</b> . . . . .	115
<b>Մարդը կարող է աւզբել այ-</b>	
տեղ, ուր ցորեն է աճում . . . . .	115
<b>Կուզես ճանաշել մարդուն՝ հե-</b>	
տր հաց կեր . . . . .	116
<b>Սամձորեցի Տաճատը</b> . . . . .	116
<b>Կինոտների խաղը</b> . . . . .	117
<b>Երաշտի ժամանակ զողանջում</b>	
են եկեղեցիների զանգերը	117
<b>Հաշվել պետք չէ</b> . . . . .	118
ինչպես է զարին ցորենի համ	
սատանում . . . . .	118
<b>Համտես, համտես՝ պուտուկը</b>	
կես . . . . .	119
<b>Մի օրով սովի հերն անհծեց</b> 119	
<b>Ջարաբաղի մեծ սովը</b> . . . . .	120
<b>Աշխարհի ամենահամեղ հացը</b> 120	
<b>Պանդխտության մեկնողի բար-</b>	
ձի տակ հաց են դնում . . . . .	120
<b>Հացամոլ համշենցիները</b> . . . . .	121
<b>Հունիս</b> . . . . .	121
<b>Մարծեղ գյուղում ո՞չ մի ծույլ</b>	
շկար . . . . .	121
<b>Ինչու Քնքուշը բաժանվեց ա-</b>	
մուսնուց . . . . .	122
<b>Հայաստանը մի մեծ արտ է</b> 122	
<b>Թոնրի առաջին մեկ-երկու հա-</b>	
ցը տալիս են հարևանին . . . . .	123
<b>Հայերն ինչպես են տան հիմն</b>	
արիանում . . . . .	123
<b>Հյուրի համար ցորեն կգտնենք</b> 123	
<b>Հայը ուստին տված խոստումը</b>	
չի դրժի . . . . .	124
<b>Հացի պատասր կիսում է արծ-</b>	
վի հետ . . . . .	124
<b>Դաղպեն</b> . . . . .	125
<b>Հացը հանեց կրակի միշից</b> . . . . .	126
<b>Բախտով միացող մարդը պիտի</b>	
հացով էլ միանա . . . . .	126
<b>Սերմացուն հարատեսության</b>	
աղբյուր է . . . . .	127
<b>Դիլիջան քաղաքի տոհմիկ ա-</b>	
նունն է Հովք . . . . .	127
<b>Պարտը մարեց</b> . . . . .	128
ինչու դատերը կնության շտվեց	129
ինչ իմանաս . . . . .	129
<b>Դերջանի ցորենը</b> . . . . .	130
կակաշները հին հնձվորներ են	130
<b>Հացլամբ</b> . . . . .	131
<b>Ալիշանի վերջին բառը</b> . . . . .	132
<b>Փոխինձ</b> . . . . .	132
<b>Որդան կարմիրով հաց</b> . . . . .	133

Հացի տաշտը	133
Հարյուրութևունամյա Ընձակի խոսքը	134
Հոգհաննես Թումանյանի երազը	134
Հացտում	134
Երկու Խորվիրապ	135
Արճակի ու Խառակոնիսի վեճը	135
Հաղար ջրաղացպան մի գյու- ղում	136
Անհատակ ցործահորը	136
Ալյուր	137
Խոփեր	137
Վարդաթիլ	137
Գաղթելիս ճանապարհի երկու կողմում ցորեն են ցանում	138
Ինչու են կանաչք բարձր կը- րունկներով կոշիկ հագնում	139
Սոմին	139
Գյուղ Կորեկ անունով	139
Գըլգըւ	140
Մեր քաղցր հաց աշխարհն ուտեր՝ չեր կշտանա	141
Վարդան Մախսոխյանի գլուխ- գործոց կտավը	142
Հայաստանի գերբը	143
Արշակ Զոպանյանի պատաս- խանը	144
Չորովորցիք ինչպես էին սերմ ցանում	145
Գարուսար	145
Ամպասար	146
Գմբեթ	146
Գութանաթումք	147
Գութանասար	147
Մատնաքաշ	147
Գութանաքար	148
Խոփիգլուխ	149
Ներկարար	149
Եղիշե Զարենցն ամաշեց հա- ցից	150
Շոռբուլաղի ցորենի դաշտը հինգ հաղար տարով մեծ է Քեռփափ բուրգից	150
Շաքարջուր	151
Բանաստեղծի բոքոնը	151
Արկր երկնքի բաղարշն է	152
Հունձ ճակատամարտի թեժ պահին	153
Ֆրիկ	153
Մարդ ինչքան կարող է ապրել առանց հացի	154
Չի կարելի թողնել, որ հացի փշրանքը գետնին ընկած մնա երկար ժամանակ	154
Մայրս մեկ-մեկ այրված հաց էր կերցնում ինձ	155
Հացիկ	155
Ինչպես են հունձ անում օձու- նեցիք	156
Եաղկածորի դպրոցականների ստուգայցը	156
Համշենցի խոհարարն ինչպես աղատվեց սնոտիապաշ- տությունից	157
Սպիտակը փոխեցի սև բոքո- նով	157
Մեղանի վրա հաց տեսնելիս մորս ձեռքերն եմ հիշում	158
Մայրս ասում էր	158
Աղուհաց	158
Ուրիշի հացով փոր չի կշտանա	159
Քիւը շատի կրտսեր եղբայրն է	159
Ցորնենի	160
Մեղանասար	160
Փոցխասար	160
Ուղար հյուրասիրում է ուղտին	161
Կարմրաթուշ բոքոնը	161
Հացկատակ	162
Հացի տասնաբանյա	163
Այբուբենը հոգեոր հացի ցո- րենն է	164
Հայուհին լացում է շնչած արտի համար	164
Մեր հացի մեջ քրտինքը շատ է	165
Գողթանցի գուսաններն իրենց ամենալավ երգը ձոնել են հացին	165
Եղիպատրուշ	166
Ամենատարեց ու ամենաբարձր ծառը	167

Պարզ լիճը . . . . .	167	Քառասուն զրադւցի ձոր . . . . .	179
Կոմքայնավարը . . . . .	168	Զախարիկները . . . . .	173
Հացի արել . . . . .	169	Հացե տիկնիկը . . . . .	175
Աշխարհում ամենաանթերի բա- նը հացն է . . . . .	169	Հացյուն . . . . .	175
Իր կյանքի ընթացքում ինչքան հաց է կերել յոթանասուն		Ու թե սկիզբ է, այլ շարունա- կություն . . . . .	176
Հացի բուրմունքը . . . . .	170	Հյուրասիրության կանչող Աշ- տարակը . . . . .	176
Հնդկուհին խոսում է հայերեն	170	Վաթսունյոթ տարեկան հաց .	177
Հացը որ կարծրանայ մարդու գլխում խելք չի մնա . . . . .	171	Ջրաղացիձոր . . . . .	177
Հացաշեն . . . . .	171	Տոհմիկ հացագործը . . . . .	178
Գրտնակը . . . . .	171	Արտույտ . . . . .	180
Ճաք հաց՝ պաղ գնդի հրեշտակ	172	Հացենի . . . . .	180
Լուսինեի երազը . . . . .	172	Հյուրասեր սոսին . . . . .	181
Շատակերն ուսում է նաև մտովի . . . . .	173	Եղիցի հաց . . . . .	181
		Հացը վերջաբան լունի . . . . .	182

**Խաչատրյան Հայկ Հարովանի**

**ՀԱՅԱՊԱՏՈՒՄ**

**Хачатрян Гайк Арутюнович**

**СКАЗАНИЕ О ХЛЕБЕ**

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван—1984

Խմբագիր՝ Ֆելեֆյան Հ. Հ.  
Հրատ. խմբագիր՝ Նարզայան Ա. Ա.  
Նկարիչ՝ Բադալյան Խ. Ա.  
Գեղ. խմբագիր՝ Մնացականյան Հ. Կ  
Տեխն. խմբագիր՝ Նահապետյան Գ. Բ.  
Վերսալուգող սրբագրիչ՝ Գևորգյան Լ. Ա.

**ИБ—3872**

Հանձնված է շարվածքի 28. 02. 1984 թ.: Ստորագրված է  
տպագրության 16. 05. 1984 թ.: Ֆորմատ՝  $84 \times 1081 / 32$ :  
Թուղթ՝ տպ. № 2: Տառատեսակը՝ «Գրքի սովորական»:  
Տպագրություն՝ բարձր: 10,08 պայմ. տպագր. մամ.,  
10,29 պայմ. ներկ. թերթ, հրատ.՝ 8,76 մամ.:  
Պատվեր 586: ՎՖ 09382: Տպաքանակ՝ 20.000: Գինը՝  
70 կուգ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տեր-  
յան 91:

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна 91.  
ՀՅՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և  
գրքի առևտության գործերի պետական կոմիտեի № 1 տպա-  
րան, Երևան, Ալավերդյան փող. 65:

Типография № 1 Госкамитета Арм ССР по  
делам издательств, полиграфии и книжной торгов-  
ли, Ереван, ул Алавердяна, 65.

